ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆ., ՄԻԱՑԵ՛Ք.

Լ. ԿԱԳԱՆՈՎԻՉ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՀԱՄ Կ (Բ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1934

329.15(47)
22 DEC 2017

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

Լ. ԿԱԳԱՆՈՎԻՉ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄ
ՀԱՄԿ (բ) Կ XVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԿՈՒՍՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ

1934

ԱԶԳԱՅԻՆ ... ՀԱՄԱՐ 11-27351գր

Թարգմանեցին Ա. Սեռնյան, Հ. Մանուկյան. [redacted] Սրբագրիչներ Թ. Խաչատրյան, Ա. Լալայան Գլավլիտ 7839 (բ) Հրատ 204 Ս. Д. Պատ 543 Տիրաժ 40000
Պետհրատի տպարան

Հանձնված է արտադրության 19 մարտի
Ստորագրված է տպելու 6 ապրիլի

Ընկերնե՛ր, կազմակերպական հարցերը մեր համագումարը քննում է վորպես օրակարգի վերջին հարց: Դրա օրինականությունը միանգամայն ակներև է, վորովհետև կազմակերպական հարցերի մշակումը՝ գործիքի արումն է հաջողությամբ իրականացնելու համար քաղաքական ու տնտեսական այն խնդիրները, վոր կուսակցությունը դրեց 17-րդ համագումարում: Կազմակերպական խնդիրների էությունը մինչև վերջն ըմբռնել կարելի յե միմիայն հասկանալով ու շոշափելով մեր անցած ուղու, սոցիալիստական հաղթանակների ուղու ամբողջ մեծությունն ու իմաստը, մեր առաջ դրված այն ամբողջ խնդիրների մեծությունը, վորոնք այնքան վառ կերպով լուսավորվեցին ընկ. Ստալինի հաշվետու զեկուցման հզոր լուսարձակով: (Ցերկարատև ծափեր):

Մեր կուսակցության, համաշխարհային պրոլետարիատի առաջատար կուսակցության, յուրաքանչյուր համագումարը պատմական խաչոր ուղենիշ է վոչ միայն մեր յերկրի պրոլետարական հեղափոխության, այլև միջազգային բանվորական շարժման զարգացման ճանապարհին:

Մեր 17-րդ համագումարը, լենինյան մեծ կուսակցության մեծ համագումարը արտացոլում է մի ամբողջ պատմական դարաշրջան, վոր կարճ է իր ժամկետներով, սակայն չտեսնված չափով հարուստ է իր բովանդակությամբ, մի դարաշրջան, վոր Խորհրդային Միությունը դարձրեց մի հզոր պետություն, վորն առաջավոր դիրքեր է գրավել քաղաքական, տեխնիկական-տնտեսական, ռազմական ու կուլտուրական տեսակետից:

17-րդ համագումարում ընկ. Ստալինի արած զեկուցման համաշխարհային պատմական նշանակությունը հենց այն ե, վոր այդ մի հաշվետվություն եր այն մեծագույն հեղաշրջումը ղեկավարելու մասին, վոր յերբևիցե ծանոթ ե յեղել մարդկային պատմությանը, մի հեղաշրջում, վորը խորտակեց հին տնտեսաձևը և ստեղծեց նոր կոլտնտեսակարգ մեր յերկրի սոցիալիստական ինդուստրացման բազայի վրա:

Այդ մի հաշվետվություն եր մարդկության միլիոնավոր լավագույն առաջավոր ներկայացուցիչների շարժումը ղեկավարելու մասին այն պայքարում, վոր նրանք մղում են հին աշխարհից լիովին ու վերջնականապես ազատագրվելու համար և նոր, սոցիալիստական հասարակության հաղթանակի համար:

Հենց այդ պատճառով ել մեր վիթխարի հաղթանակները, մեր հաջողությունները, կոնկրետորեն չափվում և զգում են վոչ միայն Խորհրդային Միության միլիոնավոր մասսաները, այլև ամբողջ աշխարհի պրոլետարներն ու ճնշվածները:

Չտեսնված կարճ ժամանակամիջոցում յերկրի սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության տեխնիկական վերազինման բազայի վրա, կուլակության, և մեր կուսակցության մեջ դասակարգային թշնամու գործակալության—տրոցկիզմի, աջ ու «ձախ» և բոլոր ու ամեն տեսակ ոպորտունիստների—ջախջախման բազայի վրա մենք լուծեցինք պրոլետարական հեղափոխության ամենադժվարին խնդիրը:

Ընկ. Ստալինն իր զեկուցման մեջ ցույց տվեց, թե ինչպես փոշիացած, մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսության յերկիրը մենք վերածեցինք մի յերկրի, վորտեղ կոլտնտեսակարգը—խոշորագույն սոցիալիստական հողագործության կարգը—վերջնականապես հաղթանակեց, վորտեղ տնտեսավարության սո-

ցիալիստական ձևը հանդիսանում ե մեր կյանքի հիմնական կառուցվածքը:

Յեվ իրոք, ի՞նչ եյինք մենք և ինչ դարձանք այն մի քանի տարվա ընթացքում, վորոնք բաժանում են մեզ 16-րդ համագումարից:

Մենք արդյունաբերական տեսակետից ամենահետամնաց յերկրներից մեկը, ամենաագրարային յերկրներից մեկն եյինք Յեվրոպայում: Մենք դարձանք աշխարհի ամենաարդյունաբերական յերկրներից մեկը:

Մենք մանր, փոշիացած և հետամնաց հողագործության յերկիր եյինք. մենք դարձել ենք, կազմակերպված, աշխարհի ամենախոշոր մեքենայացված հողագործության յերկիր: Մենք արորի յերկիր եյինք: Մենք դարձել ենք տրակտորի ու կոմբայնի յերկիր: Մենք նահապետականության, միջնադարի և անգրագիտության յերկիր եյինք: Այժմ դարձել ենք, ավելի ճիշտ՝ դառնում ենք ամենաառաջավոր յերկրներից մեկը գրագիտության ու կուլտուրականության տեսակետից: Մենք սաստիկ հետ եյինք մնում առաջավոր կապիտալիստական յերկրներից ռազմական տեսակետից, և մեզ միշտ վտանգ եր սպառնում, վոր մեր շահերը կխոտնահարեն նույնիսկ փոքր յերկրները: Այժմ, ինչպես այդ առանձին ակնառությամբ յերևան յեկավ համագումարում, մենք դարձել ենք առաջնակարգ, հզոր զինված ուժ և վճռական գործոններից մեկն ամբողջ աշխարհում խաղաղության համար մղվող պայքարում (ծափեր):

Ընկերներ, այդ բոլորին մենք հասանք ամենակատաղի պայքար մղելով բազմաթիվ դասակարգային թշնամիների դեմ, պայքար մղելով կապիտալիստական վերջին լուրջ դասակարգի—կուլակության դեմ: Նրան ոգնում եր համաշխարհային կապիտալիզմը, կազմակերպելով վնասարարություն ու հակահեղափոխական խմբեր, նրան ոգնում եյին մեր կողմից ջախջախված աջերը, տրոցկիստները և «ձախ» ոպորտունիստները մեր

տնտեսական շարքերում: Մենք ջախջախեցինք կուլակությունը, ջախջախեցինք վնասարար, հականեղափոխական խմբերին և օպորտունիստներին:

Կուլակը խոր արմատներ ուներ էկոնոմիկայի մեջ: Մեր կուսակցությունը կռվով հողահան արեց այդ արմատները: Այդ ամենալուրջ մարտերից մեկն էր, յեթե վոչ ամենալուրջ մարտը կապիտալիզմի դեմ: Այդ մարտի լրջությունն ու դժվարությունը հանճարեղորեն նախատեսել էր Լենինը: Մեր կուսակցության 11-րդ համագումարում նա ասում էր.—

«Մենք ամեն տեսակ շատ անցքեր ու յելքեր ենք ունեցել մեր քաղաքական ու տնտեսական դժվարություններից դուրս գալու համար: Մենք կարող ենք հպարտությամբ պարծենալ, վոր մինչև այժմ կարողացել ենք օգտագործել այդ բոլոր անցքերն ու յելքերը զանազան զուգակցությամբ, զանազան հանգամանքների համեմատ, սակայն այժմ մենք այլևս վոչ մի յելք չունենք: Թույլ տվեք առանց վորևէ չափազանցության ձեզ ասել այդ, այնպես վոր այդ իմաստով իրոք «վերջին ու վճռական մարտը» վոչ թե միջազգային կապիտալիզմի դեմ է,—այնտեղ դեռ շատ «վերջին վճռական մարտեր» են լինելու,—վոչ, այլ ահա ռուսական կապիտալիզմի դեմ, այն կապիտալիզմի դեմ, վորն աճում է մանր գյուղացիական տնտեսությունից, այն կապիտալիզմի դեմ, վորին պաշտպանում է այդ տնտեսությունը: Ահա այստեղ ամենամոտիկ ապագայում լինելու յե մի մարտ, վորի ժամկետը հնարավոր չի ճիշտ կերպով վորոշել: Այստեղ է լինելու «վերջին ու վճռական մարտը», այստեղ այլևս վոչ մի քաղաքական, վոչ էլ վորևէ ուրիշ շրջանցում լինել չի կարող»... (27-րդ հատ. էջ 235):

Այս վերջին ու վճռական մարտը ռուսական կապի-

տալիզմի դեմ՝ մեր անցած մեծ ուղու գլխավոր ու հիմնական ողակն է: Այդ տարիներում մենք վերջին ու վճռական մարտը մղեցինք ռուսական կապիտալիզմի դեմ, այն մարտը, վոր նախագուշակել էր Լենինը: Յեվ այդ մարտը հանճարեղ կերպով ու հաղթականորեն մղեց կոմունիզմի մեծ բանակը—մեր կուսակցությունն իր առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ: (Բուռն ծափեր):

Այդ մարտի արդյունքը սոցիալիստական էկոնոմիկայի ամուր հիմքն է մեր յերկրում, միջազգային պրոլետարական հեղափոխության դիրքերի ամրացումն է: Այդ մարտի բոլոր էտապներում, մեր ճանապարհին յեղած բոլոր դժվարությունների պայմաններում,—վերաբերում է խոսքն արդյոք այն պայքարին, վոր մենք մղել ենք առանձին վերցրած մի յերկրում սոցիալիստական հասարակություն կառուցելու լենինյան ուսմունքին տիրապետելու համար, թե վերաբերում է խոսքն արդյոք քաղաքական կոնկրետ լոզունգներին, թե խոսքը վերաբերում է մետաղաձուլության այնպիսի հսկաների կառուցմանն ու յուրացմանը, ինչպես Մագնիտոգորսկի ու Կուզնեցկի գործարաններն են, թե խոսքը վերաբերում է խորհտնտեսությունների, ՄՏԿ, կոլտնտեսությունների, բանմատակարարման բաժինների, հանրային սննդի, ճաշարանների և այլնի կազմակերպմանը.—այդ միևնույն է,—մեր լենինյան Կենտկոմը, և ամենից առաջ ընկ. Ստալինը զինել ու կազմակերպել են մասսաներին հաղթական մարտերի համար:

Այդ պայքարի ու աշխատանքի ընթացքում Կենտրոնական Կոմիտեն միշտ շեշտել է սուբյեկտիվ գործոնի վճռական նշանակությունը, սոցիալիզմի գործը կերտող կենդանի մարդկանց կազմակերպվածության, ռազմավորվածության ու պատրաստվածության վճռական նշանակությունը:

Մեր կուսակցությունը, նրա Կենտրոնական Կոմի-

տեն է ընկ. Ստալինը—կուսակցական ղեկավարության այդ միասնական անբաժան ուժը,—կարողացան սոցիալիզմի համար մղվող պայքարը հասցնել իրոք վճռական մաշտաբների: Հենց այդ էլ ցույց տվեց ընկ. Ստալինը, համագումարին ներկայացնելով մի հաշվետվություն, որը վառ կերպով լուսավորում է սոցիալիզմի հաղթանակի ուղին ու պայմանները, տալիս է անցած ուղու վերլուծությունը և միաժամանակ գործողությունների մարտական, կոնկրետ ծրագիր է նշում սոցիալիզմի առաջընթաց բանակի համար: Ընկ. Ստալինի զեկուցումը հանճարեղորեն զուգակցում է ամենախորը թեորիայի, քաղաքականության և կազմակերպական պրակտիկայի հարցերը: Կամքի ու գործողության այդ միասնությունը, քաղաքականության ու պրակտիկայի միասնությունը, որ բնորոշում է մեր լենինյան Կենտկոմի գործունեությունը, կազմում է քաղաքական ու կազմակերպական այն ամբողջ աշխատանքի հիմքը, որ կուսակցությունը կատարել է, կատարում է և ծրագրում է կատարել ընկ. Ստալինի ղեկավարությամբ: (բուռն ծափեր):

I

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԱՓՆ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Անցնելով կազմակերպական հարցերին, պետք է ասեմ, որ համագումարին առաջարկվող թեզիսների հիմքն են կազմում այն խնդիրները, որ ընկ. Ստալինը դեռ 1929 թ. դրեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ապրիլյան պլենումում, երբ նա, մերկացնելով աջ թեքումը, խոսում էր բոլշևիկյան հարձակման էության ու պրոլետարական դիկտատուրայի լծակների վերակառուցման մասին: Դրա մասին ընկ. Ստալինը խոսել է թե մեր կուսակ-

ցության 16-րդ համագումարին տված հաշվետվության մեջ և թե 1931 թ. տնտեսավարների խորհրդակցությանն արտասանած ճառում, որը հայտնի յե որպես մեր հաղթանակի պատմական վեց պայմանները:

Յեթե առաջին հնգամյակի պլանի կատարումը նախապատրաստեց նյութական բոլոր նախադրյալները 2-րդ հնգամյակի պլանը հաջողությամբ իրագործելու համար, որի մասին զեկուցեցին այստեղ ընկ. Մոլոտովն ու Կույբիշևը, ապա առաջին հնգամյակում կատարված կազմակերպական աշխատանքն այժմ մեզ հնարավորություն է տալիս, յերկրորդ հնգամյակի խնդիրների համեմատ, շարունակելու պրոլետարական դիկտատուրայի բոլոր լծակների հետագա վերակառուցումն ու բարելավումը:

Այն ամբողջ հսկայական կազմակերպական աշխատանքը, ամբողջ խորացված վերակառուցումը, որ կատարեց կուսակցությունն այս տարիների ընթացքում, ամբողջովին ստորադրված էր ամբողջ ճակատով կատարվող սոցիալիստական հարձակման հանգուցային խնդիրների լուծմանը:

Մեր Կենտրոնական Կոմիտեն իր ղեկավարության ընթացքում յերբեք չի սահմանափակվել միայն լոզունգներով կամ ընդհանուր քաղաքական դիրեկտիվներով: Ընկ. Ստալինը, առաջադրելով մեր գլխավոր գծի հերթական լոզունգները, միշտ էլ տեղն ու տեղը ապահովել է այդ լոզունգների կատարումը կազմակերպական գործողությունների գործնական պլանով, այս կամ այն խնդիրների իրագործման ուղիների ու յեղանակների վերաբերյալ կոնկրետ ցուցումներ տալով: Ընկ. Ստալինը 17-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ չեշտել է, որ «հաղթանակը յերբեք ինքն իրեն չի գալիս, նրան սովորաբար բերում են»: Խոսելով կուսակցության կազմակերպական աշխատանքի մասին, նա 14 հակիրճ

կետերով սպառիչ հաշիվ տվեց ըստ էության կուսակցության կազմակերպական աշխատանքի մասին, այն ուղիների մասին, վորոնք կազմակերպում ու ապահովում են հաղթանակը:

Այդ տարիների ընթացքում կուսակցության կազմակերպական աշխատանքը հիրավի չտեսնված թափ ընդունեց: Հազարավոր նոր կառուցված ձեռնարկությունները, ՄՏԿ, կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները կուսակցական քաղաքական գծի ու կազմակերպական ղեկավարության նյութական արտահայտությունն են:

Յերկրի ինդուստրացման բոլշևիկյան տեմպի լոզունգը, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լոզունգը, տեխնիկային տիրապետելու լոզունգը—կուսակցությունն իրականացրել է նախ և առաջ մոբիլիզացիայի յենթարկելով մասսաներին, վերակառուցելով բոլոր շարժափոկերը, առաջին հերթին՝ արհմիությունները, ջախջախելով արհմիությունների ոպորտունիստական, տրեդյունիոնիստական տարրերին, նրանց յերեսը դարձնելով դեպի հարվածայնությունն ու մրցակցությունը, դեպի աշխատանքի սոցիալիստական նոր մեթոդները:

Կուսակցությունը վերակառուցել է իր շարքերը արտադրության մեջ ու կոլտնտեսություններում, համառորեն ապահովելով յուրաքանչյուր կոմունիստի ավանգարդային կազմակերպական դերը ցեխում, բրիգադում:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրն ապահովվեց՝ մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելով կուլակության վերացնելու համար, նրա մնացորդների դիմադրությունը հաղթահարելու համար, հազարավոր ստուգված ու կոփված բոլշևիկներ ընտրելով գյուղի համար և մեր բոլոր կուսակ-

ցական, խորհրդային ու տնտեսական կազմակերպությունների աշխատանքը բարելավելով:

Ընկ. Ստալինը խոսեց հնգամյակի տարիներին կառուցված հազարավոր նոր ձեռնարկությունների մասին: Այդ նշանակում է, ընկերնե՛ր, վոր մեզ մոտ ամեն որ միջին հաշվով ավարտվել ու գործարկվել է մի քանի ձեռնարկություն: Այդ բոլոր հազարավոր նոր ձեռնարկությունները կառուցելու համար դեռ բավական չեր դրանք պլանի մեջ մտցնել, բավական չեր միջոցներ բաց թողնել, անհրաժեշտ եր կազմակերպել բուն շինարարությունը, այսինքն՝ կազմակերպել շինարարական ապարատը, մարդիկ ընտրել, իսկ ձեռնարկությունները կառուցելուց հետո նշանակել նոր մարդիկ, կազմակերպել կառավարչական ապարատը, գործարկել ձեռնարկությունները և յուրացնել դրանք:

1929–33 թթ. ընթացքում կազմակերպվել է 191 հազ. կոլտնտեսություն, մոտ 7000 խորհտնտեսություն, հաշված նաև չտրեստացվածները. այդ նշանակում է, վոր միջին հաշվով որական կազմակերպվել է 120 կոլտնտեսություն, 2 ՄՏԿ, 4 խորհտնտեսություն. այդ—միջին հաշվով, իսկ դուք գիտեք, վոր մեզանում գործը համաչափ չի ընթացել, յեղել են օրեր, յերբ կազմակերպվել է վոչ թե 120, այլ 500 և ավելի կոլտնտեսություն: Սրան պետք է ավելացնել նաև 150 հազարից ավելի առևտրական միավորների կազմակերպումը, քաղաքային տնտեսության, քաղաքային ձեռնարկությունների շինարարության մինչև հնգամյակը բոլորովին չտեսնված թափը հին քաղաքներում, տասնյակ նոր քաղաքների հիմնումը ամայի տեղերում, հազարավոր բնակավայրերի ստեղծումը խորհտնտեսությունների, ՄՏԿ և նոր գործարանների շուրջը:

Բացված է 35 հազ. տարրական ու միջնակարգ դպրոց, գործարանային աշակերտության 2000 դպրոց, 1000 բանֆակ, 2500 տեխնիկում, մոտ 500 ԲՈՒՀ, ա-

ավելի քան 400 գիտահետազոտական ինստիտուտ, 23 հազ. ակմբային ախալի հիմնարկ, համարյա 20 հազ. նոր . Ռամուր 1928 թվի 1189 լրագրից 1930 թ. հասավ 3061-ի, և 1930 թ. 3061-ից—10.535-ի, 1933 թվին, չհաշված մի քանի հարյուր հազար պատի թերթերը: Այս ամբողջ շինարարությունը կատարվել է ոչ թե մի անկյունում, այլ Խորհրդային մեծ Միության ամբողջ անսահման տարածության վրա:

Շատ քաղաքներ, ձեռնարկություններ ու կոլտնտեսություններ ստեղծվել են ոչ թե կուլտուրական շրջաններում, վորտեղ կան կադրեր, աշխատանքի ընտելություն և վորոշ փորձառություն, այլ բոլորովին անմարդաբնակ վայրերում, բերկ հողի վրա, ամայի տեղերում: Ցեթե վերհիշենք, վոր ԽՍՀՄ բոլոր հեռավոր անկյուններում, Խիբինից մինչև Կարա-Կում, Իգարկայից մինչև Բիռո, Սպիտակ-Բալթիկ ծովերի ջրանցքից մինչև Տուրկսիբ, Դնեպրի հիդրոկայանից մինչև Ամուր գետը կատարվել է շինարարական լարված աշխատանք, վորի շնորհիվ մի քանի տարվա ընթացքում տառացիորեն փոխվել է մեր յերկրի պատկերը. յեթե հաշվենք, վոր այդ բոլորի կառուցումը պահանջում եր գործնականորեն ու կազմակերպորեն ապահովել այդ վիթխարի աշխատանքը մարդկանցով ու ղեկավարությամբ,—այն ժամանակ կատարելապես պարզ կլինի մեր կուսակցության և նրա լենինյան Կենտկոմի կազմակերպական աշխատանքի չտեսնված թափը: (Բուռն ծափահարություններ)

Թույլ տվեք ինձ մանրամասն կանգ չառնել այդ տարիներում կատարված կազմակերպական աշխատանքի բոլոր ետապների վրա: Այդ շատ ժամանակ կխլեր և բացի դրանից՝ այդ աշխատանքը բոլորի աչքի առաջ է: Ամեն մի շինարարություն, ամեն մի նոր գործարան, ամեն մի ՄՏԿ, ամեն մի կոլտնտեսություն ինքը խոսում է իր մասին: Թույլ տվեք հաշվետվության կարգով կանգ առնել

կազմակերպական աշխատանքի հանգուցային հարցի—կադրերի պրոբլեմի վրա, մարդկանց դաստիարակման, պատրաստման, ընտրության ու բաշխման վրա:

1.

ՀՆԴԱՄՑԱԿԸ ԿՐԿՆԱՊԱՏԿՎԵԼ Ե ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԹԻՎԸ

Դուք գիտեք, վոր կադրերի հարցը սոցիալիստական շինարարության ամենադժվար հարցերից մեկը դուրս յեկավ: Մասնագետների հին կադրերի մի նշանակելի մասը, նույնիսկ հակառակ իր ամբողջ ցանկության, հարմարված չեր նոր խնդիրներին, նոր տեմպերին: Կարելի յե յերևակայել,—յեթե բոլշևիկյան կուսակցության շարքերում, հին բոլշևիկների շարքերում, նույնիսկ Կենտրոնական Կոմիտեյի շարքերում յեղան մարդիկ, վորոնք չդիմացան բոլշևիկյան տեմպերին, վորոնք հետ մնացին, վորոնք ամլացան, և վորոնց մոտ վառոդ չգտնվեց նոր մեծ գործի համար, հապա ել ի՛նչ կլիներ անկուսակցական հին մասնագետներից շատերի հետ, վորոնք հաճախ խորթ բանակից եյին դուրս յեկած: Կուսակցությունն աշխատում եր հին մասնագետներից լավագույններին ու ցիալիստական շինարարության մեջ քաշել, և լավագույնների նկատմամբ այդ խնդիրն իրագործվեց: Մենք շատ հերոսներ ունենք հին մասնագետներից, սակայն մի մասը գիտակցաբար վնասում եր, իսկ մի մասն ել անընդունակ դուրս յեկավ աշխատանքի նոր մեթոդների և արագ տեմպերի համար:

Սոցիալիստական արտադրության՝ իր սեփական, պրոլետարիատին հավատարիմ հրամանատարական կազմ ստեղծելու խնդիրը յեղել է և մնում է սոցիալիզմի պատմական խոշորագույն խնդիրը: Իր ամբողջ սրությամբ այդ խնդիրը դրեց ընկ. Ստալինը դեռ 1928 թվին, Շախտիի վնասարարների հայտնի դատավարության կապակցությամբ: Այդ դատավարությունը ցույց տվեց, վոր

տեխնիկական հին կադրերի մի զգալի մասը վստահելի չէ և ծանր րոպեյին դավաճանում է պրոլետարիատին: Մյուս կողմից՝ Շախտիի դատավարությունը, ինչպես և հետագա բոլոր մյուս դատավարությունները ցույց տվեցին, վոր մեր կոմունիստներից—ղեկավար աշխատողներից շատերը, անծանոթ լինելով տեխնիկային և չիմանալով տիրապետելու նրան, կուրորեն վստահանում էյին այդ մասնագետներին, աշխատում էյին վորպես ամենավատ տեսակի «կոմիսարներ», շտամպում էյին թուղթը, չէյին թափանցում գործի էության մեջ և դրանով էլ հենց հեշտացնում էյին վնասարարների աշխատանքը:

1928 թ. շատերը չհասկացան կադրերի պրոբլեմի մեծ նշանակությունը: Այն վեճերի ժամանակ, վորոնք տեղի ունեցան այստեղ, այս դահլիճում՝ Կենտրոնական Կոմիտեյի պլենումում՝ ԲՈՒՀ-եր ու ԲՏՈՒՀ-եր կազմակերպելու և դրանք արտադրական ժողկոմատներին հանձնելու կազմակերպական հարցի շուրջը, վոմանք հանդես յեկան ոպորտունիստորեն: Վորովհետև նրանք կամ չէյին հասկանում, կամ չէյին ուզում սոցիալիստական շինարարության բոլշևիկյան թափը, ուստի և դիմադրում էյին կադրերի պատրաստման պրոբլեմի լուծմանը: Յես խոսում եմ ընկ. Ռիկովի և մյուսների յելույթների մասին այդ պլենումում: Սակայն այն ժամանակ կային նաև այնպիսի ընկերներ, վորոնք պաշտպանում էյին սոցիալիստական շինարարության թափը, բայց չէյին հասկանում այն ժամանակ, վոր այդ կազմակերպական հարցը սոցիալիստական հարձակման հաջողության կարևորագույն պայմանն է: Դուք բոլորդ հիշում եք, թե ինչ վորոշումներ ընդունեց Կենտրոնական Կոմիտեն 1928 թ. հուլիսին, ինչ վորոշումներ ընդունեց Կենտկոմը 1929 թ. նոյեմբերին՝ 1928 թ. վորոշումների կատարումն ստուգելու կարգով: Կենտրոնական Կոմիտեն ամբողջ հաշվետու շրջանի ընթացքում համառորեն անդրադարձել է

կադրերի հարցին, ճշտելով, բարելավելով նրանց պատրաստման աշխատանքը: Կենտրոնական Կոմիտեն այդ հարցով զբաղվել է վոչ միայն ընդհանուր դրույթների տեսակետից, ԲՏՈՒՀ-երի ու տեխնիկումների կառուցման, ուսման, արտադրական պրակտիկայի վորակը բարձրացնելու, այլև նոր ուսանողներ ընտրելու, ուսումն ավարտելուց հետո նրանց արտադրության ուղարկելու տեսակետից:

Թույլ տվեք, ընկերնե՛ր, բերել մի աղյուսակ, վոր ցույց է տալիս, թե ինչ ենք ձեռք բերել մենք մեր խորհրդային արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան պատրաստելու գործում:

ԲՏՈՒՀ-եր յեվ ԲՈՒՀ-եր

	1928 թ.	1933 թ.
ԲՏՈՒՀ-երի և ԲՈՒՀ-երի թիվը ԽՍՀՄ-ում ըստ արտադրության բոլոր ճյուղերի . . .	129	600
Նրանց ուսանողների թիվը (հազարներով) . .	160	491

Բանվորների տոկոսը ԲՏՈՒՀ-երի և ԲՈՒՀ-երի ուսանողների կազմում կրկնապատկվել է, 1928 թվին—25%, 1933 թ.— 50 տոկ.: ԲՈՒՀ-երի և ԲՏՈՒՀ-երի ուսանողների կազմում կոմունիստների տոկոսը 1928 թվի 15-ից հասել է 1933 թ. 22-ի, իսկ կոմյերիտականների թիվը՝ 1928 թ. 19 տոկոսից 1933 թ. հասավ 30 տոկ.:

Առաջին հնգամյակի տարիներում ԲՏՈՒՀ-ներն ու ԲՈՒՀ-երն ավարտեցին 170 հազ. մասնագետ, իսկ միայն 1933 թ.— 37 հազ. մասնագետ: Դրա շնորհիվ բոլոր ճյուղերում բարձրագույն կրթությամբ մասնագետների թիվը 1928 թ. 179 հազարից 1933 թ. սկզբներին հասավ 303 հազարի:

Տեխնիկումներ

	1928 թ.	1933 թ.
Տեխնիկումների թիվը	1033	3522
Տեխնիկումների ուսանողների թիվը (հազարներով)	188	672

Բանվորների տոկոսը տեխնիկումների ուսանողների կազմում 1928 թ. 25 տոկոսից 33 թ. հասավ 41 տոկոսի, իսկ կոմյերիտականների տոկոսը 1928 թ. 36 տոկոսից 1933 թ. հասավ 42 տոկոսի: Առաջին հնգամյակի տարիներին տեխնիկումները տվել են 309 հազ. շրջանավարտ, իսկ միայն 33թ.—153 հազար: Սրա շնորհիվ տեխնիկական միջնակարգ կրթությամբ մասնագետների թիվը 1928 թ. 313 հազարից 1933 թ. սկիզբներին հասավ 669 հազարի:

Այս թվերը հսկայական քանակական տեղաշարժերի մասին են խոսում: Սակայն ե՛լ ավելի զգալի յեն այն վորակական փոփոխությունները, վորոնք տեղի յեն ունեցել մեր մասնագետների պատրաստման, ուսման վորակի բարձրացման գործում, մեր տնտեսական-տեխնիկական կադրերի, տեխնիկական վորակավորման և քաղաքական դեմքի փոփոխման ասպարեզում:

1928 թվ. բարձրագույն դպր. հաստատությունների մեծ մասը տեխնիկական չէր: Սխալ եյին հասկանում պոլիտեխնիզմը, պատրաստում եյին ունիվերսալ մասնագետ, վորը հաճախ ամեն ինչ գիտեր, սակայն ամենից քիչ այն գործի տեխնիկան գիտեր, ուր նա ուղարկվում եր: Մենք սուր կերպով փոխեցինք ԲՏՈՒՀ-երի աշխատանքի սիստեմն ու արտադրական պրակտիկան և մասնագիտացրինք տեխնիկական ԲՈՒՀ-երը: Իհարկե, բանն առանց մի քանի չափազանցությունների չանցավ. հաճախ չափազանց նեղացնում եյին մասնագետների պատրաստության շրջանակները: Սակայն վերակառուցման հիմնական ուղղությունը ճիշտ եր: Ցես դրանով չեմ ուզում ասել, թե մեզ մոտ ամեն ինչ լավ է արդեն: ԲՏՈՒՀ-երում և ԲՈՒՀ-երում մինչև այժմ էլ ուսուցման վորակն կաղում է: Մասնավորապես այդ վերաբերում է ճարտարապետական կադրերին, վորոնք 2-րդ հնգամյակում առանձին նշանակություն են ստա-

նում: Այժմ մենք պետք է ավելի շատ ուժ տանք ուսման վորակին, պատրաստման վորակին:

Յեթե դուք նկատի ունենաք, վոր շրջանավարտ մասնագետների թիվն արդեն վորոշակի աճում է տարին, վոր 1934–35 թվականներին մենք ստանալու յենք 1931–32 թ. կազմակերպված ընդունելության արդյունքները, ապա պարզ կլինի, թե վորքան ենք մենք բարելավել կադրերի պատրաստումը թե քանակապես, թե վորակապես:

Ընկ. Ստալինի պատմական լոզունգները—«տեխնիկան վերակառուցման շրջանում վճռում է ամեն ինչ», «բոլշևիկները պետք է տիրապետեն տեխնիկային»—հսկայական խանդավառություն և գիտության ձգտում առաջացրին կոմունիստների, առաջավոր անկուսակցական բանվորների ու կոլտնտեսականների մեջ: Կուսակցության կատարած կազմակերպական հսկայական աշխատանքի հետևանքով Խորհրդային Միությունը դարձավ մասսայական-տեխնիկական կրթության յերկիր: Այժմ մենք սկսում ենք քաղել ընկ. Ստալինի այդ պատմական դիրեկտիվների առատ պտուղները և 2-րդ հնգամյակը թևակոխում ենք պրոլետարական յերիտասարդ հրամանատարական կադրերի ամրացած վոսկրաշարով, մանավանդ արդյունաբերության մեջ:

Խոշոր արդյունաբերության մեջ բարձրագույն կրթությունն ավարտած մասնագետների թիվը 1928 թվի 13,7 հազարից 1933 թվին հասավ 50,7 հազարի, միջնակարգ կրթությունն ավարտածների թիվը 1928թվի 10,5 հազարից 1933 թվին հասավ 71,8 հազարի: Իսկ բոլոր մասնագետների թիվը պրակտիկների հետ միասին 1928 թ. 100 հազարից 33 թ. հասավ 331 հազարի:

Առաջին հնգամյակի տարիներում ԲՈՒՀ-երն ու տեխնիկումներն ավարտած յերիտասարդ մասնագետների թիվը կազմում է բոլոր մասնագետների կեսից ավելին. [illegible] ասպարեզում—66 տոկոսը,

11-27351/9к
ԱԶԳԱՅԻՆ

ավիաարդյունաբերության մեջ—70 տոկ., նավթի ասպարեզում 68 տոկ., ածխարդյունաբերության մեջ—58 տոկ., ավտոտրակտորային արդյունաբերության մեջ—60 տոկոսը և այլն:

Արտադրության մեջ հրամանատարական պաշտոններում, ցեխապետերի, նրանց տեղակալների և հերթապետերի մեջ յերիտասարդ մասնագետները կազմում են՝ սև մետաղաձուլության մեջ 65 տոկոս, ավտոտրակտորային արդյունաբերության մեջ 62 տոկոս, շինարարության մեջ 62 տոկ., ելեկտրոարդյունաբերության ու էներգետիկայի մեջ 64 տոկոս:

Ստալինի անվան ավտոգործարանում հրամանատարական ամբողջ կազմի կեսն առաջ է քաշված բանվորների շարքերից՝ առաջին հնգամյակի տարիներում:

Այսօր մենք արդեն այնպիսի փաստեր ունենք, յերբ ամբողջ գործարաններ, ամբողջ ցեխեր միայն յերիտասարդ մասնագետներն են կառավարում, յերբ մեր մասնագետներից շատերը վոչ միայն հին մասնագետներից, այլև մի քանի ոտարերկրյա մասնագետներից վոչ թե վատ չեն աշխատում, այլ ավելի լավ են աշխատում:

Յես կարող եյի որինակ բերել իմ և ընկ. Որջոնիկիձեյի ուղևորությունից դեպի Ստալինոգորսկի քիմկոմբինատը: Այստեղ մենք տեսանք մի յերիտասարդ պրոֆեսորի, վորը ԲՈՒՀ ավարտել եր միայն 1930 թվին. նա պրոֆեսորի կոչման արժանացել եր ինչպես հարկն ե, վոչ թե այնպես, ինչպես յերբեմն ստանում են այդ կոչումը—աչքակապությամբ, կեղծ միջոցներով (ծիծաղ), այլ վաստակել ե այդ կոչումն ինչպես հարկն ե: Յեվ ահա այդ ընկ. Գեյլպերինը, Բերեզնիկովի ազոտի գործարանում աշխատելիս քանդել ու նորոգել ե կատալիզատորները, հավաքել ու բացառապես խորհրդային մասնագետների ուժերով գործարկել ե սինթեզի կալոններից մեկը: Այդ կալոնը սարքող ամերիկացիները չկարողացան գործարկել այդ կալոնը, վորովհետև նա

կառուցվածքային թերություններ ուներ: Ընկ. Գեյլպերինը յերիտասարդ ճարտարագետ Մոնոսովիչի հետ միասին փոխում ե կալոնի կառուցվածքը և կարողանում ե գործարկել: Այսօր այդ կալոնը հաջող աշխատում ե: Նրան ճապոնիայից հրավիրել են վորպես խորհրդատու՝ նոր գործարան կառուցելու համար. սակայն յերիտասարդ խորհրդային պրոֆեսորը քաղաքավարի կերպով պատասխանել ե, վոր ժամանակ չունի, վոր մենք ինքներս էլ բավական գործ ունենք (ծափեր, ծիծաղ):

Կարելի յեր հնգամյակի տարիներում ասպարեզ յեկած տաղանդավոր մարդկանց մի շարք ամենափայլուն որինակներ բերել: Յես կարող եյի խոսել 1931 թ. կուսակցության անդամ ընկ. Բուտենկոյի մասին, վորը դեռ մոտիկ անցյալում փականագործ ե յեղել և 1928 թ. ավարտել ե ԲՏՈՒՀ-ը: Այդ Բուտենկոն հինգ տարում այնպիսի ստաժ ե անցել,—Ստալինի անվան գործարանի հերթափոխության ճարտարագետից, հալոցապետի ոգնականից, հալոցապետից, գլխավոր ճարտարագետից մինչև Դոնբասի խոշորագույն մետաղաձուլարանի տեխնիկական դիրեկտորի պաշտոնը:

Որջոնիկիձե. Բացի դրանից, նա այժմ փոխարինում ե գործարանի դիրեկտոր Մանայենկովին:

Սարգիսով. Շա՛տ լավ ե կատարում իր գործը:

Կագանովիչ. Յեվ շա՛տ լավ ե այդ: Ահա նաև ակումուլյատորային տրեստի դիրեկտոր ընկ. Ազմիրայակին, վոր ծնվել ե 1902 թ. և մոտիկ անցյալում կոմյերիտական ակտիվ աշխատող ե յեղել: Այդ դիրեկտորը ԲՏՈՒՀ-ն ավարտել ե 1928 թ., մեծացել ե արտադրության մեջ և այժմ հաջողությամբ կատարում ե ակումուլյատորային տրեստի դիրեկտորի բարդ պաշտոնը:

Կարելի յեր հազարավոր որինակներ բերել, յերբ յերեկվա սևագործ բանվորները բրիգադավարներ, վարպետներ ու տեխնիկներ են դարձել: Այդ արդյունք ե այն պայքարի, վոր կուսակցությունը ծավալել ե պրոլետարական կադրերի համար:

2.

ԻՆՉՊԵՍ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՑՐԵԼ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐՈՎ

Առանձնապես անհրաժեշտ ե կանգ առնել գյուղատնտեսության կադրերի վրա: Այստեղ նույնպես, ինչպես և արդյունաբերության մեջ, ընդարձակված ե մեր տեխնիկական կադրերի պատրաստումը:

Գյուղատնտեսության կադրերի պատրաստումը

	1928 թ.	1933 թ.
Գյուղատնտես. ԲՏՈՒՀ-երի և ԲՈՒՀ-երի թիվը	30	116
» *տեխնիկումների թիվը*	204	928
» *ԲՏՈՒՀ-երի և ԲՈՒՀ-երի ուսանողների թիվը (հազարներով)*	29	99
Տեխնիկումների ուսանող. թիվը (հազարներով)	30	121

Առաջին հնգամյակի տարիներում գյուղատնտեսական ԲՈՒՀ-երը տվել են 29 հազար շրջանավարտ, 1933 թվին—6000: Գյուղատնտեսական տեխնիկումներն առաջին հնգամյակի տարիներում ավարտել են 67 հազար հոգի, իսկ 1933 թ.—31 հազար հոգի:

Սրա շնորհիվ, յեթե առաջին հնգամյակի սկզբին գյուղատնտեսության բնագավառում արտադրության մեջ ԽՍՀՄ Պետպլանի տվյալներով աշխատում եր մոտ 18 հազար մասնագետ գյուղատնտեսական լրիվ կրթությամբ, ապա 1933 թ. վերջերին արտադրության մեջ (ներառյալ նաև շրջանային հողօրգանները) աշխատում եր բարձրագույն ու միջնակարգ գյուղատնտեսական կրթություն ստացած մոտ 126 հազար մասնագետ, այսինքն՝ աճում 7 անգամ:

Իհարկե, մեզ մոտ գյուղատնտեսության տեխնիկական կադրերի պահանջը հեռու չե բավարարված լինելուց: Սակայն գյուղատնտեսության մեջ վերջին 1–2 տարում առանձին սրությամբ դրվեց ղեկավար կազմակերպական կադրերի հարցը:

Յեթե արդյունաբերությունն ինքը կարող եր իր կադրերի լրացման աղբյուր լինել, ապա գյուղատնտեսության մեջ մինչև վերջին ժամանակները չափազանց սահմանափակ եյին այդ հնարավորությունները, յեթե ավելին չասենք:

Սոցիալիզմի դրոշի տակ կանգնած գյուղին պետք ե ուժներ քաղաքը, և այդ բանն իրագործեց մեր կուսակցությունը: Առաջներում փոշիացած գյուղը չեր կարող իր միջից տալ անհրաժեշտ թվով նոր տիպի կազմակերպիչներ այնպիսի խոշոր սոցիալիստական հողագործության համար, ինչպես կոլտնտեսությունները, ՄՏԿ-ները և խորհտնտեսությունները: Այստեղից այն խնդիրն ե բըղխում, վոր գյուղին պետք եր դրսից մարդիկ տալ, ամրակուռ աշխատողներ տալ նրան պրոլետարական քաղաքից, վորոնք կարողանային գյուղում ամուր կուսակազմակերպություն ստեղծել, կարողանային կոփել բոլշևիկներ, դաստիարակել կադրեր, ստեղծել պահեստի ուժեր, վորոնցից հետագայում կարելի լիներ ղեկավար կազմ ստանալ մեր սոցիալիստական գյուղատնտեսության համար:

Դուք բոլորդ հիշում եք 25 հազար բանվորների ուղարկումը: Այդ առաջին քայլն եր: Առաջին շրջանում նրանք ոգնեցին և լավ դեր խաղացին: Սակայն այդ բավարար ուժ չեր գյուղը կոլտնտեսային նոր ուղու վրա ամրացնելու համար:

Յեվ ահա ընկ. Ստալինը, լենինաբար ընդհանրացնելով գյուղում ստեղծված դրությունը, առաջադրեց այն խնդիրը, թե պետք ե գյուղում ստեղծել նոր կազմակերպություն— քաղբաժիններ, այնտեղ ուղարկել քաղաքից ստուգված ամուր մարդկանց, վորոնք կարողանան լուծել կուսակցության առաջ ծառացած խնդիրները: Յերբ մենք դեռ նոր եյինք սկսել կազմակերպել քաղբաժինները, մի քանի ընկերներ տարակուսում եյին, թե այդ ինչպես են վերից աշխատողներ ուղարկում

գյուղ, ինչպես այդ կընդունի գյուղացիությունը: Այսոր մենք լսում ենք մի հզոր ձայն, վորը բխում ե տասնյակ միլիոնավոր գյուղացիների անկեղծ սրտից, վորոնք բառացի գովերգում են քաղբաժնի աշխատողներին, վորպես բոլշևիկ կազմակերպիչների, վորպես մարդիկ, վորոնք կոլտնտեսական մասսային միացնում են պայքարելու համար հանուն բոլշևիկյան կոլտնտեսությունների, հանուն կոլտնտեսականների ունևոր ու կուլտուրական կյանքի: (Բուռն ծափեր):

Յերբ մենք սկսեցինք քաղբաժինների համար աշխատողներ ընտրել, ընկ. Ստալինը հատկապես մատնանշեց.—տեսեք, վոր այստեղ ընդհանուր մոբիլիզացիոն մոտեցում չունենաք, ընտրեցեք անհատապես, ուշի-ուշով ուսումնասիրեցեք ամեն մի առանձին թեկնածվի, ընտրեցեք խոշոր մարդկանց, հաշվի չառնելով, վոր հիմնարկներն ու կազմակերպությունները կդանդաղեն, խնամքով ընտրեցեք, վորովհետև դուք մարդկանց ուղարկում եք գյուղի վերակառուցման մեծ գործի համար:

Քաղբաժնի մի աշխատող ընտրելու համար մենք ստիպված ենք յեղել քննել 5, իսկ յերբեմն նաև 10 մարդ: Յեվ վոչ թե այն պատճառով, վոր դրանք վատ մարդիկ եյին, այլ այն պատճառով, վոր քաղբաժինների համար մենք ամենալավերին եյինք ընտրում: Պատահել ե, վոր մարդիկ յեկել, ուղղակի լաց են յեղել.— Ինչո՞ւ յեք մեզ անպետք համարում քաղբաժնի համար. դուք ինձ կանչեցիք. լա՛վ, չեք ուզում ուղարկել վորպես պետ, ուղարկեցեք վորպես տեղակալ, ոգնական, հրահանգիչ:

Քաղբաժիններն ուղարկելու շուրջը բառացի կերպով շարժում ծավալվեց կոմունիստների մեջ:

Մենք մի խումբ կազմեցինք բանակային աշխատողներից: Բանակը մեզ տվեց քաղբաժինների պետերի առաջին խումբը 300 հոգի: Այդ ամբակուռ, հիանալի մարդկանց առաջին ջոկատն եր (ծափեր):

Գյուղ են ուղարկվել ավելի քան 18 հազար քաղբաժնի աշխատողներ, վորոնցից՝ 58% բանվորներ՝ 35 տոկոսը մինչև 1920թ. կուսստաժով. քաղբաժնի պետերից մինչև 1920 թ. կուսստաժ ունեցողները կազմում են 79 տոկոս. պետերի 45 տոկոսն ունի կուսակցական կամ ընդհանուր բարձրագույն կրթություն, 46 տոկոսը՝ միջնակարգ կրթություն:

Բացի քաղբաժնի աշխատողներից, յուրաքանչյուր մարզ մարդիկ ե ուղարկել գյուղերը, կոլտնտեսությունները: Վոչ լրիվ տվյալներով 23 մարզ գյուղ են ուղարկել 40–50 հազար աշխատող: Կենտրոնական Կոմիտեյի կողմից քաղբաժինների աշխատողներ ուղարկելը շարժեց մարզերն ու յերկրները: Քաղբաժինների պետերի առնվազն կեսը Մոսկվայից ու Լենինգրադից ուղարկվածներն են: Մոսկվան և Լենինգրադը, այդ յերկու մայրաքաղաքները պատվով կատարեցին իրենց պարտքը յերկրի հանդեպ (ծափեր):

3.

ԿԵՆՏԿՈՄԸ ԱՄՐԱՑՐԵՑ ԱՇԽԱՏՈՂՆԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՀՆԴԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԸ

Առանձնապես պետք ե մատնանշել տեղերին ցույց տրված ոգնությունը, նրանց աշխատողներով ամրացնելը: Համագումարների միջանկյալ ժամանակաշրջանում Կենտրոնական Կոմիտեն 45 հազար աշխատող ե բաշխել (15-րդ և 16-րդ համագումարների միջանկյալ ժամանակաշրջանում բաշխվել ե միայն 10 հազար աշխատող): Բաշխվածների թվի ավելացումը չի անդրադարձել ուղարկվողների վորակի վրա: Բաշխվածների

70 տոկոսից ավելին կուսակցության մեջ մտել է 1920 թվից վոչ ուշ, կեսից ավելին անցյալում յեղել է բանվոր, ուղարկվածների 62 տոկոսն ավարտած բարձրագույն կամ միջնակարգ կրթություն ունի:

Կենտկոմից աշխատողներ են ստացել—Ուրալը՝ 2238 հոգի, Արևմտյան Սիբիրը— 2242, Արևելյան Սիբիրը—1381, Հեռավոր Արևելքը— 1913, Միջին Ասիան—1927, Ղազախստանը—2261: Այսպիսով այս յերկրներն ու հանրապետությունները համարյա 12 հազար աշխատող են ստացել: Նրանցից հետ է վերցրած (հասունություն, տեղափոխություն և այլն) 1800 աշխատող:

Շատ աշխատողներ են ուղարկվել հիմնական գյուղատնտեսական շրջանները: Ուկրաինան ստացել է 5581 աշխատող, Հյուսիս. Կովկասը՝ 3197, Ստորին Վոլգան՝ 2140, Միջին Վոլգան՝ 1625, ԿՍՄ՝ 1788: Ընդամենը այդ շրջանները ստացել են ավելի քան 14 հազար աշխատող. նրանցից հետ է վերցված 3000 հոգի: Մի մարզ, վորտեղ մենք քիչ մարդ ենք ուղարկել, Անդրկովկասն է: Կենտրոնական Կոմիտեն հնարավորություն ունի հավատալու, վոր վերջին տարիներում Անդրկովկասի բոլոր հանրապետություններում մեծ հաջողությամբ նոր մարդիկ են պատրաստվում (ծափահարություններ):

Կենտրոնական Կոմիտեն զբաղվել է վորակյալ բանվորներով ապահովելու հարցով: Մասնավորապես Կենտկոմի ղեկավարությամբ Կոմյերիտմիությունն ու արհմիությունները մեծ աշխատանք են կատարել Ուրալի նոր շինարարությունների համար մարդիկ մոբիլիզացիայի յենթարկելու ուղղությամբ: Կամ՝ ահա այժմ նոր տեքստիլ կոմբինատներ են կազմակերպվում, և Կենտկոմը Մոսկվայի և Իվանովոյի մարզերում մանածագործներին մոբիլիզացիայի յե յենթարկում Միջին Ասիա և Արևմտյան Սիբիր ուղարկելու համար: Ընդամենը 3 տարում մեր կոմյերիտմիությունը մոբիլիզա-

ցիայի յեն յենթարկել 66 հազար բանվոր Ուրալ—Կուզբասի ձեռնարկությունների համար, 36 հազար Դոնբասի համար, 7 հազար Ստալինգրադի Տրակտորա-գործարանի համար, 10 հազար Մետրոստրոյի համար, 6 հազար կապի օրգանների, 20 հազար փայտամթերումների և 3 հազարից ավելի Հեռ. Արևելյան յերկրի համար և այլն:

Այս բոլորը բավական է, վորպեսզի մարդ գաղափար կազմի այն կազմակերպական աշխատանքի հսկայական թափի մասին, վորը բնորոշվում է վոչ միայն կադրերի պատրաստումով, աճումով ու բաշխումով, այլև նոր ձեռնարկությունների, հիմնարկների և այլնի ստեղծումով:

Հասկանալի յե, վոր մենք դեռ շատ թերություններ ունենք աշխատողների պատրաստման ու բաշխման տեսակետից: Դեռևս չի վերացվել աշխատողների ընտրության գործում ընդհանուր մոբիլիզատորական մոտեցում ունենալու պրակտիկան, աշխատողների անձնական ընտրությունը, նրանց անձնական ընդունակությունների հաշվառումը դեռ անբավարար է:

Կարևորագույն թերությունները հետևյալներն են.— չկա մարդկանց ուշադիր ընտրություն, այդ մարդկանց անձնական գնահատություն վոչ թե դիպլոմով, այլ գործնական աշխատանքով. չեն կարողանում բարձրացնել և առաջ քաշել այնպիսի մարդկանց, վորոնք արժանի յեն այդ առաջքաշմանը. անբավարար է շատ ԲՈՒՀ-երի և մանավանդ տեխնիկումների աշխատանքի վորակը:

Իսկ գլխավորն այն հիվանդություններն են, վոր յերևան բերեց Կենտրոնական Կոմիտեն ածխարդյունաբերության և յերկաթուղային տրանսպորտի օրինակով,— հսկայական թվով մարդկանց կուտակումը գրասենյակներում:

Մասնագետներին գրասենյակներից արտադրու-

թյուն փոխադրելու աշխատանքն ածխարդյունաբերության մեջ և յերկաթուղիներում արդեն շոշափելի արդյունքներ ե տվել:

Օրինակ, Դոնբասում մինչև 1933թ. մարտի 1-ն աշխատում եր 643 հանքագործ ճարտարագետ, վորոնցից հանքամասերում ընդամենը 26 հոգի. հոկտեմբերի 1-ին աշխատում եր արդեն 854 հոգի, վորոնցից հանքամասերում 350 հոգի: Հանքամասերում աշխատողների թիվն ավելացավ 13 անգամ: Ընդամենը հանքամասերում առ 1 մարտի 1933 թ. աշխատում եր 228 ճարտարագետ ու տեխնիկ, իսկ հոկտեմբերի 1-ին 1120 հոգի, աճում 5 անգամ:

Յերկաթուղիներում 1933 թ. հուլիսի 1-ին աշխատում եր հիմնական դեպոներում 446 ճարտարագետ, առ 1-ն հոկտեմբերի 976 ճարտարագետ: Առ 1-ն հուլիսի դեպովագոնային մասերում, կայարաններում ուղեմասերում ու կապում աշխատում եր ընդամենը 1012 ճարտարագետ և 7575 տեխնիկ, իսկ առ 1-ն հոկտեմբերի աշխատում եր 3095 ճարտարագետ և 14342 տեխնիկ, այսինքն՝ յերկաթուղային տրանսպորտի ստորին օղակներում աշխատող ճարտարագետների թիվն ավելացավ 3 անգամ, իսկ տեխնիկներինը՝ 2 անգամ: Հանքահորերի և յերկաթուղիների փորձը ցույց ե տալիս, թե ինչ հնարավորություններ կան այդ տեսակետից ժողովրդական տնտեսության մնացած բոլոր ճյուղերում:

Սակայն, դեռ բավական չե մարդիկ ստորին օղակները տեղափոխելը: Ինչո՞ւ առաջ մեզ մոտ բավականաչափ զգալի չեյին հաստիքների կրճատման արդյունքները: Այն պատճառով, վոր հաստիքները կրճատվում եյին առանց արմատական ու խորը վերակառուցման վերից-վար, առանց կազմակերպական սիստեմն ու հաշվետվությունը փոփոխելու: Յեվ միայն հաստիքների վերջին կրճատման ժամանակ, վոր Կենտկոմի հանձնարարությամբ կատարեցին ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատի որ-

գանները, սկսվեց հենց ապարատների կառուցվածքի փոփոխումը, ճիշտ ե՝ վոչ բավականաչափ վճռականորեն:

Ռոյզենման. Ճի՛շտ ե:

Կագանովիչ. Վոչ միայն ձեռնարկության մեջ, այլև ցեխում, աշխատամասում կազմակերպական կառուցվածքը սխալ լինելու, ֆունկցիոնալության պայմաններում աշխատողը կարող ե զբաղվել վոչ թե գործով, վոչ թե տեխնիկական ղեկավարությամբ, այլ գրագրությամբ, հաշվետվություններ կազմելով և այլն, ինչպիսին դժբախտաբար տեսնում ենք այժմ արդյունաբերության մի շարք ձեռնարկություններում, տրանսպորտում, ՄՏԿ-ներում և խորհտնտեսություններում:

Դեռ բավական չե աշխատողին ստորին օղակն ուղարկելը: Կադրերի հետագա աճման, նրանց սոցիալիստական շինարարության պրակտիկայում սովորեցնելու տեսակետից, այն ազնիվ շաղակրատի տիպը վերացնելու տեսակետից, վորի մասին ցայտունորեն խոսեց ընկ. Ստալինը, ամենախոշոր նշանակություն ունեն ղեկավարության դրասենեկային-բյուրոկրատիկ մեթոդների վերացումը, կատարման ստուգումը և աշխատանքի հետագա վերակառուցումը, համաձայն այն դրույթների, վոր տվեց ընկ. Ստալինն իր հաշվետու զեկուցման մեջ:

Յերբ մարդիկ ծանրաբեռնված են գրասենեկային թղթությամբ և ընդհանուր բանաձևեր գրելով, նրանք աչքաթող են անում «փոքրիկ բաները», նրանք չեն տեսնում կենդանի մարդկանց: Նրանք չեն տեսնում նոր վարպետներին, նոր ճարտարագետներին, նոր տեխնիկներին, չեն տեսնում աշխատանքի նոր հերոսներին, չեն տեսնում կոմյերիտականներին, վորոնք աճում են, վորոնց կարելի յե առաջ քաշել և նոր աշխատանքի դնել:

Սխալ ե, յերբ ասում են, թե մենք մարդիկ չունենք: Մարդիկ կան և այն ել տաղանդավոր մարդիկ, պետք ե կարողանալ առաջ քաշել նրանց, բարձրացնել և համա-

պատասխան գործի դնել։ Պետք է կարողանալ, ինչպես հարկն է, նրանց ղեկավարել։

Պետք է նոր գործի դրված աշխատողին դաստիարակել, բարձրացնել նրան աշխատանքի պրոցեսում, որպեսզի նա չամրանա, որպեսզի նա չփչանա։ Պետք է ժամանակ առ ժամանակ ջնջոցով սրբել այն փոշին, որ նստում է նրա վրա (ծիծաղ, ծափեր)։

4.

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՅԺՄՅԱՆ ԵՏԱՊՈՒՄ

Մենք բոլորեցինք փառավոր պայքարի մեծ տարիները և 17-րդ համագումարում ամփոփում ենք այդ հաղթանակները։ Ամփոփում ենք ոչ թե նրա համար, որ հղփանանք հաղթանակներով, որոնցով իրավամբ հպարտանում ենք։ Մենք այդ ամփոփումներն անում ենք ոչ թե ակադեմիական, պատմական տեսակետից, այլ որպես հեղափոխական մարտիկների բանակ։ Մենք հետադարձ հայացք ենք գցում մեր անցած ճանապարհի վրա, որպեսզի անցյալի դասերով ստուգենք ու սրբենք մեր զենքն առաջիկա մեծ մարտերի համար։

Մեր նվաճումները թույլ են տալիս մեզ ուժեղացնել պայքարը կազմակերպական թերությունների դեմ։ Մենք պետք է ամրացնենք առաջին հնգամյակի տարիներում նվաճածը, բարձրացնենք աշխատանքի որակը և շինարարության պաթոսը լրացնենք յուրացման պաթոսով։

Վիթխարի յեր մեր աշխատանքի կազմակերպական թափը։ Այստեղ անխուսափելի եյին թերությունները, այնպես, ինչպես նոր կառուցված գործարանի առանձին անկյուններում կուտակվում եր աղբը, մեծ շինարա-

րության անպետք մնացորդները։ Այժմ անհրաժեշտ է մաքրվել, ամեն ինչ կարգի բերել։

Մենք պետք է խստորեն մերկացնենք մեր թերությունները. Նրանց քննադատությունը ամենևին չի նսեմացնում մեր նվաճումները, ընդհակառակը՝ այդ քննադատությունը ցույց է տալիս սեփական ուժի գիտակցությունը, մեր վստահությունը պրոլետարական դիկտատուրայի օրգանիզմի ամրության ու կայունության նկատմամբ։

17-րդ համագումարին առաջարկվող թեզիսներում ասվում է.—

«Այժմ, յերբ հաղթանակել է կուսակցության գլխավոր գիծը, յերբ կուսակցության քաղաքականությունն ստուգվել է կյանքում, ոչ միայն կուսակցության անդամների, այլ և միլիոնավոր բանվորների ու աշխատավոր գյուղացիների փորձով, իր ամբողջ ծավալով մեր առաջ է կանգնում կազմակերպական աշխատանքը քաղաքական ղեկավարության մակարդակին բարձրացնելու խնդիրը։ Կազմակերպական հարցը, մնալով քաղաքականությանն ստորադասված հարց, այնուամենայնիվ այդ պատճառով էլ բացառիկ նշանակություն է ստանում սոցիալիստական շինարարության հետագա հաջողությունների համար»։

Լենինն ու Ստալինը շատ անգամ են մատնանշել, որ կազմակերպական հարցի մեջ մարդկանց ընտրությունը և կատարման ստուգումն է։ Այս յերկու պրոբլեմներն անխզելիորեն կապված են միմիանց հետ։ Նրանց ճիշտ լուծումն անհնարին է առանց մեր կուսակցական ու խորհրդային մարմինների աշխատանքի կառուցվածքն ու սիստեմը վերակառուցելու։

Ֆունկցիոնալ սիստեմի ժամանակ, որը դիմազրկություն է առաջ բերում, չի կարելի հստակ ու օպե-

րատիվ ղեկավարություն կազմակերպել, չի կարելի վորոշակի օպերատիվ ղեկավարություն սահմանել, չի կարելի անձնական խիստ պատասխանատվություն սահմանել, իսկ հետևապես, չի կարելի նաև ապահովել կատարման սիստեմատիկ ու մանրազնին ստուգումը: Ֆունկցիոնալ սիստեմի ու խճճված կառուցվածքի ժամանակ փքվում են միջին ու բարձր օղակների հաստիքները: Այսոր աշխատողներին փոխադրում են արտադրություն, վաղը նրանց նորից հետ են բերում ուռճացող գրասենյակները:

Ահա թե ինչու մենք բոլոր կազմակերպական հարցերն ամբողջական, կոմպլեքսային ձևով ենք դնում— թե՛ մարդկանց ընտրություն, թե՛ կատարման ստուգում, թե՛ կազմակերպական կառուցվածքի փոփոխություն, թե՛ ղեկավարության գրասենեկային–բյուրոկրատական մեթոդների վերացում:

Անհրաժեշտ է ուղղակի ասել, վոր ղեկավարության գրասենեկային– բյուրոկրատական մեթոդները, ղեկավարությունն ընդհանուր հրամանների վերածելը, վարչական կառավարումը տնտեսավարության հետ կապակցելու անկարողությունը, ըստ էության ֆունկցիոնալությունը,— այս բոլորը կառավարման բուրժուական մեթոդների ժառանգությունն է: Մեր թեկուզ և ազնիվ ու լավ տնտեսավարներից ու ղեկավարներից շատերը չեն հասկանում, թե ինչ արմատական տարբերություն կա կառավարման գործի դրվածքի մեջ մեզ մոտ և բուրժուական յերկրներում:

Աշխարհում և վոչ մի տեղ կազմակերպական հարցը չի դրված և չի կարող դրված լինել այնպես սուր, այնպես լայն կերպով, ինչպես մեզ մոտ: Կապիտալիզմը չի հետաքրքրվում, նա չի իմացել և չգիտե յերկրի եկոնոմիկայի՝ վորպես միասնական ամբողջության, կազմակերպման բուն պրոբլեմը, քանի վոր այդ հակասում է հենց կապիտալիզմի բնույթին: Նույնիսկ կապիտալիս-

տական առանձին ձեռնարկության կամ տրեստի կազմակերպվածությունը չափազանց հարաբերական է: Հենց այդ պատճառով էլ տապալվեցին մանր–բուրժուական գաղափարախոսներ Ռուենի և ուրիշների բոլոր ուտոպիական փորձերը, վորոնք ուզում էյին կապիտալիստական տնտեսության մեջ կազմակերպվածության տարրեր մտցնել, առանց վերացնելու հենց ինքը՝ կապիտալիզմը: Այս պատճառով էլ հենց տապալվեցին սոցիալ-ֆաշիստների, նաև նրանց գործակիցների՝ մեր աջ ուպորտունիստների բոլոր փորձերը մենաշնորհների, կարտելների ու տրեստների զարգացման հիման վրա հիմնավորել «կազմակերպված կապիտալիզմի» թեորիան: Փաստորեն մենք տեսնում ենք, վոր կապիտալիստների բոլոր փորձերը՝ մենաշնորհներ, կարտելներ ու տրեստներ կազմակերպելու միջոցով արտադրության անիշխանությունը թուլացնելու վերաբերմամբ վոչ մի հետևանքի չեն հասցնում:

Բուրժուական պետական ապարատը, բուրժուական մինիստրությունները չեն կառավարում տնտեսությունը: Բուրժուական պետական ապարատը գլխավորապես վոստիկանական–կարգավորիչ դեր է կատարում, պաշտպանելով կապիտալիստների շահերն ընդդեմ հեղափոխական բանվորների, իսկ յուրաքանչյուր ձեռնարկություն կառավարում է ինքը՝ կապիտալիստը:

Մինչդեռ մեզ մոտ— սոցիալիստական հասարակության մեջ—հենց պետությունն է կենսագործում քաղաքական ու տնտեսական ղեկավարության միասնությունը:

Հենց ինքը կազմակերպական հարցի դրվածքը մեզանում առանձին սրությամբ բղխում է պրոլետարական դիկտատուրիայի բովանդակությունից, սոցիալիզմի շինարարության խնդիրների բովանդակությունից: Լենինն ու Ստալինը շատ անգամ են ընդգծել, վոր բուրժուազիայի դեմ հաղթանակ տանելուց հետո, իշխանու-

թյունը նվաճելուց հետո գլխավոր և ամենադժվարին հարցը—այդ հասարակական նոր հարաբերությունների կազմակերպման հարցն է, տասնյակ միլիոնավոր մարդկանց գոյության համար անհրաժեշտ մթերքների պլանային արտադրություն ու բաշխում կազմակերպելու խնդիրն է:

Վ. Ի. Լենինն ասում եր.

«Հաջողությամբ կառավարելու համար, բացի համոզելու կարողությունից, բացի քաղաքացիական կռիվներում հաղթանակելու կարողությունից, անհրաժեշտ է նաև գործնականորեն կազմակերպելու կարողություն: Այս ամենադժվարին խնդիրն է, քանի վոր խոսքը վերաբերում է տասնյակ ու տասնյակ միլիոնավոր մարդկանց կյանքի ամենախորը տնտեսական հիմքերը նոր ձևով կազմակերպելուն: Յեվ այդ ամենաշնորհակալ խնդիրն է, քանի վոր միայն նրա լուծումից հետո (գլխավոր և հիմնական գծերով) կարելի կլինի ասել, վոր Ռուսաստանը վոչ միայն խորհրդային, այլև սոցիալիստական հանրապետություն դարձավ» (22 հատոր, եջ 442):

Ընկեր Ստալինը համագումարում ցույց տվեց, թե այժմ, յերբ մենք հազարավոր նոր, խոշորագույն ձեռնարկություններ ենք ստեղծել, յերբ հսկայական չափով աճել են մասսաների պահանջները, յերբ յուրաքանչյուր աշխատողից պահանջվում է ամենախորը կերպով իմանալ աշխատանքի մանրամասնությունները, յերբ սոցիալիստական տնտեսաձևը «անբաժանորեն տիրապետող միակ իշխող ուժն է ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ», վորքա՛ն սուր կերպով են առաջադրվում կազմակերպական հարցերը:

Այն պայմաններում, յերբ սոցիալիստական տնտեսությունը հանդես է գալիս վորպես միակ իշխող ուժ վոչ միայն առանձին բնագավառներում, այլև տնտեսավարության ամբողջ դաշտում, գործի կազմակերպա-

կան վատ դրվածքը, վատ կառավարումը, կատարման վատ ստուգումն ուղղակի և անմիջական կերպով արգելակում են արտադրողական ուժերի զարգացումը, ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ու յուրացման խնդրի հաջող կատարումը:

Յեթե առաջին հնգամյակում պատմությունը վոչ մի հետաձգում չեր տալիս մեզ յերկրի ինդուստրացումը կիրառելու գործում, ապա յերկրորդ հնգամյակում մենք վոչ մի հետաձգում չունենք նոր տեխնիկայի յուրացման ու տիրապետման, նոր կենսաձևերի յուրացման ու ամրացման գործում: Իսկ այդ գործի հաջողությունը կախված է միմիայն մեր կազմակերպվածությունից, միմիայն գործի կազմակերպումից արդյունաբերության մեջ, տրանսպորտում, գյուղատնտեսության մեջ, առևտրի ասպարեզում և այլն: Ընկ. Ստալինը համագումարում հայտարարեց, թե մեր ճեղքվածքների ու աշխատանքի թերությունների պատասխանատվության ինը տասներորդականն այսուհետև ընկնում է վոչ թե «օբեկտիվ» պայմանների վրա, այլ հենց մեր վրա և միայն մեր վրա:

Կազմակերպական հարցը խոշորագույն տեղ է գրավել մեր շինարարության բոլոր ետապներում, իսկ այժմ նա էլ ավելի խորն ու վճռողական բնույթ է ստանում: Կազմակերպական հարցերն իրենց ամբողջ ծավալով կանգնած են մեր առաջ հենց այժմ—անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու դարաշրջանում: Յեթե կոլտնտեսության բրիգադները կամ խորհտնտեսության բաժինները վատ են կազմակերպված, յեթե այնտեղ վատ է կազմակերպած աշխատանքը, յեթե ռացիոնալ կերպով չեն օգտագործվում արտադրության միջոցները, յեթե այդ բրիգադի կամ խորհտնտեսության ղեկավարը լավ չգիտե իր գործը, ծանոթ չե ժամանակակից հողագործական նոր մեքենաների կառուցվածքին, յեթե տրակտորն ու կոմբայնը

նրա համար «մութ ուժ են», ապա այդ հարվածում է սոցիալիստական հողագործության ամրացմանը, արգելակում է տնտեսության սոցիալիստական ձևի կազմակերպումը, արգելակում է անդասակարգ հասարակության կառուցումը: Մեր կուսակցության աշխատանքի իմաստն ու բովանդակությունն այժմ, յերբ սոցիալիստական եկոնոմիկայի արդեն ստեղծված հիմքի վրա կատարվում է սոցիալիզմի ամբողջ շենքի կառուցումը, հենց այն է, վոր անմիջականորեն կազմակերպենք այդ շինարարությունը, կազմակերպենք դրա համար մասսաներին:

Կուսակցության կազմակերպական աշխատանքը նրա քաղաքական ղեկավարության մակարդակին հասցնել— այդ նշանակում է ապահովել կուսակցության գլխավոր գծի կենսագործման անհրաժեշտ տեմպը, սոցիալիստական հասարակության կառուցման անհրաժեշտ տեմպը: Հենց կազմակերպական հետամնացության վերացումից է կախված լինելու նաև նոր տեխնիկայի, նոր ձեռնարկությունների ամենաարագ յուրացումը, հենց դրանից է կախված լինելու կոլտնտեսությունների կազմակերպական ամրացումը և նրանց վերածումը կուլտուրական և ունևոր սոցիալիստական կյանքի օջախների:

Յուրաքանչյուր բոլշևիկի գիտակցությանը պետք է հասնի այն, վոր կազմակերպական հարցը դրվում է վոչ վորպես մեխանիզմի մանր թերությունների ուղղում: Կազմակերպական հարցը դրվել է Կենտկոմում ընկ. Ստալինի նախաձեռնությամբ նույնքան լայն կերպով, որքան լայն կերպով ծավալվեց պայքարը հանուն մեր կուսակցության գլխավոր գծի: Կուսակցության գլխավոր գիծը հաղթանակեց: Այս պարզ է բոլորի համար: Սրա համեմատ չարժվեց նաև կազմակերպական աշխատանքը, սակայն, վերջինը հետ մնաց. պետք է այդ աշխատանքը հասցնել քաղաքական ղեկավարության մակարդակին, 2–րդ համագումարի խնդիրների վիթխարի մասշտաբի մակարդակին:

Մենք պետք է կազմակերպական հարցը դիտենք վոչ միայն այս կամ վերնախավային կազմակերպության վերակառուցման տեսակետից, այլև բոլոր կազմակերպությունների վերակառուցման տեսակետից, սկսած գործարանից, կոլտնտեսությունից, ՄՏԿ–ից, խանութից, հիվանդանոցից և այլն, այսինքն՝ այն օղակներից, վորտեղ նյութական բարիքներ են արտադրվում, վորտեղ իսկական կյանքն է ստեղծվում:

Հարցի այդպիսի դրվածքի որինակ է Կենտկոմի վորոշումն ածխարդյունաբերության մասին:

II

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

1. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Յես այստեղ մանրամասն կանգ չեմ առնի քարածխի վերաբերյալ հարցի ամբողջ դրվածքի վրա: Պարզ է մի բան, վոր այդ հարցում, ինչպես ուրիշ վոչ մի հարցում, ապահովված է քաղաքական–տնտեսական խնդրի ու նրա կազմակերպական լուծման փոխադարձ կապը:

Այնպիսի նեղ տեղի վերացման քաղաքական ու տնտեսական հարցը, ինչպես ածխարդյունաբերության հետ մնալն է, Կենտկոմի կողմից ապահովվեց այնպիսի կազմակերպական ձեռնարկումներով, ինչպես ղեկավարման գրասենեկային–բյուրոկրատական մեթոդների հարվածումը, ինչպես վորակյալ ճարտարագետների ու տեխնիկների փոխադրումն անմիջապես արտադրություն, ինչպես պայքարը ֆունկցիոնալ սխեմի դեմ, կառավարման դիմազրկության դեմ, աշխատավարձի հավասարանքի դեմ: Այդ կազմակերպական ձեռնար–

կումները, ինչպես հայտնի յե, շատ ընդարձակվեցին ու դուրս յեկան Դոնբասի վերաբերյալ վորոշման շրջանակներից: Այդ ձեռնարկումները հիմնական կազմակերպական ողակն են մեր տնտեսական, պետական, կուսակցական աշխատանքի ամբողջ սիստեմի վերակառուցման գործում: Այս արդեն ապացուցված ե: Բանն այն չե, վոր հաստիքները կրճատենք, իսկ այնուհետև, կես տարուց հետո նրանք նորից փքվեն: Պետք ե սիստեմը փոխել:

Կուսակցությունը յերկար զբաղվեց Դոնբասով, սակայն, վորովհետև մենք արմատական կազմակերպական հարցերին չեյինք հասնում, սայլը տեղից չեր շարժվում: Արտադրանքի նորմաների կոտորակայնությունը խայտառակ չափերի յեր հասնում: Այդ նորմաները տասնյակ հազարներով եյին հաշվում: Որինակ, հենց միայն «Կարմիր գվարդիական» հանքային վարչությունում նրանց թիվը 12 հազարի յեր հասնում: Հրատարակված «Նորմավորման ցուցակները» հենց միայն մուրճերով աշխատող հանքահատների համար 1500 նորմա եյին նախատեսում: Նույնիսկ մի այնպիսի հասարակ գործողության համար, ինչպես կոնվեյերի ռեշտակների փոխադրումն ե, 400-ից ավելի նորմա յեր նախատեսված: Բանվորներն իհարկե չեյին կարող իմանալ իրենց նորմաներն ու գնահատումները տոննի կամ վագոնիկի համար:

Հրապարակ յեկան բրիգադապետի, տասնապետի ու հանքամասի պետի իշխանազրկությունը, պրոֆեսիաների կոտորակայնությունը, ինչպես նաև ֆունկցիոնալ աշխատանքը հանքահորի կառավարման գործում, վորը աբսուրդի յեր հասել: Յեթե տասնապետը կամ հանքամասի պետն անհրաժեշտ եյին համարում փորող մեքենան վերանորոգել, նրանք պետք ե խնդրեյին հանքահորի մեքենայացման բաժնի վարիչից, վորը նստած եր վերևում—հանքից դուրս, վորպեսզի նա փականագործ ուղարկեր նրանց: Յեթե վագոնետկաները

խախտվել են, և ճանապարհը փչացել ե, ապա հանքամասի պետը պետք ե այդ մասին խնդրեր ճանապարհային տնտեսության վարիչից, վորը նույնպես վերևում եր նստած, վորպեսզի վերջինս նորոգիչ բանվորներ ուղարկեր: Լավագույն ճարտարագետներն ու տեխնիկները նստած եյին տրեստներում, հանքի ու հանքահորի վարչություններում: Վորպես «խրախուսանք» լավ աշխատողներին փոխադրում եյին գրասենյակները: Յեվ այդ համարվում եր «բարձրացում»:

Դուք ծանոթ եք Կենտկոմի առաջին վորոշմանը, և ապա նրան հաջորդող՝ հանքահորի, հանքավարչության ու տրեստի կանոնադրությանը: Այդ կանոնադրության մեջ մենք սկսեցինք բրիգադապետից ու տասնապետից, արտադրության նախնական բջիջից, անցինք հանքամասի պետին իրավունքներ, լուծեցինք աշխատանքի նորմավորման, աշխատավարձի, մեխանիզմների նորոգման հարցերը և այլն: Ածխարդյունաբերության մեջ կազմակերպական հարցը հիմնովին ու խորը կերպով ե լուծված: Արդյունքները հայտնի յեն:

Ածխի որինակից յերևում ե, թե ինչպես պետք ե կրճատել հաստիքները, փոփոխել կառուցվածքը և թե ինչ արդյունքների կարելի յե հասնել: Ահա որինակներ. «Իլյիչ» հանքահորում (Կադիևուգոլ) առ 1-ն մարտի 1933 թ. կար 171 ծառայող, իսկ առ 1-ն հունվարի 1934 թ.—84 ծառայող, 2 անգամ պակաս: Իսկ ներքևում—հանքահորում աշխատող ճարտարագետ-տեխնիկական աշխատողների թիվն ավելացավ 13 հոգով: Ծառայողների թիվը յերկու անգամ կրճատվելուց հետո հանքահորը յերկու անգամ ավելի քարածուխ ե տալիս, քան 1932 թ.—150 հազար տոննի փոխարեն 286 հազ. տոնն, պլանը գերակատարելով 12 տոկոսով:

Խիստ կրճատեցինք հաշվետվությունը: Յեթե մինչև Կենտկոմի վորոշումը հանքահորը պետք ե ամսվա ընթացքում 64 զանազան ձևերի 51.500 ցուցանիշներ

տար, ապա այժմ հաշվետվությունը կրճատված է 7 անգամ: Գրագրամոլների թիվը պակասեց, ավելի քիչ թուղթ են փչացնում, իսկ քարածուխ ավելի շատ են արտադրում: Ուկրայնական Դոնբասի միջին-օրական փաստացի հանույթը մայիս ամսին 121 հազ. տոնն էր, նոյեմբերին 134 հազ. տոնն, աճում—11 տոկոս: Մայիսին մեկ ածխագործ բանվորի արտադրությունը 36 տոնն էր, հոկտեմբերին 42 տոնն, աճում—16 տոկոս: Բարձրացել է բանվորների աշխատավարձը. մայիսին 118 ռուբլի յեր, հոկտեմբերին 150 ռ., աճում—27 տոկոս: Ֆունկցիոնալ սիստեմի վերացումը խիստ կերպով իջեցրեց մեխանիզմների վթարանքը (ավարիա): Այսպես, օրինակ, «Իլյիչ» հանքահորում (Կադիևուգոլ) 1932 թ. յեղել է փորող մեքենաների 31 խոշոր վթարանք, 1933 թ.—19. 1932 թ. յեղել է կոնվեյերի փոկերի 14 վթարանք, 1933 թ.—6, ընդվորում 1933 թ. վթարանքների մեծ մասը վերաբերում է առաջին կիսամյակին. յերկրորդ կիսամյակում համարյա վթարանք չի յեղել: Այդ նույն հանքահորում կար ածխի զտման հատուկ բաժին: Շրջանի պետը համարյա թե պատասխանատու չեր քարածխի վորակի համար. այժմ այդ բաժինը վերացված է, քարածխի մոխրոտության տոկոսը խիստ իջել է:

Հարստացման բաժնի վերացումը հարստացրեց քարածուխը: Մենք մի բաժնով «աղքատացանք» սակայն, դրա փոխարեն հանքահորը հարստացավ քարածխով (ծիծաղ):

Իհարկե, ածխարդյունաբերության մեջ էլ վերակառուցումը դեռ ավարտված չէ. այնտեղ էլ դեռ մի շարք հանքահորեր ու տրեստներ կան, վորոնց մասին կարելի յե ասել, թե «դռնից դուրս ես անում, պատուհանից է ներս մտնում»: Տվյալ դեպքում խոսքը բյուրոկրատիզմի բնույթին է վերաբերում: Այնտեղ դեռ անհրաժեշտ է պայքար, անհրաժեշտ է կատարման ստու-

գում, և չի կարելի հաջողություններով տարվել, սակայն այնուամենայնիվ մենք կարող ենք ասել, վոր ածխարդյունաբերությունը կազմակերպական հարցում արդյունաբերության բոլոր մյուս ճյուղերից առաջ է ընկել:

Ամբողջ արդյունաբերությունն արդյոք հաշվի առա՞վ ածխարդյունաբերության դասերը: Յես պետք է ուղղակի ասեմ, վոր Դոնբասի դասերը թույլ և անբավարար չափով են հաշվի առնվել մեր արդյունաբերության կողմից:

Մեր գործարաններն, իհարկե, ավելի լավ են աշխատում, քան Դոնբասը մինչև վերակառուցումը: Այստեղ ավելի շատ կուլտուրա կա, բանվորներն ավելի լավ են կազմակերպված: Սակայն կառավարման գործում կազմակերպական խառնաշփոթությունը և անպատասխանատվությունը դեռ շատ են, և պետք է անհապաղ աշխատանքը վերակառուցել ամբողջ արդյունաբերության մեջ ածխի օրինակով: Այդ հնարավորություն կտա արտադրական մեծ կարողություններն առավելագույն չափով օգտագործելու հետագայում:

Յեթե վերցնենք գործարանային վարչությունը և նրա փոխհարաբերությունը ցեխի հետ, ապա պետք է ասենք, վոր այնտեղ դեռ մնացել է ֆունկցիոնալ սիստեմը, ինչպես այդ կար հանքահորում: Յեթե ցեխը համեմատենք մի հանքամասի հետ, ապա նա չի գրավում այն տեղը, վոր պետք է գրավի, ինչպես այժմ հանքամասն է գրավում հորում: Գործարանի վարչությունը մինչև այժմ դեռ այնքան մեծածավալ է, վոր նա հաճախ փոխանակ օգնելու՝ ճնշում է ցեխին: Վարչությունների, ֆունկցիոնալ սեկտորների և ցեխերի միջև տեղի յե ունենում անվերջ գրագրություն, վորը խանգարում է ցեխապետին: Դեռ ավելի՛ն. հաճախ զուտ ձևական փոխհարաբերություններ են ստեղծվում ցեխապետի ու նրա ապարատի միջև:

Վերցնենք, օրինակ, Միտիշչիի վագոնաշինական գործարանը: Այնտեղ առկա յեն գործարանի ղեկավարման գրասենեկային-բյուրոկրատական մեթոդի բոլոր հատկանիշները—ֆունկցիոնալությունն ապարատի կառուցվածքի մեջ և հաստիքների փքունությունը: Գործարանային վարչությունն ունի 14 բաժին, վորտեղ աշխատում է 367 մարդ: Բացի դրանից, գործարանի ցեխերում կա 234 ծառայող. այս կազմում է գործարանում աշխատող 3832 հոգու 16 տոկոսը: Բացի դիրեկտորից, գործարանում կան տեխնիկական դիրեկտորի տեղակալ, դիրեկտորի տեղակալ նյութական-տնտեսական մասի գծով, դիրեկտորի տեղակալ բանմատակարարման գծով, արտադրական բաժին, արտադրության պատրաստման բաժին, գլխավոր մեխանիկի բաժին, տեխնիկական վերահսկողության բաժին, պլանային-տնտեսական բաժին, կադրերի սեկտոր, հատուկ բաժին, կատարման վերահսկողություն, կենտրոնական հաշվապահություն, առևտրական բաժին, վորը բաժանվում է ֆինանսական յենթաբաժնի և մատակարարման ու վաճառքի յենթաբաժին, գործերի կառավարչություն, մառան, կապիտալ շինարարության բաժին, բանմատակարարման բաժին:

Այդ ամբողջ ապարատը, քանի վոր ռոճիկ է ստանում, «պետք է գրի»: Յեվ ահա գրում են: Փայտամշակման ցեխում, օրինակ, 57 բանվորի համար հունվար ամսում գրվել է 7000 կարգադիր (նարյադ): Կարգադրումներ են գրել նաև այն դեպքում, յերբ կարելի յեր առանց վորևէ գրագրության էլ յոլա գնալ. և գրագրությամբ են զբաղվել նաև ճարտարագետները: Իզուր են վոմանք կարծում, թե բոլոր ճարտարագետները գործարան ընկնելով՝ արտադրությամբ են զբաղվում: Նրանցից շատերին թե գործարանում թե ցեխում հանձնարարում են գրասենեկային գրագրությամբ զբաղվել: Դետալների արտադրության, պատրաստման վայրում, նրանց հավաքման վայրում ճարտարագետների թիվը շատ քիչ է: Միտիշչիի գործարանում աշխատող 55 ճարտարագետներից 36-ն աշխատում է գործարանային վարչության ապարատում և միայն 19 հոգի՝ ցեխերում: Յեթե դուք ուրիշ գործարաններում էլ վորոնեք, ապա միևնույն բանը կգտնենք նաև այնտեղ:

Դիրեկցիան ցեխապետերի հետ կապ է պահպանում վոչ թե անմիջաբար, այլ ֆունկցիոնալ բաժինների միջոցով: Ցեխը, օրինակ, իր պլանն ստանում է յերկու բաժիններից—այսպես կոչված՝ արտադրական-պլանային բաժնից, վորի ֆունկցիայի մեջ է մտնում կոնկրետ առաջադրանքների վորոշումը, իսկ մյուս ցուցանիշների վերաբերյալ առաջադրանքը նա ստանում է պլանային-տնտեսական բաժնից, և հաճախ տեղի յեն ունենում այնպիսի դեպքեր, յերբ մեկ և մյուս բաժնի առաջադրանքները միմյանցից տարբերվում են:

Ֆունկցիոնալ բաժինների մեծ քանակությունը չի կարող ավելորդ գրագրություն, անպատասխանատվություն և անկոնկրետ ղեկավարություն չառաջացնել: Յես կարող եմ մի շարք չափազանց զավեշտական օրինակներ բերել, թե ինչպես գործարանային վարչությունների առանձին բաժինները գրագրություններ են ունենում ցեխապետերի հետ, և թե ինչպես են վերջինները ուսերը շարժում: Միտիշչիի գործարանի ցեխապետերից մեկը, մի հին վարպետ, հայտարարեց. «վոչի՛նչ չի կարելի անել, նրանց մոտ թղթեր գրելը մատիտ կրծելուց է առաջ գալիս» (ծիծաղ):

Ահա մի կարգադրություն, ուղղված ձուլման ցեխապետ ընկ. Կասկովին: Արդյունաբերության սանիտարիան վարողը պահանջում է «1934 թ. հունվարի 19-ից վոչ ուշ տեղեկություններ տալ հետևյալ հարցերի վերաբերմամբ. ցեխի ծավալը, բանվորների թիվը յուրաքանչյուր ցեխում, տարբեր հերթափոխություններում, կորաման ցեխի վերաբերմամբ—հղկանիվների ու

թմբուկների թիվը, մեխանիկական ցեխի վերաբերմամբ—էլեկտրանիկավոր հղկանիվների թիվը, օժանդակ շենքերում—լվացարանների ծորակների թիվը, արտաքնոցների տեղերի թիվը, լուսավորությունը ցեխերում յերեկոյան և գիշերը. ձուլման ցեխի վերաբերմամբ—ձուլվածքի քանակությունը և վառարանների բեռնվածությունը, հատուկ հագուստ տալու կանոնավորությունը և լվանալու ու կարկատելու հարցը. մեխանիկական ցեխի վերաբերմամբ—տրանսմիսիա ունեցող մոտորային դազգյահների թիվը և դազգյահների ընդհանուր թիվը. դարբնոցի վերաբերմամբ—նավթի վառարանների թիվը, շոգեմուրճերի ու փուքսերի թիվը» և այլն: Անվերջ գրավոր հարցումները և ֆունկցիոնալ բաժիններից ստացվող գրությունները ցեխապետին կտրում են ցեխի ղեկավարման վերաբերյալ նրա անմիջական խնդիրներից:

Յեթե ցեխապետին անհրաժեշտ է լինում վորևէ հարցով դիմել գործարանային վարչությանը, ապա նա մարդկանց վերաբերյալ հարցերով պետք է դիմի բանուժի վարձման և արձակման բաժնին, վառելիքի հարցով—մեխանիկական բաժնի էներգետիկ բյուրոյին, նյութերի հարցով—մատակարարման բաժնին, գծագրերի հարցով—արտադրության պատրաստման բաժնին, պլանների հարցով—արտադրական բաժնին և պլանային—տնտեսական բաժնին, տարիֆների ու նորմաների հարցով—տարիֆ-տնտեսական սեկտորին և այլն:

Այս ֆունկցիոնալ սիստեմն ուղղակի այն բանին է հասցնում, վոր դիրեկտորը, վոր ազատ է ցեխերի անմիջական ղեկավարությունից, ընդհանուր հրամաններով է զբաղվում: Ահա այդ դիրեկտորի մի հրամանը գործարանում բժշկա-սանիտարական և քիմիական սպասարկում կազմակերպելու մասին:

Նա ասում է այսպես. «Կապիտալիստական աշխարհը խեղդվում է համաշխարհային ճգնաժամի ճիրան-

ներում» (դահլիճում ուրախ շարժում): Տառացիորե՛ն մրցում ընկ. Մանուիլսկու հետ (ընդհանուր ծիծաղ): «Համաշխարհային նոր պատերազմի տենդագին պատրաստություն է տեսնում: Նրանք տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամից յելք են վորոնում բոլոր յերկրների բանվորների ու աշխատավոր գյուղացիության շահագործումն ուժեղացնելով, զինված հարձակում պատրաստելով առաջին հերթին ԽՍՀՄ-ի դեմ: Ուստի մեր պարտքն է ուժեղացնել ԽՍՀՄ-ի հզորությունն ու պաշտպանունակությունը, վորի յերաշխիքն է արդֆինպլանի կատարումն ու գերակատարումը գործարանում»:

Յեվ այս պատահական հրաման չէ: Ընկ. Խրունիչեն ինքնստինքյան վատ աշխատող չէ, սակայն ընկերներ, այս նրա աշխատանքի վոճն է. նա այսպիսի շատ հրամաններ ունի:

Իհարկե, արդֆինպլանի համար ագիտացիա մղել պետք է, պաշտպանունակության համար՝ անհրաժեշտ է: Սակայն, յերբ օպերատիվ ղեկավարությունը փոխարինվում է ջուր ծեծելով կամ շաղակրատությամբ, ապա վոչ գործ է ստացվում, վոչ էլ ագիտացիա: Այդպիսի ղեկավարներն ըստ յերևույթին ղեկավարել բառը հասկանում են վորպես ղեկը շարժել (ընդհանուր ծիծաղ):

Ահա այստեղ շատ խոսեցին վորակի համար մղվող պայքարի մասին: Այդ բացարձակապես ճիշտ է: Սակայն գործարանում ֆունկցիոնալ սիստեմը պահելու դեպքում վորակի համար մղվող պայքարն անկասկած դժվարանում է: Ինչքա՜ն է պատահել՝ գնում ես գործարան և հարցնում. ինչո՞ւ յե խոտան ստացվում, դետալն ինչո՞ւ յե փչացել: Պատասխանում են. մեղավորը նախագծերի բաժինն է կամ արտադրական պրոցեսների կազմակերպման բաժինը, սխալ գծագրեր են տվել: Հարցնում ես նախագծերի բաժնում, ինչո՞ւ յեք փչաց-

րել: Գիտեք ի՞նչ՝ ցեխում դրությունը լավ չէ: Ահա այս էլ հենց այն անպատասխանատվությունն է, վոր առեղծվում է ֆունկցիոնալ սխեմի հետևանքով, վորը խանգարում է գտնելու խոտանի համար մեղավորներին:

Յես անհրաժեշտ եմ համարում հատուկ ուշադրություն դարձնել տեխնոլոգիական պրոցեսը կազմակերպելու վրա: Այդ աշխատանքը մեծ մասամբ կտրում են ցեխերից: Դոնբասի ընկերները հիշում են հռչակավոր ԱՊՆՄԱԲ (ОПППОТ), վոր գոյություն ուներ հանքահորերում, և թե ինչպես հանքագործները վերջ տվին այդ «Արտադրական պրոցեսների նախապատրաստման և աշխատանքի կազմակերպման բաժնին»: Յեվ ահա, յերևակայեցեք, վոր այդ բաժինն ուրիշ ձևով այնուամենայնիվ մինչև այժմ էլ գոյություն ունի գործարանում:

Գործարաններում գոյություն ունեն արտադրության նախապատրաստման բաժիններ, իսկ տեխնոլոգիական պրոցեսը կտրվում է ցեխից: Ցեխապետները— հիմնական հրամանատարական ուժը գործարանում— վոչ մի մասնակցություն չունեն այդ կարևորագույն գործում, իսկ նրանց ամենահարուստ փորձը բոլորովին չի օգտագործվում տեխնոլոգիական պրոցեսի մշակման (այդ առաջին ու կարևոր գործի) համար, վորը վորոշում է գծագրերը, նյութերը, մշակման յեղանակը, դետալի մշակման համար պահանջվող ժամանակը և այլն: Իհարկե, ցեխերը պետք է կապել տեխնոլոգիական պրոցեսի մշակման հետ: Ըստ յերևույթին գործարանային վարչության մեջ պետք է գոյություն ունենա առանձին կոնստրուկտորական բյուրո, վորտեղ ցեխապետերը կարողանան հիմնական ցուցումներ ստանալ, կամ պատվերների նման բան տալ: Այն կոնստրուկտորները, վորոնք կառուցել են այս կամ այն դետալը կամ մեքենայի այս կամ այն մասը, պետք է անմիջապես ցեխում լինեն և այնտեղ օգնեն արմատացնելու այդ դետալը: Մինչդեռ արտադրության այժ-

մյան բաժինների մի զգալի մասը գրասենյակային բնույթ է տալիս տեխնոլոգիական պրոցեսի կազմակերպման կարևորագույն գործին ձեռնարկության մեջ:

Ահա, օրինակ, ընկ. Ստալինի անվան ավտոգործարանում նրա դիրեկտոր ընկ. Լիխաչևն իր գործարանային վարչությունը վերակառուցել է, չհետևելով Միտչելի գործարանի օրինակին և արտադրության նախապատրաստման բաժինը վերափոխելով՝ վեր է ածել իր առանձին փոքրիկ տեխնոլոգիական բյուրոյի, վորը գոյություն ունի գործարանային վարչության կից և ընդհանուր ուղղություն է տալիս տեխնոլոգիական պրոցեսին, իսկ կոնստրուկտորական ուժերը հանձնել է ցեխերին: Բոլոր դետալները ցեխերում կառուցվում են ցեխապետերի ղեկավարությամբ և այնտեղ էլ արտադրվում: Դրա արդյունքներն անկասկած յերևան կգան, նրանք արդեն յերևում են:

Ընկ. Ստալինի անվան ավտոգործարանի օրինակից յերևում է, վոր բոլոր գործարաններում իհարկե գործն այնպես չի դրված, ինչպես Միտչելի գործարանում: Սակայն գործարանների մեծ մասում ֆունկցիոնալ սխեմն այս կամ այն չափով գոյություն ունի: Գործարանների ծառայողների մեծ մասը ֆունկցիոնալ բաժինների աշխատողներ են, վորոնցից յուրաքանչյուրն առանձին կարգադրություններ են անում ցեխապետներին: Ցեխապետ, իսկ ցեխի ներսում— վարպետ, վորպես հիմնական հրամանատարական ուժն արտադրության մեջ,— այս կուրսը դեռ ինչպես հարկն է չի ընդունված: Յեվ խնդիրն այն է, վոր արտադրության յուրաքանչյուր ճյուղի նկատմամբ, առանց բոլորի համար միևնույն շաբլոն դեղատոմսի, կոնկրետ կերպով վերակառուցվի գործարանային վարչությունների աշխատանքը, ցեխերի աշխատանքն այնպես, վոր ածխարդյունաբերության օրինակով առավելագույն չափով կրճատվի ու արմատախիլ արվի գրագրամոլությունն

ու բյուրոկրատիզմը, և ուժեղացվի վարպետի ու ցեխավարի դերը:

Այս վերաբերում է նաև շինարարություններին: Հենց վոր սկսում են մի կառուցում, իսկույն կազմվում է շինարարության մի բազմաքանակ ապարատ: Ցես անձամբ առիթ եմ ունեցել տեսնելու մի այդպիսի շինարարություն, վորտեղ 30 բաժին եյին ստեղծել: Բանվորներն ապրելու տեղ չունեյին, իսկ ապարատը հսկայական շենք եր զբաղեցրել:

Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերակառուցումը, նոր գիգանտների կառուցումը, մեքենայացված ու ավտոմատիզացիայի յենթարկված տեխնիկայի արմատացումը, այս բոլորն արտադրական ամբողջ պրոցեսի մեծագույն բարեկազմություն ու կանոնավորում է պահանջում: Դրա համար էլ այժմ, ինչպես յերբե՛ք, անհրաժեշտ է ամենախիստ մենավարություն կիրառել արդյունաբերության կառավարման բոլոր ողակներում: Վարպետը արտադրամասի լիիշխան ղեկավարն է, ցեխապետը— ցեխի լիիշխան ղեկավարը, գործարանի դիրեկտորը՝ ամբողջ գործարանի լիիշխան ղեկավարը՝ սրանից բղխող բոլոր իրավունքներով, պարտականություններով յեվ անձնական պատասխանատվությամբ:

Նոր տեխնիկան հրամայաբար պահանջում է ամեն կերպ ամրացնել տեխնիկական ղեկավարությունը: Սրա համար էլ վարպետը, ցեխապետը, դիրեկտորն այն ժամանակ միայն կարող են արտադրության իսկական հրամանատարներ լինել, յերբ նրանք ղեկավարում են արտադրական պրոցեսի վոչ միայն տնտեսական, այլև տեխնիկական կողմը: Միաժամանակ տեխնիկական անձնակազմը, և առաջին հերթին վարպետն ու ցեխապետը, պետք է ղեկավարի վոչ միայն մեքենաները, այլև մարդկանց, նրանց աշխատանքի և աշխատավարձի կազմակերպումն ու նորմավորումը:

Արդյունաբերության ամբողջ վերակառուցման մեջ, և վոչ միայն արդյունաբերության մեջ, ամենագլխավորը կառավարման ողակների թվի պակասեցումն է: Գոյություն ունեցող և գոյություն ունեցած քառողակ սիստեմի փոխարեն սահմանել յեռողակ, իսկ ավելի լավ է՝ յերկողակ սիստեմ, վորին արդյունաբերության մի քանի ճյուղերում արդեն հասել են միավորությունների ու մի ամբողջ շարք տրեստների վերացման միջոցով:

Ծանր արդյունաբերության կառավարման միջին ու բարձր ողակներում Ծանր Արդյունաբերության Ժողկոմատը, համաձայն Կենտկոմի վորոշման, զգալի վերակառուցում է կատարել: Կոնկրետ ղեկավարությունը բարելավելու համար ապախոշորացվել են մի շարք ճյուղային գլխավարչություններ: Անմիջապես Ծանր Արդյունաբերության Ժողկոմատին են յենթարկված մի շարք ձեռնարկություններ: Փորձը հաստատում է մի շարք ձեռնարկություններ անմիջաբար ժողկոմատներին յենթարկելու բացարձակ ճշտությունը: Վերացվել են մի շարք տրեստներ և համարյա բոլոր միավորումները:

Թե ինչպիսի հնարավորություններ է բաց անում մեզ համար կազմակերպական հարցի ճիշտ լուծումն՝ ապարատը կրճատելու, նրա աշխատանքը բարելավելու տեսակետից, այդ ցույց է տալիս ավիացիոն արդյունաբերության որինակը· ավիացիոն արդյունաբերության գլխավոր վարչության սիստեմում վերացվեցին յերկու տրեստներ— ինքնաթիռաշինականը և մոտորաշինականը· ինքը ավիացիոն արդյունաբերության գլխավոր վարչությունն անմիջաբար կապվեց գործարանների հետ: Այսպիսով, յերկու տրեստներից կրճատվեց 440 մարդ: Այդ տրեստների վարչական ծախսերը մոտ 3 միլիոն ռուբլի եյին կազմում: Ցերկու տրեստներն ել

վերացվեցին, և ավիացիոն գործարաններն առաջվանից վատ չեն աշխատում, յեթե վոչ ավելի լավ:

Իհարկե ծանր արդյունաբերության կառավարման սիստեմի վերակառուցման գործում վորոշ աշխատանք կատարված է, սակայն, հատկապես ընկ. Ստալինի զեկուցումից հետո, ավելի քիչ պետք է գործածել «բեկում կա» և «տեղաշարժեր են նկատվում» բառերը: Չնայած վոր Ծանր Արդյունաբերության Ժողկոմատում ապախոշորացվել են մի շարք գլխավոր վարչություններ արտադրությանը մոտենալու համար, վերացվել են մի շարք տրեստներ արդյունաբերության կառավարման սիստեմում բազմօղակությունը վերացնելու համար,— ինչպես տրեստներում, այնպես էլ հենց Ծանր Արդյունաբերության Ժողկոմատում, կազմակերպական սիստեմը դեռևս մշակված չէ: Այստեղ, որինակ, դեռ գոյություն ունեն բազմաթիվ ֆունկցիոնալ սեկտորներ: Բոլոր ֆունկցիոնալ սեկտորները վերացնելու կարիք էլ չկա: Նրանց մի մասը պետք է մնա, սակայն, նախ, այդ սեկտորները պետք է կրճատել առավելագույն չափով և, յերկրորդ, ֆունկցիոնալ սեկտորներին պետք է արգելել արտադրական վարչությունների ու գլխավոր վարչությունների գլխի վրայից գործելը: Պետք է կարգադրություններ անող մի տեր լինի: Ֆունկցիոնալ սեկտորը պետք է լինի ժողկոմի համար մի փոքրիկ ոժանդակ ապարատ, վորը վոչ մի անմիջական կարգադրություն չի անում: Այս դեպքում համենայն դեպս նրանից ավելի քիչ վնաս կըստացվի (ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ):

Կարելի յե ցանկություն հայտնել, վոր ծանր արդյունաբերությունը, վոր առաջին դաս ստացողը յեղավ ածխարդյունաբերության ասպարեզում, կաշխատի առաջինը լինել նաև ծանր արդյունաբերության բոլոր ճյուղերի վերակառուցման գործում:

2.

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԹԵԹԵՎ, ՍՆՆԴԻ ՅԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հատկապես վատ ու անբավարար է դրված աշխատանքը թեթեվ արդյունաբերության ամբողջ սիստեմում, սկսած ժողկոմատից, վերջացրած գործարանով: Ընկ. Լյուբիմովը հանդես յեկավ այստեղ. նա փորձեց կազմակերպական վորոշ հարցեր շոշափել: Սակայն նրա քննադատությունը չափազանց յերկչոտ էր ու նեղ: Նրա յելույթից յերևաց, վոր նա թեթեվ արդյունաբերության կազմակերպական հարցերը չափազանց թեթեվ կերպով դիտե, ուստի յես թեթեվ արդյունաբերության թերությունները մի փոքր ավելի խիստ կմերկացնեմ քան նա:

Մի ձայն.— Իհարկե, իհարկե:

Կագանովիչ.—Թեթև արդյունաբերության մեջ բուն են դրել կազմակերպական սխալ սիստեմը, ձեռնարկությունների կառավարման գրասենեկային-բյուրոկրատական մեթոդը և ֆունկցիոնալ սիստեմը: Ֆունկցիոնալ սիստեմն այստեղ բացառիկ մեծ ծավալ է ստացել: Ֆունկցիոնալության և գրագրամոլության «արտադրությունը» Թեթև Արդյունաբերության Ժողկոմատի բաժիններում ավելի մեծ ծավալ ունի, քան նրա աշխատանքը թեթև արդյունաբերության ապրանքներ արտադրելու ասպարեզում (ծիծաղ):

Բոլոր մանածագործները լավ են հիշում ֆունկցիոնալ սիստեմի պատմությունը մանածագործական արդյունաբերության մեջ, վոր ընդգրկեց արտադրության բոլոր ճյուղերը և բավական վնաս հասցրեց: Յես այստեղ չեմ շոշափում կազմակերպական շատ հարցեր, մասնավորապես յես մանրամասն չեմ շոշափում աշխատանքի կազմակերպման հարցերը, քանի վոր այդ հա-

տուկ զեկուցում ե պահանջում, սակայն մանածագործական արդյունաբերության մեջ յեղած ֆունկցիոնալության առնչությամբ յես կշոշափեմ այդ հարցը:

Ի՞նչ բան եր ֆունկցիոնալ սիստեմը մանածագործական արդյունաբերության մեջ: Բանի եյությունն այն եր, վոր տասնյակ տարիների ընթացքում գոյություն ունեցող վորակյալ ջուլհակը կամ ջուլհակուհին, վորակյալ մանողը, վորոնք մի տեսակ՝ պարծենում եյին իրենց մասնագիտությամբ, լիկվիդացիայի յենթարկվեցին: Մանվածքային արդյունաբերության մեջ մանողուհու, վատերպանուհու պարտականությունները բաշխվեցին կցանչուհիների, մեքենաները մաքրողների միջև, իսկ ջուլհականոցում մանածագործներին փոխարինեցին լարողները, գործարկիչները և լրցորդները: Այսպիսով, մանվածքի և ջուլհակության մեջ աշխատանքի ամբողջական պրոցեսի փոխարեն ստեղծվեցին կոտորակային պրոցեսներ (յերեք ֆունկցիագործներ): Դրա հետեվանքը յեղավ անպատասխանատվությունը, արդյունաբերության վատ աշխատանքը և խոտանի սաստիկ ավելացումը:

Անհրաժեշտ յեղան ընկ. Ստալինի ցուցումները և Կենտկոմի պլենումի վորոշումը՝ մանածագործական արդյունաբերության մեջ այդ ֆունկցիոնալությունը վերացնելու և ջուլհակի ու մանողի վորակավորումը վերականգնելու համար՝ վորակյալ բանվորների լրիվ իրավունքներով:

Թեթեվ արդյունաբերության գործարաններում ֆունկցիոնալ սիստեմը պակաս ցայտուն կերպով չի արտահայտված, յեթե վոչ ավելի ուժեղ կերպով, քան Միտիշչիի գործարանի որինակում:

Մանածագործարանում մինչև վերջին ժամանակներն էլ գոյություն ունեյին մեծ թվով ֆունկցիոնալ բաժիններ ու սեկտորներ, և կազմակերպման ամբողջ սիստեմն անբավարար եր: Այսպես, որինակ, «Պրոլե-

տարկա» գործարանում 18 ֆունկցիոնալ բաժին կար, իսկ Սվերդլովի անվան գործարանում՝ 13 ֆունկցիոնալ բաժին և 10 սեկտոր: «Պրոլետարկա»գործարանում կային հետեվյալ պաշտոնատար անձինք— 1. դիրեկտոր, 2. դիրեկտորի տեղակալ, 3. դիրեկտորի ոգնական բանվորական մատակարարման գծով, 4. դիրեկտորի ոգնական մասսայական աշխատանքի գծով, 5. արտադրության վարիչ, 6. պլանային բաժնի վարիչ, 7. ռացիոնալացման բաժնի վարիչ, 8. աշխատանքի կազմակերպման բաժնի վարիչ, 9. տեխնիկական վերահսկողության բաժնի վարիչ, 10. կադրերի բաժնի վարիչ, 11. մատակարարման բաժնի վարիչ, 12. գլխավոր հաշվապահ, 13. ֆինանսական բաժնի վարիչ, 14. անձնակազմի սեղանի վարիչ, 15. գործերի կառավարիչ, 16. տեխպրոպագանդայի վարիչ, 17. անվտանգության տեխնիկայի վարիչ, 18. գլխավոր մեքենագետ, 19. վերահսկողության ու կատարման սեկտորի վարիչ և 20. կապիտալ շինարարության սեկտորի վարիչ:

Պարզ ե, վոր ֆունկցիոնալ սիստեմն արտադրության մեջ և կառավարման ամբողջ սիստեմի այսպիսի ֆունկցիոնալ կառուցվածքը, հատկապես գործարանում նպաստում եր վատորակ արտադրանք տալուն: Արտադրանքի խոտանը (խոտան և յերկրորդ տեսակ) հսկայական չափերի հասավ: Առանձին ձեռնարկություններում խոտանը հասցրել եյին 30–40 տոկոսի:

Խոտանն առաջ եր գալիս վոչ միայն կառավարման վատ սիստեմից ու ֆունկցիոնալության հետեվանքով, այլև ոժանդակ տնտեսության անհեթեթ կենտրոնացումից: Թեթեվ արդյունաբերության ժողկոմատն իրեն կից ստեղծել եր ոժանդակ ձեռնարկությունների տրեստ և գործարաններին զրկել իրենց համար անհրաժեշտ ոժանդակ նյութեր (մաքուկների արտադրություն, գլիկների, ռեմիզների նորոգում և այլն) արտա-

դրելու իրավունքից: Այդ՝ հավելյալ դժվարություններ է ստեղծել և դեռ այժմ էլ ստեղծում է գործարանի կանոնավոր աշխատանքի համար:

Մոսկվայի մարզի մանածագործների Օրեխովյան կոնֆերենցիայում մերկացվեցին այդ բոլոր թերությունները: Մասնավորապես, մի անկուսակցական հին բանվոր—Կոպիլովը պատմում էր, թե ինչպե՛ս էր առաջ, և ինչպես է այժմ, թե վորոնք են սխալները—նա մի շատ հետաքրքիր նամակ գրեց, վորով մերկացրեց Դրեզնենի գործարանի աշխատանքի գոյություն ունեցող բյուրոկրատիզմն ու գրագրամոլությունը: Մենք չենք կարող պայքար ծավալել խոտանի դեմ,— գրում էր նա,— վորովհետև չունենք մի շարք օժանդակ նյութեր ու մասեր, վորոնք անհրաժեշտ են այստեղ: Գործարանի դիրեկտորի ու տեխնիկական դիրեկտորի միջև չկա այն օպերատիվ կապը, վոր պետք է լինի, այդ կապը չկա նաև ցեխապետերի հետ: Վատ, վոչ օպերատիվ կառավարման նույնպիսի պատկեր մենք ունենք նաև տրեստներում և հենց Թեթև Արդյունաբերության ժողկոմատում:

Յեթե վերցնենք կենտրոնական կազմակերպությունների ու տրեստների աշխատանքը, ապա պետք է ասենք, վոր պլանավորումը հաճախ ծաղրանքի յե վերածվում: Ահա «Կրասնայա Զարյա» տրիկոտաժի գործարանի օրինակը: Ամբողջ 1933 թ. ընթացքում գործարանն աշխատել է առանց պլանի: «Կրասնայա Զարյա»-յի պլանը քննության առնվեց հինգ մարմիններում (ԽՍՀՄ Թեթև Արդյունաբերության ժողկոմատ, Գլխտրիկոտաժ, ՌՍՖԽՀ Թեթև արդյունաբերության ժողկոմատ, Մոսկվայի մարզի թեթև արդյունաբերության մարզային վարչություն ու «Մոստրիկոտաժտրեստ») և 46 սեկտորներում:

Գործարանը մեկը մյուսին հակասող 19 դիրեկտիվ է ստացել: Պլանները փոփոխվել են արտադրության

գծով— 7 անգամ, աշխատանքի գծով— 4 անգամ, ինքնարժեքի գծով—8 անգամ: Հետևանքն այն է յեղել, վոր գործարանն ամբողջ տարին առանց պլանի յե աշխատել: 1933 թ. պլանը վերջնականապես հաստատվել է... 1934 թ. հունվարի 4-ին: 1933 թ. պլանն ուշացել է ընդամենը մեկ տարի 4 օր (ծիծաղ): Բյուրոկրատիզմի և թղթե-գրասենյակային ղեկավարության այսպիսի ցայտուն օրինակներ շատ կան Թեթև արդյունաբերության ժողկոմատում:

Բամբակեղենի արդյունաբերության մեջ տրեստի ապարատը կազմված է յեղել 19–22 ֆունկցիոնալ բաժիններից: Բամբակեղենի Մոսկվայի տրեստի ապարատը կազմված է յեղել 19 միավորներից— սեկտորներից ու սեկտորի իրավունք վայելող խմբերից: Թեթև արդյունաբերության ժողկոմատի վերակառուցման հանձնաժողովը նախատեսում է տրեստում թողնել 8 բաժին ու սեկտոր գոյություն ունեցող 19–22 փոխարեն:

Ինչ վերաբերվում է Թեթև արդյունաբերության ժողկոմատին, ապա նա բացառիկ չափերով մեծածավալ է: Նա ունի կառավարման 39 խոշոր միավոր և 60 սեկտոր: Կան այնպիսի գլխավոր ու ճյուղային վարչություններ, վորոնք սեփական արտադրության բազա չունեն (կարի արդյունաբերության, արդուզարդի, տնայնագործական, պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչություններ և այլն): Այդ վարչությունների արդյունաբերությունը մեծ մասամբ տեղերի տեսչության տակ է գտնվում:

Կառավարել այդ նշանակում է, վոր մարդիկ կարող են բաշխել նյութական արժեքները, տեղափոխել ու հեռացնել իրենց յենթակա մարդկանց, մի խոսքով լիովին տնօրինել ձեռնարկության գործերը. բայց յեթե արդյունաբերությունը հանրապետական կամ տեղական մարմիններին է պատկանում, էլ ի՞նչն են «կառավարում» գոյություն ունեցող միութենական վարչությունները:

Սխալ կլիներ իհարկե հարց դնել միութենական գործարանները տեղերին հանձնելու մասին, սակայն տեղական արդյունաբերության ու տնայնագործական արդյունաբերության զարգացման հարցի առնչությամբ պետք կլինի մեծ ուշադրություն դարձնել մարզային վարչությունների վրա, վորպեսզի նրանք լինեն վոչ թե պարզապես մի կցորդ, այլ կառավարող լուրջ մարմիններ, վորոնց միջոցով թե ժողկոմատը, թե տեղական գործկոմը կառավարում են տեղական արդյունաբերությունը: Համենայն դեպս Թեթև արդյունաբերության ժողկոմատի նվաճողական էքսպանսիան անհրաժեշտ է կասեցնել:

Ձայներ.— Ճի՛շտ է:

Կագանովիչ. Ցես չեմ ուզում ասել, վոր պետք է բավարարել տեղական մի շարք ընկերների ձգտումները և տեղերի տնօրինությանը հանձնել անվիճելիորեն միութենական ձեռնարկությունները: Սակայն ժողկոմատները պետք է անհամեմատ ավելի մեծ չափով հենվեն տեղական խորհուրդների ու գործկոմների օգնության վրա:

Ձայներ տեղից— Ճի՛շտ է, ճիշտ է:

Կագանովիչ. Ինչ վերաբերում է այն վարչություններին, վորոնց տեսչության տակ միութենական արդյունաբերություն կա, պետք է ասել, վոր նրանք այն աստիճան ծանրաշարժ են, վոր փաստորեն չեն կարողանում արդյունաբերությունը կառավարել: Վերցնենք, օրինակ, բամբակեղենի արդյունաբերության գլխավոր վարչությունը: Այդ վարչությունը միավորում է միութենական 14 տրեստ ու կոմբինատ, 179 ձեռնարկություններով ու 350 հազար բանվորներով: Նրա ձեռնարկությունները 2,5 միլիարդ ռուբլու արտադրանք են տալիս, վորը կազմում է Թեթև արդյունաբերության ժողկոմատի արտադրանքի մոտ $^1/_3$ մասը: Այսպիսի, ներեցեք արտահայտությանս, գլխավոր

վարչությունը բնականաբար չի ընդգրկում տրեստների ու ձեռնարկությունների ղեկավարությունը: Այստեղից էլ առաջ է գալիս տրեստների ու ձեռնարկությունների աշխատանքի կուտակում ու ընդհատում: Իսկ ինչո՞ւ Թեթև արդյունաբերության ժողկոմատը չի մտածել այդ մասին, չի յեկել կենտկոմ ու հարց չի դրել: Ըստ յերևույթին այն պատճառով, վոր նա «բարձր բաներով» է զբաղվում, իսկ կազմակերպական հարցերն ըստ էության չի քննում, վերահանձնարարելով այդ աշխատանքները յերրորդական աշխատողներին: Ավելի լավ չե՞ր լինի, արդյոք, յեթե այդպիսի մի լեվիաթան, ինչպիսին բամբակեղենի արդյունաբերության վարչությունն է, ապախոշորացվեր և ստեղծվեյին գործունակ, կազմակերպված, ինչպես ոպերատիվ վարչություններ, վորոնք ճանաչեյին իրենց գործարանները, ղեկավարեյին նրանց, պայքարեյին արտադրանքի վորակի համար և կատարեյին մեր վորոշումները լայն սպառման առարկաների արտադրության վերաբերմամբ: (Ծափեր):

Ընկ. Լյուբիմովն իր յելույթի ժամանակ բոլոր թերությունները չմերկացրեց: Ընկ. Լյուբիմովը պետք է ավելի լուրջ ու ավելի խոր կերպով նայի իր խնդիրներին: Նա պետք է հասկանա, վոր խոսքը մեխանիզմի մանր թերություններին չի վերաբերում, այլ Թեթև արդյունաբերության ոպերատիվ ղեկավարության մեթոդները փոխելուն: Խոսքը վերաբերում է գրասենեկային ղեկավարությունն ու բյուրոկրատիզմը վերացնելուն, վորոնք բուն են դրել նրա մոտ՝ ժողկոմատում, խոսքը վերաբերում է նրան, վոր վերացվեն թղթե ղեկավարության մեթոդները, վորոնք իշխում են Թեթև արդյունաբերության ժողկոմատում, վոր կենտրոնական մարմինները մոտենան գործարաններին, և ինչպես հարկն է վոտքի կանգնեցնեն նրանց: Խոսքն այն մասին է, ընկերներ, վոր կատարվի լայն սպառման ա-

տարկաների արտադրությունն ընդարձակելու հնգամյա պլանը, վորը մենք նշել ենք:

Յեթե վերցնենք արդյունաբերության մյուս ճյուղերը, ինչպես սննդինն ու անտառայինը, ապա պետք է ասենք, վոր այնտեղ ևս կազմակերպական թերությունների ու խառնաշփոթությունը շատ-շատ են, և յեթե ես այստեղ մանրամասն կանգ չեմ առնում դրանց վրա, ապա պարզապես այն պատճառով, վոր հնարավորություն ու ժամանակ չկա մանրամասն բոլոր ճյուղերը քննելու, սակայն՝ վո՛չ յերբեք այն պատճառով, վոր այնտեղ դրությունն ավելի լավ է:

Բավական է միայն հիշեցնել սննդի արդյունաբերության խոշորագույն թերությունների մասին, վորոնց հետևանքը վատորակ արտադրանքն ու մարդկանց թունավորումը յեղավ: Կարելի յե անվիճելիորեն պնդել, վոր հենց Մատժողկոմատի անուշադիր ու անփույթ վերաբերմունքը կազմակերպական հարցերում այդ բանին հասցրեց: Սննդի արդյունաբերության մեջ և ձկնարդյունաբերության ասպարեզում, պահածոների արդյունաբերության և մյուս արտադրությունների մեջ շատ անպատասխանատվություն, դիմազրկություն ու բյուրոկրատիզմ կա: Թե վորքան վատ է կազմակերպված յեղել օրինակ, յուղաճարպագործական արդյունաբերությունը, կարելի յե տեսնել հետևյալ փաստից: Յուղաճարպագործական արդյունաբերությունը ղեկավարել են Գլավրաստժիրմասլոն, Սոյուզրասմասլոն, Գլավժիրպրոմը, ՌՄՊԿ և յերեք ժողկոմատ— ԽՍՀՄ Մատժողկոմատը, ԽՍՀՄ Թեթև արդյունաբերության ժողկոմատը և ՌՍՖԽՀ Թեթև արդյունաբերության ժողկոմատը: Չորս գլխավոր վարչություններում 493 մարդ է աշխատել: Յուղաճարպագործական արդյունաբերության այսպիսի ղեկավարության հետևանքն այն յեղավ, վոր ձեռնարկությունները ընդարձակվեցին մոտ ռացիոնալ չափերով, մի քանի շրջաններում վորոշ ձեռնարկություններ չափից ավելի ընդարձակվեցին ու բեռնավորվեցին, իսկ ուրիշ շրջաններում չուկայի թերամատակարարում և հանդիպական փոխադրումներ տեղի ունեցան: Արդյունքն այն յեղավ, վոր թե՛ յուղը, թե՛ ձեթը, թե ոճառը պակասեց:

Այդպիսի կառուցվածքի հետևանքով մեր ռեսուրսները վատնվեցին. հարկ յեղավ ոճառը Հյուսիսային Կովկասից փոխադրել Ուրալ, իսկ Ուրալի և նրան մոտիկ գործարանները հումք չունեյին: Այժմ Կենտկոմի վորոշմամբ այդ գործը լիկվիդացիայի յե յենթարկված, և ամեն ինչ կենտրոնացված է միայն Մատժողկոմատում: Կենտրոնական Կոմիտեն շատ մեծ և լուրջ ուշադրություն նվիրեց այս գործին. և մենք համոզված ենք, վոր գործն ավելի լավ կընթանա:

Վերցնենք Անտառժողկոմատը: Այս ժողկոմատն ընդհանրապես իր առանձնահատկություններն ունի: Նա մի փոքր «անտառային» ժողկոմատ է (ծիծաղ), սակայն կապն Անտառժողկոմատի և իսկական անտառի միջև չափազանց թույլ է ու անբավարար (ծիծաղ, ծափահարություններ): Անտառժողկոմատից մինչև անտառամասը և լուղարկակետը հսկայական տարածություն կա, և այդ տեղի յե ունենում այն պատճառով, վորովհետև հենց ժողկոմատում տեղական մարմինների կառավարման գործը խառնաշփոթ ու անպատասխանատվության մեջ է գտնվում, քանի վոր կարգադրություն են անում բոլորը, ով ուզում է: Ահա օրինակ, Սոյուզլեսպադը: Անտառժողկոմատի ամբողջ արտադրանքի 46% այդ կազմակերպության տնօրինության տակ է անցնում: Այո՛, ընկ. Լոբով, Անտառժողկոմատի արտադրանքի համարյա կեսը Սոյուզլեսպադի տնօրինության տակ է գտնվում: Նախ այդպիսի կառուցվածքը ինքնին անհեթեթ է. չի կարելի ժողկոմատի արտադրանքի համարյա կեսը կենտրոնացնել մի գլխավոր

վարչության մեջ։ Սակայն Սոյուզլեսզագի կողքին գոյություն ունեն մեծ թվով ֆունկցիոնալ բաժիններ։

Յեվ ահա, տեսեք, թե Սոյուզլեսզագն ինչպես է ղեկավարում Սոյուզսեվլեսին։ Տրեստի արտադրանքի տեսակների սահմանումը վոչ թե Սոյուզլեսզագն է կատարում, այլ Անտառժողկոմատի ֆունկցիոնալ մարմինը— նյութական հաշվեկշիռների սեկտորը։ Թվում է, թե՝ քանի վոր գոյություն ունի Սոյուզլեսզագը, ապա նա էլ պետք է վորոշի տրեստի մատակարարումը տեխնիկական նյութերով, սարքավորումով ու գործիքներով։ Բանից դուրս է գալիս, վոր այդ հարցը լուծում են Սոյուզտեխնաբի ֆունկցիոնալ մարմինները, իսկ հումքի հարցերը լուծում է Սոյուզլեսսբիտը։ Այսպես. Սոյուզլեսզագը, կոչվելով արտադրական գլխավոր վարչություն, չի վորոշում վոչ նյութական, վոչ էլ մարդկային ռեսուրսները անտառանյութերի մթերման ասպարեզում։ Հարց է ծագում, թե այդ ի՞նչ վարչություն է, վորն իր «տնորինության տակ ունի» անտառանյութերի արտադրանքի 50 %-ը, սակայն վոչինչ չի տնորինում, չի կարգադրում։ Իհարկե, կազմակերպական տեսակետից այդ վոչ մի բանի նման չէ նույնիսկ անտառային գործում։ Իսկ վոր գլխավորն է, տեղերն ու անտառանյութերի մթերումները տուժում են դրանից։ Այդպիսի ժողկոմատն ու այդպիսի գլխավոր վարչությունները պետք է անմիջապես վերակառուցել։

Յես նոր փաստեր չեմ բերի։ Տեղերում աշխատող մարդիկ լավ գիտեն, թե ինչպես է ժողկոմատում, տրեստում և նրանց ու գործարանի փոխհարաբերություններում յեղած կազմակերպական խառնաշփոթությունն անդրադառնում արտադրության վրա և հենց դրանով էլ երկրի ընդհանուր վերելքի ու մասսաների նյութական դրության վերելքի վրա։

Մեր արդյունաբերությունը պետք է կազմակերպական վերակառուցման որինակներ ցույց տա ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի և մասնավորապես գյուղատնտեսության համար։

Յեթե վերակառուցումն ու կազմակերպական հարցերը դժվար են արդյունաբերության համար, ապա նրանք է՛լ ավելի դժվար են գյուղատնտեսության համար։

3.

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գյուղատնտեսության մեջ կազմակերպական հարցերը, խոշոր արտադրության կազմակերպման փորձի բացակայության պատճառով, անհամեմատ ավելի սուր են դրված, քան ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում։

Արդյունաբերությունը կազմակերպական հարցերը լուծելու փորձով բավականաչափ ավելի հարուստ է։ Արդյունաբերության ասպարեզում աշխատողները, վորտեղ բավական խոշոր կադրային վոսկրաշար կա, ուշադիր մոտեցում ունենալու դեպքում կարող են ուսումնասիրել աշխատանքի կազմակերպման ու ձեռնարկությունների կառավարման մի շարք բավական լավ որինակներ թե՛ ԽՍՀՄ-ում, թե՛ արտասահմանում։ Գյուղատնտեսության ասպարեզում մենք այդ չունենք։ Գյուղատնտեսության մեջ մենք հանդիպեցինք հողագործության միանգամայն նոր ձևի, նոր տեխնիկայի, և կազմակերպական հարցերի լուծումն այստեղ պետք է հենց սկզբից սկսել։

Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան (1933 թ.) պլենումում ընկ. Ստալինն ասում էր.

«Մենք բոլորս ուրախանում ենք, վոր տնտեսության կոլտնտեսային ձևն իշխող ձև է դարձել մեր

հացահատիկային շրջաններում։ Սակայն դեռ բոլորը չեն հասկանում այն, որ այդ հանգամանքը ոչ թե նվազեցնում, այլ ավելացնում է մեր հոգացողությունն ու պատասխանատվությունն գյուղատնտեսության զարգացման գործում... Անցումը կոլեկտիվ տնտեսության, որպես տնտեսության գերակշռող ձևի, ոչ թե նվազեցնում, այլ ավելացնում է կոմունիստների ղեկավար դերը գյուղատնտեսության բարձրացման գործում։ Ինքնահոսն այժմ, ավելի քան յերբեք, վտանգավոր է գյուղատնտեսության զարգացման համար։ Ինքնահոսն այժմ կարող է ամբողջ գործը կործանել»։

Յեվ 1933 թիվն ինքնահոսի դեմ կազմակերպված պայքար մղելու տարի յեղավ— մեր կուսակցության ու պրոլետարիատի կազմակերպական դերի հսկայական աճման տարի յեղավ գյուղում։

1933 թ. ամենահարուստ փորձը, ՄՏԿ ու խորհտնտեսությունների քաղբաժիններ կազմակերպելուց հետո, բոլոր կուսակցական կազմակերպությունների կողմից դեպի գյուղատնտեսությունը կատարած շրջադարձից հետո, ցույց տվեց, թե ինչ հսկայական հնարավորություններ են բացվում մեր առաջ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրները լուծելու ասպարեզում, յեթե ճիշտ լուծենք կազմակերպական հարցերը։ Նույնիսկ խոշոր տեխնիկական ապարատ, ինչպես Հողժողկոմատը կամ Խորհտնտժողկոմատը, յեթե կազմակերպական հարցերին նվիրեր թեկուզ կեսն այն ուշադրության, որ Կենտկոմն է նվիրում այդ հարցերին,— շատ բան կարող եր անել, սակայն ոչ Հողժողկոմատը և ոչ էլ Խորհտնտժողկոմատն անհրաժեշտ ուշադրություն չեն նվիրել այդ հարցերին։ Յես ավելի խիստ ձևով կարտահայտեմ. յեթե Հողժողկոմատում կազմակերպական հարցերը, կատարման ստուգումը և օպերատիվությունը հետին տեղ չգրավեյին, յեթե այնտեղ չտարվեյին «ընդհանուր դիրեկտիվներ» գրելով, ընդհանուր դեկլարացիաներ կազմելով, ապա մենք հավանորեն շատ ավելի քիչ թերություններ կունենայինք և համագումարում այսպիսի խստությամբ չեյինք խոսի Հողժողկոմատի մասին, ինչպես ստիպված ենք այդ անելու այժմ։

Հողժողկոմատի աշխատանքի գլխավոր թուլությունը հենց այն է, որ նա տասնյակ ու հարյուրավոր կարգադրություններ է ուղարկել ցած, հաշվառում ու հաշվետվություն է պահանջել, մեքենաներ ու դազգյահներ է ուղարկել, սակայն չի թափանցել ստորին մարմինների օպերատիվ աշխատանքի ու կազմակերպական կառուցվածքի մեջ, չի ապահովել այդ բոլոր կազմակերպությունների ամենօրյա ղեկավարությունը։

Ընկերնե՛ր, Հողժողկոմատի տրամադրության տակ նյութական հսկայական ռեսուրսներ կան, նա տրակտորներ ու գյուղատնտեսական մեքենաներ է բաշխում։ Ճիշտ է, գյուղատնտեսության հարցերը, որոնց թվում նաև տրակտորների, մեքենաների և նյութական այլ միջոցների բաշխումը, հատկապես վերջին տարիներում, Կենտկոմի ու Ժողկոմխորհի միջոցով է կատարվել։ Սակայն չի կարելի մոռանալ, որ այդ միջոցները Կենտկոմի կողմից բաշխվելու հանգամանքն արդեն լուծում է նրանց ճիշտ օգտագործման հարցը։ Բաշխման վերաբերյալ որոշումը պետք է գործնականում կիրառել։ Յեթե այսքան տրակտոր և այսքան պահեստի մասեր ուղարկելու որոշում կա, այդ չի նշանակում, թե որևէ մեկը չի կարող կոծկել կամ [illegible] այդ որոշման կատարումը։ Մենք գիտենք, թե ինչ բան է ապարատը։ Մենք գիտենք, թե ինչ է որոշումների կատարումը։ Ամեն կարևոր որոշում կարելի յե գործնականում փչացնել, ապականել անճանաչելիության չափ և հետո դեռ գալ և «փաստաթղթերով» ապացուցել, թե այլ կերպ չեր կարելի անել։

Հողժողկոմատում ապարատը հաճախ մեքենայորեն է մոտենում դիրեկտիվներին, առանց հաշվի առնելու տեղական կոնկրետ պայմանները: ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի անհամար թվով սեկտորների ու բաժինների պատճառով տեղերի առաջադրված ամենահասարակ հարցը բազմաթիվ ինստանցիաներով է անցնում: Հետևանքն այն է լինում, վոր տեղերն առանց պատասխանի յեն մնում:

Տեղական աշխատողները լավ գիտեն այդ: Ահա մի օրինակ. Կիրգիզիայի Հողժողկոմատը 1933 թվի դեկտեմբերի 1-ին դիմում է Միության Հողժողկոմատին, խնդրելով հանրապետությանը բավարարել 28 կուլտուրաների սերմացվով: Այդ նամակը նախ մտել է հացահատիկային վարչությունը, հետո կերի վարչությունը, հետո պտղաբանջարեղեններինը, այնուհետև սերմնաբուծական վարչությունը, իսկ այնտեղից անցել է սեկտորից-սեկտոր: Յուրաքանչյուր վարչությունում ու սեկտորում հարցը յեղել է տասնյակ կատարողների մոտ, և նրանցից յուրաքանչյուրն իր մակագրությունն է արել նրա վրա: Նամակը Հողժողկոմատում թափառել է 40 օր: Այդ ժամանակամիջոցում միայն հացահատիկային խումբն է պատասխան գրել և այն էլ մեկ կուլտուրայի վերաբերմամբ: Յե՞րբ պատասխան կտրվի մնացած 27 կուլտուրաների վերաբերմամբ, այդ հայտնի չէ: Ամենից հավանականն այն է, վոր պատասխանը կտրվի գարնանացանից հետո (ծիծաղ):

Յես կարող եյի դարձյալ մի շարք ցայտուն օրինակներ բերել, սակայն այս էլ բավական է: Բավական է մեզ ասել, վոր Հողժողկոմատում գոյություն ունի 29 վարչություն, 202 սեկտոր:

Մի ձայն.— «Ո՜յ, ո՜յ, ո՜յ»:

Կագանովիչ.— Այդ դեռ վոչի՜նչ. յուրաքանչյուր սեկտոր տնօրինում է ամբողջ ԽՍՀՄ (ծիծաղ, շարժում): Այդպիսով, վորևե հարց լուծելու համար անհրաժեշտ է տասնյակ սեկտորներով անցնել, վորպեսզի

կարելի լինի այս կամ այն հարցի դրությանը ծանոթանալ, օրինակ, վորևե մարզում ցանքի դրությունն իմանալու համար պետք է անցնել առնվազն 20—30 սեկտոր, 202 բարակ թելիկների արանքով: Պարզ է ձեզ համար, վոր յեթե այդ բոլոր թելիկները հյուսենք և դարձնենք մի քանի ամուր պարան, այն ժամանակ, ընկ. Յակովլեվ, մենք այսպիսի բեդլամ չենք ունենա: Ահա՛ թե ինչու յե վատ կառավարչությունն ու վատ ղեկավարությունն ստացվում:

Ձայն.— «Ճիշտ է»:

Կագանովիչ.— Մի այնպիսի կարևոր գործ, ինչպես ՄՏԿ ու կոլտնտեսությունների միջև բնահաշվարկում կատարելու ձևերի մշակումն է, Հողժողկոմատի ապարատից 140 օրվա թափառում պահանջեց 44 ինստանցիաներով: Հաստատված և ապրիլի 25-ին տեղերին ուղարկված ձևն այնուհետև վերացվեց հացահատիկային տրակտորկենտրոնի կողմից: Սկսեցին նորից վերամշակել: Մինչև 1933 թ. հուլիսի կեսերը վոչ ձևը, վոչ էլ հրահանգը չեյին ուղարկվել տեղերին, թեև այդ ժամանակ արդեն հացի հանձնումը լայն կերպով ծավալվել եր արդեն:

Այդ տեղի յե ունենում գրասենեկային մոտեցումից դեպի ապարատի աշխատանքի կառուցվածքն ու դինամիկան:

Ինչպես տեսնում եք, ֆունկցիոնալ սիստեմը Հողժողկոմատում առանձին «նվաճումներ» և արել (ծիծաղ):

Շատ տեղին է հիշել «Խայտաբղետ նամակների» շչեդրինյան հերոսներին: Այնտեղ կա յերկրորդ նամակը: Վորպես հերոսներ հանդես են գալիս յերեք պետական խորհրդական—Սեմյոն Միխայլովիչ Նեոսլաբնի, Պյոտր Սամոյլովիչ Պրելեստնիկովը և Նիկոդիմ Լուկիչ Պերեդրյակին (ի՜նչ ազգանուններ են): Նրանցից յերկուսը բաժանմունքների վարիչներ եյին. մեկը—Սեմյոն

Միխայլովիչ Նեոպաքնին հանգույցները կապելու բաժանմունքի վարիչն էր (ծիծաղ), իսկ մյուս—Պյոտր Սամոյլովիչ Պրեյեստնիկովը—այդ հանգույցներն արձակելու բաժնի վարիչն էր (խլացուցիչ ծիծաղ)։ Յերկու բաժինների համատեղ գոյությունը,— ասում է Շչեդրինը, — չափազանց օգտակար էր, որովհետև հենց որ Սեմյոն Միխայլովիչը հանգույցը կապում էր, ապա Պյոտր Սամոյլովիչն անմիջապես արձակում էր(Հոմերական քրքիջ), իսկ հետո Սեմյոն Միխայլովիչը նորից էր կապում, իսկ Պյոտր Միխայլովիչը նորից արձակում։ Մինչդեռ նրանք իրենց գործն էին անում, Նիկոդիմ Լուկիչն իր համար ման էր գալիս ու նշում— առաջին հանգույց, յերկրորդ հանգույց և այլն (Ծիծաղ)։ Յերբ արդեն բավականաչափ նշումներ էին կուտակվում, նրանցից հանգույցների վիճակագրություն էր կազմվում, այսինքն՝ քանի այդպիսի հանգույց է կապված (Ծիծաղ) և քանիսն արձակված։ Իսկ թե ինչի համար՝ հայտնի չէ (Աղմկալի ծիծաղ, ծափահարություններ)։

Վերջում հաշվեկշիռ էր կատարվում.—մուտքն ու ելքը հավասար են, իսկ դրամարկղում ոչինչ չկա...» (Աղմկալի ծիծաղ—ծափահարություններ)։ Յերեքն էլ շատ սիրով էին իրար հետ և յերեքն էլ յերջանիկ ու բարձրացման արժանի (Ծիծաղ) այդ մոգական աշխարհում...

Այդ աշխարհում, թե Պերեպրյադինը, թե Նեոպաքնին, և թե Պրեյեստնիկովը ոչ միայն իրենց այնպես էին զգում, ինչպես ձուկը ջրում, այլ և լուրջ կերպով համոզված էին, որ այդ վիճակից դուրս գալու ամեն մի փորձ բունտ է և հիմքերի ցնցում (Ծիծաղ)։

Կոմենտարներն ավելորդ են։ Կարելի յե միայն ընդգծել, որ յերբ մենք այսոր խոսում ենք ֆունկցիոնալ սիստեմի ու նրա ոչնչացման մասին, հանգույցներ կապելու և արձակելու մասին, իհարկե, կան մարդիկ, որոնք հավանորեն մտածում են, թե այդ բունտ է և հիմքերի ցնցում։ Սակայն մենք պետք է ասենք— այդ հին աշխարհի մնացորդների վերացումն է։

Ահա թե ինչու յե կազմակերպական հարցն այդքան սուր կերպով դրվում։ Ահա թե ինչու ժողկոմատները, առաջին հերթին Հողժողկոմատը պետք է փոխեն իրենց կառուցվածքը։

Ինչ խոսք, որ 200 հազարից ավելի կոլտնտեսություն և մոտ 3000 ՄՏԿ — այս շատ ավելի բարդ բան է, քան մի քանի հազար գործարանային ձեռնարկություն։ Հենց դրա համար էլ անհրաժեշտ է, որ Հողժողկոմատը խորհտնտեսություններին և կոլտնտեսություններին, ՄՏԿ հողբաժինների ու մարզհողվարչությունների, նաև իր ապարատի աշխատանքն այնպես կազմակերպի, որ սիստեմը բարեկազմ լինի, և տնտեսական-օպերատիվ աշխատանքն անխափան ընթանա։

Հենց այն պատճառով, որ այդ դժվար է, հենց այդ պատճառով էլ պետք էր ճիշտ փոխհարաբերություններ սահմանել մարզային ու շրջանային հողվարչությունների հետ, հենց դրա համար էլ հարկավոր էր բավականաչափ ավելի ուշադրություն նվիրել դրան։ Պետք էր այնպես լուծել Հողժողկոմատի ապարատի կազմակերպական կառուցվածքի հարցը, որ փոխհարաբերությունները ստորին հողային մարմինների հետ առավելյագույն չափով պարզ լինեյին։

Համագումարից մի յերկու ամիս առաջ մենք ձեռնամուխ յեղանք այդ գործին, սակայն չավարտեցինք այն, քանի որ դժվար է մի հարվածով կազմակերպական հարցը լուծել՝ հենց միայն այս կամ այն նախագիծը հաստատելու միջոցով։ Յուրաքանչյուր ժողկոմատ, յուրաքանչյուր բաժին հատուկ մոտեցում ու լուրջ կշռադատություն է պահանջում կազմակերպական կառուցվածքը որոշելիս. և այժմ համագումարում այդ հարցի շուրջը խորհրդակցություն յեղավ տե-

դական ընկերների հետ, և համագումարից հետո կհաստատվի Հողժողկոմատի, ինչպես նաև մյուս ժողկոմատների ապարատի նոր կառուցվածքը:

Հողժողկոմատում մինչև այժմ գոյություն ունեցող բոլոր տրեստները վերացվում են, և համապատասխան ֆունկցիաները դրվում են այն վարչությունների վրա, վորոնք անմիջապես վարում են արտադրության կազմակերպումը կոլտնտեսություններում ու ՄՏԿ-ում (հացահատիկային գլխավոր վարչություն, ճակնդեղի գլխավոր վարչություն, բամբակագործության գլխավոր վարչություն, վուշի-կանեփագործության վարչություն): Այս գլխավոր վարչություններն իրենց ձեռքումն են կենտրոնացնում այն բոլոր ֆունկցիաները, վորոնք առաջ ցրված եյին տարբեր վարչություններում ու բաժիններում: Գլխավոր վարչությունները (հացահատիկի, ճակնդեղի, բամբակի-վուշի և այլն) պետք է բաժանվեն տերիտորյալ սեկտորների՝ ըստ շրջանների համապատասխան խմբերի (Հարավային ու Արևելյան, Հեռավոր ու Մերձավոր Արևելք, Կենտրոնական, Հյուսիսային գոտի):

Այդ վարչություններից յուրաքանչյուրն իր տնորինության տակ կենտրոնացնում է տվյալ կուլտուրայի վերաբերյալ բոլոր հարցերը, այն է՝ ցանքի հարցեր, տրակտորների, պահեստի մասերի, գյուղատնտեսական մեքենաների բաշխում, պայքար վնասատուների դեմ:

Տեղական ընկերները գիտեն, թե ի՞նչ բան է ՎԳԸ (ՌԲՎ):

Ձայներ.— Այդպիսի մի բան կա:

Ռոյզենման.— Այո՛, այո՛:

Կագանովիչ.— Այդ մի ընկերություն է, վոր պայքարում է վնասատուների դեմ: Սակայն նախքան գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարելն, անհրաժեշտ է ջախջախել հենց վնասատուների դեմ պայքարող ընկերության ներսում գոյություն ունեցող գիտակցական կամ անգիտակցական վնասարարությունը (ծափահարություններ):

Համապատասխանորեն մենք պետք է ապարատը վերակառուցենք նաև մարզերում: Ամենևին պետք չէ, վոր Հողժողկոմատն աշխատի բոլոր դետալներն իր ձեռքն առնել. դրա համար գոյություն ունեն յերկրային ու մարզային հողվարչություններ:

Սխալ է այն կարծիքը, թե Հողժողկոմատը կարող է անմիջական ոպերատիվ կապ պահպանել տեղերում գտնվող իր հազարավոր մարմինների հետ և ղեկավարել նրանց: Տեղական գործկոմները պետք է ավելի շատ քան այժմ, զբաղվեն ոպերատիվ հարցերով, իրագործելով վոչ միայն իրենց դիրեկտիվների, այլ և կառավարական մարմինների ու ժողկոմատների դիրեկտիվների ստուգումը: Տեղական գործկոմներն ամենևին չպետք է իրենց գործունեությունը սահմանափակեն միայն դիրեկտիվներ տալով: Նրանք պետք է ոպերատիվ կերպով միջամտեն յերկրային ու մարզային հողային վարչության աշխատանքին, աշխատանքի ընթացքում ուղղեն այս կամ այն թերությունը, իրենց համար պատվի գործ համարելով լավագույն ցուցանիշների հասնելը գործկոմի բոլոր բաժինների աշխատանքներում: Համապատասխանորեն պետք է վերակառուցվի նաև գործկոմների աշխատանքը,— ավելի՛ քիչ պարլամենտարիզմ, ավելի՛ շատ կենդանի, ոպերատիվ գործ, ավելի՛ շատ կատարման ստուգում:

Պետք է գործն այնպես կազմակերպել, վոր Հողժողկոմատն իր ուշադրությունը կենտրոնացնի հիմնական, վճռական լծակների վրա, վոր նա, օրինակ, յերբ ֆինանսներ է բաշխում, իսկապես կարողանա ստուգել այդ ֆինանսների բաշխման կատարումը: Պետք է ազատվել այն դրությունից, յերբ Հողժողկոմատը կառավա-

րությունից ստացված միլիոններն ավտոմատիկ կերպով գրում ե մեռյալ աղյուսակներում: Պետք ե գործն այնպես կազմակերպել, որ հնարավոր լինի սխալները բաշխման ընթացքում ուղղել, վարպետաց փող չլինելու, բանվորների աշխատավարձը չվճարելու մասին տեղերից ստացվող տասնյակ հարյուրավոր հեռագրերն անպատասխան չմնան:

Պետք ե ստեղծել ամբողջական ապարատ, ազատել նրան ամեն տեսակ ավելորդ ֆունկցիաներից, և այն ժամանակ մենք իսկական ուժ կունենանք տնտեսական ղեկավարության մեջ: Չե՞ որ, Հողժողկոմատի ընկերնե՛ր, մենք չենք կարող յերկար հանդուրժել ստեղծված դրությունը:

Այս տարի գյուղատնտեսությամբ զբաղվել ե ամբողջ կուսակցությունն ու նրա Կենտկոմը: Կուսակցությունն այսուհետև ել ե զբաղվելու այդ հարցերով. կուսակցությունն իր ձեռքումն ե պահելու գյուղատնտեսության իշխող բարձրունքները, կուսակցությունը կազմակերպելու յե և՛ կոլտնտեսությունները, և՛ խորհտնտեսությունները: Սակայն, նկատի ունեցեք, որ գործնական տնտեսական օպերատիվ հարցերի լուծումը պետք ե ապահովված լինի Հողժողկոմատի աշխատանքով: Չի կարելի հանդուրժել այն դրությունը, որ գոյություն ունենա մի հսկայական հողային ապարատ, միլիոնավոր ու հարյուր միլիոնավոր ռուբլիներ կլանի և լավագույն դեպքում կիսով չափ զուր տեղն աշխատի: Կուսակցությունը թույլ չի տա այդ: Հողմարմինների աշխատողները պետք ե վճռականապես վերակառուցվեն: Մասնավորապես, ընկ. Յակովլևը պետք ե լուրջ դասեր հանի իր համար, այդ դասերը յուրացնի ոչ թե արտաքին, ցուցական «վճռականությամբ», այլ սև աշխատանքով, պրակտիկայի մեջ ներթափանցելով՝ ինչպես հարկն ե:

Կենտրոնական կոմիտեն, Քաղբյուրոյի անդամները և մեր կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինը նրա համար չեն քննադատում Հողժողկոմատին, որ համագումարից հետո ամեն ինչ թողնվի այնպես, ինչպես կար (ծափահարություններ): Կամ դուք կկարողանաք, ինչպես հարկն ե մոբիլիզացիայի յենթարկել ամբողջ Հողժողկոմատի ապարատը, հարյուր հազարավոր մարդկանց, որպեսզի կուսակցության առաջադրանքը կատարվի, կամ թե այդ բանը կուսակցությունը կանի ձեր գլխի վրայով (ծափահարություններ):

Յես կուզենայի շոշափել գյուղատնտեսության ելի մի քանի կազմակերպական հարցեր, որոնք դուրս են Հողժողկոմատի շրջանակներից: Յես նկատի ունեմ շրջանային հողբաժինները, ՄՏԿ, կոլտնտեսությունը, բրիգադը: Հողբաժինը մեզանում հետին տեղ ե գրավում: Նա մի տեսակ միջիշխանական շրջանում ե գտնվում, կարծես չի կարողանում իր պարտականությունները գտնել: Հաճախ պլանավորումը հողբաժնում հանգում ե այն բանին, որ նա արտադրական առաջադրանքները մեխանիկորեն բաշխում ե կոլտնտեսությունների միջև, առանց հաշվի առնելու քաշող ուժը, աշխատող ուժը, տնտեսական հնարավորությունները: Շրջհողբաժինը պետք ե այնպես կառուցվի, որ նա շատ լավ ծանոթ լինի ամեն մի կոլտնտեսության:

Ընկ. Ստալինն այն միտքն արտահայտեց, որ չի կարելի ՄՏԿ վզին փաթաթել նրան չվերաբերող մի շարք ֆունկցիաներ: Անհրաժեշտ ե ամեն կերպ ամրացնել շրջհողբաժինները, մերժել նրանց վերացման բոլոր փորձերը: Շրջհողբաժինը, այդ պետական մարմինը պետք ե իր վրա վերցնի մի շարք օպերացիաների ղեկավարությունը, մասնավորապես անասնաբուծության նկատմամբ: Անասնաբուծության խնդիրները, որ ընկ. Ստալինը համագումարում դրեց ամենասուր ձևով, պա

հանձնում են լրջորեն վերակառուցել անասնաբուծության կազմակերպական ղեկավարման ամբողջ սիստեմը:

Ի՞նչ ունենք մենք այստեղ: Դուք գիտեք ընկերներ, որ անասնաբուծության ասպարեզում դեռևս մնացել են Միությունների Միության այսպես կոչված «Մոլժիվկոլխոզոբյեդինենիեյի» հին ապերատիվ սիստեմի հետքերը: Հողժողկոմատին կից գոյություն ունեցող կոլտնտեսային անասնաբուծական ֆերմաների վարչությունն իր տեղական միավորություններով—ԿԱՖ (Կոլտն. Անաս. Ֆերմա) տարեկան մոտ 40 միլիոն ռուբլի յե կլանում կոլտնտեսային-ապրանքային ֆերմաների հատկացումից իր պահպանության համար (Դահլիճում շարժում): Այո՛, բայց արդյունքը շատ քիչ է:

Վերցրեք Հողժողկոմատի ապարատի յերկրային ու մարզային օղակները—մարզային ու յերկրային հողվարչությունները: Այնտեղ հազարավոր մարդիկ են աշխատում: Սակայն դրանցից քանիսն են զբաղվում կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների անասնաբուծությամբ: Լավագույն դեպքում մի քանի տասնյակ մարդ: Յեվ ա՛յդ այն ժամանակ, յերբ անասունների ընդհանուր թվի 85–90 տոկոսը կենտրոնացված է կոլտնտեսություններում: Դրությունն ավելի լավ չե նաև Հողժողկոմատում:

Յես պետք է ասեմ, որ անասնաբուծության բնագավառում մեր հողային մարմիններն իրենց աշխատանքը սահմանափակել են միայն ընդհանուր բնույթի հրահանգներով և ընդհանուր ցուցումներով: Նրանց նկատմամբ լիովին կիրառելի յե կովի վերաբերյալ ուկրաինական ասացվածքը—«բառաչում է, բայց չի ծնում» (Ծիծաղ): Մարդիկ բառաչում են, չի կարելի ասել, թե չեն բառաչում (Ծիծաղ), բայց նրանք դեռ չեն ծնել (Ծիծաղ), իրականում դեռ գործը չեն կազմակերպել:

Ագրոզոոտեխնիկական աշխատանքը վատ է դրված: Տեսե՛ք, թե ի՞նչ է կատարվում զոոտեխնիկների կադ-

րերի հետ: 15 կարևորագույն մարզերում 3540 զոոտեխնիկներից շրջանային ապարատում կենտրոնացված է 2600 զոոտեխնիկ, յերկրային ապարատում— 300, խորհտնտեսություններում—160, իսկ կոլտնտեսություններում և վոչ մի զոոտեխնիկ չկա: Այս դրությունը պետք է հիմնովին փոխել: Անասնաբուծության բնագավառում մենք պետք է կազմակերպորեն վերակառուցվենք:

Անհրաժեշտ է, ընկերներ, նաև հարց դնել խորհտնտեսություններում և ՄՏԿ ֆունկցիոնալ սիստեմն ու բազմողակությունը վերացնելու մասին: ՄՏԿ գոյություն ունեն արտադրամասեր: ՄՏԿ, կոլտնտեսության ու կոլտնտեսային բրիգադի միջև մի ամբողջ օղակ կա հանձին այդ արտադրամասերի: Հարց է առաջ գալիս—պե՞տք է, արդյոք, այդ արտադրամասը:

Ձայներ դահլիճից.— Վո՛չ, վո՛չ:

Կագանովիչ.— Տեղական աշխատողների մեծ մասն այն կարծիքին է հանգում, որ արտադրամասերը հարկավոր չեն:

Ձայներ դահլիճից— Ճիշտ է:

Կագանովիչ.—Մենք չենք առաջարկում հարցն այժմ լուծել, սակայն ստիպված պետք է լինենք հարցը լուծելու, վորպեսզի վերացնենք արտադրամասերի մեծագույն մասը:

Դառնանք կոլտնտեսության կառուցվածքին: Մեր մանր կոլտնտեսություններն ընդօրինակում են խոշորների կառուցվածքը: Իսկ մեր յերկրում կոլտնտեսությունների 60 տոկոսն այնպիսի կոլտնտեսություններ են, վորոնք ընդամենը 60–70 տնտեսություն ունեն: Մի՞թե կարելի յե մի կոլտնտեսության կառուցվածքը մյուսից ընդօրինակել: Չի՛ կարելի: Դուք գիտեք, թե ինչպիսի՞ հսկայական վարչական ապարատ կա կոլտնտեսություններում: Մենք դիրեկտիվ ենք տալիս, թե կրճատեցեք ապարատը, բայց քանի վոր կազմակերպության սիստեմը փոխված չե, և կոլտնտեսության

նախագահի կողքին գոյություն ունի դաշտագործը, աշխատանքի կազմակերպիչները, պլանարարը, գյուղատնտեսը, տնտեսության վարիչը և տասնյակ այլ պաշտոնատար անձինք,— դուրս է գալիս, վոր կոլտնտեսությունը հսկայական ֆունկցիոնալ ապարատ ունի։ Հետևանքն այն է լինում, վոր բրիգադիրը կարգադրություններ է ստանում չափազանց շատ մարդկանցից, իսկ կոլտնտեսության նախագահը շատ անգամ գաղափար չի ունենում բրիգադներում ստեղծված դրության մասին։ Ահա, որինակ, ինչ է գրում մի քաղբաժնի պետ.—

«Յեթե դուք հարց տաք կոլտնտեսության վարչության նախագահին, թե ի՞նչ դրության մեջ է ցանքի, բերքահավաքի, կալսելու այսօրվա առաջադրանքը, ապա կարող եք նախապես վստահ լինել, վոր մի պատասխան կստանաք—դաշտագործը դեռ տեղեկանք չի ներկայացրել»։

Տեսնում եք, դաշտագործը դեռ տեղեկանք չի ներկայացրել։ Այդ տեղեկանքները կերել, խեղդել են մեր կոլտնտեսություններին։ Պետք է կրճատել վերևից մեր կոլտնտեսություններից պահանջող հաշվետվությունը, անմիջական կապ հաստատել վարչության նախագահի ու բրիգադապետի միջև, պետք է վարչության նախագահին դարձնել տնտեսության լիիշխան տեր, վորը ղեկավարում է, կարգադրություններ է անում...

Ձայներ տեղերից— Ճի՛շտ է։

Կագանովիչ... վորը չհենվի տեղեկանքների վրա և այն բանի վրա, թե ֆունկցիոնները տեղեկանքներ չեն տվել։

Պոստիշեվ.— Ճի՛շտ է։

Կագանովիչ. Ճիշտ այդպես էլ ֆունկցիոնալությունը չպետք է թույլ տալ հենց կոլտնտեսային բրիգադում։ Անհրաժեշտ է, վոր բրիգադապետը լինի վորոշ

արտադրական շրջանում և լիովին պատասխանատու ամեն ինչի համար,— և՛ վարուցանքի, և՛ բերքահավաքի, և՛ ինվենտարի, և՛ ձիու համար. մի խոսքով պատասխանատու լինի ամեն բանի համար։ Պետք է բրիգադը կոլտնտեսության իսկապես հիմնական արտադրական միավորը դարձնել։

ՄՏԿ տրակտորային և կոլտնտեսային բրիգադների փոխհարաբերության հարցը չափազանց լուրջ հարց է։ Այս հարցը տեղերում տարբեր կերպ է լուծվում։ Իհարկե, այստեղ չի կարելի մի ընդհանուր դեղատոմս տալ, բայց յես այսպես եմ պատկերացնում գործը. կոլտնտեսային բրիգադապետն աշխատանքի վորակի գծով պետք է ղեկավարի, հրամայի տրակտորային բրիգադապետին։ Վերցրեք դուք տրակտորային բրիգադապետին։ Վարպետը ավելի շատ վարի, ավելի շատ մշակի, նա հաճախ տրակտորն ավելի արագ է քշում, խոփը ցատկում է և սրտամնա (չվարած տեղ) է ստացվում։ Դաշտային–կոլտնտեսային բրիգադապետն ասում է. կանգնի՛ր, թող ուղղենք, մի քիչ սպասի՛ր։ Իսկ նա նորման ավելի արագ կատարած լինելու համար առաջ է գնում, հաշվի չառնելով աշխատանքի վորակը։ Դաշտային բրիգադապետն իրավունք պետք է ունենա նրան ասելու.— մշակման վորակի համար յես եմ պատասխանատու և քանի դեռ դու իմ հողամասում ես աշխատում, ապա բարի յեղիր յենթարկվելու։

Յես ՄՏԿ և կոլտնտեսության ղեկավարության բարելավման վերաբերյալ կազմակերպական հարցերի միայն մի փոքր մասը բերի այստեղ, սակայն այդ էլ ցույց է տալիս, թե վորքան անհրաժեշտ է, վոր մենք բոլորս թե՛ կենտրոնում և թե՛ տեղերում լուրջ ուշադրություն դարձնենք կազմակերպական հարցի վրա, վորը հատկապես դժվար լուծելի յե մի այնպիսի նոր

գործում, ինչպիսին սոցիալիստական գյուղատնտեսությունն է։

Ինչ վերաբերում է խորհտնտեսություններին, ապա նրանց հետ մնալը գյուղատնտեսական աշխատանքների ասպարեզում նշանակելի չափով բացատրվում է տեխնիկային վատ տիրապետելով ու խորհտնտեսությունների մեծածավալությամբ։

Ընկեր Ստալինն արդեն ասաց, որ խորհտնտեսությունների ապախոշորացման հարցը կենտկոմն արդեն դրել է։ Ընկ. Յուրկինը շատ է շրջագայում տեղերում, մոտ է կյանքին։ Սակայն, երբ նա գալիս է Մոսկվա, այստեղ նա այնպիսի խոշոր ֆունկցիոնալ ապարատով, այնպիսի մեծ քանակությամբ գրագրությամբ ծանրաբեռնված է լինում, որ անկարող է լինում ընդհանրացնելու տեղական այդ փորձը։ Մեր խորհտնտեսությունների գլխավոր թուլությունը նրանց ծանրաշարժությունը—մեծածավալությունն է, նաև վարչության ծանրաշարժությունը թե՛ խորհտնտեսություններում, թե՛ Խորհտնտժողկոմատում։ Ֆունկցիոնալ սիստեմը Խորհտնտժողկոմատում պակաս զարգացած չէ, քան մյուս ժողկոմատներում։ 21 արտադրական վարչություններից միայն 6-ն է իսկական իմաստով արտադրական, իսկ մնացածները ֆունկցիոնալ են։

Թույլ տվեք բերել մի օրինակ, որը ցույց է տալիս, թե ինչի յե հասցնում ֆունկցիոնալ սիստեմը Խորհտնտժողկոմատի ապարատում։

Գոյություն ունի մի այսպիսի խորհտնտեսություն— «Մոլոչնոյե»։ Մինչև 1933 թ. ապրիլ ամիսն այդ խորհտնտեսությունը գտնվում էր Համամիութենական կաթնա-ցեղային տրեստի իրավասության տակ։ 1933 թ. մայիսի 16-ին խորհտնտժողկոմի տեղակալ ընկ. Գերչիկովի ցուցման համաձայն՝ խորհտնտեսությունը վեր է ածվում ինքնուրույն տնտեսական միավորի։ Ընկ. Գերչիկովի հրամանից մի ամիս հետո՝

1933 թ. հունիսի 11-ին ընկ. Յուրկինն այդ խորհտնտեսությունը հանձնում է Հյուսիսային Յուղտրեստին։ Նույն օրը, հունիսի 11-ին, երբ ընկ. Յուրկինը ստորագրում է խորհտնտեսությունը Հյուսիսային Յուղտրեստին հանձնելու հրամանը, ժողկոմի տեղակալ ընկ. Գրուշևսկին հրաման է տալիս խորհտնտեսությունը... Հյուսիսային գիտահետազոտական ինստիտուտին ամրակցելու մասին։

Ձայներ— Ա՛յ քեզ կարգեր։

Կագանովիչ.— 1933 թ. հունիսի 21-ին ընկ. Գերչիկովը հաղորդագրություն է ստանում քաղվարչությունից, որ նրա մայիսի 16-ի հրամանը չի կատարված։ Ընկ. Գերչիկովը չգիտեր, որ իր հրամանը փոխվել է ժողկոմի կարգադրությամբ, իսկ ժողկոմի հրամանն իր հերթին փոխվել է ժողկոմի մյուս տեղակալի կարգադրությամբ (ծիծաղ)։ Ընկ. Գերչիկովն այդ հաղորդագրության վրա հետևյալ մակագրությունն է անում. «Ընկ. Լվո՛վ, անձամբ ամենախիստ քննություն կատարեցեք, թե ով է վնաս հասցնում ու կազմալուծում ժողկոմատի աշխատանքը (հոմերական քրքիջ) և մոլորության մեջ գցում կոլեգիային։ Քննությունից հետո հանցավորներին վռնդեցե՛ք ապարատից (աղմուկ, ծիծաղ), որպեսզի մյուսները չորս հնգամյակի ընթացքում հիշեն այդ» (քրքիջ ամբողջ դահլիճում)։

Մեկը հանգույցը կապել է, մյուսն արձակել (Ծիծաղ, ծափահարություններ)։

Պետք է արդարությունն ասել, որ ընկ. Գերչիկովը մեծ օպտիմիստ է, նա հույս ունի, որ այդպիսի ապարատում հիշողությունը կարող է չորս հնգամյակ պահպանվել (ծիծաղ), մինչդեռ ոչ թե հիշողությունը, այլև բանականությունն անգամ կարելի յե մի օրվա մեջ կորցնել (Ծիծաղ ծափահարություններ)։

Իսկ գործը, ընկերներ, նրանով վերջացավ, որ ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատն արձանագրեց, թե խորհտնտե-

սությունը խայտառակ դրության է հասցված։ Այժմ ընկ. Յուրկինը տեղեկանք է տվել, վոր խորհտնտեսությունների գործերը լավանում են։

Յեվ ահա, ընկ. Յուրկի՛ն և Խորհտնտժողկոմատի աշխատողներ, անհրաժեշտ է, վոր դուք վոչ միայն վերակառուցեք ու ապախոշորացնեք խորհտնտեսությունները, այլև վերակառուցեք ձեր ժողկոմատը։ Մեզ մոտ մի հանձնաժողով է աշխատում, նա իր աշխատանքը դեռ չի վերջացրել։ Կուսակցության համագումարից հետո, յես հույս ունեմ, մենք կզբաղվենք այդ գործով և անկասկած հանդույցներ կապելու ու քանդելու այդ յերեվույթն այլևս չի լինի (Ծափահարություններ)։

4. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՅԵՎ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Այս համագումարում և դեռ համագումարից առաջ ընկ. Ստալինն ամբողջ սրությամբ դրեց ապրանքաշրջանառության ու տրանսպորտի հարցերը։

Կենտկոմը պայքարում է ապրանքակիտումների, ապրանքները սխալ հասցեներով ուղարկելու, միայն ռուբլիներով պլանավորելու դեմ, յերբ անտեսվում է ասորտիմենտը, և «արդուզարդի» մարկայի տակ մի մարզը վագոններով շան վզկապներ են ուղարկել այնպիսի քանակությամբ, վոր կարելի յեր բոլոր շներին վոտքից գլուխ հագցնել, իսկ մյուս մարզն տոններով ճրագի այրիչներ են ուղարկել առանց ապակիների, իսկ յերրորդ մարզը՝ ճրագի ապակիներ, առանց այրիչների և այլն։

Կենտկոմը զբաղվել է խանութների ու կրպակների կազմակերպման և առևտրական ցանցի ծավալման հարցերով։

Մենք պայքարել ենք բաշխման բյուրոկրատական սիստեմի դեմ, վորն ի չիք դարձրեց առևտուրը և «ձախլիկ» թեքման ցայտուն արտահայտությունն է ապրանքաշրջանառության մեջ։

Ապրանքաշրջանառության կազմակերպական հարցերը դեռևս լիովին մշակված չեն, թեկուզ և այնքան, վորքան արդյունաբերության մեջ։ Ապրանքաշրջանառության կազմակերպման գործում մեր խնդիրն է՝ նախ, նորմալ կերպով, արագորեն ու կուլտուրականորեն վաճառել ապրանքները խանութներից և, յերկրորդ, ճիշտ կարգավորել ու պլանավորել առևտուրը, ապրանքները կանոնավորապես հասցնել խանութները, հաշվի առնելով սպառողների պահանջը և առաջին հերթին այն սպառողներին մատակարարելու անհրաժեշտությունը, վորոնք առանձնապես կարևոր նշանակություն ունեն ժողովրդական տնտեսության մեջ։

Ի՞նչ դրություն է տիրում խանութում։ Կարելի յե կարծել, վոր խանութում, վորտեղ առևտուր պետք է արվի, աշխատողների մեծամասնությունը—վաճառողներ են։ Բայց դա այդպես չէ, ընկերնե՛ր։

Ընտրովի հետազոտության տվյալներով, առևտրական աշխատողների միայն 25 % են իսկապես վաճառողներ, մնացածները—սեկտորների, բաժինների վարիչներ են, վարիչների տեղակալներ, վարիչների օգնականներ, գանձապահներ և այլն։ Հարկավոր են և այս մարդիկ, բայց վոչ անսահման թվով։ Վերադիր ծախսերն ահագին են, իսկ գնորդը կանգնած է հերթերում, ապրանքը նրան անխնամ են բաց թողնում, վորովհետև վաճառողները քիչ են։

Վաճառողը բավարար ռոճիկ չի ստանում, մինչդեռ սպասարկող պերսոնալի հաստիքներն աներևակայելի չափով փքված են, վերադիր ծախսերն ահագին են, շնորհիվ այն հանգամանքի, վոր կանցելյարշչինան, թուղթ-թղթերն արմատացել են այն ապարատում, վորտեղ,

Թվում եր թե, նրանք ամենից քիչ տեղ պետք է ունենան, առևտրի մեջ, խանութների մեջ:

Խանութներում ահագին քանակությամբ թղթեր են գրում: Մարդիկ գրում են, իսկ գնորդները հաճախ ստիպված են հերթում կանգնել: Այս բանը կա և Մատժողկոմատի ցանցում և մանավանդ սպառկոոպերացիայի խանութներում:

Խանութների վարիչներին անհրաժեշտ է ազատել մանրախնդիր խնամակալությունից, նրանց տալ ավելի շատ իրավունքներ, նախաձեռնություն: Անհրաժեշտ է խանութի վարիչին իրավունք տալ, վոր նա ապրանքների ընտրություն կատարի, ապրանքաշրջանառության ընդհանուր առաջադրանքի և պլանի սահմաններում անձամբ վորոշի ապրանքների ասորտիմենտները: Անհրաժեշտ է խանութի վարիչին իրավունք տալ՝ ընտրելու իր համար վաճառողներ, խիստ կրճատելու վարչական և սպասարկող անձնակազմը: Անհրաժեշտ է վերջապես առևտրական աշխատողներին շրջապատել այն ուշադրությամբ, վորին արժանի յե ապրանքաշրջանառության ամենապատասխանատու ճակատամասը:

Յեթե խանութի վարիչի իրավունքները լայնացվեն, ապա իր նախաձեռնությամբ նա կգտնի ապրանքների նոր աղբյուրներ, տնայնագործական արտելներին կխթանի, կազդի արտադրանքի վորակի վրա:

Ավելի կուլտուրական առևտրի վորոշ որինակ տալիս են սննդառևտրի խանութները, վորոնք նորերս են կազմակերպվել: Այնտեղ քաշքշուկը պակաս է, գրությունները քիչ են, այնտեղ վաճառողներն ավելի շատ են, իսկ հերթերն ավելի քիչ: Բայց այնտեղ էլ դեռևս թերություններ կան:

Պետք է ընդգծել, վոր ապրանքաշրջանառության կազմակերպական հարցերով չենք զբաղվել, մարդիկ միայն մի բան են իմացել—ապրանքները տեսակավո-

րել, բաշխել և ուղարկել: Սակայն ապրանքները պետք յեղած տեղը կհասնե՞ն, արդյոք, վո՞ր պահեստը կմըտնեն, ապրանքն արդյոք կհա՞սնի գնորդին, կհա՞սնի արդյոք այնտեղ, վորտեղ հարկավոր է,— սրանով քիչ են հետաքրքրվել:

Վերցնենք պահեստային տնտեսությունը: Խանութները և պահեստն առևտրի հիմնական ողակներն են: Պահեստային տնտեսությամբ չեն զբաղվել— վո՛չ մեծածախի, վո՛չ էլ մանրածախի գծով: Այս մի խոշորագույն գործ է, վորը մենք պետք է կազմակերպենք:

Մի ժամանակ մենք չափազանց խիստ քննադատեցինք Մոսկվայի կոոպերատորներին: Խանութների թիվը մեզ մոտ շատ է, սակայն այնուամենայնիվ հերթեր կան: Ի՞նչու յեք դուք, կոոպերատորներդ, գրասենյակներում նստում. գնացե՛ք խանութ, այնտեղ տեղում տեսե՛ք և ուղղեցե՛ք թերությունները: Ստիպված յեղանք որինակ ցույց տալու համար անձամբ գնալու և գործնականում ցույց տալու, թե ինչպես պետք է թափանցել առևտրի կազմակերպման մանրամասնությունների մեջ:

Գնացինք խանութ: Մի ահագին հերթ է կանգնած վարունգ առնելու համար: Վարունգ կա, սակայն մի փոքրիկ դույլի միջից են բաց թողնում: Ամեն անգամ, յերբ դույլը դատարկվում է, վաճառորդը վազում է նկուղ դարձյալ նոր դույլ բերելու համար, իսկ հերթը կանգնած է: Մենք գնացինք ինկոգնիտո (ծածկաբար), վաճառորդից հարցնում ենք, թե ի՞նչու յե ձեզ մոտ հերթ գոյացել. վարունգ կա՞: Սկզբում պատասխանում է, թե չկա, իսկ հետո ասաց՝ ունենք, բայց քիչ է և նկուղումն է գտնվում. աման էլ իբր թե չկա, վոր վերև բարձրացնենք: Մենք ստիպված եյինք խանութի վարիչի հետ միասին նկուղ իջնելու: Այնտեղ մեծ թվով տակառներ կային վարունգով և առանց վարունգի: Սակայն մարդիկ գլխի չեյին ընկնում, վոր տակառներից

մի քանիսը դնեն հենց խանութում, փոխանակ ամեն անգամ դույլը ձեռքին նկուղ իջնելու։ Բանվորների կանայք հերթում կանգնել, իրավացի կերպով հայհոյում էին առևտրի կազմակերպումը, սակայն դրանով նրանց բանը չէր հեշտանում։ Անհրաժեշտ յեղավ մեր կոոպերատորների քթից մի քիչ քաշել, վորպեսզի նրանք զբաղվեն առևտրի, մասսաների շահերին այնպես մոտիկից շոշափող առևտրի կազմակերպման այդ հասարակ հարցերով։

Յեթե դուք վերցնեք ապրանքների պլանավորումն ու առևտրի կարգավորումը, ապա այստեղ ևս թերությունները հսկայական են։ Պլանավորվող 12 ապրանքների ֆոնդերը բաշխելու համար անհրաժեշտ է 20 ինստանցիա անցնել։ Դուք կարող եք յերևակայել, թե վորքա՛ն թուղթ է գրվում, թե մարդիկ վորքա՛ն ժամանակ են կորցնում նիստերի վրա, մինչև վոր պլանը վերջիվերջո հաստատվում է և այդ հաճախ զուգադիպում է վոչ թե յեռամսյակի սկզբին, այլ վերջին։

Այդ պատճառով էլ Մատժողկոմատի ու Ցենտրոսոյուզի ներքին կազմակերպության թուլության հետևանքով փաստորեն այնպիսի դրություն է ստեղծվում, վոր պլանն իր հերթին կազմվում է, սակայն ապրանքների առաքումը ինքնահոսով է կատարվում։

Մասնավորապես անհրաժեշտ է նշել, վոր այժմ Գյուղկոոպը պետք է Ցենտրոսոյուզի ուշադրության կենտրոնում լինի։ Ամեն մեկին հասկանալի յե այն հսկայական վոչ միայն տնտեսական, այլև քաղաքական դերը, վոր այժմ գյուղկոոպները ձեռք են բերում գյուղում ապրանքաշրջանառության ու խորհրդային կուլտուրական առևտուրը զարգացնելու գործում։ Գյուղկոոպները պետք է քաղաքական բարձրության հասցնեն։ Գյուղկոոպում կատարվող աշխատանքը պետք է նույնպիսի պատվավոր աշխատանք համարվի, ինչպես

կոյտնտեսության վարչության մեջ, գյուղխորհուրդում կատարվող աշխատանքը։

Յես մանրամասն կանգ չեմ առնում Մատժողկոմատի ու Ցենտրոսոյուզի և նրանց յերկրային ու մարզային մարմինների կազմակերպական կառուցվածքի վրա։ Այդ կառուցվածքն էլ է տառապում ֆունկցիոնալ սիստեմի ու փքված հաստիքների ցավով։

Թե վորքան են փքված Ցենտրոսոյուզի հաստիքները, այդ յերևում է հետևյալ օրինակից. 1933 թ. յերրորդ յեռամսյակի հաստիքներով 1563 մարդ է հաստատված 1932 թ. չորրորդ յեռամսյակի 2855 մարդու փոխարեն, այսինքն՝ կրճատում մոտ 2 անգամ (46 տոկոս)։

Ցեվ դրանից ապրանքամատակարարումը չի վատացել, իսկ Ցենտրոսոյուզի աշխատանքը պետք է լավանա։

Յես համոզված եմ, վոր յեթե կրճատենք Ցենտրոսոյուզի ու Մատժողկոմատի ապարատը, և բարելավենք ներքին կազմակերպությունը, այն ժամանակ անշուշտ ավելի լավ կլինի։ Մատժողկոմատն ու ցենտրոսոյուզն այն ժամանակ կկարողանան հասնել խանութն ու պահեստ, ղեկավարել առևտուրը և ղեկավարել վոչ թե ձևականորեն, այլ ըստ էության (Ծափահարություններ)։

Ե.
ԱՊԱՀՈՎԵԼ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԿ ՅԵՎ ԺԿԽ ՎՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ

Տրանսպորտի մասին շատերը խոսեցին։ Ճիշտ խոսեցին, սուր կերպով խոսեցին։ Խոսեց ընկ. Ստալինը, խոսեցին ընկ. Վորոշիլովն ու ընկ. Կիրովը, խոսեցին

մյուս հանգույցները: Հանդես յեկավ նաև ընկ. Անդրեյեվը:

Յես ամենից առաջ ուզում եմ ջրային տրանսպորտի մասին խոսել: Ջրային տրանսպորտը մեզանում ուղղակի թերագնահատվում ե: Ջրային տրանսպորտում արտադրական կազմակերպությունն ամենապարզն ե—շոգենավ, նավահանգիստ, գետախորշ, նավանորոգման գործարան: Սակայն, իրականում նրանց մոտ ևս գոյություն ունի ֆունկցիոնալ սիստեմ, անպատասխանատվություն ու դիմազրկություն:

Դուք կարծում եք, թե նավագնացությո՞ւնն ե տընորինում նավերի նորոգումը: Սխալվում եք: Նավագնացությունը կառավարում ե նավերի շահագործումը, սակայն իր նավը նորոգելու համար նա պետք ե դիմի Ջրժողկոմատում գոյություն ունեցող կենտրոնացված հատուկ կազմակերպությանը—նավերի կառուցման ու նորոգման բաժնին: Ֆունկցիոնալ կարգադրություններով Ջրժողկոմատը պատրաստվում ե ղեկավարելու յուրաքանչյուր շոգենավի նորոգումը: Ջրժողկոմատում գոյություն ունի նաև Գետային տրանսպորտի գլխավոր վարչություն: Այս վարչության տնօրինության տակ ե գտնվում ամբողջ ջրային տրանսպորտի մոտավորապես 70 տոկոսը: Այդ նույնն ե, ինչ վոր առաջ կար Հ. Ճ. Ժողկոմատում— Յերկաթուղ. գլխավոր կենտրոնական վարչություն, վորի տնօրինության տակ եր գտնվում ժողկոմատի ամբողջ տնտեսության 75 տոկոսը: Անհրաժեշտ ե այդ գետային վարչությունը վերացնել և գետային տրանսպորտի ղեկավարությունը կազմակերպել գետային ավազանների համեմատ: Կենտկոմի հանձնաժողովը Ջրժողկոմատի համար նշել ե 4 այդպիսի վարչություն—Վոլգա-Կամայի, Հյուսիսային, Հարավային և Ամուրյան (Սիբիր և Միջին Ասիա): Ջրժողկոմատի ֆունկցիոնալ սեկտորները պետք ե վերացնել և նավանորոգման հարցերը, ծովախորշերը, նավաշինարանները, յեզրային ու ճանապարհային տնտեսությունը հանձնել գետային տրեստներին— նավագնացություններին:

Յեթե ուրիշ տեղերում լցնում ե գրասենեկային բյուրոկրատիզմը, ապա այստեղ այդ բյուրոկրատիզմը հատկապես ուժեղ ե: Հարցրեք, որինակ, գործկեցիներին, թե ինչքան դժվար ե Ջրժողկոմատում վորեվե տնտեսական հարց առաջ շարժելը,— նրանք ձեզ կպատմեն: Ջրժողկոմատի շոգենավերն ամառը վատ են լողում, սակայն դրա փոխարեն իրենք՝ Ջրժողկոմատի աշխատողները, թե՛ ամառը, թե՛ ձմեռը հիանալի կերպով լողում են իրենց գրասենյակներում (Ծիծաղ): Ահա այս բանը մենք պետք ե վերացնենք: Յես Ջրժողկոմատի հարցով ըստ յերևույթին համագումարից հետո Կենտրոնական Կոմիտեն ստիպված պետք ե լինի ավելի վճռականորեն զբաղվելու, քան մինչև այժմ:

Ինչ վերաբերում ե յերկաթուղային տրանսպորտին, ապա Կենտկոմի և Ժողկոմխորհի հուլիսյան վորոշումը վերակառուցման վորոշակի գիծ տվեց: Յերկաթուղային տրանսպորտում այժմ բանը կազմակերպական նոր վերակառուցումը չե: Յեթե այժմ նոր վերակառուցում սկսենք, ապա նոր իրարանցում կսկսվի: Սահմանված կառուցվածքը ճիշտ ե, անհրաժեշտ ե կենսագործել այն. վճռական դերն այժմ պատկանում ե կատարման առաջմանը, ոպերատիվ ղեկավարությանն ու կարգապահությանը:

Խնդիրն այն է, որ լիովին կիրառվի Կենտկոմի և Ժողկոմխորհի որոշմամբ սահմանված կառուցվածքը, մինչև վերջը ջախջախվի վերակառուցմանը ցույց տրվող դիմադրությունը:

Ահա, որինակ, շոգեկառքերի վարչությունում կաթսաների տնտեսության հարցերով մինչև այժմ էլ դեռ չորս սեկտոր ե զբաղվում: Ջերմոտեխնիկայի գծով ֆունկցիոնալ շղթան ՀՃ ժողկոմատից ձգվում ե

մինչև դեպո: Շոգեկառքերի դեպոյում ջերմոտեխնիկայի գծով մնացել են հատուկ տեսուչներ, վորոնք յենթարկվում են վոչ թե դեպոյի պետին, այլ անմիջապես յերկաթուղու շոգեկառքային ծառայությանը: Դրա համար էլ դեպոն պատասխանատվություն չի կրում վառելիքի ծախսման համար: Հետևանքն այն է լինում, վոր յերկաթուղիներում մեծ քանակությամբ ավելորդ վառելիք է ծախսվում:

Յեթե դրան ավելացնենք նաև այն, վոր շոգեկառքերին ածուխ մատակարարող ածխապահեստները վոչ թե դեպոյի, այլ տնտեսանյութերի ծառայության իրավասության տակ են գտնվում, և շոգեկառքերը ստիպված են լինում ժամերով, իսկ յերբեմն նաև 10–20 ժամ հերթի սպասել ածուխ ստանալու համար, և դրա համար էլ վոչ-վոք պատասխանատվություն չի կրում, — ապա միանգամայն պարզ կլինի, վոր ֆունկցիոնալ սիստեմն ու դիմազրկությունը դեռևս ծաղկում են յերկաթուղային տրանսպորտում:

Յես այլևս չեմ խոսում այն մասին, վոր գոյություն ունեն աշխատանքի վարձատրությունը կարգավորող ավելի քան 180 (՛) զանազան վորոշումներ, պարզաբանումներ, հրահանգներ: Կարճ ասած՝ ՀԺ ժողկոմատի ղեկավարությունը մինչև այժմ դեռ չի ջախջախել տրանսպորտի վերակառուցմանը բյուրոկրատական տարրերի կողմից ցույց տրվող դիմադրությունը:

Տրանսպորտում դեռևս պակասում է բոլշևիկյան կազմակերպիչ ուժը: Յեթե յերկաթուղայինների դաստիարակման ու համախմբման համար շատ ավելի մեծ ջանքեր են պահանջվում, քան արդյունաբերության մեջ, ապա կոմունիստ յերկաթուղայինը դեռևս հանդես չի բերել այդ տասնապատիկ ջանքերը: Դեռ ավելին. վորոշ յերկաթուղայիններ իրենց մի տեսակ վիրավորված են զգում.— այսի՞նչ բան է, ինչո՞ւ յեն մեզ մինչ

հարվածում, ինչո՞ւ համար են մեզ չարաչար քննադատում:

Անկասկած իրավացի եյին այստեղ հանդես յեկող ընկ. Վորոշիլովը և Կիրովը, վորոնք սուր կերպով դրին հարցը.— յեթե տրանսպորտի ղեկավարներն իրենց խիստ քննադատության գլուխ չկանգնեն, չգլխավորեն լավագույն մարդկանց, ապա նրանց համար դժվար կլինի տրանսպորտը բարձրացնել:

Կան հիանալի հարվածային բրիգադներ, շատ հերոսներ—հարվածայիններ, կան նաև հիանալի քաղբաժիններ, վորոնք արդեն իրենց ցույց են ավել աշխատանքի մեջ: Գյուղատնտեսության մեջ խնդիրն ավելի դժվար եր, քան տրանսպորտում: Այնտեղ գործ ունեյինք վոչ թե բանվորների, այլ գյուղացիների հետ: Ինչպե՞ս բարձրացրինք այնտեղ գործը: Համախմբեցինք լավագույն մարդկանց— հարվածային կոլտնտեսականներին, խիստ պայքարեցինք կուլակների ու յենթակուլակների դեմ, հենվելով մասսաների վրա, սկսեցինք իրագործել Կենտրոնական Կոմիտեի նշած ձեռնարկումները: Իսկ տրանսպորտում մենք այդ ամուր կազմակերպիչ ձեռքը դեռ չենք տեսնում:

Յերկաթուղային տրանսպորտի քաղբաժնի աշխատողները դեռ լրիվ չեն գիտակցել այն ֆրոնտի դժվարությունները ու լրջությունը, վորտեղ նրանք նշանակված են:

Ձայներ. Ճի՛շտ է:

Կագանովիչ. Նրանք դեռ աշխատանք չեն ծավալել այնպես, ինչպես օրինակ ՄՏԿ քաղբաժինները, վորոնք գյուղ գնացին, նախապես իմանալով, վոր դժվարին ու մեծ գործի յեն գնում, նրանք գործն ավելի դժվար եյին պատկերացնում, քան նույնիսկ կյանքում դուրս յեկավ: Իսկ յերկաթուղային քաղբաժնի աշխատողները գնում և գործն ավելի թեթև եյին պատկերացնում: Ահա թե ինչու նրանք դեռ մինչև այժմ էլ չեն հաղթա-

հարել դժվարությունները: Քաղբաժնի աշխատողների մի մասն արդեն հաջողություն ձեռք է բերել իր աշխատանքներում, սակայն քաղբաժնի աշխատողների ամբողջ բանակը դեռ չի պատռել ճակատը, չի հաղթահարել դժվարությունները:

Կուսակցության համագումարը պետք է բոլոր յերկաթուղայիններից պահանջի լիովին կենսագործել Կենտկոմի և Ժողկոմխորհի վորոշումը. համագումարը պետք է յերկաթուղայիններից պահանջի, վոր նրանք վերջապես կանոնավորեն կատարման ստուգումը և օպերատիվ ղեկավարությունը:

Յերկաթուղային տրանսպորտում, ավելի քան ուրիշ վորևէ այլ տեղ, անհրաժեշտ է օպերատիվ ղեկավարություն և ընդունված վորոշումների կատարման ստուգում: Պետք է յերկաթուղայինները հասկանան, վոր համաչափ բան չէ, խոսքը վերաբերում է ժողովրդական տնտեսության նորմալ արյունաշրջանառությանը, քանի վոր տրանսպորտը—այդ մեր յերկրի արյունատար անոթներն են: Բանվոր դասակարգն ու կուսակցությունն իրավունք ունեն պահանջ առաջադրելու յերկաթուղայիններին և առաջին հերթին՝ կոմունիստներին ու ղեկավարներին— քաղբաժնի աշխատակիցներին՝ բոլշևիկորեն աշխատել, «բարեհոգություն» չանե՛լ ի հաշիվ պրոլետարական պետության շահերի:

Տրանսպորտի առողջացման հարցին այնպես պետք է մոտենալ, ինչպես կուսակցությունն է մոտեցել ու մոտենում առանձին տնտեսական ճակատամասերի դըժվարությունները հաղթահարելու գործում: Պետք է համախմբել մասսաներին, հենվել տրանսպորտի լավագույն մարդկանց-հարվածայինների վրա, և հաղթանակն ապահովված կլինի (Բուռն ծափահարություններ):

Ես հնարավորություն չունեմ, ընկերներ, կանգ առնելու բոլոր մյուս ժողկոմատների վրա, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վրա: Դրա համար չափազանց շատ ժամանակ կպահանջվեր, սակայն այդ չի նշանակում, թե ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում, վորոնց վրա յես այստեղ կանգ չառա, այս կամ այն չափով չկան այն թերությունները, վորոնց մասին յես խոսեցի:

Կանգ կառնեմ նաև այն հարցի վրա, թե ինչ դրության մեջ է կատարման ստուգումը հենց խորհրդային ու տնտեսական կազմակերպություններում:

6.

ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏՈՒՄ

Ես արդեն խոսեցի կադրերի պատրաստման գծով Կենտրոնական Կոմիտեի կատարած աշխատանքի մասին: Սակայն յես ուզում եմ մի անգամ ել ընդգծել, վոր խոսքը վերաբերում է կենդանի մարդկանց, նոր մարդիկ աճեցնելուն, վորպեսզի ցածից աճող, առաջ քաշվող յուրաքանչյուր տաղանդավոր, ընդունակ մարդու օգնություն ցույց տրվի աճելու, օգնություն ցույց տրվի բարձրանալու:

Թե կուսակցական և թե անկուսակցական կադրերը մենք պետք է դաստիարակենք գործնական աշխատանքի մեջ: Թեզիսներում Կենտրոնական Կոմիտեն ընդգծել է անկուսակցականների դերը: Այդ ընդհանրապես «քաղաքավարության» համար չէ. վո՛չ, ընկերնե՛ր, մեր սոցիալիստական շինարարության փորձը ցույց է տվել, վոր այնտեղ, վորտեղ կոմունիստը լավ է աշխատում, այնտեղ նա կարողանում է համախմբել անկուսակցական մարդկանց, վո՛չ միայն բանվորներին, վոչ միայն նրանց, ովքեր միշտ ել մեզ հետ են ընթացել, այլև մասնագետներին, վորոնք տատանվում, տարակուսում եյին:

Պետք է մեր աշխատողները տիրապետեն տեխնիկային։ Կան դիրեկտորներ, վորոնք տիրապետել են իրենց գործի տեխնիկային, սակայն մենք չենք կարող ասել, վոր այստեղ ամեն ինչ արդեն արված է։ Տիրապետել տեխնիկային, վերջ դնել ընդհանրապես ղեկավարելուն, վերջ դնել այն ամենը շտամպելուն, ինչ հրամցնում է ապարատը,— այդ լավ աշխատանքի վճռական ցուցանիշն է։

Պետք է շարունակել աշխատողներին գործարան ու ցեխ փոխադրելու գործը։ Չի կարելի թերագնահատել այս գործին ցույց տրվող դիմադրությունը։ Շատերը մինչև այժմ չեն տեսնում, վոր արտադրական կյանքը գործարաններում է, այնտեղ՝ ցեխերում, կոլտնտեսություններում, ՄՏԿ-ում։ Մենք աշխատում ենք այդ գործը կազմակերպելու համար։ Սակայն դեռ մինչև այժմ էլ վոմանք չեն հասկանում, թե գործարան գալն ամենամեծ պատիվն ու հարգանքն է յուրաքանչյուր մարտիկի, ճարտարագետի, ամեն մի տեխնիկի համար։

Դոմբասում մեզ հաջողվեց բեկում առաջացնել։ Այնտեղ աշխատողն ամաչում է ասել, թե ինքը չի ուզում հանքահոր գնալ, յերբ ուղարկում են։ Պետք է աշխատողները, յերբ նրանց գործարան, կոլտնտեսություն կամ խորհտնտեսություն են ուղարկում, վոչ միայն չդիմադրեն, այլ և այդ ամենամեծ վստահության արտահայտությունը համարեն իրենց նկատմամբ։

Վճռական նշանակություն ունի կատարման ստուգումը։ Յերբ վորոշում ես հանում և ապա չես ստուգում, թե ինչպես է կիրառվում այդ վորոշումը, ամենալավ աշխատողներն անգամ թուլանում, լքվում են։ Այս ի՞նչ բան է, նրան մի վորոշում են տալիս, մի յերկու որ զբաղվում են դրանով, իսկ հետո աշխատողի վրա նոր գործեր են թափվում։ Նա վորոշումը ծալում, մի կողմ է դնում և հաճախ նույնիսկ չի յել հիշում նրա մասին։

Իսկ կատարման ստուգման ճիշտ դրվածքը խորհըր-

դային ապարատում և տնտեսական մարմիններում բարձրացնում ու դաստիարակում է մարդուն։ Նույնիսկ այն աշխատողներին, վորոնք բարեխղճորեն են աշխատում, պետք է ժամանակին գալ և ասել. դու, սիրելի՛ս, տարվել ես գործի մեկ կողմով, քո աշխատանքի մեջ ֆլյուս է գոյացել, մի չո՛ւռ արի, ուղղի՛ր սխալներդ։ Իսկ այդ հնարավոր է միայն այն դեպքում, յերբ ղեկավարը գիտե իր հիմնարկը, իր սիստեմը վոչ թե «ընդհանրապես», այլ գիտե յուրաքանչյուր աշխատողի, սիստեմատիկ կերպով ստուգում է նրան։

Ի՞նչ դրության մեջ է կատարման ստուգության գործը մեր ժողկոմատներում ու տնտեսական կազմակերպություններում։

Մինչև այժմ այն նախապաշարմունքը գոյություն ուներ, թե կատարման ստուգումը մի ինչ-վոր հատուկ ֆունկցիա յե, անկախ կառավարումից ու մարդկանց ընտրանքից։ Գոյություն ունեյին հատուկ մեծ ապարատներ մարդկանց ընտրանքի և կատարման ստուգության համար։

Հետևվանքը — բյուրոկրատիզմի փաստեր հենց կատարման ստուգության գործում։ Տարորինակ է, սակայն փա՛ստ է։

Լավագույն դեպքում այդ սեկտորներն ստուգում են թղթերով, գրագրության միջոցով։ Դե՛, էլ ինչպես կարող է խեղճը կենդանի ձևով ստուգել, յերբ նա ինքը չի տվել կարգադրությունը, յերբ նա ինքը տեղյակ չե գործին, յերբ նա չի թափանցել հարցի խորքը։

Պարզ է, վոր կատարման ստուգության այսպիսի սեկտորին մնում է միայն ընդհանուր հարցերի մասին խոսել, թղթեր գրել ու քաշքշուկ սարքել։ Մի խոսքով՝ ստիպված ենք նորից հիշելու Շչեդրինին— «կիսախուփ աչքով վոչինչ չեր տեսնում, իսկ բաց աչքով դատարկ բաներ եր տեսնում» (Ծիծաղ)։

Ահա, որինակ, Անտառժողկոմատի կատարման

Պետք է մեր աշխատողները տիրապետեն տեխնիկային։ Կան դիրեկտորներ, վորոնք տիրապետել են իրենց գործի տեխնիկային, սակայն մենք չենք կարող ասել, վոր այստեղ ամեն ինչ արդեն արված է։ Տիրապետել տեխնիկային, վերջ դնել ընդհանրապես ղեկավարելուն, վերջ դնել այն ամենը շտամպելուն, ինչ հրամցնում է ապարատը,— այդ լավ աշխատանքի վճռական ցուցանիշն է։

Պետք է շարունակել աշխատողներին գործարան ու ցեխ փոխադրելու գործը։ Չի կարելի թերագնահատել այս գործին ցույց տրվող դիմադրությունը։ Շատերը մինչև այժմ չեն տեսնում, վոր արտադրական կյանքը գործարանումն է, այնտեղ՝ ներքևում, կոլտնտեսությունում, ՄՏԿ-ում։ Մենք աշխատում ենք այդ գործը կազմակերպելու համար։ Սակայն դեռ մինչեվ այժմ էլ վոմանք չեն հասկանում, թե գործարան գալն ամենամեծ պատիվն ու հարգանքն է յուրաքանչյուր մարտիկի, ճարտարագետի, ամեն մի տեխնիկի համար։

Դոմբասում մեզ հաջողվեց բեկում առաջացնել։ Այնտեղ աշխատողն ամաչում է ասել, թե ինքը չի ուզում հանքահոր գնալ, յերբ ուղարկում են։ Պետք է աշխատողները, յերբ նրանց գործարան, կոլտնտեսություն կամ խորհտնտեսություն են ուղարկում, վոչ միայն չդիմադրեն, այլ և այդ ամենամեծ վստահության արտահայտությունը համարեն իրենց նկատմամբ։

Վճռական նշանակություն ունի կատարման ստուգումը։ Յերբ վորոշում ես հանում և ապա չես ստուգում, թե ինչպես է կիրառվում այդ վորոշումը, ամենալավ աշխատողներն անգամ թուլանում, լքվում են։ Այս ի՞նչ բան է, նրան մի վորոշում են տալիս, մի յերկու որ զբաղվում են դրանով, իսկ հետո աշխատողի վրա նոր գործեր են թափվում։ Նա վորոշումը ծալում, մի կողմ է դնում և հաճախ նույնիսկ չի յել հիշում նրա մասին։

Իսկ կատարման ստուգման ճիշտ դրվածքը խորհըրդային ապարատում և տնտեսական մարմիններում բարձրացնում ու դաստիարակում է մարդուն։ Նույնիսկ այն աշխատողներին, վորոնք բարեխղճորեն են աշխատում, պետք է ժամանակին գալ և ասել. դու, սիրելի՛ս, տարվել ես գործի մեկ կողմով, քո աշխատանքի մեջ փլյուս է գոյացել, մի շո՛ւռ արի, ուղղի՛ր սխալներդ։ Իսկ այդ հնարավոր է միայն այն դեպքում, յերբ ղեկավարը գիտե իր հիմնարկը, իր սիստեմը վոչ թե «ընդհանրապես», այլ գիտե յուրաքանչյուր աշխատողի, սիստեմատիկ կերպով ստուգում է նրան։

Ի՞նչ դրության մեջ է կատարման ստուգության գործը մեր ժողկոմատներում ու տնտեսական կազմակերպություններում։

Մինչեվ այժմ այն նախապաշարմունքը գոյություն ուներ, թե կատարման ստուգումը մի ինչ-վոր հատուկ ֆունկցիա յե, անկախ կառավարումից ու մարդկանց ընտրանքից։ Գոյություն ունեյին հատուկ մեծ ապարատներ մարդկանց ընտրանքի և կատարման ստուգության համար։

Հետևանքը — բյուրոկրատիզմի փաստեր հենց կատարման ստուգության գործում։ Տարորինակ է, սակայն փա՛ստ է։

Լավագույն դեպքում այդ սեկտորներն ստուգում են թղթերով, գրագրության միջոցով։ Դե՛, էլ ինչպես կարող է խեղճ կենդանի ձեվով ստուգել, յերբ նա ինքը չի տվել կարգադրությունը, յերբ նա ինքը տեղյակ չե գործին, յերբ նա չի թափանցել հարցի խորքը։

Պարզ է, վոր կատարման ստուգության այսպիսի սեկտորին մնում է միայն ընդհանուր հարցերի մասին խոսել, թղթեր գրել ու քաշքշուկ սարքել։ Մի խոսքով՝ ստիպված ենք նորից հիշելու Շչեդրինին— «կիսախուփ աչքով վոչինչ չեր տեսնում, իսկ բաց աչքով դատարկ բաներ եր տեսնում» (Ծիծաղ)։

Ահա, որինակ, Անտառժողկոմատի կատարման

ստուգության սեկտորը: Նա պետք է հսկողության յենթարկեր ժողկոմատի հրամանը՝ Լենինգրադի անտառային տրեստի կողմից հինգ օրվա ընթացքում 13 մասնագետ Կարելիա ուղարկելու մասին: Յեվ այդ սեկտորը մինչեվ ստուգումն սկսելը ուղիղ հինգ ամիս քնում է: Արթնացել, մի թուղթ է գրել և դրանով էլ հանգստացել: Իսկ գործը տեղից չի շարժվել: Աշխատողների մի մասն ուղարկված չէ: Զուր չէ, վոր ժողկոմատներում կատարման ստուգության սեկտորը նույնիսկ պաշտոնական գրություններում կրճատման կարգով անվանվում է «ՍՊԻ¹)»—«քնիր») (Ծիծաղ, ծափահարություններ): Իսկապե՛ս քնած են ժողկոմատների ու տնտեսական մարմինների կատարման ստուգության սեկտորները:

Վերցրեք, որինակ, բանվորական մասսաների սպասարկումը: Մենք բոլորս ասում ենք, թե բոլշևիկների առաջնային գործը բանվորների սպասարկումն է:

Աշխատանքի Պաշտպանության Խորհուրդը 1932 թ. հուլիսին վորոշում է Հեռավոր Արևելյան յերկրի և Արևմելյան Սիբիրի համար կառուցել 7 սանիտարական կետ, և 15 բաղնիք, հասարակ տիպի դուշեր և լվացքատներ ամենապարզ կառուցվածքով: Զինվորական մարդիկ գիտեն, վոր այդ կարելի յե կառուցել արագ ու հեշտ կերպով: Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդն այդ վորոշման կատարման համար մեկ ամիս ժամանակ է տալիս Կոմտնտժողկոմատին: Կոմտնտժողկոմատն, իհարկե, հասկանում է, և հավանորեն ճառեր էլ են արտասանվում բաղնիքի, ջրցանների և ընդհանրապես լողանալու նշանակության թեմայի շուրջը (ծիծաղ), սակայն կատարման բոլշևիկյան ստուգում չի կազմակերպում: Յեվ ի՞նչ եք կարծում. 18 ամիս է անցել այդ վորոշումից, իսկ բաղնիքների ու սանիտարական կետերի մի զգալի մասը շինված չէ: Ահա՛ թե ինչի

¹) СПИ (Сектор проверки исполнения

յե հասցնում կատարման ստուգության սխալ դրվածքը, յերբ մարդիկ փոխանակ անհապաղ առանց բանաձևերի, ոպերատիվորեն գործը մինչև վերջը հասցնելու. այն հանձնում են «ՍՊԻ»-ին կամ վորևէ ուրիշի: Այդ «ՍՊԻ»-ներն ստուգումն ավելի լավ կատարելու համար հենց իրենց մոտ, կատարման ստուգության ներսում վերահսկողության խումբ են կազմակերպել (ծիծաղ): Մի խոսքով՝ այնպես է ստացվում, ինչպես Գոգոլի «Մեռած հոգիների»-մեջ—«հսկողության հանձնաժողով կառուցման հանձնաժողովի վրա» (Ծիծաղ):

Այդպես է նաև մի քանի ժողկոմատներում— հսկողության հանձնաժողով կառուցման հանձնաժողովի վրա, իսկ հենց կատարման ստուգության սեկտորի ներսում՝ վերահսկողության խումբ, մինչդեռ գործնականում չկա կատարման իսկական բոլշևիկյան ստուգում: Ահա թե ինչու թեզիսների մեջ ստուգման պրոբլեմը կապակցվում է կազմակերպական վերակառուցման ու ֆունկցիոնալ սխեմի վերացման հետ:

Ժամանակ է հասկանալու, վոր խորհրդային պետական ապարատի վերակառուցման մեջ գլխավորն այն է, վոր ղեկավար մարմինները դարձնենք դեպի ստորին օղակը, սերտ, կենդանի կապ հաստատենք ստորին օղակների — գործարանի, ցեխի, գործամասի, ձեռնարկության, կոլտնտեսության ՄՏԿ, խորհտնտեսության հետ և այլն: Վոչ թե գործարանն է ժողկոմատի համար, այլ ժողկոմատը գործարանի համար: Վոչ թե կոլտնտեսությունն է Հողժողկոմատի համար, այլ Հողժողկոմատն է կոլտնտեսության համար: Վոչ թե խորհտնտեսությունն է Խորհտնտժողկոմատի համար, այլ Խորհտնտժողկոմատն է խորհտնտեսության համար:

Որջոնիկիձե.— Ճի՛շտ է:

Կագանովիչ.—Ժողկոմատները պետք է սպասարկեն ստորին օղակներին և վոչ թե գործին ու աշխատանքին այնպիսի ձև տան, վոր իբր թե կոլտնտեսությունը

գոյություն ունի Հողժողկոմատի համար: Դժբախտությունն այն է, վոր տրեստի ու ժողկոմատի կառուցվածքը մեխանիկորեն կազմում են գրասենյակային աշխատողները. վորովհետև ղեկավարները խորշում են այդ աշխատանքից, իսկ գրասենյակային աշխատողները գաղափար անգամ չունեն ոպերատիվ աշխատանքի եյության մասին: Դժբախտությունն այն է, վոր տրեստը կուրորեն ընդօրինակում է ժողկոմատի կառուցվածքը, իսկ գործարանը՝ տրեստի կառուցվածքը: Մինչդեռ գործը պետք է ճիշտ հակառակ ձևով ընթանա: Պետք է գործարանը վերցնել, և ճիշտ կերպով կազմակերպել նրա կառուցվածքը, կոլտնտեսությունն ու խորհտնտեսությունը վերցնել և ճիշտ կերպով կազմակերպել նրանց կառուցվածքը՝ արտադրության պահանջների համեմատ, և ապա գնալ դեպի բարձր ողակները, այն հիմնական խնդրի համեմատ, վորը կանգնած է յուրաքանչյուր ժողկոմատի առաջ,—արտադրանքն ավելացնելու, տեխնիկան յուրացնելու, տնտեսությունը բարելավելու, կառավարումը բարելավելու խնդրի համեմատ:

Միայն աշխատանքը համապատասխանորեն վերակառուցելով մենք կարող ենք ամրացնել ստորին ողակներն ու նրանց ղեկավարումը:

Տնտեսական, խորհրդային ու կուսակցական աշխատողները պետք է անմիջապես, համագումարը վերջանալուց հետո, առանց վորևե հիշեցումների ու խթանելու ձեռնարկեն իրենց աշխատանքի կազմակերպական բոլոր թերությունների վերացմանը: Լրջորեն, առանց հարայ-հրոցի ձեռնարկեն, և իրենց ապարատի վերակառուցման առաջարկները ներկայացնեն ի հաստատություն այնտեղ ուր հարկն է:

Կենտրոնական Կոմիտեն ուշի-ուշով հետևելու յե վերակառուցման ընթացքին մեր բոլոր մարմիններում: Աշխատանքի վերակառուցման գործում վոչ մի զեղչում

չի կարելի սահմանափակվել միայն կառուցվածքը փոփոխելով, մարդկանց տեղերը փոփոխելով և ցուցանակները պոկելով, վոր այնպես անխնա ծաղրում եր Լենինը, վոր անողոք կերպով ամեն որ ծաղրում է ընկ. Ստալինը: ԿԿ թույլ չի տա, վոր կազմակերպական վերակառուցման եյությունն ամլացվի ցուցանակները փոխելով, ձևական վերակառուցում կատարելով:

Յուրաքանչյուր ղեկավար պետք է լուրջ կերպով վերանայի իր և իր հիմնարկի աշխատանքի մեթոդներն ու սիստեմը, ոպերատիվ կերպով փոփոխություններ մտցնի աշխատանքի ընթացքում, խիստ կրճատի գրագրությունը և առաջին հերթին հաշվային ու վիճակագրական տվյալները, վորոնք անյերևակայելի կերպով փքված են:

Կատարման ստուգումը պետք է վոչ թե ձևականորեն, այլ ըստ եյության կատարվի: Այդ ստուգումը պետք է գործը հասցնի մինչև վերջը, այսինքն՝ մինչև դիրեկտիվի լիակատար կատարումը: Անհրաժեշտ է աշխատանքի արդյունքների ստուգում և վոչ թե թղթե միջոցների կիրառում,— արձանագրությունն ստացյալ, մակագրեց,— կարգադրություն արվա՛ծ է: Հաճախ այնպես է պատահում, վոր կարգադրությունը վերևից ստանում է, բառափոխություն է կատարում և ուղարկում ներքև: Իսկ այնտեղ այդ կարգադրությունն էլ ավելի ներքև են ուղարկում: Յեվ այսպես ձգձգվում, շարունակվում է:

Ստալին.— Յեվ թուղթը կալում է գործին.

Կագանովիչ.— Միանգամայն ճիշտ է, իսկ թուղթը կալում է գործին: Մեր պետական ապարատն անկասկած վերջին ժամանակներս բարելավվել է, պրոլետարական դիկտատուրայի մարմինները ամրացել են: Մեր պետական ապարատի վրա չեյին կարող չանդրադառնալ տնտեսական ընդհանուր վերելքն ու բանվորագյուղա-

ցիական լայն մասսաների քաղաքական գիտակցության աճումը:

Հենց այդ տնտեսական աճումը, մասսաների այդ քաղաքական վերելքը թույլ է տալիս կուսակցությանն այդպես համարձակորեն ու վճռականորեն մերկացնել մեր թերությունները, ինչպես նշեց Կենտկոմը, և, հույս ունիմ, կընդունի համագումարը: Այդ յերաշխիք է տալիս մեզ, վոր մենք կկարողանանք էլ ավելի բարելավել մեր պետական ապարատը, վորը պետք է ավելի լավ ըսպասարկի մասսաներին, պետք է արմատախիլ անի բյուրոկրատիզմը, գրագրամոլությունն ու դիմազրկությունը:

Մենք համոզված ենք, վոր կուսակցությունը, նրա Լենինյան Կենտկոմը և նրա առաջնորդ ընկ. Ստալինը կիրագործեն այդ վերակառուցումն ու պրոլետարական դիկտատուրայի ամրացումը: (Բուռն ծափահարություններ):

III

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1.

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՅԵՌԱՆԴՆ ՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԿԿ և ԿՎՀ հունվարյան պլենումում ընկ. Ստալինը հարցնելով, թե վորո՞նք են այն հիմնական ուժերը, վոր ապահովեցին հնգամյակի պատմական հաղթանակը, նշեց.

«Դա—ամենից առաջ՝ բանվորների ու կոլ-

տնտեսականների միլիոնավոր մասսաների ակտիվությունն ու անձնվիրությունն է, խանդավառությունն ու նախաձեռնությունը, վորոնք ինժեներական-տեխնիկական ուժերի հետ միասին հսկայական յեռանդ զարգացրին սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը ծավալելու ուղղությամբ:

Դա—յերկրորդ՝ կուսակցության ու կառավարության ամուր ղեկավարությունն է, վորոնք մասսաներին կոչ արին առաջ ընթանալ և հաղթահարեցին դեպի նպատակը տանող ճանապարհի բոլոր ու ամեն տեսակ դժվարությունները:

Դա—վերջապես, տնտեսության խորհրդային սիստեմի հատուկ արժանիքներն ու առավելություններն են»:

Հնգամյակի տևողության ամբողջ ընթացքում դուք տեսաք, թե ինչպես այս յերեք ուժերն իրոք հաղթանակ ապահովեցին մեզ համար: Այս բոլոր յերեք ուժերը գործում էյին իբրև միասնական մի ուժ՝ մեր կուսակցության լենինյան Կենտրոնական Կոմիտեյի միասնական ղեկավարությամբ: Մտաբերեցեք ընկ. Ստալինի նշանավոր, տնտեսական շինարարության հաջողությունների համար վճռական ֆորմուլը, վոր նա տվեց իր այն ճառում, վորը միլիոնների կյանքի մեջ մտավ իբրև պատմական վեց ցուցումներ:

Նա ասաց.

«Մեր ծրագրի ռեալ լինելը — դա կենդանի մարդիկ են, դա մենք ենք ձեզ հետ, մեր աշխատելու կամքը, նոր ձևով աշխատելու մեր պատրաստակամությունը, պլանը կատարելու մեր վճռականությունը»:

Հաշվետու շրջանում Կենտրոնական Կոմիտեյի գործունեության վճռական գիծն էր մասսաների ղեկավարման ուժը, մասսաներին սոցիալիստական շինարա-

րության խնդիրների կատարման համար մոբիլիզացիայի յենթարկելու ուժը։

Մասսաների խանդավառությունը, շինարարության պաթոսը, տնտեսությունը բարելավելու և բարձրացնելու համար մղվող պայքարի պաթոսը ապահովեցին մեր պլանների ռեալությունը և այն մեծ հաղթանակները, վորոնցով մենք յեկանք մեր կուսակցության 17-րդ համագումարը։

Սոցիալիստական մրցակցությունն ու հարվածայնությունը ծավալվեցին ընդարձակ ճակատով։ Յեթե առ 1 հունվարի 1930 թ. սոցմրցակցությունն արդյունաբերության մեջ ընդգրկել եր բանվորների 29%-ը, ապա առ 1 նոյեմբերի 1933 թ. մենք արդեն ունենք 71%։ Միայն արդյունաբերության մեջ և տրանսպորտում, վոչ լրիվ տվյալներով, կա 5 միլիոնից ավելի վոչ-կեղծ, այլ իսկական հարվածային։ Այս տարիների ընթացքում մենք ունենք արդեն մոտ 2 հազ. պարգևատրվածներ, այս թվում Աշխատանքային դրոշի շքանշանով՝ 398 հոգի, Լենինի շքանշանով՝ 641 հոգի։ Սրանք այնպիսի մարդիկ են, վորոնք աչքի յեն ընկել իրենց հատուկ արժանիքներով սոցիալիզմի հաղթանակի համար պայքարելիս։ Աշխատանքային ճակատում հերոսության իսկական նմուշներ են ցուցաբերում արդեն վոչ թե միավորները, այլ տասնյակ ու հարյուր հազարավոր մարդիկ։

Այստեղ անհրաժեշտ է հատկապես նշել կոմյերիտմիության դերը սոցմրցակցության ու հարվածայնության համար պայքարելիս, հնգամյակի հաղթանակի համար պայքարելիս։ Այժմ կոմյերիտմիությունը նոր շինարարության պաթոսը լրացնում է յուրացման պաթոսով։ Ընտրովի տվյալների համաձայն 25 խոշոր ձեռնարկության մեջ հասարակական-տեխնիկական քննության համար պատրաստվում են 42 հազ. հոգի, այ-

նինքն՝ ամբողջ յերիտասարդության 54 %-ը։ Արդեն քննություն են տվել 18 հազ. հոգի, վորոնցից գերազանց գնահատականով՝ 2 $1/2$ հազ., լավ՝ 5 հազ., բավարար՝ 7 հազ. և քննություն չեն տվել 3 հազար հոգի։

Ստալինգրադի տրակտորագործարանի շինարարության համար մոբիլիզացիայի յենթարկված 7 հազ. կոմյերիտականներից արդեն դուրս են յեկել հարյուրավոր ու հազարավոր բարձրորակ բանվորներ։

Վոչ թե հատ ու կենտ, այլ մասսայական են դարձել այն փաստերը, յերբ յերեկվա միանգամայն անգրագետ, գյուղից յեկած մարդը բառացի մի քանի ամսում որինակելի յե դառնում տեխնիկայի տիրապետման մեջ։ Այսպիսի հերոսների հարյուրներով ու հազարներով կարելի յե հիշատակել նաև Մոսկվայի, Լենինգրադի, Ուկրայնայի, Դոնբասի, Բաքվի, Ուրալի և այլ ձեռնարկություններում։

Ահա, որինակ, մի այդպիսի բանվոր։

Ընկ. Լապտևը գյուղից գնացել է ընկ. Մոլոտովի անվան ավտոգործարանը 1931 թվին։ Նա սկսում է աշխատել մի ամերիկացու հետ, վորն Ամերիկայում միևնույն դազգյահի վրա աշխատել է 12 տարի, վորից 4 տարի Ֆորդի մոտ։ Ամերիկացին հայտարարում է, վոր Ֆորդի նորմաները (65 դետալ մեկ աշխատօրում) անհնարելի յե գերազանցել։ Ընկ. Լապտևը նրան մրցության է հրավիրում, սկսում է հնգական հատ ավելացնել և այժմ արտադրանքը հասցրել է որական 130—140 հատի։ Վարչությունը, հենվելով ընկ. Լապտևի փորձի վրա, նորմա յե սահմանում 112 հատ։ Ամերիկացին հարկադրվում է հասնել այդ նորմային։ Ուշագրավ է, սակայն, վոր սոցմրցակցության վերաբերյալ ընկ. Լապտևի առաջարկած պայմանագիրը նա մինչև այժմ չի ուզում ստորագրել։ «Վոչինչ,—ասում է ընկ. Լապտևը,— կհասցնեմ 200-ի,

այն ժամանակ ամերիկացին ել կհասկանա, թե ինչ է նշանակում սոցիալիստական մրցակցություն, և ինձ հետ սոցիալիստական մրցակցության պայմանագիր կկնքի»: (Ծափահարություններ):

Ընկ. Լապտևը տեխնիկական ուսուցման գծով ավարտել է կարգավորողների խմբակը: Սովորում է կուսակցության պատմության խմբակում: Լուրջ կարդում է, և անցած թեմաները յուրացրել է գերազանց:

Այժմ ընկ. Լապտևը միայն պարզապես վորակյալ բանվոր չէ, այլև միաժամանակ հասարակական մեծ աշխատանք է կատարում:

Մեր կոլտնտեսություններում դեռևս վատ են յուրացնում կոմբայնները, վատ են աշխատում մեր տրակտորիստները: Սակայն գյուղատնտեսության համար վորակյալ բանվորների պատրաստումն ու վերապատրաստումը կազմակերպելու վերաբերյալ Կենտկոմի վորոշումը կենսագործելու հետևանքով մենք արդեն ունենք հարյուրավոր ու հազարավոր սքանչելի որինակներ, թե ինչպես յերեկվա Միտյուխան, վորը մեքենա չէր տեսել, չգիտեր, թե ինչ է նա, այսոր դառնում է սոցիալիզմի իսկական մարտիկ: Նա նստում է տրակտորի ու կոմբայնի վրա, տիրապետում նրան և նորմայի կատարման որինակ տալիս:

Մեր արհմիությունները վիթխարի չափերով աճել են: Առաջին հնգամյակի տարիներին և 1933 թ. արհմիությունների անդամների թիվն ավելացել է 6 միլիոնով: Աճել է արհմիութենական ակտիվը, առանձնապես ստորին ակտիվը, հին արհմիութենական, տրեդ-յունիոնիստական ղեկավարության շրջանի գործարկոմները չի կարելի համեմատել այն գործարկոմների հետ, վոր մենք ունենք այսոր: Գործարկոմների ու խմբային կազմակերպիչների անդամների թիվը 1929 թվի 462 հազարից աճել և հասել է մինչև 1200 հազարի:

Գործարկոմները նշանակելի չափով վերակառուցել են իրենց աշխատանքը և նրանց անդամների հսկայական մեծամասնությունը իսկական հարվածայիններ են: Այս մարդիկ չեն տառապում տրեդ-յունիոնիստական հիվանդություններով, նրանք համառորեն ու հաստատապես աշխատում են իրագործել սոցիալիստական մրցակցությունն ու հարվածայնությունը զարգացնելու, արտադրությունը բարձրացնելու խնդիրը: Իհարկե, մեր արհմիություններն ունեն ահագին թերություններ: Յեվ Կենտրոնական Կոմիտեն հարց է դրել վերակառուցելու արհմիությունների աշխատանքը: Գլխավոր նպատակին մենք դեռ չենք հասել: Նպատակն էր՝ աշխատանքը վերակառուցել արտադրական սկզբունքով այնպես, վոր արհմիության յուրաքանչյուր կենտրոնական կոմիտե խորապես իմանա իր արտադրությունը և իր բանվորների կարիքները: Միությունների կենտրոնական կոմիտեները մեծ հնարավորություններ ունեն աշխատանքը ծավալելու, կարող են ընդհանրացնել սքանչելի տվյալներ: Ինչո՞ւ կուսակցության Կենտրոնական Կոմիտեն հնարավորություն ուներ բանվորներից հիանալի նյութ ստանալու տեխնիկայի, գյուտարարության, աշխատանքի կազմակերպումը բարելավելու և կառավարումը կազմակերպելու բնագավառում: Ինչո՞ւ կուսակցության Կենտրոնական Կոմիտեն հնարավորություն ուներ, ընկեր Ստալինի առաջարկությամբ, իր մոտ խորհրդակցության կանչելու Դոնբասի արհմիութենական աշխատող—հանքկոմի անդամներին և հասարակ զրույցով, առանց ժողովային իրարանցման, առանց սեղանատճառերի, առանց հատուկ բանաձևի սքանչելի տվյալներ ստանալու աշխատավարձի հավասարանքի և աշխատանքի վատ կազմակերպման, ֆունկցիոնալության մասին և այլն:

Հենց արհմիութենական մի քանի աշխատողների և

մի քանի տնտեսավարների հետ զրուցելու հիման վրա Կենտրոնական Կոմիտեն մեծ յեզրակացություններ հանեց, ընդհանրացնելով այս առաջարկները։

Արհմիությունները հսկայական հնարավորություններ ունեն՝ հենվելով յուրաքանչյուր բանվորի, յերիտասարդության, նոր հարվածային բանվորների նախաձեռնության վրա հարցեր դնելու կառավարության և Կենտկոմի առջև։ Դժբախտաբար արհմիությունները դեռ ամբողջովին չե, վոր օգտագործում են իրենց հնարավորությունները։ Նրանք չեն կարողանում հայտաբերել գլխավորը և ընդհանրացնել փաստերը։ Եմպիրիզմը մաշում է արհմիություններին։ Նրանք աշխատում են, նրանք գրում են, նրանք ջանում են, բայց դեռևս չեն սովորել ընդհանրացնել ու կենսագործել այն, ինչ ուրվագծում են։ Մենք արհմիություններում մարդիկ ունենք, վորոնք անկեղծորեն ուզում են աշխատել, սակայն նրանք դեռևս չեն կարողանում գլխավորել այն յեռուն կյանքը, նախաձեռնությունն ու յեռանդը, վոր կա ֆաբրիկներում ու գործարաններում, հարվածային բրիգադներում։

Յեվ ՀԱՄԿԽ լրիվ չի կատարել Կենտկոմի դիրեկտիվը, իր համագումարի դիրեկտիվը արտադրական արհմիությունների կենտրոնական կոմիտեներին ավելի մեծ նախաձեռնություն տրամադրելու վերաբերյալ։ Նա դեռ ելի կուրս է պահում լիակատար ղեկավարությունն իրականացնելու միայն ՀԱՄԿԽ-ից։

Արհմիությունները վաղուց կարող եյին ազատվել գրասենյակայնությունից ու թղթագրությունից և կապ հաստատել կենդանի մարդկանց հետ, տառից այն հսկայական քանակության թղթի, վոր նրանց մոտ դեռևս կա։ Յեթե աչքի անցկացնենք ամեն մի միության կենտրոնական կոմիտեյի նյութերն ու արձանագրությունները, ապա մենք կտեսնենք, վոր այնտեղ մարդիկ

շատ են աշխատում, բայց այնտեղ յերբեմն թղթի հետևում չեն տեսնում այն նախաձեռնությունը, ակտիվությունն ու աշխույժ կյանքը, վոր աղբյուրի նման խփում է մեր գործարաններում ու ֆաբրիկներում։ Արհմիություններին անհրաժեշտ է կուսակցության համագումարի վորոշումների հիման վրա վերակառուցվել ու բարելավել իրենց աշխատանքը, վտարել գրասենյակայնությունը և ավելի մեծ չափերով կազմակերպել հարվածայինների ու արհմիությունների բոլոր անդամների ստեղծարար ակտիվությունը։

Այստեղ, համագումարում, արդեն նշվեց, վոր թե՛ քաղաքում և թե՛ գյուղում կինն աճել է իբրև հզոր ակտիվ ուժ։

Համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում ժողովրդական տնտեսության մեջ ներգրավված է $3^1/_2$ միլ. կին։ Այժմ կանայք կազմում են ԽՍՀՄ բոլոր բանվորների ու ծառայողների մեկ յերրորդը։

Կոլտնտեսություններում այժմ մենք ունենք մի վիթխարի շարժում։ Ընկ. Ստալինը բացառիկ խորաթափանցությամբ վեր հանեց կանանց այս նոր դերը մեր կոլտնտեսական շարժման մեջ, վորը փոփոխվել է տնտեսության վիթխարի աճման ազդեցության տակ։ Դուք հիշում եք, թե ինչպես կոլեկտիվացման սկզբում կինը հաճախ բացասական դեր եր խաղում. Նրա համար դժվար եր բաժանվել հին սովորույթներից ու հասկացողություններից։

Այժմ դրությունը խիստ փոխվել է։ Ահա, որինակ, աշնանը մենք անցկացրինք վուշ գզող կանանց Մոսկվայի մարզային հավաք։ Նրա 989 պատգամավորուհիներից առաջին անգամն եյին Մոսկվայում 824 հոգի և յերկաթուղիներով առաջին անգամ եյին ճամբորդում 466 հոգի։

Յես շատ ժողովներ եմ տեսել, բայց չեմ տեսել այն-

պիսի վոգևորություն, վոր կար այնտեղ: Հոկտեմբերյան հեղափոխության միայն առաջին տարիներին ենք մենք տեսել այդպիսի վերելք: Զգացվում էր, վոր հերկված է մի խոպան, մեծ խոպան:

Պատգամավորուհիներից մեկը՝ 60 տարեկան մի պառավ կին, հանդես գալով պատմեց, թե նա ինչ դրժվարություններ է քաշել: Նա իր ճառը վերջացրեց դիմելով կոնֆերանսի նախագահությանը. «Ասում են, դուք ենտեղ ավելի մոտ եք կառավարությանը. չի՞ կարելի խնդրել կառավարությանը, վոր նա հրատարակի մի դեկրետ, վոր կյանքը յերկարացվի, իսկ մահը՝ հետաձգվի: (Ծիծաղ ծափահարություններ): Ապրել ենք ուզում, խորհրդային իշխանությունը մեզ մարդ դարձրեց»:

Այժմ կինն արդեն այնքան է հասունացել, վոր անհամար է լինում խոսել կանանց մեջ յուրահատուկ աշխատանք կատարելու մասին:

Նիկոլայեվա. *Ճիշտ է:*

Կագանովիչ. *Այնպես կարող է պատահել, վոր շուտով կանայք ասեն՝ պետք է ուժեղացնել աշխատանքը տղամարդկանց մեջ:* (Ծիծաղ, ծափահարություններ):

Մեզ մոտ վորոշ չափով բարելավվել է մեր խորհուրդների, իբրև մասսայական կազմակերպությունների, աշխատանքը: Մեր խորհուրդներն ընդարձակել են իրենց սեկցիաները: Այժմ քաղաքային ու գյուղական խորհուրդների սեկցիաները—այդ արդեն խոսակցությունների համար գումարվող ժողովներ չեն: Սեկցիաներն ունեն նյութական հզոր պատվանդան: Քաղաքային տնտեսությունը մեծ չափերով ծավալվել է: Խորհուրդների մասսայական աշխատանքը լցվել է նյութական բովանդակությամբ: Մեր խորհուրդների սեկցիաները, պատգամավորական խմբակները դառնում են ամբողջ շինարարական աշխատանքի ակտիվ ղեկավար մասնակիցները: Այս, իհարկե, չի նշանակում, թե խորհուրդներում ու նրանց ապարատներում թերություններ չկան, վերակառուցման վերաբերող վողջ հարցադրումն ամբողջությամբ կիրառելի յե նաև նրանց նկատմամբ:

Միայն ՌՍՖՍՀ-ում 1933 թ. սեկցիաների միջոցով պետության կառավարման մեջ ներգրավված է 1.513 հազ. մարդ և պատգամավորական խմբակների միջոցով՝ 338 հազ. մարդ:

Մենք ունենք պետության կառավարմանը մասնակցելու միանգամայն նոր ձև՝ բանվորների շեֆությունը պետհիմնարկների նկատմամբ: Կարելի յե ցուցադրել պետապարատի աշխատանքի մի շարք բարելավումներ իբրև հիմնարկների նկատմամբ գործարանների շեֆության արդյունք:

Բացի դրանից, վերջին ժամանակներս լայնորեն ծավալվել է արտադրության մեջ կատարվող աշխատանքի սոցիալիստական համատեղությունը պետապարատում կատարվող աշխատանքի հետ: Վոչ լրիվ տվյալներով, միայն պետհիմնարկների աշխատողների արհմիության գծով կա շեֆական բրիգադների 7 հազարից ավելի մասնակից և բացի սրանից մոտ 7 հազ. սոցհամատեղիչ:

Սրան պետք է ավելացնել աշխատանքի համապատասխան ասպարեզներում այսպես կոչվող հասարական–պրոլետարական ակտիվը, վորի թիվը 2 միլիոնից ավելի յե:

Այս աշխատանքի ղեկավարությունը պետք է վերցնեն արհմիությունները, առանձնապես վերահսկողության այն նոր խնդիրների առնչությամբ, վոր թեզերը դնում են նրանց վրա: Արհմիությունները պետք է ինչպես հարկն է կազմակերպեն ստորին վերահսկողությունը, առանձնապես մատակարարման ու առևտրի որգաններում:

Ինչ վերաբերում է կոմյերիտմիությանը, ապա

կենտկոմի թեզերում հատկապես ընդգծված է նրա աշխատանքի թուլացումը «թեթև հեծելազորի» կազմակերպման մեջ։ Կոմյերիտմիությունը պետք է կազմակերպի «թեթև հեծելազորի» աշխատանքը, բայց առաջ տանի վոչ թե թռիչքներով, այլ սիստեմատիկաբար։ Կուսակցությանը հարկավոր է լուրջ օգնություն, վորպեսզի այն իսկական բյուրոկրատը, վոր կա ապարատում, աչքից չվրիպի։ Հասարակական օգնություն մեզ հարկավոր է մեր աշխատանքի բոլոր անկյուններում։ Վերցրեք մեր պահեստային տնտեսությունը։ Ընկեր Ստալինը մեկ անգամ չի մատնանշել մեզ, թե՛ ահա դուք բանաձև եք ընդունել աշխատավորների նյութական բարեկեցությունը բարելավելու վերաբերյալ, իսկ պահեստի բանալիները գտնվում են մի մարդու մոտ, վորը մեզ «փոքր» մարդ է թվում։ Բայց այս «փոքր» մարդը տնօրինում է մի հսկայական պահեստային տնտեսություն, այս մարդուց են կախված ապրանքի պահպանումն ու նրա ուր գնալը և հաճախ նրանից է կախված ապրանքի ճիշտ բաշխումը։

Մենք պետք է ասենք նաև մեր կոմյերիտմիությանը, վոր նա թերություններ ունի, վոր նրանց մոտ էլ կա թե թուղթ մրոտել, թե գրասենյակայնություն, նրանք նույնպես չափազանց հեշտ են անձնատուր լինում յերկար բանաձևեր գրելուն։ Կոմյերիտմիությունը շատ ավելի մեծ չափով պետք է լինի ակտիվ, ներգործուն ուժ վոչ միայն գործարանում, արտադրության մեջ, այլև թե՛ կոմյերիտմիության բջիջում, թե՛ շրջկոմում, թե՛ մարզկոմում և թե՛ կենտկոմում։ Ամենուրեք կոմյերիտմիությունն իր առջև պետք է տեսնի մի հիմնական նպատակ՝ սովորեցնել յերիտասարդությանն աշխատելու և գործով ստուգել նրա հեղափոխականությունը։ Իհարկե, ավելի հեշտ է թե ընդհանուր պրոպագանդա մղել, թե բանաձև ընդունել, քան զբաղվել

քրտնաջան աշխատանքով, պահեստի վարիչ դառնալ և այլն։ Շրջկոմի քարտուղարին չի խանգարում նստել պահեստում, այս կամ այն ակտիվիստին չի խանգարում անմիջականորեն նստել ամենասև աշխատանքի, քանի վոր սև աշխատանքի մեջ են դաստիարակվում իսկական հրամանատարները։ Բանակում իսկական հրամանատար է դառնում նա, ով անցել է դասակը, վաշտն ու գունդը։ Յեթե կոմյերիտականներն ուզում են դառնալ հրամանատարներ, նրանք պետք է անցնեն սև գործնական աշխատանքի դպրոցը։ Այն ժամանակ նրանցից դուրս կգան իսկական կոմյերիտական, տնտեսական ու պետական ղեկավարներ։

Մեր կուսակցության խնդիրն է՝ բարելավելով հասարակական կազմակերպությունների աշխատանքը, բարելավելով արհմիությունների աշխատանքը, բարելավելով կոմյերիտմիության աշխատանքը, միևնույն ժամանակ բարձրացնել մեր քաղաքական աշխատանքը մասսաների մեջ, ել ավելի սերտ համախմբելով մասսաներին կուսակցության շուրջը։

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԵՂ Է ԿԱՄՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՄԲ, ԱՄԲՈՂՋ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆԴԱՄԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՄԲ ՈՒ ԱՆՁՆՎԻՐՈՒԹՅԱՄԲ

Բայց այս ամենի համար անհրաժեշտ է, վոր կուսակցությունն ինքն ել վերակառուցի իր շարքերը և շարունակի բարելավել իր ամբողջ աշխատանքը։

Ընկերներ, մեր կուսակցության պատասխանատվությունը սոցիալիստական շինարարության հետա-

կենտկոմի թեզերում հատկապես ընդգծված է նրա աշխատանքի թուլացումը «թեթև հեծելազորի» կազմակերպման մեջ։ Կոմյերիտմիությունը պետք է կազմակերպի «թեթև հեծելազորի» աշխատանքը, բայց առաջ տանի վոչ թե թռիչքներով, այլ սիստեմատիկաբար։ Կուսակցությանը հարկավոր է լուրջ օգնություն, վորպեսզի այն իսկական բյուրոկրատը, վոր կա ապարատում, աչքից չվրիպի։ Հասարակական օգնություն մեզ հարկավոր է մեր աշխատանքի բոլոր անկյուններում։ Վերցրեք մեր պահեստային տնտեսությունը։ Ընկ. Ստալինը մեկ անգամ չի մատնանշել մեզ, թե ահա դուք բանաձև եք ընդունել աշխատավորների նյութական բարեկեցությունը բարելավելու վերաբերյալ, իսկ պահեստի բանալիները գտնվում են մի մարդու մոտ, վորը մեզ «փոքր» մարդ է թվում։ Բայց այս «փոքր» մարդը տնօրինում է մի հսկայական պահեստային տնտեսություն, այս մարդուց են կախված ապրանքի պահպանումն ու նրա ուր գնալը և հաճախ նրանից է կախված ապրանքի ճիշտ բաշխումը։

Մենք պետք է ասենք նաև մեր կոմյերիտմիությանը, վոր նա թերություններ ունի, վոր նրանց մոտ էլ կա թե՛ թուղթ մրոտել, թե՛ գրասենյակայնություն, նրանք նույնպես չափազանց հեշտ են անձնատուր լինում յերկար բանաձևեր գրելուն։ Կոմյերիտմիությունը շատ ավելի մեծ չափով պետք է լինի ակտիվ, ներգործուն ու վոչ միայն գործարանում, արտադրության մեջ, այլև թե՛ կոմյերիտմիության բջիջում, թե՛ շրջկոմում, թե՛ մարզկոմում և թե՛ կենտկոմում։ Ամենուրեք կոմյերիտմիությունն իր առջև պետք է տեսնի մի հիմնական նպատակ՝ սովորեցնել յերիտասարդությանն աշխատելու և գործով ստուգել նրա հեղափոխականությունը։ Իհարկե, ավելի հեշտ է թե ընդհանուր պրոպագանդա մղել, թե բանաձև ընդունել, քան զբաղվել

քրտնաջան աշխատանքով, պահեստի վարիչ դառնալ և այլն։ Շրջկոմի քարտուղարին չի խանգարում նստել պահեստում, այս կամ այն ակտիվիստին չի խանգարում անմիջականորեն նստել ամենասև աշխատանքի, քանի վոր սև աշխատանքի մեջ են դաստիարակվում իսկական հրամանատարները։ Բանակում իսկական հրամանատար է դառնում նա, ով անցել է դասակը, վաշտն ու գունդը։ Յեթե կոմյերիտականներն ուզում են դառնալ հրամանատարներ, նրանք պետք է անցնեն սև գործնական աշխատանքի դպրոցը։ Այն ժամանակ նրանցից դուրս կգան իսկական կոմյերիտական, տնտեսական ու պետական ղեկավարներ։

Մեր կուսակցության խնդիրն է՝ բարելավելով հասարակական կազմակերպությունների աշխատանքը, բարելավելով արհմիությունների աշխատանքը, բարելավելով կոմյերիտմիության աշխատանքը, միևնույն ժամանակ բարձրացնել մեր քաղաքական աշխատանքը մասսաների մեջ, էլ ավելի սերտ համախմբելով մասսաներին կուսակցության շուրջը։

2.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԵՂ Է ԿԱՄՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՄԲ, ԱՄԲՈՂՋ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆԴԱՄԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՄԲ ՈՒ ԱՆՁՆՎԻՐՈՒԹՅԱՄԲ

Բայց այս ամենի համար անհրաժեշտ է, վոր կուսակցությունն ինքն էլ վերակառուցի իր շարքերը և շարունակի բարելավել իր ամբողջ աշխատանքը։

Ընկերներ, մեր կուսակցության պատասխանատվությունը սոցիալիստական շինարարության հետա-

դա բախտի համար վոչ միայն չի նվազում, այլև ընդհակառակը՝ մեծանում է։

Մարքսը, Էնգելսը, Լենինը, Ստալինը մեկ անգամ չեն ընդգծել կուսակցության, նրա ղեկավարության խոշոր նշանակությունը պրոլետարիատի հաղթանակի համար։ Մեր կուսակցության ամբողջ գործունեությունը յեղել է այս դրույթների ճշտության կենդանի ապացույցը։ Այն, ինչ մեր կուսակցությունն արել է վերջին հնգամյակում, կուսակցության և նրա ղեկավարության դերի ու նշանակության ամբողջ հարցը հասցնում է մի նոր, աննախընթաց բարձրության։

Յեվ մեր գործի հաջողության, մեր ընդհանուր հարձակման հաջողության համար մենք ամենից առաջ պարտական ենք այն բանին, վոր Լենինի գործի մեծ շարունակող ընկեր Ստալինը կարողացավ ամրապնդել ամենաթանկագին, ամենավճռական բանը Լենինի ամբողջ ժառանգության մեջ, այն է՝ մեր լենինյան մեծ կուսակցությունը։ (Ծափահարություններ)։

Յես ընդգծում եմ՝ պահպանել ու ամրապնդել, վորովհետև Լենինի մահվանից հետո փորձեր սկսեցին կուսակցությունը բաժանելու ֆրակցիաների, խմբակցությունների, պառակտելու նրա շարքերը, թուլացնելու նրա ուժերը և դրանով հենց կործանելու պրոլետարական դիկտատուրան։ Հարկավոր եր օժտված լինել կանխատեսման լենինյան ուժով, վորպեսզի այնպես, ինչպես 1903 թ. Լենինը կանոնադրության առաջին կետի առթիվ առաջացած տարաձայնությունների մեջ տեսավ մենշևիկների ապագա դավաճանությունը, այնպես ել 1923 թ. պետք եր նախատեսել տրոցկիստների վերջնական գլորումը դեպի հակահեղափոխական ուղին, մնացած բոլոր ոպորտունիստական խմբակցությունների գլորումը դեպի պրոլետարական հեղափոխության շահերի դավաճանության ուղին։

Միմիայն նախատեսել չեր հարկավոր։ Հարկավոր եր մոբիլիզացիայի յենթարկել կուսակցությունը, վորպեսզի ջախջախեյինք այս պառակտիչ խմբակցությունները և մեր կուսակցությունը ներկա 17-րդ համագումարին հասցնեյինք հզոր, միասնական, միաձույլ ուժով։

Հենց այս միաձուլությունը, սոցիալիզմի համար մղած մեր պայքարի հենց ամբողջ դասն է, վոր մեզ թույլ է տալիս կանոնադրության նոր խմբագրության մեջ արձանագրելու, վոր մեր «կուսակցությունը հանդիսանում է միասնական մարտական կազմակերպություն, շաղկապված գիտակցական յերկաթյա պրոլետարական կարգապահությամբ: Կուսակցությունն ուժեղ է իր համախմբվածությամբ, կամքի միասնությամբ ու գործողությունների միասնությամբ, վորոնք անհամատեղելի յեն ծրագրից շեղվելու հետ, կուսակցական կարգապահությունը խախտելու և կուսակցության ներսի ֆրակցիոն խմբակցությունների հետ... Կուսակցությունը ղեկավարում է պրոլետարական դիկտատուրայի բոլոր օրգանները և ապահովում սոցիալիստական հասարակության հաջող կառուցումը»։

Մեր կուսակցությունը հենց պարզապես կառավարող կուսակցություն չե միայն։ Զանազան յերկրներում կան կառավարող կուսակցություններ, բայց այնտեղ այդ կուսակցությունների դերը խորապես սահմանափակված է գոյություն ունեցող բուրժուական հասարակակարգն ամրապնդելու ձգտումներով։ Մեր կուսակցությունը սոցիալիստական պետության կառավարող կուսակցությունն է։ Մեր կուսակցության գոյության իմաստը, աշխատանքի իմաստը հենց այն է, վոր կառուցի սոցիալիզմ և հաղթի։ Իսկ սա կուսակցության յուրաքանչյուր անդամի և մեր ամբողջ կուսակցության վրա դնում է միանգամայն հատուկ, բացառիկ պարտա-

կանություններ: Բոլշևիկի կուսակցականության գլխավոր հատկանիշն է՝ ավանգարդային մարտիկի դերն աշխատանքին սոցիալիստական վերաբերմունք ցույց տալու համար, արտադրության սոցիալիստական յեղանակի կազմակերպչի դերն արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ:

Ահա, թե ինչու կանոնադրության նոր խմբագրության մեջ զարգացված են նոր կետեր անդամության վերաբերյալ, կուսակցության յուրաքանչյուր անդամի պարտականությունների վերաբերյալ: Այս պարտականությունների ցանկում մենք ծրագիրն ընդունելու, անդամավճարներ տալու և աշխատանքին մասնակցելու հետ զուգընթաց մտցրել ենք մի ամբողջ շարք նոր կետեր, վորոնց մեջ ընդգծվում են կուսակցության անդամի պարտականություններն արտադրության, հարվածայնության, կուսակցության շարքերի ամրապնդման համար պայքարելու վերաբերմամբ և կուսակցության կարգապահության ու պետության հանդեպ ունեցած պարտականությունների վերաբերմամբ:

«Կուսակցության անդամը պարտավոր է.

ա) պահպանել կուսակցական ամենախիստ կարգապահություն, ակտիվ մասնակցել կուսակցության ու յերկրի քաղաքական կյանքին, գործնականում կիրառել կուսակցության քաղաքականությունն ու կուսակցական օրգանների վորոշումները.

բ) անդուլ աշխատել իր գաղափարական զինվածությունը բարձրացնելու վրա, մարքսիզմ-լենինիզմի հիմունքները, կուսակցության քաղաքական ու կազմակերպական կարևորագույն վորոշումները յուրացնելու վրա և դրանք պարզաբանել անկուսակցական մասսաներին.

գ) վորպես Խորհրդային պետության մեջ կառավարող կուսակցության անդամ, լինել աշխատանքային ու պետական դիսցիպլինան պահպանելու տիպար, տիրապետել իր գործի տեխնիկային՝ անընդհատ բարձրացնելով իր արտադրական, գործնական վորակը»:

Ինչի՞ մասին են խոսում կանոնադրության նոր կետերը: Նրանք խոսում են այն մասին, վոր կուսակցության մեջ մտնող ամեն վոք պատրաստ պիտի լինի ճշգրիտ ու անշեղ կատարելու կուսակցության բոլոր ցուցումները, առաջին հերթին կանոնադրության մեջ թվարկված ցուցումները, իսկ ղեկավար մարմինները պարտավոր են դաստիարակել կուսակցության նոր անդամին այնպես, վոր նա ընդունակ լինի վոչ թե խոսքով, այլ գործով իրականացնելու կառավարող կուսակցության յուրաքանչյուր անդամի այդ կարևորագույն պարտականությունները: Վորովհետև մեր կուսակցությունն ուժեղ է ամբողջ կուսակցության, յուրաքանչյուր առանձին բոլշևիկի ակտիվ գործունեյությամբ ու անձնվիրությամբ:

Ահա, թե ինչու, ընկերներ, մեր կուսակցության նշանակության ու դերի բարձրացման հետ զուգընթաց սոցիալիստական շինարարության նոր փուլում բարձրանում են կուսակցության յուրաքանչյուր անդամի դերն ու նշանակությունը: Մենք ամբողջ սրությամբ դնում ենք կուսակցության մեջ ընդունելու կարգի, կուսակցության յուրաքանչյուր անդամի գաղափարական սպառազինման կարգի հարցը:

Վերջին տարիները, լինելով բանվորական ու կոլտնտեսական մասսաների քաղաքական ակտիվության վերելքի տարիներ, բնականաբար ուժեղացրին այս մասսաների հոսանքը դեպի կուսակցություն: Սակայն մենք, տեղերի կուսակցական աշխատողները, չկարողացանք այս ամբողջ մասսան ինչպես հարկն է ստուգել, դաս-

տխրակել ու ամրապնդել։ Մենք սա պետք է ազնվորեն ասենք կուսակցության 17-րդ համագումարի առաջ։

Կուսակցության մեջ ընդունել ենք անբավարար զգուշությամբ, հաճախ շատ անփույթ։

Հարկավ, բանվոր դասակարգի մեջ ձգտում և մեծ ակտիվություն կա կուսակցության մեջ ընդունվելու։ Այս ակտիվությունը նա ուզում է ձուլել կազմակերպական ձևի մեջ, մտնելով բոլշևիկյան կուսակցության շարքերը։ Բայց մենք չենք կարող առաջավոր, ավանգարդային կուսակցության մեջ ընդունել միայն նրա համար, վոր նա լավ բանվոր է, ազնիվ մարդ է։ Չե՞ վոր այսպիսի ազնիվ անկուսակցականներ չափազանց շատ կան մեր յերկրում։

Երբ Կենտկոմի բրիգադը մեկնեց Դոնբաս, նա պարզեց, վոր որինակ «Լիդիևկա» հանքահորի կուսբջիջում հաշվում են 391 կոմունիստ (հիշում եմ, այս մասին մենք նշեցինք Ստալինոյի շրջանային ժողովում), իսկ փաստորեն կար 250 հոգի, 140 հոգով պակաս, վորովհետև կուսակցության մեջ ընդունել են մեխանիկորեն, ընդունվածների մի մասը հեռացել է հանքահորից, առանց հաշվառումից դուրս գալու։

Եղել են խեղաթյուրումների այսպիսի փաստեր էլ։ Լիսվենի գործարանում զտման ժամանակ պարզվել է, վոր մրցության կարգով յերկու ցեխի բջիջների քարտուղարների միջև՝ «Ժեստ» № 1 բջիջի քարտուղար Կոլոսովի և «Ժեստ» № 2 բջիջի քարտուղար Բրոնիկովի միջև պայմանագիր է կնքվել... կուսակցության մեջ 100 մարդ հավաքագրելու համար։ Վորովհետև Կոլոսովը հավաքագրում է միայն 99 հոգի, ապա կուսակցության անդամներից մեկն իր քարտուղարին նեղ տեղից հանելու համար յերկրորդ անգամ գրվում է կուսակցության մեջ։ (Ծիծաղ)։

Սա անեկդոտ չէ, ընկերներ, սա փաստ է։ Երբ այս բանը պարզվում է և կուսակցության այդ անդամին հարցուփորձ են անում, ապա նա պատասխանում է. «Հո չի կարելի ամոթով թողնել իր քարտուղարին, վոր նա պայմանագիրը չկատարի։ Դե, յես ել գրվեցի, վոր մեր բջիջն առաջինը լինի մրցման մեջ»։ (Ծիծաղ)։

Սա ցույց է տալիս, թե խեղաթյուրումները մինչև ուր են հասնում։ Անուշադիր, իսկ յերբեմն ել լիբերալ մոտեցումը կուսակցության մեջ ընդունելուն,— ինչ կա վոր, մարդը խնդրում է, ինչու նրան չընդունել,— հաճախ հանգում է այն բանին, վոր մեր եպոխայի նշանավոր մարդկանց կուսակցության մեջ ընդունելու ընդհանուր հոսանքում, մարդիկ, վորոնք գնում են առաջավոր կուսակցության մեջ ակտիվորեն պայքարելու համար, կուսակցության շարքերն են սողոսկում մարդիկ, վորոնք վոչ միայն անպատրաստ են տեսական ու գործնական տեսակետից, այլև մարդիկ, վորոնք խորթ են կուսակցությանը, կարյերիստները, մորթապաշտները, մարդիկ, վորոնք չեն հավատում կուսակցության հաղթանակին, չեն կարողանում յուրացնել կուսակցության ու պրոլետարական պետության պրոլետարական յերկաթյա կարգապահությունը։

Դուք գիտեք, վոր կուսակցությունը ձեռնարկել է զտման։ Ընկ. Ռուձուտակն իր զեկուցման մեջ մանրամասն կանգ առավ զտման վրա։ Զտման ժամանակ մենք կուսակցությունից վտարել ենք 182,5 հազ. կոմունիստ։ Ընդամենը կուսակցությունից վտարված է 16.8 %, վորից ըստ վտարման կատեգորիաների. դասակարգայնորեն խորթ տարրեր՝ 2,7%, յերկերեսանիներ՝ 0,9, կարգապահության խախտողներ՝ 3,5, այլասերվածներ՝ 1.5, կարյերիստների ու մորթապաշտների խմբին պատկանողներ՝ 1,4, կենցաղային ու բարոյական տեսակետից քայքայվածներ՝ 2, կուսակցության մեջ պասսիվ մնացողներ՝ 4,2 և այլ պատճառներով՝ 0,6 %։

Ըստ կուսակցական ստաժի վտարվածների ամենամեծ տոկոսն ընկնում է կուսակցության յերիտասարդ անդամներին. վտարվածների մոտ կեսը կազմում են 1929 թ. և հետո կուսակցության մեջ ընդունվածները։

Ինչ ասել կուզի, վոր հնգամյակը մեզ վեր բարձրացրեց։ Բանվոր դասակարգն ու մենք բոլորս համակված եյինք ու տարված շինարարության պաթոսով։ Բանվորները գալիս եյին կուսակցության մեջ։ Մենք նրանց հազարներով եյինք ընդունում, բայց մենք ընդունելության ժամանակ բավականաչափ չենք ցուցաբերել այն խստությունը, վոր պետք է լիներ։ Զտումը մեծ արդյունքներ տվեց մեզ, բայց շատ ավելի լավ կլիներ, յեթե մենք ձեզ հետ միասին ավելի խիստ լինեյինք ընդունելության ժամանակ, և այն դեպքում հարկ կլիներ ավելի պակաս զտելու։

Ձայներ. Ճիշտ է։

Կագանովիչ. Յեվ պետք է ուղղակի ասել, վոր կուսակցական ապարատներում վոչ միայն քարտուղարը, այլև նույնիսկ բաժնի վարիչը միշտ չէ ինքն անձամբ կարգավորել կուսակցության մեջ ընդունելու պրոցեսը։ Կուսակցության մեջ ընդունելությունը վարել է այս կամ այն աշխատողը, վոր վարել է կուսակցական աշխատանքի համապատասխան սեկտորը։

Ահա, թե ինչու, ընկերներ, կազմակերպական հարցերի վերաբերյալ թեզիսներում ու կանոնադրության նոր խմբագրության մեջ ընդհանուր կուրս է տրվում ավելի լուրջ մոտեցում ունենալու կուսակցության մեջ կատարվող ընդունելությանը։ Մենք շարունակելու յենք ընդունելությունը կուսակցության մեջ։ Զտումից հետո բանվոր դասակարգի, կոլտնտեսականների ու աշխատավորների լավագույն, առաջավոր մարդկանց հնարավորություն է տրվելու մտնել կուսակցության շարքերը, բայց մենք պետք է ստուգենք, թե արդյոք տվյալ

ընկերն արդեն հասունացե՞լ է կուսակցության մեջ մտնելու համար։ Թեզիսներում ու կանոնադրության մեջ ամենից առաջ ընդգծված է, վոր կուսակցության անդամ ընդունելը կատարվում է բացառապես անհատական կարգով, վոր կուսակցության անդամ են ընդունվում այն բանվորները, կոլտնտեսականները, կարմիր բանակայինները, սովորողներն ու ծառայողները, վորոնք իրենց ցուցաբերել են համակրողների խմբակներում, արհմիություններում, խորհուրդներում, կոմյերիտմիության մեջ, կոոպերացիայում, պատգամավորական ժողովներում կատարած աշխատանքում, այն կազմակերպության գնահատականն ստանալուց հետո, վորտեղ ընդունվողն աշխատում է, այսինքն այն մարդիկ, վորոնք անցել են ակտիվ հասարակական-պրոլետարական աշխատանքի դպրոցը։

Դուք կանոնադրության մեջ կարդացել եք, թե ինչ կատեգորիաներ են սահմանվում կուսակցության մեջ ընդունելիս, վոր բանվորների համար պահանջվում է 5 տարուց վոչ պակաս արտադրական ստաժ, վոր պահանջվում է յերաշխավորողների թվի մեծացում և յերաշխավորողների կուսակցական ստաժի մեծացում։ Առանձին ուժով ընդգծված է, վոր յերաշխավորողները պատասխանատվություն են կրում յերաշխավորվողների համար, անհիմն յերաշխավորությունների դեպքում կուսակցական տույժերի յենթարկվելով մինչև կուսակցությունից վտարվելը։

Բայց, ընկերներ, մենք պետք է հիշենք, վոր այս կետերն իրենք դեռևս հարցը չեն լուծում։ Մեկը կարող է 5 յերաշխավորություն էլ գտնել, և վոչ միայն 5-ամյա, այլև 10-ամյա ստաժով։ Այստեղ պետք է, վոր կուսակցության մեջ կատարվող ընդունելությունը դրվի այնպիսի բարձրության վրա, վորի վրա գտնվում է մեր կուսակցությունն ամբողջությամբ, և վոր ըն-

դունվել ցանկացող ամեն վոք հաշիվ տա իրեն, թե ինչ ե նշանակում մեր մեծ կուսակցությունը և ինչ պահանջներ ե նա առաջադրում իր յուրաքանչյուր անդամին։

Սրա հետ զուգընթաց մենք սահմանում ենք համակրողների խմբակներ։ Կուսակցությունը հաշվի յե առնում, վոր բանվոր դասակարգի մեջ և կոլտնտեսական գյուղացիության մեջ անկուսակցականների, կուսակցության ու խորհրդային իշխանության ակտիվորեն պաշտպանողների կողքին աչքի յեն ընկնում ակտիվիստ բանվորների խմբակներ, վորոնք հասել են ավելի բարձր աստիճանի և ավելի յեն մոտեցել կուսակցությանը, քան մյուսները։

Այդպիսի ակտիվիստներին, վորոնք մեկ աստիճանով դեռևս չեն հասունացել կուսակցության մեջ ընդունվելու համար, մենք հնարավորություն ենք տալիս սկզբում համակրողների խմբերում յուրացնելու կազմակերպվածության ու առաջավորության հմտությունը։ Սա շատ կարևոր ու լավ գործ ե, միայն պետք ե չփչացնել այս գործը, պետք ե, վոր կուսակցական կազմակերպությունները համապատասխան ուշադրություն հատկացնեն համակրողների խմբերին և նրանց մեջ իրոք կատարեն վորակյալ գաղափարական քաղաքական աշխատանք։

Մարդ պետք ե վարժվի կուսակցական կարգապահության։ Սակայն մենք իբրև կանոն չենք սահմանում, վոր կուսակցության մեջ մտնում են միայն համակրողների խմբերի միջոցով։

Այսպիսով, ընկերներ, առաջին ու հիմնական յեզրակացությունը, վոր պետք ե անել նոր խնդրից, այդ այն ե, վոր մեծ լրջություն ցուցաբերենք կուսակցության մեջ ընդունելու հարցին. այն ժամանակ հարկ կլինի ավելի քիչ վտարել։ Կուսակցության մեջ ընդունելու աշխատանքն ամենակարևոր գործն ե կուսակցական կոմիտեների բոլոր աշխատողների համար ներքևից վերև, առաջին հերթին քարտուղարների համար, վորոնք պարտավոր են անձամբ ղեկավարել այնպիսի մի կարևոր գործ, վորպիսին մեր մեծ կուսակցության մեջ կատարվող ընդունելությունն ե։

Ց.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԶԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Կուսակցության մեջ ճիշտ ընդունելության կազմակերպումը դեռևս գործի կեսն ե։ Անհրաժեշտ ե ապահովել, վոր կուսակցության նոր ընդունված անդամը, արդեն լինելով նրա շարքերում, գաղափարապես ճիշտ զինվի, աճի, ամենորյա ղեկավարություն զգա իր գործունեության նկատմամբ, ակտիվորեն ներգրավվի կուսակցության աշխատանքի մեջ և քաղաքականապես կոփվի։ Յերբ մենք խոսում ենք մարքս-լենինյան դաստիարակության մասին, մենք միայն դպրոցական դաստիարակության մասին չենք խոսում, մենք խոսում ենք բոլշևիկի գաղափարական զինման մասին։ Կուսակցության անդամին պետք ե դաստիարակել և կուսակցական դպրոցում և, վոր գլխավորն ե, քաղաքական գործնական աշխատանքում։ Այս նշանակում ե, վոր մենք պետք ե կուսակցության անդամների մարքս-լենինյան դաստիարակությունը մեծապես բարձրացնենք և բարելավենք կուսակցական կազմակերպությունների աշխատանքը։

Այս տարիների ընթացքում մեզ մոտ ընդարձակվել ու աճել ե մեր կուսակցական դպրոցների ու խմբակների ցանցը։ Յեթե 1930 թ. կար կուսլուսավորության 52 հազար դպրոց ու խմբակ, վորոնք ընդգրկում եյին մեկ մի-

լիոնից ավելի ունկնդիր, այս 33 թ. ոգոստոսին կար արդեն 210 հազ. դպրոց ու խմբակ, վորոնք ընդգրկում եյին $4^1/_2$ միլիոն ունկնդիր, վորոնցից 2.200 հազար անկուսակցականներ եյին։ Մեզ մոտ կա 130 հազար պրոպագանդիստ, այսինքն 5 անգամ ավելի, քան 1928 թ.։ Նրանցից 10% ավարտել են ԿՊԻ-ն, կոմհամալսարանները ու մարքսիզմի դասընթացները և 25%—ստացիոնար կուսխորհրդային դպրոցները։ Պրոպագանդիստների 51% բանվոր է (իսկ 1928 թ. բանվորներն ընդամենը 8% եյին)։

Մենք վորոշ առաջադիմություն ենք կատարել հեռակա ուսուցման ցանցը ծավալելու բնագավառում։ Մեզ մոտ գոյություն ունի հեռակա ռադիո-ուսուցման հատուկ ինստիտուտ։ Սակայն ընկ. Կիրովը բացարձակապես իրավացի յեր, յերբ այստեղ նա կտրուկ կերպով խոսեց այն մասին, վոր մարքսիստական-լենինյան դաստիարակության մեր աշխատանքը հետ է մնում։

Բոլշևիկը չի կարող սահմանափակվել սոսկ հավատալով սոցիալիզմին այնպես, ինչպես բարեպաշտ մարդը հավատում է յերկնային թագավորությանը։ Վոչ, բոլշևիկը,—դա այնպիսի կուսակցության անդամ է, վորի ծրագիրը, քաղաքականությունն ու տակտիկան խարսխվում են մարքսիզմ-լենինիզմի խիստ գիտական հիմունքների վրա. բոլշևիկը նա յե, ով ըմբռնում է կապիտալիզմի կործանման անխուսափելիությունը, պրոլետարիատի դիկտատուրայի անխուսափելիությունը, վորն ապահովում է սոցիալիզմի հաղթանակը։ Ուստի կուսակցության յուրաքանչյուր անդամ պետք է տիրապետի մարքսիզմ-լենինիզմի հիմունքներին։

Հնարավո՞ր է արդյոք այս։ Անպայման, հնարավոր է։ Չե՞ վոր, ահա, զտման ժամանակ, յերբ դրված եր կոմունիստների քաղաքական գրագիտության ուսուցման հարցը, կես տարում ավելի շատ բան է արված մարք-

սիզմ-լենինիզմի հիմունքներին տիրապետելու համար, քան առօրյա կուլտպրոպ-աշխատանքի յերկու տարիների ընթացքում։

Ձայներ. *Ճիշտ է։*

Կագանովիչ։ *Անհրաժեշտ է բարձրացնել կուսակցության անդամների մարքսիստական—լենինյան զինման ասպարեզի մեր աշխատանքի մակարդակը։ Մենք պետք է շատ ավելի մեծ չափերով հրատարակենք մարքսիստական-լենինյան, ստալինյան գրականություն։*

Մենք այժմ մտցնում ենք ագրոմինիմում, տեխմինիմում։ Մենք պետք է ձգտենք, վոր լինի կուսմինիմում և վոր չլինի կուսակցության մի անդամ, վորը տիրապետած չլինի մարքսիզմ-լենինիզմի հիմունքներին։ (Ծափահարություններ)։

Այստեղ յեղավ ընկ. Մանուիլսկու զեկուցումը։ Նկատի ունենալով յեղբայրական կոմունիստական կուսակցությունների և միջազգային կոմունիստական շարժման այն խնդիրները, վոր նա ծավալեց, մենք պետք է ուժեղացնենք կոմունիստների ինտերնացիոնալ դաստիարակությունը։ Մեզ մոտ ինտերնացիոնալ հարցերը հաճախ քննվում են կամպանիաների կարգով՝ ԿԻԳԿ մի պլենումից մինչև մյուսը։ Սա քիչ է, պետք է, վոր ինտերնացիոնալ դաստիարակությունը կատարվի սիստեմատիկորեն։ Պետք է, վոր կուսակցության անդամներն իրազեկ լինեն բոլոր հիմնական վորոշումներին, համաշխարհային թատերաբեմում գործող հիմնական ուժերին։

Դուք այստեղ լսեցիք կոլտնտեսուհի Դոբրովային, լսեցիք հանդես յեկած միքանի բանվորների, և ձեզնից ամեն մեկը՝ թե՛ մոսկվացիք, թե՛ լենինգրադցիք, թե՛ ուկրայնացիք, թե ուրալցիք իրենց փորձից գիտեն, վոր կան հիանալի բնածին ընդունակություն ունեցող բանվորներ, վորոնք բարձրացել ու հասունացել են 5-ամյա-

կի տարիներին։ Սակայն յեթե վերցնենք մեր գյուղական կոմունիստին, ապա նա ամենից շատ ինչի՞ց է գանգատվում և ի՞նչ պահանջներ ունի նա։ Տվեք ինձ այսինչ գիրքը, սովորեցրեք ինձ, վոր յես ամեն ինչ հասկանամ։

Ընկեր Ստալինը հաճախ կշտամբում է գրականագետներին ու մեր լրագրերին, վոր նրանք հաշվի չառնելով լայն մասսաների մակարդակը, գործ են ածում ամեն տեսակ կրճատված բառեր։ Ահավասիկ, օրինակ, գրում են միջազգային պատանեկական օրվա մասին, և անպայման կոչենք՝ ՄՅՈՒԴ։

Մենք ընկեր Շոխինին Կենտկոմի գյուղատնտեսական բաժնից գյուղ ուղարկեցինք, վորպեսզի նա ուսումնասիրի, թե ինչ գրքերի պահանջ կա այնտեղ, ինչ մակարդակ ունի այնտեղ ընթերցողը։ Նա պարզեց, վոր այնտեղ քիչ գիրք կա։ Ընկ. Շոխինը զրույցի ժամանակ հարցնում է. «դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ է ՄՅՈՒԴ-ը»։ Մի կոմունիստ նրան պատասխանում է. «ՄՅՈՒԴ-ը —դա մի խոսքով հեղափոխական տոն է»։ Բայց թե ի՞նչ տոն է, ի՞նչ է նշանակում ՄՅՈՒԴ խոսքն ինքը՝ չգիտեմ, ասում է։

Կամ վերցրեք մեր լրագրերը. այնտեղ հաճախ է հանդիպում ՃՏԱ խոսքը։ Մեզ մոտ գիտեն, վոր կրճատ այսպես են անվանում ճարտարագիտական-տեխնիկական աշխատողներին։ Բայց ահա գյուղական կոմունիստը կարդում է ՃՏԱ և չի իմանում, թե ինչ ասել է ՃՏԱ։ Լրագրերում այսպիսի կրճատում կա. 4 կվ.։ Ի՞նչ ասել է 4 կվ.։ Գյուղական կոմունիստին, ասենք վոչ միայն նրան, դժվար է գլխի ընկնել, վոր այս կրճատման տակ թաքնված են 4-րդ կվարտալ բառերը։ Յես սա չեմ ասում նրա համար, վոր ծիծաղենք մի մարդու վրա, վորը հասարակ բաներ չգիտե։ Վոչ, ավելի շատ հարկավոր է ծիծաղել նրա՛նց վրա, ովքեր այսպես են գրում բանվորների ու գյուղացիների համար։

Ձայներ. Ճիշտ է։ (Ծափահարություններ)։

Կագանովիչ. Ընկերներ, մենք կարմիր պրոֆեսորների ինստիտուտում, կոմհամալսարաններում, մարքսիզմի դասընթացներում շատ կոմունիստներ ենք սովորեցրել. այս մարդիկ կուտակել են գիտելիքների վորոշակի կապիտալ։ Հսկայական մեծամասնությունը ձգտում է լավ աշխատել։ Կուսակցությունն իրավունք ունի նրանցից պահանջելու, վոր նրանք վողջ յեռանդով ու լարվածությամբ ծավալեն կուսակցական-քաղաքական ուսուցումը և լրիվ հատուցեն կուսակցությանն ըստ մուրհակների։ Բայց յես պիտի ասեմ, վոր այս մարդկանց մի մասը դեռևս չի կարողանում թեորիայի հարցերը կապակցել պրակտիկայի հարցերի հետ։

Լենինը թեորիական հարցերը մշտապես կապակցում եր առօրյա պրակտիկայի հետ։ Ստալինը մեզ նմուշներ է ցույց տալիս, թե թեորիական ամենաբարդ հարցերն ինչպես զուգակցել ամենօրյա պայքարի հետ։ Բայց ահա մեր կարմիր պրոֆեսորներից շատերը մի վանդակի մեջ են դնում թեորիան, իսկ մյուսի մեջ՝ պրակտիկան, իսկ այս յերկու վանդակները միացնել չեն կարողանում։ Դժբախտաբար, մեր պրոֆեսորների մի մասը փոխանակ թեորիան միացնելու պրակտիկայի հետ, խորիմաստ տրակտատներ են հորինում այն թեմայի շուրջը, թե թոկը պարան է, իսկ քանի վոր Մարքսի ու Ենգելսի մոտ այս մասին վոչինչ չկա, ապա նրանք գտնում են, վոր դրանով իսկ նրանք խորացնում ու հարստացնում են մարքսիզմի գանձարանը։ (Ծիծաղ)։

Մեր խորհկուսդպրոցների մի մասը ամենից ավելի տառապում է այն բանից, վոր այնտեղ ուսուցումը դրըված է հենց դպրոցական հիմքերի վրա։ Բոլշևիկը դպրոցական չե, նա դաստիարակվում է քաղաքականապես, նրա դպրոցական կրթությունը պետք է միացվի ամենօրյա պայքարի քաղաքականության ու պրակտիկային։

Նրան պետք է գաղափարապես զինել թե՛ դպրոցում և թե՛ կուսժողովում: Յեթե դուք նկատել եք, այս պատճառով կանոնադրության նախագծում ասված է կոմունիստի վոչ թե պարզապես դաստիարակության, այլ գաղափարական զինման մասին: Կուսակցության յուրաքանչյուր անդամ պետք է զինված լինի մարքսիզմ-լենինիզմի հիմունքներով:

Յեթե մենք այսպիսի պահանջներ ենք առաջադրում կուսակցության յուրաքանչյուր անդամի, ապա եվ ավելի շատ պահանջներ պիտի առաջադրվեն կուսակցական ղեկավարներին: Մեզանում կտրուկ բաժանումներ չպիտի լինեն մասնագետ պրոպագանդիստների և մասնագետ կազմակերպիչների: Մասնագիտացումը լավ բան է, մենք կողմնակից ենք նրան, բայց վոչ չափից դուրս: Յեվ մանավանդ այսպիսի չափից դուրս մասնագիտացումն անընդունելի է կուսակցական աշխատանքի մեջ: Հաճախ կազմակերպիչը պրոպագանդիստական և ագիտացիոն աշխատանք չի կատարում վոչ միայն այն պատճառով, վոր նա ժամանակ չունի, այլև ճիշտն ասած, այն պատճառով, վոր չի կարողանում: Մենք գործարանի դիրեկտորից պահանջում ենք տիրապետել տեխնիկական գիտելիքների մինիմումին: Եվ ավելի մեծ չափով մենք պետք է պահանջենք կուսակցական սկզբնական կազմակերպության յուրաքանչյուր քարտուղարից, յուրաքանչյուր շրջկոմի քարտուղարից, յուրաքանչյուր կուսակցական կազմակերպչից տիրապետելու մարքսիստական-լենինյան կողմնացույցին: Կուսակցական ղեկավարը պետք է լինի վոչ միայն կազմակերպիչ-ադմինիստրատոր բառիս լավագույն իմաստով, այլև կուսակցության անդամների պրոպագանդիստ ու դաստիարակիչ:

Մենք գիտենք, վոր բարձրացել է կուսակցական ժողովների մակարդակը: Կուսակցության անդամը կուսակցական ժողովներում բոլշևիզմ է սովորում և պիտի սովորի վոչ պակաս, յեթե վոչ ավելի, քան կուսակցական դպրոցում: Այս բանն ամեն վոք հասկանում է:

Ներկուսակցական դեմոկրատիան, ինքնաքննադատությունը յեղել են և հանդիսանում են մեր ամբողջ կուսակցական աշխատանքի և կուսակցության անդամների դաստիարակության կարևորագույն լծակը: Ներկուսակցական դեմոկրատիան բարձրացել է նոր աստիճանի: Միանգամայն նոր ձևով է հասկացվում ներկուսակցական դեմոկրատիան: Այժմ, յերբ լինում ես կոմունիստների ժողովներում, վոչ մի համեմատություն չկա այն բանի հետ, ինչ գոյություն ուներ մի յերկու տարի սրանից առաջ:

Ոպոզիցիոներներն ուզում եյին ներկուսակցական դեմոկրատիան ոգտագործել բոլշևիկյան շարքերի քայքայման համար: Կուսակցությունը ջախջախիչ հարված հասցրեց կուլակային այս ձայնակիցներին, վռնդեց նրանց իր շարքերից և մեր կուսակցական կազմակերպությունները բարձրացրեց նոր աստիճանի:

Նայեցեք այժմ կուսակցական վորևե ստորին կազմակերպության, վորևե կուսակցական ժողովի: Դուք կտեսնեք, թե ինչպես կուսակցության անդամները բարձրացել են մինչև խնդիրների պետական ըմբռնման մակարդակը, թե մեր յերկրի կյանքի ու միջազգային քաղաքականության ինչպիսի հարցեր են շոշափվում կուսակցության շարքային անդամների ճառերում ու յելույթներում: Քննարկելով իրենց արտադրական կամ համակուսակցական հարցերը, մարդիկ հանդես են գալիս ու խոսում միլիարդների, արդֆինպլանի մասին, խոսում են տեխնիկայի մասին: Իհարկե, այս տեսակետից ամեն մի կոմունիստ վիթխարի չափով աճել, բարձրացել է:

Սակայն, մենք չենք կարող բացասել այն, վոր մենք

շատ ավելի բան կարող եյինք անել, յեթե մենք ավելի շատ կարողանայինք զուգակցել կազմակերպիչների ու պրոպագանդիստների աշխատանքը: Սա կոմունիստների մարքսիստական-լենինյան գաղափարական զինումը կբարձրացներ մի նոր աստիճանի: Լինում են դեպքեր, յերբ կուսակցական ժողովներն անցնում են շաբլոն և առանց լուրջ պատրաստության: Հավաքում են մարդկանց, թե ընկերներ, մենք առաջադրություն ունենք, մենք պետք է կատարենք այսինչ ու այնինչ բանը: Կամ թե չէ հարց են դնում՝ այսինչ կամպանիան է կամ այսինչ հոբելյանական օրը: Այսպիսի դեպքերում գերակշռում է կամ միտինգայնությունը կամ գործամոլությունը, և, բնականաբար, այսպիսի ժողովները չեն դաստիարակում կուսակցության անդամներին: Մինչդեռ յուրաքանչյուր կուսակցական ժողով պետք է բարձրացնի կոմունիստի գաղափարական մակարդակը: Ներկուսակցական հարցերի, սոցիալիզմի կառուցման քաղաքականության ու գործնական հարցերի քննարկումը կուսակցության անդամի գիտակցությունը բարձրացնում է մինչև բոլշևիկի՝ մասսաների կազմակերպչի ավանգարդային դերի ըմբռնումը:

Կուսակցության անդամն աճում, դաստիարակվում ու կոփվում է ներկուսակցական դեմոկրատիայի պայմաններում, կուսակցական քաղաքականության բոլոր հարցերի ազատ և գործնական քննարկման պայմաններում: Միևնույն ժամանակ նա կոփվում ու դաստիարակվում է պայքարելով բոլոր նրանց դեմ, ովքեր նահանջում են կուսակցական քաղաքականության հիմնական հարցերից, ովքեր ուզում են այս հարցերի քննարկումն օգտագործել այդ քաղաքականությունը խախտելու համար, կուսակցության ղեկավարությունը խախտելու համար, նրա յերկաթյա շարքերը խարխլելու համար: Մեր ներկուսակցական կյանքի փորձը ցույց է տա-

լիս, վոր մեր կուսակցական շարքերն աճել, ամրացել ու կոփվել են պայքարելով բոլոր նրանց դեմ, ովքեր նահանջել են կուսակցության քաղաքականությունից, լենինիզմից, պայքարելով մեր կուսակցական շարքերի համախմբվածության ու միաձուլության համար :

Ահա, թե ինչու առաջիկայում էլ մենք պետք է բարձրացնենք ու կոփենք կուսակցության անդամներին, պայքարելով մեր շարքերում օպորտունիզմի ամենաչնչին արտահայտությունների դեմ:

Կուսակցության անդամի աճումը կախված է ներկուսակցական աշխատանքի դրվածքից, կախված է կուսակցության անդամին ցույց տրված ուշադրությունից և նրանից, թե ինչպես են ղեկավարում նրան: Այս պատճառով թեզերում մենք առանց յերկար ու բարակ դրե ու դրեցինք կուսակցական սկզբնական կազմակերպության հարցը:

4.

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Մեր կուսակցական սկզբնական կազմակերպություններն աճել են թե՛ կազմակերպորեն և թե՛ քաղաքականապես: Նրանք անպայման բարձրացել են ձեռնարկության արտադրական կյանքում իբրև ակտիվորեն ներգործող ֆակտոր:

Սկզբնական կազմակերպությունների ներկուսակցական կյանքը հարստացել է: Այս տարիների ընթացքում մեզ մոտ բարձրացել է ղեկավար աշխատողների միանգամայն նոր շերտ, նորոգվում է ակտիվը, արյան շրջանառությունը լավ է կատարվում, բուռն կերպով, աճում են նոր մարդիկ: Յես այստեղ կարող եյի ավելա-

ներ հիշատակել 85 խոշորագույն ձեռնարկությունների 1500 ցեխերից, վորոնք ընդգրկում են 700 հազարից ավելի բանվոր և վորոնցից 94 հազարը կոմունիստ են։ Այս ձեռնարկությունների ցեխային սկզբնական կազմակերպությունների քարտուղարների համարյա կեսը կուսակցության մեջ մտել է 1929 թվից հետո և միայն մի քառորդը կուսակցության մեջ մտել է մինչև 1925 թիվը ներառյալ։ Սակայն, նրանք թեև յերիտասարդ կուսակցականներ են, բայց կադրային բանվորներ են։ Քարտուղարների 60%-ը 10 տարուց ավելի արտադրական ստաժ ունեն։

Իհարկե, այս մարդկանց պետք է ոգնել նրանց բոլշևիկյան պատրաստության գործում և առանձնապես մեր կուսակցական սկզբնական կազմակերպության ղեկավարման գործում։

Ի՞նչ ունենք մենք այժմ մեր կուսակցական սկզբնական կազմակերպության մեջ, ինչպե՞ս ենք մենք այժմ անվանում մեր կուսակցական բջիջները և ինչպես պետք է անվանենք։

Մեր կուսակցությունն իբրև պրոլետարիատի հեղափոխական մարտական կուսակցություն, գործարաններում մշտապես իր ստորին ցանցը կառուցել է արտադրական սկզբունքով։ Սակայն, նախ՝ գյուղում այս բանը չկար և, յերկրորդ՝ նույնիսկ գործարաններում մեր արտադրական կազմակերպությունը միշտ չէ, վոր ունեցել է ցայտուն արտահայտված արտադրական բնույթ։

Մեր կուսակցական սկզբնական կազմակերպության արտադրական դերը սկսել է ծավալվել գլխավորապես վերջին 3—4 տարում։ Ջե՞ վոր կուսակցության դեռ միայն անցյալ համագումարում մենք առիթ ունեցանք հավաստելու, վոր սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը չեն ընդգրկել կուսակցության

անդամների վոչ միայն մեծամասնությունը, այլև նույնիսկ նշանակելի մասը։ Կային արդյունաբերական կազմակերպություններ, վորտեղ կուսակցականների ու կոմյերիտականների ընդամենը 10—20% եր մասնակցում մրցությանն ու հարվածայնությանը։ Այսոր կոմունիստների համարյա 100%-ը հարվածային են, մեր գործարանային կուսակցական կազմակերպությունները բավական հիմնավոր կերպով թափանցում են ձեռնարկության արտադրական կյանքի հարցերի մեջ։

Կուսակցական բոլոր ստորին կազմակերպությունների ու թեկնածուական խմբակների թիվը XVI համագումարի որերի 54 հազարից առ 1–ն հոկտեմբերի 1933 թ. աճել ու հասել է 139 հազարի։ Մի շարք ձեռնարկություններում գործարանային ստորին կազմակերպությունները խոշորագույն կազմակերպություններ են, վորոնք ունեն հազարական անդամ և ավելի։

Կտրականապես փոփոխվել է կուսակցական ստորին կազմակերպության աշխատանքի բնույթը։ Բջիջներն ինչպես իրենց կազմով, այնպես էլ նրանց առջև դրված խնդիրներով փաստորեն գերաճել են հին տիպի բջիջների շրջանակները։

Ահա, թե ինչու սա արդեն բջիջ չէ, այլ մեր կուսակցության սկզբնական կազմակերպություն։ Այսպիսի կազմակերպության դերը արտադրության բնագավառում, իբրև մի առաջատար ուժ գործարանում, ֆաբրիկում ու կոլտնտեսության մեջ, ե՛լ ավելի պետք է բարձրանա։

Կուսակցության կանոնադրության մեջ կուսակցական սկզբնական կազմակերպության վրա դրվում են ավելի լայն խնդիրներ, քան դրվում եր առաջ։

Կանոնադրության մեջ ասված է.

«Կուսակցական սկզբնական կազմակերպությունը բանվորական ու գյուղացիական մասսաներին կապում է

կուսակցության ղեկավար օրգանների հետ։ Նրա խընդիրն է․

1) Մասսաների մեջ ագիտացիոն և կազմակերպական աշխատանք կատարել կուսակցական լոզունգների ու վորոշումների համար։

2) Համակրողներ ու նոր անդամներ ներգրավել և նրանց քաղաքականապես դաստիարակել։

3) Օժանդակել շրջկոմին–քաղկոմին կամ քաղբաժնին նրա ամենօրյա կազմակերպական ու ագիտացիոն աշխատանքի մեջ։

4) Մոբիլիզացիայի յենթարկել մասսաներին ձեռնարկություններում, խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում և այլուր արտադրական պլանը կատարելու համար, ամրացնել աշխատանքային կարգապահությունը և զարգացնել հարվածայնությունը։

5) Պայքարել ձեռնարկություններում, խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում գործը թափթփված ու անտնտեսավարական ձևով վարելու դեմ և ամենօրյա հոգատարություն ունենալ բանվորների ու կոլտնտեսականների կենցաղային պայմանները բարելավելու համար։

6) Իբրև կուսակցական օրգան, ակտիվ մասնակցել յերկրի տնտեսական ու քաղաքական կյանքին»։

Յես ձեր ուշադրությունը հրավիրում եմ 4—5–րդ կետերի վրա։

Մեր պետհիմնարկների կուսակցական սկզբնական կազմակերպությունները, առանց ղեկավարման հավակնություն ունենալու, նույնպես պետք է պայքարեն թափթփվածության դեմ, յեթե այդպիսին տեղի ունի իրենց աշխատած հիմնարկներում։

Այս խնդիրներն իրականացնելու համար կուսակցական սկզբնական կազմակերպությունները պետք է վերակառուցեն իրենց աշխատանքը։ Մենք սկզբնական

կուսկազմակերպությունների դրական աշխատանքի վերաբերյալ բազմաթիվ ցայտուն օրինակներ ունենք։

Ընկերներ, դուք բոլորդ ղեկավարում եք կուսակցական կազմակերպությունների աշխատանքը և գիտեք, վոր մենք բազմաթիվ կուսակցական սկզբնական լավ կազմակերպություններ ունենք։ Մենք հարցը համագումարի քննությանն ենք դրել գլխավորապես նրա համար, վորպեսզի ուրվագծենք ապագայի խնդիրները։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, վոր մենք ունենք նաև բազմաթիվ բացասական կողմեր։

Սխալ կլիներ չտեսնել, վոր կուսակցական աշխատանքի մեջ թափանցել են գրասենյակայնության ու ֆունկցիոնալության տարրեր։ Իսկ կուսակցական աշխատողներից վոմանք չեն ըմբռնում, վոր կուսակցական ղեկավարի կենտրոնական ու գլխավոր խնդիրն է իրականացնել կուսակցության անդամների ղեկավարությունը ու կուսակցության անդամների ամբողջ մասսայի միջոցով՝ միլիոնավոր բանվորների ու գյուղացիների ղեկավարությունը։ Ուստի կուսակցության անդամը պետք է գտնվի կուսակցական կազմակերպությունների աշխատանքների կենտրոնում։ Մեր կազմակերպությունների բուն կառուցվածքի մեջ կան մի շարք բացասական յերևույթներ։ Գործարանի կուսկոմից մինչև կուսակցության անդամը ստեղծվում են չափազանց շատ կազմակերպական աստիճաններ։

Այս դեռ իբրև բացառություն թույլատրելի յե խոշորագույն գործարաններում, վորտեղ իրոք կա ցեխային կազմակերպություն և վորտեղ մեծ է կուսակցության անդամների թիվը, ինչպես օրինակ Պուտիլովի գործարանում, վորտեղ կա մոտ 6 հազ. կոմունիստ, կամ Լուգանսկի շոգեքարշի գործարանում, վորտեղ կա 4 հազարից ավելի կոմունիստ, կամ Մոսկվայի ելեկտրագործարանում և այլն։ Բայց այս մեծ կազմակեր-

պություններն էլ չպետք է տարվեն և բազմաստիճանություն ստեղծեն: Այս մանավանդ սխալ է միջակ և վոչ մեծ գործարաններում:

Նոր կանոնադրությամբ թույլատրվում է ցեխային սկզբնական կազմակերպություններին զուգընթաց կուսակցական խմբակներ ստեղծել բրիգադներում ու ագրեգատներում: Բայց այս խմբակները չպետք է ընդօրինակեն ցեխային կազմակերպությանը: Սրանք պետք է լինեն մարտական բնույթի խմբակներ, վորոնք ամենից քիչ պիտի զբաղվեն նիստերով, հրամաններով, բանաձևեր գրելով և այլն:

Անհրաժեշտ է ուղղակի ասել, վոր ֆունկցիոնալությունն ու ընդհանուր բանաձևերը կան նաև կուսակցական կազմակերպություններում: Անվերջ արձանագրություններ, բանաձևեր, հաշվետվություններ, զեկուցումներ են գրում, և սրա համար հաճախ մեղավորը մենք ենք, ղեկավար կուսմարմինները: Յերբ հրահանգիչը գալիս է կուսակցական սկզբնական կազմակերպության քարտուղարի մոտ, սկսում է ստուգել նրա աշխատանքը, նա ամենից առաջ դիմում է արձանագրություններին. այսինչ հարցը քննե՞լ ես արդյոք, այսինչ հարցով զբաղվե՞լ ես արդյոք: Մի խոսքով՝ մեր սկզբնական կազմակերպության քարտուղարը ջանում է ամեն տեսակի ու ձևի բանաձևերի պաշար հավաքել, վորպեսզի ով էլ ինչքան քրքրի մի բան չգտնի: (Ծիծաղ):

Վերցրեք, օրինակ, Ռոստսելմաշի գործարանը, վոր Ռոստովի մեծագույն գործարանն է: Կուսակցական կազմակերպությունը մեծածավալ ապարատ ունի: Կուսկոմում կա 5 բաժին: Միայն գործարանային կուսկոմում աշխատում էյին 20 ազատված ընկեր:

Ձայն տեղից: Ավելի:

Կագանովիչ: Ցեխերի հետ միասին, իհարկե, ավելի: Հսկայական ժամանակ էյին սպանում նիստերի վրա:

Յեղել է մի դեպք, յերբ այս գործարանում կուսկոմի նիստը տևել է 2 որ և քննվել է 125 հարց: (Ծիծաղ):

Կամ թե չէ վերցրեք Պետրովսկու անվան գործարանը Դնեպրոպետրովսկում: Կուսկոմում, ցեխբջիջների հետ միասին, յերբ կենտկոմի աշխատողները հետազոտություն էյին կատարում, աշխատում էյին 75 վարձու աշխատող:

Չափազանց շատ են ողակները: Օրինակ՝ հալոցի ցեխում կար կուսկոմ, 4 հերթային կուսբջիջ, 20 ողակային բջիջ, վորոնք յենթարկված էյին հերթային բջիջներին և իրենց հերթին ողակային բջիջներն ունեյին կուսխմբակներ: Ստացվում է հնգաստիճան կազմակերպություն:

Ահավասիկ գործարանային կուսկոմում ու բոլոր ցեխային բջիջներում գոյություն ունեցող 11 սեկտորների ցուցակը. 1) կուլտպրոպ, 2) ագիտմաս, 3) կադրերի սեկտոր, 4) կատարումը ստուգող սեկտոր, 5) անկուսակցական ակտիվի մեջ աշխատող սեկտոր, 6) կուսակցության թեկնածուների մեջ աշխատող սեկտոր, 7) արտադրության մեջ կոմունիստների ավանգարդային դերը հաշվի առնող սեկտոր (ծիծաղ), 8) կոմյերիտմիության մեջ աշխատող սեկտոր, 9) կանանց մեջ աշխատող սեկտոր, 10) կոոպերացիայի սեկտոր, 11) կուսբեռնավորումների սեկտոր:

Բանը հասել է այնպիսի անհեթեթության, վոր ձեվավոր մետաղի ցեխի ողակային բջիջն ունենալով ընդամենը 7 կուսանդամ և 4 թեկնածու, ստեղծել է բջիջի բյուրո, վորի մեջ մտել են բոլոր 7 կուսակցականները: (Ծիծաղ): Ընդվորում այս ողակային բջիջում կուսակցության 7 անդամներին ընկնում եր 10 սեկտոր (ծիծաղ), վորոնց թվում նաև այնպիսիները, ինչպես անդամավճարների մուծումը ստուգող սեկտոր, ագիտմաս, կադրերի սեկտոր, կատարումը ստուգող սեկտոր

(ծիծաղ), անկուսակցական ակտիվի մեջ աշխատող սեկտոր, կուսակցության թեկնածուների մեջ աշխատող սեկտոր, արտադրության մեջ կոմունիստների ավանգարդային դերը ստուգող սեկտոր (ծիծաղ), կոմյերիտմիության մեջ աշխատող սեկտոր, կանանց մեջ աշխատող սեկտոր, կուսբեռնավորումների սեկտոր: Իսկ իրականության մեջ՝ կատարյալ ծաղրածանակ և վոչ մի աշխատանք: Հալոցի ցեխի ողակային բջիջում 16 կոմունիստին ընկնում է 16 սեկտոր:

Ստալին: *Համենայն դեպս ավելի քիչ, քան Հողժողկոմատում:*

Կագանովիչ: *Այո, Հողժողկոմատին դեռ չեն հասել: Յուրահատուկ է սեկտորների ղեկավարների ընտրությունը:*

Քաղգրագիտության դպրոցի ունկնդիր Բորոդենկոն ղեկավարում էր կոմունիստների կուսուսուցման սեկտորը, իսկ ինքը 14 անգամ բացակայել էր քաղգրագիտության դպրոցի պարապմունքներից: (Ծիծաղ):

Սոկոլենկոն ղեկավարում էր անդամավճարների մուծումը ստուգող սեկտորը, իսկ ինքը 9 ամիս անդամավճար չէր տվել (ծիծաղ):

Իհարկե, այսպիսի այլանդակ յերևույթներն այնքան էլ շատ չեն մեզ մոտ:

Ստալին: *Համենայն դեպս քիչ էլ չեն:*

Կագանովիչ: *Իհարկե, քիչ չեն: Յես այս փաստը հիշատակեցի իբրև ամենացայտուն փաստ, վորպեսզի ցույց տամ, վոր սա աշխատանքի յուրահատուկ ուղղություն է, յեթե կուզեք՝ սա կուսակցության գծի բյուրոկրատական խեղաթյուրում է: Ահա, թե ինչու մենք պետք է հարվածենք այս խեղաթյուրումներին:*

Մեզ հարցնում են, թե ինչո՞ւ ցեխերում բյուրոներ չեն ստեղծվում: Ինչպես դուք գիտեք, նոր կանոնադրությամբ նախատեսվում է ցեխում ունենալ կուսկազ-

մակերպիչ: Այժմ բյուրոն ինքը չափազանց շատ նիստեր է ունենում, իսկ կոմունիստների ընդհանուր ցեխային ժողովները շատ քիչ են գումարվում: Կուսակցական ցեխային կազմակերպիչ լինելու դեպքում կոմունիստների ընդհանուր ժողովներն ավելի հաճախ պիտի գումարվեն: Կուսկազմակերպիչը պիտի լինի կուսակցության մարտական ներկայացուցիչը ցեխում: Նա պետք է չխախտելով միանձնյա ղեկավարությունը, կատարի այն խնդիրները, վոր կանոնադրությունը դնում է կուսակցական կազմակերպության առջև, պայքարի թափթփվածության դեմ, իրականում ստեղծի պրոլետարական յերկաթյա կարգապահություն:

Վորոշ ստորին կազմակերպություններ գանգատվում են, վոր կուսակցական կոմիտեներն ու շրջկոմները նրանց ծանրաբեռնում են ահագին գրագրությամբ: Կենտրոնական Կոմիտեյում քիչ նամակներ չկան այս հարցերի վերաբերյալ: Սա ճշմարիտ է, և մենք՝ ղեկավար կուսմարմինները պետք է անպայման խիստ կրճատենք պահանջները, իսկ վորպեսզի այնքան էլ հեշտ չլինի թուղթ մրոտելով զբաղվելն ու թուղթ պահանջելը, բարելավում ենք ապարատը, մասնավորապես վերացնում ենք շրջկոմների բաժինները:

Ձայներ: *Ճիշտ է:*

Կագանովիչ: *Իհարկե, վորոշ հաշվետվություն պետք է: Առանձնապես կուսակցության անդամների հաշվառումը պետք է կազմակերպել ամենայն խստությամբ: Հենց ճիշտ այդ կարևորագույն գործը ամբողջովին չի ապահովված մեզնում—կուսակցության անդամների հաշվառումը դրված է անբավարար, և մի շարք կազմակերպություններ այս գործով չեն զբաղվում:*

Մենք համոզված ենք, վոր ժողովային իրարանցման կրճատումը և ընդհանուր բանաձևերի կրճատումը ան-

տարակուսյա կրարեկավի ամբողջ աշխատանքը։ Սա հնարավորություն կտա կուսակցական ստորին աշխատողներին կենտրոնանալու իրոք մարտական հարցերի վրա։ Կուսկոմներն ազատեցեք գրասենյակայնությունից և մարդիկ միանգամայն բավական ժամանակ կունենան աշխատելու համար։

Ձայներ: *Ճիշտ է։*

Կագանովիչ: *Խորհրդային հիմնարկների սկզբնական կազմակերպությունները այժմ մեծ նշանակություն են ձեռք բերում։ Չի կարելի կարծել, թե պետապարատի վերակառուցման ամբողջ աշխատանքը կարելի է կատարել առանց ամրացնելու և բարելավելու խորհրդային սկզբնական կուսկազմակերպությունները։ Վոմանց մեջ ասալ, թեթև վերաբերմունք է առաջանում դեպի խորհրդային սկզբնական կազմակերպությունը։ Բայց ովքե՞ր պետք է ապահովեն պետապարատի վերակառուցումն ու նրա աշխատանքի բարելավումը, եթե ոչ կուսակցության անդամները, որ աշխատում են խորհրդային հիմնարկներում։*

Հատկապես նրանք։ Ուստի խորհրդային հիմնարկների կուսակցական սկզբնական կազմակերպություններին պատշաճ ուշադրություն պետք է հատկացնել։

5.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ

Թույլ տվեք կանգ առնելու կոլտնտեսության ու գյուղի սկզբնական կազմակերպության վրա։ Դուք հիշում եք, որ XVI համագումարի օրերին մեր գյուղական կուսակցական կազմակերպությունը ծայրահեղորեն թույլ էր։ Գյուղական բջիջների թիվը հասնում էր 30 հազարի, նրանց մեջ կար 404 հազար կոմունիստ։ Այս թվից 263 հազարը գտնվում էին տերիտորիալ բջիջներում, 115 հազարը—կոլտնտեսական բջիջներում, 26 հազ.—խորհտնտեսական ու ՄՏԿ-ների բջիջներում։ Առ 1-ն հոկտեմբերի 1933 թ. մենք 30 հազար բջիջի փոխարեն ունենք 80 հազար սկզբնական կազմակերպություն և թեկնածուական խմբակ, որոնք ունեն XVI համագումարի օրերի 404 հազար կոմունիստի փոխարեն 790 հազ. կոմունիստ։ Սրանից զատ կոլտնտեսություններում կան 22 հազ. կուսակցական-կոմերիտական խմբակ և 38 հազար մենաշխատ կոմունիստ։

Ներկայումս մենք ունենք 30 հազ. սկզբնական կոլտնտեսական կազմակերպություն, 20 հազար թեկնածուական խմբակ, 22 հազ. կուսակցական-կոմերիտական խմբակ, 38 հազ. մենաշխատ կոմունիստ։ Այսպիսով, բոլոր կոլտնտեսությունների մոտ 50%-ը կոմունիստներ չունեն։

Առավելապես խոշոր կոլտնտեսություններ ունեցող երկրներում ու մարզերում (Հյուսիսային Կովկաս, Ուկրայինա, Ստորին Վոլգա) կոմունիստներով չընդգրկված կոլտնտեսությունների տոկոսը հասնում է 3-ից (Ստորին Վոլգա) մինչև 22-ի (Ուկրայինա)։

Այն երկրներում և մարզերում, որտեղ կոլխոզներն ավելի մանր են (Արևմտյան մարզ, Իվանովի մարզ) կոմունիստներով չընդգրկված կոլխոզների տոկոսը հասնում է 50—70-ի։ Այնպիսի մարզերում, ինչպես Ստորին Վոլգան, Միջին Վոլգան, Հյուսիսային Կովկասը, Ուրալը, Ուկրայնան շրջանային կենտրոններից աշխատողներ ուղարկելով և մարզային ու շրջանային աշխատողներին անմիջականորեն կոլտնտեսություններին ամրացնելով հեշտ է կոմունիստներով ընդգրկել կոլտնտեսությունների մեծ մասը։ Իսկ մյուս մարզերում,

որտեղ կոլտնտեսությունները մանր են, այս խնդիրն ավելի դժվար է։

Գյուղում յեղած կոմունիստների աճման և կուսակցության մեջ մտնել ցանկացող ու համապատասխան մարդկանց ընտրության համար շատ կարևոր նշանակություն կարող է ունենալ մարզային ու շրջանային ղեկավար աշխատողներին անմիջականորեն այս կամ այն կոլտնտեսությանը մշտապես ամրացնելու պրակտիկան։ Այս նշանակում է, որ ղեկավար աշխատողներին պետք է ամրացնել կոլտնտեսություններին ոչ միայն այս կամ այն կամպանիան անցկացնելու համար, այլ և քաղաքական ու մասսայական կազմակերպական աշխատանքի համար։

Կենտրոնական Կոմիտեի որոշման հիման վրա գյուղական բջիջներն այժմ վերակառուցված են արտադրական հատկանիշով, միանգամայն փոփոխվել են գյուղական սկզբնական կուսկազմակերպության կազմն ու դեմքը։ Ահավասիկ, օրինակ, Մոսկվայի մարզի Վոլոկոլամսկի գավառի Ցարապոլեցկի վոլոստի նախկին վոլոստային կուսկազմակերպության կազմն առաջ և հիմա։

Առաջ բջիջը գերազանցապես կազմված էր վարչական պերսոնալից՝ գյուղկոոպի նախագահից, գյուղկոոպի վարչության անդամներից, գյուղխորհուրդների նախագահներից, կաթի վերահսկիչից, կաթնագործարանի վարիչից, վարկային ընկերության վարչության նախագահից, գավառամասի դատավորից, վոլոստային միլիցիոներից, գյուղկոոպի գործակատարներից, ուսուցչից, կոլտնտեսությունների յերկու նախագահից և մի շարքային կոլտնտեսականից։

Իսկ այժմ այս տերիտորիայում կա յերկու կոլտնտեսական սկզբնական կուսկազմակերպություն, մեկ թեկնածուական խմբակ կոլտնտեսության մեջ և կուսկոմյերիտական կորիզ 8 կոլտնտեսություններում։

Նրանց կազմը խիստ փոփոխություն է կրել։ Նրա մեջ արդեն մտնում են կոլտնտեսությունների նախագահներ, բրիգադիրներ, շարքային կոլտնտեսականներ, կոլտնտեսուհիներ, գյուղատնտեսներ։ Այստեղ արդեն գերակշռում է ուրիշ կազմ։

Ինչպես տեսնում եք՝ նախկին վոլոստային բջիջների ու ներկայիս կոլտնտեսական սկզբնական կազմակերպությունների միջև մեծ տարբերություն կա։

Մենք պիտի արագացնե՞նք արդյոք կուսակցության մեջ ընդունելությունը գյուղական կուսկազմակերպության մեջ։ Ոմանք ասում են. քանի որ կոլտնտեսություններում կուսկազմակերպություններ ու կոմունիստներ չկան, յեկեք ընդունելություն կատարենք։ Սա սխալ է, սա ճիշտ չէ։ Կարիք չկա յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ արհեստականորեն կազմակերպություններ ստեղծելու։ Յեթե այնտեղ կհասունանան կուսակցության մեջ գտնվելու արժանի մարդիկ, խնդրե՛մ։ Մենք պետք է օգնենք, որ նրանք հասունանան, մենք պետք է աշխատենք այս գործի համար։ Իսկ յեթե այսպիսի մարդիկ չկան, պետք չէ արհեստականորեն արագացնել ընդունելությունը, չի կարելի առանց ընտրանքի ընդունել։ Հարկավոր է ամրացնել կոմյերիտական կազմակերպությունը, կոմյերիտական խմբակը, ստեղծել անկուսակցական ամուր ակտիվ, որպեսզի մի կոլտնտեսության կազմակերպությունը սպասարկի միքանի մերձակա կոլտնտեսություններ։

Իհարկե, ընկերներ, անհրաժեշտ է ուժեղացնել ուշադրությունը յուրաքանչյուր կոլտնտեսության, յուրաքանչյուր կոլտնտեսականի նկատմամբ առանձին։

Չպետք է շփոթվել այն բանից, որ միքանի կոլտնտեսական կուսակցական կազմակերպություններ բազմամարդ չեն։ Նրանց ուժը պիտի կայանա ոչ թե բազմամարդության, այլ անկուսակցական ակտիվին ղեկա-

վարելու մեջ, նրա համախմբման մեջ կոլտնտեսական ակտիվական վոչ բազմամարդ կուսկազմակերպության շուրջը, նրա համախմբման մեջ կուսակցական-կոմյերիտական խմբակի կամ մենաշխատ կոմունիստների շուրջը:

Չի կարելի մոռանալ տերիտորիալ գյուղական կուսկազմակերպությունների լուրջ նշանակությունը, քանի վոր նրանք ուղղակի կապված են գյուղխորհուրդների, կոոպերացիայի հետ: Իսկ մենք գիտենք, վոր գյուղխորհուրդների ու կոոպերացիայի դերը վոչ միայն չի նվազում, այլև անընդհատ աճում է: Այժմ արդեն նույնիսկ նրանք, ովքեր պատրաստվում եյին վերացնելու գյուղխորհուրդները և նրանց ձուլելու կոլտնտեսությունների հետ, ըմբռնել են, վոր դա ձախական հիմարություն է:

Այս բոլորին անհրաժեշտ է ավելացնել, վոր յեթե քաղաքում սուր կերպով է դրված մարքսիստական-լենինյան ուսուցման հարցը, ապա գյուղում նա հարյուրապատիկ ավելի սուր է: Գյուղական կոմունիստները և առաջին հերթին կուսակցական կազմակերպությունների քարտուղարները, կոլտնտեսությունների վարչությունների նախագահները, գյուղխորհուրդների նախագահները ներկայումս սուր պահանջ են զգում բարձրացնելու իրենց կուլտուր-քաղաքական մակարդակը:

Յեվ այստեղ թերևս պետք է կիրառել նաև այնպիսի ձև, ինչպես կոլտնտեսական կուսկազմակերպությունների քարտուղարների հրավիրումը կարճատև դասընթացների: Կարելի յե հիշատակել Մոսկվայի մարզի փորձը, վորտեղ 1933 թ. դեկտեմբերին կոլտնտեսական կուսկազմակերպությունների 900 քարտուղարների համար կարճատև դասընթացներ գումարվեցին: Այս դասընթացներն անշուշտ դրական փակտոր հանդիսացան և խթանեցին կոլտնտեսական կուսկազմակերպությունների քարտուղարների ձգտումը ե՛լ ավելի բարձրացնելու իրենց մակարդակը: Սրա կարիքը հսկայական է:

Թույլ տվեք հրապարակելու մի քաղվածք այս դասընթացներում յեղած կոլտնտեսական կուսկազմակերպության մի քարտուղարի նամակից.

«Այժմ 10 որով Մոսկվա յեմ յեկել դասընթացների, վորոնք շատ բան տվին և—ամենագլխավորը—հարկադրում են շարունակել ուսումը, իմանալ մեր կուսակցության ծրագիրը, իմանալ Լենինի ու Ստալինի ուսմունքը, իմանալ գյուղատնտեսությունը և միջազգային դրությունը: Յես առիթ եմ ունեցել ինձ վրա աշխատելու տանը, բայց ի՞նչ է ստացվում,—հենց նստում ես կարդալու ընկեր Ստալինին, պարապմունքների համար պատրաստվելու կամ մի բան կարդալու գեղարվեստական գրականությունից, բայց ահա տուրուդմփոց, յերեխաների լաց և այլն: Մտածում եմ՝ «գնամ բջիջ, այնտեղ փակվեմ և պատրաստվեմ»: Հանկարծ դուռը ծեծում են, բացականչում են՝ «Ի՞նչու ես փակվել, գողե՞ր ես վախենում»: Հարցնում եմ՝ «բանն ինչո՞ւմն է»—«դե բաց արա»: Նրանց պատասխանում եմ՝ «Տղե՛րք, յես պատրաստվում եմ պարապմունքներին»:—«Դե բաց արա, գաղտնի բան ունեմ ասելու»: Բաց եմ անում, նա ասում է, «ես գիշեր ջրաղացի պահակը հաց է գողացել»: Գրի յեմ առնում, նա գնում է: Նորից եմ փակում ու նստում պարապելու: Հանկարծ նորից ներս է վազում ու բղավում. «Շուտ գնանք ֆերման, ենտեղ գործը վատ է»: Թողնում եմ ու գնում: Մյուս անգամ ստացվում է նույն բանը—հենց նստում եմ պարապելու, ահա քեզ մեկը յեկել է Մոսկվայի ինչ վոր խմբագրությունից: «Ո՞ւր է բջջի քարտուղարը», հարցնում է նա: «Ի՞նչ կա»—«մեզ հարկավոր է ծանոթանալ ձեր տնտեսության հետ. գնանք ձեզ հետ տնտեսություն»— և գնում եմ»:

Ահա, թե ինչ դժվարություններ են կրում մեր ստո–

րին աշխատողներն իրենց պատրաստման գործում։ Իսկ չէ՞ որ կուսակցական սկզբնական կազմակերպությունների քարտուղարները, այս թվում նաև գյուղականները, իրենք պիտի լինեն պրոպագանդիստներ ու քաղաքականապես կոփված մարդիկ։

Կոլտնտեսական սկզբնական կազմակերպության աճումն ու կոլտնտեսական կարգերի ամրացումը նորանոր պահանջներ են առաջադրում կուսակցական ղեկավարությանը։ Այս պահանջները խնդիր են դնում ամենից առաջ ամրացնել գյուղի կուսակցական սկզբնական կազմակերպությունների ղեկավար կադրերը։

Այստեղ սրա լուծման համար կարող են և պետք է լինեն տարբեր ուղիներ։ Այս ժամանակամիջոցում գյուղում և անմիջականորեն կոլտնտեսություններում աշխատելու համար ուղարկված են մոտ 50 հազ. աշխատող։ Բայց սա բավական չէ։ Մենք դեռ հարկ կզգանք որոշ ժամանակ, կուրս պահպանելով տեղական կոլտնտեսական ակտիվի դաստիարակման ու աճեցման ուղղությամբ, շրջաններից ու քաղաքներից աշխատողներ ուղարկել անմիջականորեն կոլտնտեսությունները։

Անհրաժեշտ է ամրապնդել գյուղական կուսկազմակերպությունների ամենօրյա ու սիստեմատիկ ղեկավարությունը, կոլտնտեսության պրակտիկ կոնկրետ հարցերով ու կուսակցության քաղաքական լոզունգներով դաստիարակելով կոլտնտեսական բոլշևիկներին։ Եթե դիտելու լինենք մեկ քաղբաժնին ու շրջկոմին ընկնող կուսկազմակերպությունների քանակը, ապա կտեսնենք, որ այնքան էլ դժվար չէ թե՛ քաղբաժնին, թե՛ շրջկոմին ստուգելու և ճանաչելու յուրաքանչյուր քարտուղարի և հենց կոլտնտեսական սկզբնական կուսկազմակերպությանն իրեն։ Իսկապես ասած՝ գյուղում կոլտնտեսությունների աշխատանքն անմիջականորեն ամ-

րացնելու համար է հենց, որ ստեղծված են քաղբաժինները։

Ինչ վերաբերում է սկզբնական կուսկազմակերպությանն իրեն, ապա ձեզ պետք է ասեմ, որ նա այժմ դեռևս չի հասել իսկական արտադրական կուսկազմակերպության աշխատանքի մակարդակին։ Մենք հսկայական քայլ ենք արել դեպի առաջ համեմատած այն դրության հետ, ինչ ունեյինք։ Սկզբնական կուսկազմակերպությունների աշխատանքը բարելավվել է, առանձնապես քաղբաժինների ստեղծման հետևանքով։ Բայց այնուամենայնիվ կոլտնտեսական ու խորհտնտեսական կուսկազմակերպության արտադրական այդ նոր ձևի մեջ դեռևս չենք դրել նրանց աշխատանքի իսկական բովանդակությունը։

Բոլորը մատնանշում են, որ քաղբաժինների կազմակերպումը վիթխարի չափով բարձրացրել է գյուղը, բարձրացրել է կոմունիստներին և ամրացրել սկզբնական կուսկազմակերպությունները։

Եթե կուսակցության 16-րդ համագումարում մենք ասում եյինք, որ մեր գյուղական կուսկազմակերպության մեջ չկա ամրապես զոդված, առաջատար բջիջ, ապա այսօր արդեն մենք կարող ենք հայտարարել, որ այդ բջիջը կա, բայց նա դեռևս թույլ է։ Մենք պետք է բարձրացնենք նրան, ամրացնենք, արհեստականորեն չարադացնելով ընդունելությունը, ընտրենք լավագույն մարդկանց, որպեսզի կոլտնտեսություններում մենք ունենանք մեր կոմունիստները, ունենանք կոմյերիտական ու կուսակցական կորիզ։

Ե․

ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ՓՈՐՁԸ ԵՎ ՇՐՋԿՈՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Քաղբաժինները լուրջ դեր խաղացին հատկապես այն պատճառով, որ նրանք անմիջականորեն կապվեցին գյուղի հետ։ Գյուղում կուսակցական կազմակերպություն կերտելը շատ ավելի դժվար դուրս յեկավ, քան քաղաքում։ Եվ ահա, այս կազմակերպությունները կերտելու համար, նրանց ցեմենտավորելու համար, նրանց կոփելու համար կուսակցությունն ընկեր Ստալինի նախաձեռնությամբ գյուղ ուղարկեց ՄՏԿ և խորհտնտեսությունների քաղբաժինների 18 հազար աշխատող, ստուգված ու բոլշևիկորեն կոփված մարդ։ Ընկեր Ստալինն այս կազմակերպության հիմքում դրեց այն նույն սկզբունքները, ինչ Լենինը զարգացրել ե «Ի՞նչ անել» գրքում։ Ընկեր Ստալինը մեկ անգամ չեր ընդգծում, որ յեթե մենք այս չանեյինք, մենք հարկադրված եյինք լինելու տասնյակ տարիներ սպասել, որպեսզի գյուղում այսպիսի մասշտաբի աշխատողներ հասունանային տեղական կադրերից։

Այսօր, քաղբաժինների ավելի քան մի տարվա աշխատանքից հետո մենք կարող ենք ասել, որ նրանք պատվով են կատարել իրենց վրա դրված խնդիրները և արդարացրել են այն վստահությունը, որ նրանց նկատմամբ տածում եր մեր կուսակցությունը։ (Ծափահարություններ)։

Մենք հույս ունենք, որ ՄՏԿ և խորհտնտեսությունների մեր քաղբաժինները 1934 թվին և արդեն այս գարնանը ցույց կտան, որ նրանք ոչ միայն չեն թուլացնի իրենց աշխատանքը, այլև վերջինս կհասցնեն նոր բարձրության։ Կուզեյինք, որ մեր յերկաթուղային քաղբաժիններն ուսումնասիրեյին ՄՏԿ քաղբաժինների աշխատանքի բոլոր յեղանակները, որոնք բառացի կոփվել են մարտի մեջ, պայքարի մեջ, և դրանք գործադրեյին մեր ամենասուր աշխատամասերից մեկում՝ յերկաթուղային տրանսպորտում։

Շատերն են հետաքրքրվում այն հարցով, թե ինչո՞ւմն ե բանը։ Ինչո՞ւ քաղբաժինները կարողացան դնել իրենց աշխատանքը և ինչո՞ւ շրջկոմների մոտ գործն ավելի վատ եր դուրս գալիս։

Նախ՝ պետք ե ասել, որ ի դեմս քաղբաժինների մենք գյուղին տվինք թարմ մարդկանց կադրեր, որոնք այնտեղ գնացին որոշակի մթնոլորտում, որոշակի պայմանների մեջ՝ որոշակի, հստակ ու պարզորոշ խնդիրների համար։ Իսկ շրջկոմների աշխատողներն այնտեղ ապրում եյին մի շարք տարիների ընթացքում և նրանցից շատ շատերը չեյին նկատել գյուղի դասակարգային նոր պրոցեսները, իսկ ոմանք ել յենթարկվել եյին դասակարգայնորեն խորթ ազդեցությունների։

Երկրորդ, ընկերներ, բանն աշխատանքի սիստեմն ե։

Խոսք տանք կուսակցության մի շարք շրջկոմների (Կորսակովո, Գրյազի, Կուրսկ) նախկին քարտուղար ընկ. Գուսեվին, որը դարձել ե Կիրսանովի ՄՏԿ քաղբաժնի պետ։ Ահավասիկ նա ինչ ե ասում.

«Շրջանում իմ աշխատանքի վրա ազդում եր ապարատի գոյությունը—այնտեղ յես ճապաղվում եյի։ Շրջանը, կոլտնտեսությունները, ել չեմ խոսում բրիգադի մասին, յես ճանաչում եյի ընդհանուր գծերով, և այս պատճառով ղեկավարությունն ել թույլ եր։ Եթե հարկավոր եր լինում այս կամ այն բանն անել, յես հանձնում եյի ապարատին, հանձնում եյի շրջգործկոմին, շրջհողբաժնին, իսկ կատարումը ստուգելու ժամանակ չկար։ Շրջանում մենք շատ նիստեր, խորհրդակցություններ եյինք ունենում, և մենք հարցերը, թեև

հրատապ հարցեր, քննում եյինք, բայց նրանք մնում եյին մեր ապարատների ներսում։

Միանգամայն ուրիշ բան ե այստեղ՝ քաղբաժնում։ Հենց վոր ծագում ե այս կամ այն հարցը, կամ յես, կամ ապարատից վորևե մեկն անպայման քննում ենք և ձգտում լուծել այս կամ այն ուղղությամբ։ Այստեղ մեր խորհրդակցությունները, վոր գումարում ենք ամեն շաբաթ, միանգամայն այլ բնույթ են կրում։ Ներքաղբաժնային այս խորհրդակցություններում մենք սովորաբար ամփոփում ենք շաբաթվա ընթացքում կատարած մեր կոնկրետ աշխատանքը, նշում ենք թույլ կողմերը և ուրվագծում նրանց վերացման կոնկրետ միջոցները։ Այս խորհրդակցություններից հետո մենք բոլորս դարձյալ մեկնում ենք տեղերը մեր ընդունած վորոշումներն իրագործելու համար։ Մի շաբթում մենք կարողանում ենք շրջագայել ՄՏԿ շառավիղի ամենաթույլ աշխատամասերը և տեղն ու տեղը միջոցներ ենք ձեռք առնում նրանց վերացման համար, իսկ հետո ստուգում ենք, թե ինչ հետևանքներ են տվել այս միջոցները։ Վո՛չ մի բանաձև, վորոշում, գրավոր ցուցում։ Միայն պահում ենք մեր աշխատանքի որագիրը»։

Ընկ. Գուսևը կատարելապես իրավացի յե։

Յեթե համեմատենք քաղբաժնի պետի ու շրջկոմի քարտուղարի աշխատանքը, ապա կտեսնենք, վոր քաղբաժնի պետը մի յերեք անգամ ավելի շատ ե լինում կոլտնտեսության մեջ, քան շրջկոմի քարտուղարը։ Այս կատարվում ե իհարկե, ամենևին վոչ այն պատճառով, վոր շրջանների աշխատողները չեն ուզում գյուղ գնալ։ Վոչ, նրանք շատ են գնում և պատրաստ են գնալու—յես մեղադրանք չեմ նետում շրջանի աշխատողների հասցեյին—մարդիկ շատ են աշխատում և հաճախ աշխատում են դժվարին պայմաններում։ Բայց բանն այս չե։ Բանը մոտեցումն ե դեպի աշխատանքը, նրա դրվածքն ե։

Շրջկոմականներն ավելի շատ նիստեր են գումարում, ավելի շատ արձանագրություններ են կազմում, դիրեկտիվներ գրում, իսկ կատարման իսկական ստուգում չկա։

Իսկ քաղբաժինների պետերն իրենց աշխատանքը գլխավորապես կատարում են անմիջականորեն կոլտնտեսության մեջ, իրականացնելով այն դիրեկտիվները, վոր տվել ե ընկեր Ստալինը քաղբաժինները կազմակերպելիս։

Մենք զրույց ենք ունեցել շրջկոմների բազմաթիվ քարտուղարների հետ, և նրանք բոլորն ել գանգատվում են, վոր շրջանային ապարատը մեծածավալ ե, վոր հսկայական թիվ են կազմում շրջանային հիմնարկները, վորոնց պարտավոր են նրանք ղեկավարել։ Շրջանում կա մոտ 26 շրջանային կազմակերպություն և մոտ 12 միջշրջանային կազմակերպություն։ Այս մեծածավալ ապարատի ղեկավարումն ահագին ժամանակ ե խլում շրջկոմի աշխատողներից, և այս հանգամանքը նրանց հնարավորություն չի տալիս կոլտնտեսություններում լինելու։

Շրջկոմի, նրա բաժինների աշխատանքի մեթոդների մեջ շատ տեղ ե գրավում գրասենյակայնությունը, գրոտումը և բացակայում ե կատարման գործնական ոպերատիվ ստուգումը։ Յեթե վերցնենք նույնիսկ շրջկոմի բաժինները՝ կազմհրահանգչականն ու կուլտպրոպը, վորոնց աշխատողները պետք ե շրջագայեն գյուղերը, ապա պարզվում ե, վոր նրանք ավելի քիչ են շրջագայել, քան քաղբաժնի պետի ոգնականը։ Ահա, թե ինչու, ընկերներ, այժմ, պահպանելով ու ամրացնելով քաղբաժինները, մենք պետք ե միաժամանակ վերակառուցենք նաև շրջկոմները։ Շրջկոմներն անհրաժեշտ ե դարձնել ավելի աշխույժ, ավելի շարժունակ, ավելի ոպերատիվ։ Հատկապես այս պատճառով ե, վոր մենք դիմում ենք

շրջկոմների բաժինների վերացմանը և առաջարկում՝ բաժինների փոխարեն ունենալ շրջկի պատասխանատու հրահանգիչներ: Այս հրահանգիչները հին տիպի հրահանգիչներ չեն, վորոնք շրջան եյին գալիս, ստուգում կուսակցական կազմակերպության արձանագրությունները և վոչ մի իրավունք չունեյին տեղում ձեռք առնելու անհրաժեշտ միջոցներ: Այժմ սա կլինի մի հրահանգիչ, վորը կունենա կուսակցական տերրիտորիալ կազմակերպությունների վորոշակի խումբ և պատասխանատու կլինի նրանց աշխատանքի համար:

Ինչ վերաբերում է քաղաքային ռայոններին, ապա այստեղ էլ, նույնիսկ այնպիսի քաղաքներում, ինչպես Մոսկվան ու Լենինգրադը, վորտեղ ռայկոմները հավասար են յերբեմն մի ամբողջ քաղաքի և նույնիսկ վորոշ մարզերի, մենք այնուամենայնիվ պայմանավորվել ենք վերացնել նրանց բաժինները, թողնելով միայն կուլտպրոպը: Այստեղ նույնպես մտցվում է հրահանգիչների ինստիտուտ:

Մենք այնպիսի կուրս ենք պահպանում, վոր շատ իրավունքներ ստացած շրջանը հնարավորություն ունենա իրացնելու այդ իրավունքները: Բայց շատերին է հետաքրքրում այն հարցը, թե հետագայում ի՞նչ կկատարվի քաղբաժինների ու շրջկոմների հետ և մատնանշում են վորոշ հակասություն: Իհարկե, ձևական տրամաբանության տեսակետից այստեղ վորոշ հակասություն կա: Նույնիսկ հենց քաղբաժինների ստեղծման մեջ վորոշ հակասություն կա: Քաղբաժինը կուսակցական կազմակերպության սովորական ձև չէ, նա կուսակցական արտադրական տիպի հատուկ կազմակերպություն է վորոշակի խնդիրներով:

Վոմանք տարակուսում եյին. ինչպե՞ս թե, շրջանում աշխատում է քաղբաժին, նրան յենթարկվում են կուսակցական կազմակերպություններ, իսկ նա, ասում

են, շրջկոմին չի յենթարկվում: Բայց յեթե մենք քաղբաժինները յենթարկեյինք շրջկոմներին, վստահեցնում եմ ձեզ, քաղբաժինները չեյին կարող այնպես իրականացնել իրենց խնդիրը, ինչպես նրանք իրականացնում են այժմ:

— Ձայներ: Ճիշտ է:

Կագանովիչ: Քաղբաժիններն իրենց կազմակերպման հենց սկզբից դրվել են աշխատանքի հատուկ պայմանների մեջ: Յերբ Կենտկոմում տեղեկություններ ստացվեցին, վոր մի քանի շրջկոմներ վորոշ անշարժություն են ցուցաբերում և ընդդիմանում են աշխատանքի նոր մեթոդներին, մենք սրա մեջ տեսանք մի փորձ՝ արգելակելու Կենտկոմի վորոշումների կիրառումն այն նոր խնդիրների իրականացման ասպարեզում, վոր դրված են կուսակցության կողմից և ընկեր Ստալինի ճառով գյուղի աշխատանքի վերաբերյալ: Այս տրամադրություններին մենք հարվածեցինք: Այնտեղ, վորտեղ շրջանային կոմիտեների գիծը զուգադիպում էր քաղբաժինների գծին կուսակցության վորոշումներն իրականացնելու վերաբերմամբ,— իսկ բոլշևիկների մոտ սա վերջիվերջո գլխավորն է,— շրջանային կոմիտեներն ու քաղբաժինները սկսեցին համերաշխ աշխատանք կատարել: Յեվ այսօր մենք կարող ենք ասել, վոր քաղբաժինների ու շրջանային կոմիտեների միջև, չնայած քաղբաժինը յենթարկված չէ շրջանային կոմիտեյին, մեծագույն մասամբ սահմանվել են համերաշխ գործնական հարաբերություններ:

Իսկ ինչպե՞ս անել այսուհետև:

Արդյոք այսօր մենք փոփոխո՞ւմ ենք այն հարաբերությունները, վոր դասավորվել են այս տարվա ընթացքում: Վոչ, ընկերներ, չենք փոփոխում: Մենք նրանց թողնում ենք այն համերաշխ աշխատանքի հաջության մեջ, վոր նրանք կատարել են մինչև այժմ: Քաղբաժինը կուսակցական կազմակերպության սովորական ձևը չէ:

Ինչպես դուք նկատել եք, կուսակցության կանոնադրության մեջ քաղբաժինները չեն մտցված թվարկվող մշտապես գործող կազմակերպությունների շարքը: Կուսակցության կենտրոնական օրգաններին վերաբերող բաժնում մենք Կենտկոմի համար իրավունք ենք սահմանել քաղբաժիններ ստեղծելու ըստ կարիքի: Այս նշանակում է, վոր մենք չենք կանխորոշում, թե վորտեղ, ինչ վայրում պետք է ստեղծվեն քաղբաժիններ, վորտեղ, ինչ պայմանների բերումով նրանք պետք է առաջանան կամ վերացվեն մեր սոցիալիստական շինարարության վորոշակի աշխատամասերում:

Քաղբաժիններն իրենց արդարացրել են, և այժմ հարց դնել քաղբաժինների վերացման մասին— այս վնասակար բան է: Տեսեք, թե քաղբաժիններն ինչ հեղինակություն ունեն գյուղացիության մեջ: Արհեստականորեն այսպիսի հեղինակություն չի ստեղծվի: Այս հեղինակությունը վաստակել ենք գործնական աշխատանքով: Քաղբաժինների աշխատանքի հեռանկարների հարցը մենք ավելի լայն կերպով ենք դնում: Մեզ մոտ գյուղում կազմվում են տնտեսական ու քաղաքական նոր կենտրոններ՝ ՄՏԿ և խորհտնտեսությունը: Հին շրջանային կենտրոնները ստեղծված էին միանգամայն այլ հատկանիշով. առևտրական գյուղ է— վարչական կենտրոն: Այժմ ՄՏԿ-ների, խորհտնտեսությունների նոր ձեռնարկությունների ստեղծման հետևանքով ստեղծվում են ձգողության նոր կենտրոններ, վորոնց շուրջը խմբվում են կոլտնտեսությունները:

Հնարավոր է զարգացման յերկու ուղի. կամ քաղբաժինն այնտեղ, վորտեղ ՄՏԿ ընդգրկած տերիտորիան նպատակահարմար է առանձնացնել իբրև ինքնուրույն կենտրոն, կարող է դառնալ շրջկոմ, կամ քաղբաժինը կարող է դառնալ յենթաշրջկոմ: Այն հարցը, թե ով կլինի «յենթա» և ով «վերա», բոլշևիկների համար յերկրորդական հարց է: Բանն աշխատանքի էությունն է:

Ընկ. Շերբոլդայեվն այստեղ ասաց, վոր հազիվ թե նպատակահարմար լինի քաղբաժինները վերածել շրջկոմների: Կարծում եմ, վոր չպետք է գուշակել և չպետք է սխեմատիկ դեղատոմսեր տալ կազմակերպական հարցում: Պետք է կոնկրետ կերպով, յուրաքանչյուր շրջանի, յուրաքանչյուր քաղբաժնի վերաբերմամբ լուծել հարցը: Կենտրոնական Կոմիտեն հենց այսպես էլ լուծելու յե հարցը:

Այսօր, ընկերներ, քաղբաժինները մենք թողնում ենք այն ձևով, ինչպես նրանք գոյություն են ունեցել: Նրանք յեռանդուն կերպով պետք է շարունակեն իրենց աշխատանքը: Քաղբաժինների շուրջը չի կարելի ստեղծել վերացման մթնոլորտ: Այսօր բանն այն է, վոր մեր խնդիրները գյուղում դեռևս լուծված չեն, վոր մենք դեռ լուրջ աշխատանք պետք է կատարենք ամրացնելու կոլտնտեսությունները, նրանց դարձնելու իսկական բոլշևիկյան կոլտնտեսություններ: Պետք է յուրացնել նվաճված հաղթանակները: Կա գլխապտույտի, հաղթանակներով տարվելու վտանգ, այս գարունն աչքաթող անելու, տրակտորների նորոգումը ձեռքից բաց թողնելու վտանգ: Սա վոճրագործություն կլինի:

Մենք քաղբաժիններն ու շրջկոմները թողնում ենք համերաշխ աշխատանքի կացության մեջ, ինչպես վոր նրանք աշխատել են մինչև այժմ: Իհարկե, համերաշխ աշխատանքի հաջողությունը չի կարելի ըմբռնել իբրև բարոյական կատեգորիա: Մենք սա հասկանում ենք կազմակերպորեն ու քաղաքականապես, ինչպես վոր դասավորվել է այսօր Կենտկոմի դիրեկտիվների հիման վրա, այն պայքարի հիման վրա, վոր մղվել է գյուղատնտեսության սոցիալիստական ձևերի հաղթության համար, և մենք համոզված ենք, վոր քաղբաժիններն

առաջիկայում և շրջկոմների հետ միասին հաջողությամբ կամրացնեն կոլտնտեսական կարգերը գյուղում։ (Ծափահարություններ)։

Հ.

ՄԱՐԶԿՈՄՆԵՐԻ, ՅԵՐԿՐԿՈՄՆԵՐԻ ՈՒ ԿԵՆՏԿՈՄՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ՃՅՈՒՂԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր կազմակերպական միջոցառումները կուսակցական ղեկավարության բնագավառում ավարտված չեյին լինի, յեթե մենք սահմանափակվեյինք միայն կուսակցական սկզբնական կազմակերպություններով ու շրջկոմներով։ Բոլոր կուսկազմակերպությունների աշխատանքը նշանակելի չափով կախված է մարզկոմների, յերկրկոմների, նրանց ապարատների աշխատանքից։

Դուք բոլորդ հիշում եք, թե ինչպես ԿԿ և ԿՎՀ հունվարյան պլենումում (1933 թ.) ընկեր Ստալինն ըստ արժանույն խիստ քննադատության յենթարկեց մի քանի մարզկոմների, յերկրկոմների ու ազգային կոմկուսակցությունների կենտկոմների աշխատանքը։

Գավառները վերացվեցին նրա համար, վոր մարզերն ու յերկրները մոտեցվեն շրջաններին։ Իրականում, իբրև հետևանք այն բանի, վոր գավառների վերացման հսկայական ռեֆորմից բոլոր անհրաժեշտ կազմակերպական յեզրակացությունները չարին վոչ միայն այնպիսի հանրապետություններ, ինչպես Ուկրայինան ու Կազակստանը, իրենց հսկայական տերիտորիայով ու մեծաքանակ շրջաններով, այլև շատ ուրիշները, մարզերն ու յերկրները հեռացան շրջաններից։

Մարզային մարմինները վատ եյին ուսումնասիրում շրջանները, չեյին ճանաչում շրջանային աշխատողներին, չգիտեյին, թե ինչ է արվում շրջաններում։ Իսկ չէ՞ վոր մեր ժամանակ, յերբ շրջանին տալիս են հացամթերումների պլան, ցանքի պլան, յեթե չգիտես, թե նա վորքան վարելահող ունի, ինչ ցանքաշրջանառություն, ինչքան քաշող ուժ ունի, ինչքան սերմացու և ինչով պետք է կոնկրետ կերպով օգնել շրջանին,—քո պլանը վոչ միայն դառնում է մի պարապ թուղթ, այլև հաճախ դառնում է առաջխաղացման արգելակ, կազմալուծում է աշխատանքը։ Հենց այսպես էլ լինում եր, յերբ օրինակ մի շրջանին տալիս եյին հացամթերումների չափազանցեցրած պլան, իսկ մյուս շրջանին՝ նվազեցրած։ Դրա հետևանքով վորոշ շրջաններ ընկնում եյին դժվարին դրության մեջ, իսկ մյուսները՝ արտոնյալ։ Սա մի ավելորդ ապացույց է այն բանի, թե ինչպես քաղաքականությունը կապված է կազմակերպական հարցերի ճիշտ լուծման հետ։

Ընկեր Ստալինը ԿԿ և ԿՎՀ հունվարյան պլենումում կտրուկ կերպով հայտաբերեց գյուղի մեր աշխատանքի քաղաքական ու կազմակերպական թերությունները։ Նրանց դեմ պայքարելը, նրանց չակելու վրա աշխատանքը՝ առաջին հերթին մարզկոմների, յերկրկոմների ու ազգային կոմկուսակցությունների կենտկոմների ու քաղբաժինների կողմից, վճռական չափով վորոշեցին այս տարվա հաջողությունը։ Այժմ աշխատանքը բարելավվել է, մարզիկ համախմբվել են դժվարությունները հաղթահարելու պայքարում, ավելի լավ են ուսումնասիրել շրջանը, բայց դեռևս վոչ բավականաչափ։

Շրջանների ղեկավարման թերությունների մեջ շատ բանում պատճառ է հանդիսանում մարզկոմների, յերկրկոմների, ազգային կոմկուսակցությունների կենտկոմների կուսակցական ապարատների սխալ, ֆունկցիոնալ կառուցվածքը։ Ընկեր յերկրկոմականներ, իսկապես ասած, յեթե հարցը դնենք ուղղակի և կտրուկ կերպով,

ապա մենք պիտի ասենք, որ Մեր մարզկոմների, յերկրկոմների բաժինները վերջին յերկու-յերեք տարում վատ են աշխատում: Նրանք դուրս են յեկել իրենց հունից, որովհետև կյանքն առաջ է անցել ապարատի ֆունկցիոնալ կառուցվածքից:

Մարզկոմների, յերկրկոմների, ազգային կոմկուսակցությունների կենտկոմների ապարատի ու Կենտկոմի ապարատի «ֆունկցիոնալությունը» խանգարում եր աշխատանքին: «Ֆունկցիոնալությունը» խանգարում եր ընդգրկելու կյանքի հիմնական հարցերը, և Կենտրոնական Կոմիտեն իր բաժիններից հաճախ ավելի պակաս նյութ եր ստանում, քան մյուս կազմակերպություններից:

Մարզկոմների, յերկրկոմների ու ազգային կոմկուսակցությունների կենտկոմների և իր իսկ Կենտկոմի բաժինների ապարատի վերակառուցումը մենք չենք դնում իբրև տեխնիկական խնդիր: Մենք ստեղծում ենք ամբողջական արտադրական բաժիններ: Այս նշանակում է, որ ագիտացիոն-մասսայական բաժնի փոխարեն, որ համապարփակ կերպով ընդգրկում եր արդյունաբերության, տրանսպորտի, գյուղի և այլ բոլոր հարցերի ու բոլոր ճյուղերի ագիտացիան, մասսայական աշխատանքը, ֆունկցիոնալ կազմ-հրահանգչական բաժնի փոխարեն, որը նույնպես աշխատում եր բոլոր ճյուղերում, ստեղծվում են արտադրական-ճյուղային բաժիններ: Մեզ հարկավոր են ամբողջական բաժիններ, որոնք վարեն կուսակցական աշխատանքը, կուսակցական սկզբնական կազմակերպությունները, մասսայական ագիտացիան, կադրերի ընտրությունը, մարդկանց բաշխումը, այս մարդկանց ուսումնասիրությունը, արհեստակցական աշխատանքը և այլն:

Մարզկոմներում ու յերկրկոմներում կլինեն հետևյալ բաժինները. գյուղատնտեսական, արդյունաբերական-տրանսպորտային, խորհրդային-առևտրական, կուլտուրայի ու լենինիզմի պրոպագանդի, ղեկավար կուսօրգանների (քաղաքային ու շրջանային) և հատուկ սեկտոր:

Կենտրոնական Կոմիտեյում տրանսպորտային ու առևտրական բաժինները գոյություն կունենան առանձին:

Ի՞նչ աշխատանք պիտի կատարեն այս բաժինները:

Գյուղատնտեսական բաժինը արդեն ունի գյուղատնտեսության գծով կուսապարատի ամբողջ աշխատանքը վարելու փորձը: Նրա աշխատանքի ասպարեզի մեջ կմանեն կոլտնտեսությունները, ՄՏԿ-ները, խորհտնտեսությունները, մթերող մարմինները, գյուղատնտեսական բոլոր գիտահետազոտական ու կրթական հիմնարկները, գյուղատնտեսական մամուլը և գյուղի կուսակցական ու խորհրդային աշխատանքի մնացած բոլոր հարցերը: Այս բաժինը հսկում է գյուղի կուսակցական սկզբնական կազմակերպություններին և ղեկավարում նրանց աշխատանքը: Նա յե ընտրում կադրերը, վարում մարդկանց բաշխումը:

Նույն ֆունկցիաները կունենան նաև մյուս բաժիններն իրենց ճյուղերում:

Արդյունաբերական բաժինը կընդգրկի ծանր, թեթև, անտառային ու սննդի արդյունաբերությունը, կոմունալ տնտեսության, տեղական արդյունաբերության և տնայնագործական կոոպերացիայի աշխատանքը:

Տրանսպորտային բաժինը կընդգրկի յերկաթուղիների, ջրային տրանսպորտի, քաղաքացիական ավիացիայի, ավտոսայլային տրանսպորտի աշխատանքը: Նրա նշանակությունն առանձնապես աճում է այն մարտական խնդիրների կապակցությամբ, վորոնց նպատակն է բեկում առաջացնել տրանսպորտում, տրանսպորտը

հասցնել նոր բարձրության՝ յերկրորդ հնգամյակի պահանջների համապատասխան:

Պլան-ֆինանս-առևտրական բաժինը կընդգրկի պլանային, ֆինանսական ու առևտրական մարմինների, այս թվում նաև արտաքին առևտրի մարմինների աշխատանքը:

Քաղաքական-վարչական բաժինը կընդգրկի հասարակական մարմինների (յերկրային ու մարզային գործկոմներ, շրջգործկոմներ, քաղխորհուրդներ), կարմիր բանակի (ՕԳՎ հետ միասին), դատախազության և այլ աշխատանքները:

Կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի բաժին: Այս բաժինը, բացի իր սովորական ֆունկցիաներից, պետք է շատ ավելի մեծ չափով հսկի Լուսժողկոմատի ու Առժողկոմատի հիմնարկների, կադրեր պատրաստող բոլոր կուլտուրական ու գիտական կազմակերպությունների ամբողջ գործունեության: Լենինիզմի պրոպագանդի գծով նա պետք է ղեկավարի ամբողջ կուսակցության, իսկ կուլտուրական հիմնարկների կուսակցական սկզբնական կազմակերպություններում վարի կուսակցական-կազմակերպական ամբողջ աշխատանքը:

Ղեկավար կուսօրգանների բաժինը հսկելու յե ղեկավար կուսօրգանների՝ մարզկոմների, յերկրկոմների, ազգային կոմկուսակցությունների կենտկոմների ամբողջ աշխատանքին: Բայց այս բաժինը ժամանակ առ ժամանակ պետք է թափանցի շրջկոմների աշխատանքի մեջ: Մարզկոմներում այս բաժիններն իրենց աշխատանքը գլխավորապես պետք է կենտրոնացնեն քաղաքային ու գյուղական շրջանների վրա և շրջկոմի աշխատանքը ստուգելու համար ժամանակ առ ժամանակ թափանցեն կուսակցական այս կամ այն սկզբնական կազ-

մակերպության մեջ: Այս բաժինը նմանապես զբաղվելու յե կուսակցական կադրերի հարցով:

Այժմ աճում է մեծ ակտիվ, բայց հաճախ դժվարություն ենք կրում, յերբ աշխատող ենք ջոկում ղեկավար կուսաշխատանքի համար: Ժամանակն է վերջ դնելու այս դրությանը. յերբ հարկավոր է լինում այս կամ այն վորակի աշխատող,—ստիպված ենք լինում հապճեպ վորոնում կատարելու: Պետք է ունենալ աշխատողների մշտական ռեզերվ, վորոնք ուսումնասիրված լինեն վոչ թե ըստ անկետաների, այլ ըստ կենդանի աշխատանքի: Աշխատողին ճանաչելու համար պետք է նրան կանչել, մեկ-յերկու անգամ անձամբ խոսել, այս ու այն կողմից ստուգել, ստուգել ըստ գործերի, ըստ նյութերի: Սա շատ բարդ գործ է:

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյում ստեղծել ղեկավար կուսօրգանների բաժին նշանակում է Կենտկոմի կողմից ուժեղացնել մարզկոմների ու յերկրկոմների աշխատանքի վերահսկողությունն ու ստուգումը: Նույն բանը կարելի յե ասել մարզկոմների կողմից շրջկոմների աշխատանքը ստուգելու մասին: Կատարման ստուգումն անհրաժեշտ է տարածել բոլոր հանգուցային հարցերի վրա, միայն թե առանց հանգույցներր «կապելու» և «արձակելու» (ծիծաղ), այլ ոպերատիվ ստուգումը դնել ամենորյա ընթացիկ աշխատանքի կարգով:

Յուրաքանչյուր արտադրական բաժին ժողկոմատներում իր գծով վարելու յե կատարման ստուգումը: Սակայն կուսակցությունն ու նրա Կենտրոնական Կոմիտեն պետք է ունենան վերահսկողության հեղինակավոր մարմին, ինչպես իր զեկուցման մեջ ասաց ընկեր Ստալինը, մի լուրջ մարմին, վորը պետք է ստուգի ու վերահսկողություն սահմանի թե՛ տեղերի, թե՛ ժողկոմատների, թե՛ արհմիությունների և թե՛ մյուս բոլոր մարմին-

հասցնել նոր բարձրության՝ յերկրորդ հնգամյակի պահանջների համապատասխան:

Պլան-ֆինանս-առևտրական բաժինը կընդգրկի պլանային, ֆինանսական ու առևտրական մարմինների, այս թվում նաև արտաքին առևտրի մարմինների աշխատանքը:

Քաղաքական-վարչական բաժինը կընդգրկի հասարակական մարմինների (յերկրային ու մարզային գործկոմներ, շրջգործկոմներ, քաղխորհուրդներ), կարմիր բանակի (ԲԲՎ հետ միասին), դատախազության և այլ աշխատանքները:

Կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի բաժին: Այս բաժինը, բացի իր սովորական ֆունկցիաներից, պետք է շատ ավելի մեծ չափով հսկի Լուսժողկոմատի ու Առժողկոմատի հիմնարկների, կադրեր պատրաստող բոլոր կուլտուրական ու գիտական կազմակերպությունների ամբողջ գործունեյության: Լենինիզմի պրոպագանդի գծով նա պետք է ապասարկի ամբողջ կուսակցությանը, իսկ կուլտուրական հիմնարկների կուսակցական սկզբնական կազմակերպություններում վարի կուսակցական-կազմակերպական ամբողջ աշխատանքը:

Ղեկավար կուսօրգանների բաժինը հսկելու յե ղեկավար կուսօրգանների՝ մարզկոմների, յերկրկոմների, ազգային կոմկուսակցությունների կենտկոմների ամբողջ աշխատանքին: Բայց այս բաժինը ժամանակ առ ժամանակ պետք է թափանցի շրջկոմների աշխատանքի մեջ: Մարզկոմներում այս բաժիններն իրենց աշխատանքը գլխավորապես պետք է կենտրոնացնեն քաղաքային ու գյուղական շրջանների վրա և շրջկոմի աշխատանքը ստուգելու համար ժամանակ առ ժամանակ թափանցեն կուսակցական այս կամ այն սկզբնական կազ-

մակերպության մեջ: Այս բաժինը նմանապես զբաղվելու յե կուսակցական կադրերի հարցով:

Այժմ աճում է մեծ ակտիվ, բայց հաճախ դժվարություն ենք կրում, յերբ աշխատող ենք ջոկում ղեկավար կուսաշխատանքի համար: Ժամանակն է վերջ դնելու այս դրությանը. յերբ հարկավոր է լինում այս կամ այն վորակի աշխատող,—ստիպված ենք լինում հապճեպ վորոնում կատարելու: Պետք է ունենալ աշխատողների մշտական ռեզերվ, վորոնք ուսումնասիրված լինեն վոչ թե ըստ անկետաների, այլ ըստ կենդանի աշխատանքի: Աշխատողին ճանաչելու համար պետք է նրան կանչել, մեկ-յերկու անգամ անձամբ խոսել, այս ու այն կողմից ստուգել, ստուգել ըստ գործերի, ըստ նյութերի: Սա շատ բարդ գործ է:

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյում ստեղծել ղեկավար կուսօրգանների բաժին նշանակում է Կենտկոմի կողմից ուժեղացնել մարզկոմների ու յերկրկոմների աշխատանքի վերահսկողությունն ու ստուգումը: Նույն բանը կարելի յե ասել մարզկոմների կողմից շրջկոմների աշխատանքը ստուգելու մասին: Կատարման ստուգումն անհրաժեշտ է տարածել բոլոր հանգուցային հարցերի վրա, միայն թե առանց հանգույցները «կապելու» և «արձակելու» (ծիծաղ), այլ ոպերատիվ ստուգումը դնել ամենօրյա ընթացիկ աշխատանքի կարգով:

Յուրաքանչյուր արտադրական բաժին ժողկոմատներում իր գծով վարելու յե կատարման ստուգումը: Սակայն կուսակցությունն ու նրա Կենտրոնական Կոմիտեն պետք է ունենան վերահսկողության հեղինակավոր մարմին, ինչպես իր զեկուցման մեջ ասաց ընկեր Ստալինը, մի լուրջ մարմին, վորը պետք է ստուգի ու վերահսկողություն սահմանի թե՛ տեղերի, թե՛ ժողկոմատների, թե՛ արհմիությունների և թե՛ մյուս բոլոր մարմին-

ների նկատմամբ, վորոնց այսպես, թե այնպես հասցեագրված ե կուսակցության Կենտրոնական Կոմիտեի դիրեկտիվը։

8.

ԼԵՆԻՆՅԱՆ ԳԻԾԸ, ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՊԵՐԱՏԻՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵՑԻՆ ՅԵՎ ԿԱՊԱՀՈՎԵՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Կենտկոմի թեզիսները պահանջում են կատարման ոպերատիվ ստուգում։ Նրանք պահանջում են, վոր ստուգումը կատարվի անմիջականորեն ղեկավար աշխատողների միջոցով, քանի վոր սա ղեկավարի հիմնական աշխատանքն ե։

Կատարման ստուգումը պետք ե լինի սիստեմատիկ ու ամենորյա, և վոչ թե եպիզոդիկ, դեպքից դեպք։ Բոլորի համար ել պարզ ե, վոր վերահսկողությունը թողնել այն կացության մեջ, վորի մեջ նա յեղել ե մինչև այժմ, չի կարելի, վորովհետև ոպերատիվ ղեկավարությունը գերաճել ե նրան։ Վերահսկողությունը պետք ե բարձրացնել և ձգել ու հասցնել մինչև ոպերատիվ ղեկավարություն, այլապես մենք կստանանք ղեկավարության ու կատարման ստուգման խզում։ Իսկական կոնկրետ ու ոպերատիվ ղեկավարությունն իրականացնելու համար ե, վոր ԿՎՀ—ԲԳՏ և Կատարման հանձնաժողովի փոխարեն ստեղծվում են կուսակցական ու խորհրդային վերահսկողության հանձնաժողովներ։

Թեզիսներով ու կանոնադրության նախագծով նախատեսված ե, վոր Խորհրդային վերահսկողության հանձնաժողովն ընտրվում ե կուսակցության համագումարում։ Մենք առաջարկում ենք թեզերի ու կանոնադրության մեջ մտցնել հետևյալ փոփոխությունները. Խորհրդային վերահսկողության հանձնաժողովի անդամներ մատնանշում ե համագումարը և հաստատում են ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ։

Ինչպե՞ս ենք մենք պատկերացնում կուսակցական ու խորհրդային վերահսկողության աշխատանքը։ Հասկանալի յե, վոր հարկ կլինի լրջորեն ու մանրամասն մշակել հանձնաժողովների կանոնադրությունը վորոշումների կատարման կուսակցական ու խորհրդային վերահսկողության խնդիրների ու պահանջների համապատասխան։ Գործը կարելի յե պատկերացնել այսպես. հանձնաժողովներն ընտրվում են համագումարում, իսկ տեղերում նրանք չեն ընտրվում։ Հանձնաժողովի՝ համագումարում ընտրված անդամներն իբրև կենտրոնի լիազորներ ուղարկվում են հանրապետությունները, յերկրներն ու մարզերը։ Ներկուսակցական դեմոկրատիայի տեսակետից պարզ ե, վոր Համամիութենական կոմունիստական կուսակցության համագումարի ընտրությունները վերածածկում են (перекрывают *) տեղերում կատարված ընտրությունները։*

Տեղերն ուղարկված հանձնաժողովի անդամները նախ՝ պետք ե վերահսկեն կուսակցության ու Կենտկոմի վորոշումների կատարումը, յերկրորդ՝ պատասխանատվության յենթարկեն կուսակցական կարգապահությունն ու կուսակցական եթիկան խախտողներին։ Հանձնաժողովի անդամները պետք ե յենթարկվեն միայն կենտրոնին։ Հանձնաժողովի լիազորները պարտավոր են Կենտրոնական Կոմիտեյին հաղորդելու բոլոր գործերի, բոլոր թերությունների ու Կենտկոմի վորոշումների խախտումների մասին, վորոնք տեղի կունենան հանրապետություններում, յերկրներում ու մարզերում։ Դուք տեսնում եք, ընկերներ, վոր գործը վերաբերում ե վե-

րահսկողության վոչ թե թուլացմանը, այլ ուժեղացմանը։

Լյուբչենկո։ Նկատելի յե։

Կագանովիչ։ Կուսակցական վերահսկողության հանձնաժողովի կենտրոնում ունենալու յենք մի խումբ մարդիկ, վորոնք սիստեմատիկ պիտի վերահսկեն, թե կենտրոնական կազմակերպություններն ինչպես են կատարում Կենտկոմի վորոշումները։ Յեթե վորոշումը հանված ե, բարեհաճեցեք ամեն օր վերահսկելու և Կենտկոմին զեկուցելու։

Խորհրդային վերահսկողության գծով կենտրոնում նմանապես կլինի աշխատողների մի խմբակ։ Այս հանձնաժողովի մնացած անդամներն իբրև լիազորներ կգնան տեղերը։ Մարզը, յերկիրն ու հանրապետությունը, կարելի յե ձեզ «մխիթարել», Վերահսկիչ հանձնաժողովի մեկ նախագահի փոխարեն կունենան յերկու լիազոր։ (Ծիծաղ)։ Բանն իհարկե, քանակը չե։ Բանը վերահսկողության ոպերատիվ դրվածքի եյությունն ե։

Կանոնավոր հիմքերի վրա դրված կուսակցական ու խորհրդային վերահսկողությունը կարող ե հանգել այն բանին, վոր մենք կարիք կզգանք դիմելու շատ ավելի քիչ ուժերի, քան վատ վերահսկողության ժամանակ։ (Ծափահարություններ)։

Ստալին։ Վերահսկողությունը կանխում ե։

Կագանովիչ։ Իհարկե, լավ վերահսկողությունը, ինչպես ճիշտ ասաց ընկեր Ստալինը, կանխում ե կուսակցության ու խորհրդային կառավարության վորոշումների խախտումները։

Հենց միայն այն, վոր բոլորն էլ պիտի իմանան, վոր սա պատահական արշավ չե, այլ սիստեմատիկ վերահսկողություն, իսկական վերահսկողություն և վոչ թե բառ «ընդհանուր առմամբ ու ամբողջովին» պրոբլեմի, այլ ԿԿ և ԺԿԽ կոնկրետ վորոշումների համաձայն, հենց

միմիայն սա արդեն կստիպի ավելի արագ կատարելու վորոշումները։ Բերեմ մի օրինակ։ Անցյալ տարի, յերբ պահեստի մասերի արտադրության գործը վատ դրության մեջ եր, Կենտրոնական Կոմիտեն կատարման ստուգման կարգով միջամտեց, առաջարկեց դադարեցնել գերատեսչական մենամարտությունները և ճշգրիտ ժամկետներին կատարել պահեստի մասերի պատվերը։ Բոլոր ուժերի ոպերատիվ մոբիլիզացիայի հետևանքով արդյունաբերությունը լարեց իր ուժերը, գործին ձեռնամուխ յեղավ ինչպես հարկն ե, պետականորեն և պատվերը կատարեց։

Կուսակցական ու խորհրդային վերահսկողության հանձնաժողովներին, թերևս և վոչ միայն նրանց, հարկ կլինի անցնել կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի լուրջ կուրսը։ Ուսումնասիրելով Կենտկոմի աշխատանքը, նրա ոպերատիվությունն ու նրա՝ կատարման ստուգումը, կարելի յե սովորել, թե ինչպես պետք ե ունել ոպերատիվ ղեկավարությունն ու վերահսկողությունը։ Կենտկոմի կարևորագույն վորոշումները, մի շարք ճյուղերի վերաբերող, վորոնք հրապարակված են մամուլում և չեն հրապարակված, մեծ մասամբ ընդունված են կատարման ոպերատիվ ստուգման կարգով։

Իբրև օրինակ հիշատակեմ Կենտկոմի հայտնի վորոշումը Դոնբասի մասին։ Դուք գիտեք, վոր շատ վորոշումներ են ընդունվել ածխի վերաբերյալ։ Կատարման ստուգման կարգով, և վոչ թե պարզապես ձևական, այլ վերևից ներքև ստուգման կարգով հարց դրվեց Դոնբասի աշխատանքի մասին։ Մի՞թե Դոնբասի հանքահորերից թե՛ պրոֆեսիոնալիստների և թե՛ ստորին տնտեսավարների հրավիրումը կուսակցության Կենտրոնական Կոմիտե ստուգում չի հանդիսանում։ Այս ստուգման կարգով ծնվեց պատմական այն վորոշումը, վոր մեծագույն դեր

և խաղացել ու խաղում ե մեր ամբողջ սոցիալիստական ու արդյունաբերական շինարարության մեջ։

Այս վորոշումն ունի իր պատմությունը։ Կարելի եր մանրամասն պատմել, թե ինչպես ընտրված առաջին հանձնաժողովը Դոնբասի վերաբերյալ բերեց սովորական տիպի մի բանաձև։ Յերկրորդ. հանձնաժողովը նույնպես բերեց մի նախագիծ, վորը չեր համապատասխանում այսօրվա խնդիրներին,— ընդհանուր բանաձև, վոր կրկնում ե այն, ինչ մենք բազմիցս գրել ենք։ Յեվ միմիայն հիմնական, խորը ստուգումից հետո, փաստերն ուսումնասիրելուց, նրանց այնպիսի ընդհանրացումից հետո, վորին ընդունակ ե միայն ընկեր Ստալինը, մենք ստացանք այն բանաձևը, վոր այսօր հիմք ե հանդիսանում մեր ամբողջ կազմակերպական վերակառուցման համար։ (Ծափահարություններ)։

Բայց այս քիչ ե։ Հիշատակված վորոշումից հետո կուսակցության Կենտրոնական Կոմիտեն կազմակերպել ե մի շարք ստուգումներ։ Ստուգումը շարունակվում ե նաև այժմ։ Թվում եր, թե դոնբասցիները չեն կարող դուրս գալ ճեղքվածքից, բայց մենք տեսնում ենք, վոր նրանք դուրս յեկան, բարձրացան և լավացրին աշխատանքը։

Արդյունաբերության մնացած բոլոր բնագավառներում, այդ ճյուղերում աշխատող ընկերները գիտեն Կենտկոմի աշխատանքի պրակտիկան, թե ինչպես ե նա ստուգում իր վորոշումների կատարումը։ Ինչի էլ վոր գործը վերաբերի՝ Տագիլի վագոնաշինական գործարանին, թե Կրիվոյ Ռոգի ավազանի աշխատանքին, թե ազոտական արդյունաբերությանը, նավթին,— Կենտրոնական Կոմիտեն սիստեմատիկ ստուգում եր իր վորոշումների կատարումը։ Յեթե դուք հիշում եք, Փետրվարին 1931 թ. Ստալինգրադի տրակտորային գործարանի վերաբերյալ ստուգման կարգով հաշվետվություններ եր լսում ամեն հինգ օրը մեկ անգամ։

Մոսկվացիք ու լենինգրադցիք լավ են հիշում Մոսկվային ու Լենինգրադին միս մատակարարելու պատմությունը։ Մոսկվային, Լենինգրադին ու Դոնբասին միս մատակարարելու գործի ընդհատումների կապակցությամբ ընկեր Ստալինը հարցը դրեց իր ամբողջ սրությամբ։ Ստուգվեցին մեր բոլոր ռեսուրսներն ու հնարավորությունները, ստուգվեցին կոնտինգենտները։ Փոխանակ հավասարաբաշխման— բոլորին և վոչ վոքի— առանձնացվեցին բանվորների համար հատուկ կոնտինգենտներ։ Իբրև հետևանք գործադրված միջոցների, խորհտնտեսությունների ամրացման, մատակարարումից մեռած հոգիներին հանելու և հատուկ կոնտինգենտներ սահմանելու՝ Մոսկվայի, Լենինգրադի ու Դոնբասի աշխատավորները սահմանված նորմաներով անընդմեջ մատակարարվում են մսով։

Կամ վերցնենք Կենտկոմի աշխատանքը լայն սպառման ապրանքների գծով։ Յերբ Կենտրոնական Կոմիտեն սկսեց տեղեկություններ ստանալ, թե լայն սպառման ապրանքները գյուղ չեն հասնում, առանձնացվեց մի հանձնաժողով, վորն ընկեր Ստալինի նախագահությամբ կոնկրետ ու մանրազնին քննեց շուկայական ֆոնդերի մի նշանակելի բաժինն ուտող արտաշուկայական սպառողների բոլոր կոմբինացիաները։ Անհրաժեշտ եր հաղթահարել արտաշուկայական սպառողների դիմադրությունը, իսկ դուք գիտեք, վոր այս արտաշուկայական սպառողները բավականաչափ շատ են։ Անհրաժեշտ եր կտրել նրանց ստացած ավելի ապրանքը և ուղղել դեպի գյուղ ու բանվորական շրջանները։ Վորոշումներն ընդունելուց հետո Կենտկոմը բազմիցս ստուգում եր նրանց կատարումը։ Լայն սպառման ապրանքների հարցերը 1932 թ. սեպտեմբերյան պլենումում դրվեցին

հաշվետվության կարգով, և վերջապես ամենավերջին ժամանակներս Կենտկոմը կրկին ստուգեց բրդե գործվածքների վերաբերյալ վորոշումների կատարումը։

Արդեն մի քանի տարի յե, ինչ Քաղբյուրոն ընդհուպ զբաղվում է յերկաթուղային տրանսպորտով։ Բավական է հիշեցնել 1931 թ. հունվարին տեղի ունեցած խորհրդակցությունների մասին։ 1931 թ. հունիսին Կենտկոմի պլենումում քննվում եյին տրանսպորտի հարցերը։ 1931 թ. այս խորհրդակցություններում կային մեքենավարներ, դիրեկտորներ, շրջանների պետեր, ծառայության պետեր։ Կենտկոմը թափանցում եր տրանսպորտի բոլոր արմատական հարցերի մեջ։

Կենտրոնական Կոմիտեյի վերջին վորոշումը, վոր վերաբերում եր տրանսպորտին, մշակվում եր յուրաքանչյուր մանրիկի կոնկրետ ուսումնասիրության կարգով։ Նորերս ստեղծված է ԿԿ և Ժողկոմխորհի մի հատուկ հանձնաժողով տրանսպորտի վերաբերյալ, վորը պետք է օգնի տրանսպորտայիններին բարելավելու յերկաթուղիների աշխատանքը։

Հաղորդակցության ճանապարհների Ժողկոմատի վերաբերյալ այն արդարացի քննադատությունից հետո, վոր տեղի ունեցավ համագումարում, այս հանձնաժողովը, հավանաբար, իր աշխատանքը կծավալի ավելի հիմնավոր կերպով։ Նա օպերատիվ կերպով կվերահսկի, կստուգի ու կօգնի իրագործելու Կենտկոմի վորոշումը տրանսպորտի վերաբերյալ։

Տեղերում աշխատող ընկերները լավ գիտեն Կենտկոմի և անձամբ ընկեր Ստալինի օպերատիվ աշխատանքը գյուղատնտեսության գծով։ Նրանք գիտեն, թե ինչպես կուսակցության Կենտկոմը օր օրի վրա ստուգում եր ցանքի, բերքահավաքի ու կոլտնտեսությունների ընդհանուր ամրացման հարցերը։ Յեվ վերացականորեն չեր ստուգում։ Այս տարի Կենտրոնական Կոմիտեն գործնական խորհրդակցություններ հրավիրեց տեղական աշխատողների մասնակցությամբ, վորոնց մեջ քննվեցին բոլոր պրակտիկ հարցերը առանձին շրջանների ու մարզերի վերաբերմամբ։ Դուք գիտեք, թե Կենտկոմն ինչպես եր ղեկավարում ցանքը և ինչպես եր ստուգում իր վորոշումների կատարումը։ Վա՞տ է ընթանում արդյոք բամբակի ցանքը, բամբակի չանաքը, ճակնդեղի քաղհանը կամ ճակնդեղի բերքահավաքը և այլն — Կենտկոմն ստուգում եր օրեցօր և գործնական ցուցումներ տալիս, թե ինչպես ուղղել թերությունները։

Կամ ահավասիկ գյուղատնտեսական մեքենաների հարցը։ Նա դարձել է մի մեծ ու սուր հարց։

Դուք հիշում եք, վոր շատ եյին խոսում կրկնահերկ տրակտորի մասին։ Շատ չուռ ու մուռ տվին գործը ապարատներում, մինչև վոր վերջապես կատարման ստուգման կարգով հարցը դրվեց Կենտկոմում։ Պարզվեց, վոր գործը ձգձգել են։ Տրակտորի սխեմը պարզելուց հետո վորոշվեց Պուտիլովի գործարանում ձեռնարկել Ֆարմոլա կրկնահերկ տրակտորի արտադրության։

Դուք բոլորդ գիտեք, թե վորքան սուր է դրված տրակտորներին վառելանյութ մատակարարելու հարցը։ Կենտկոմն ամեն օր զբաղվում եր և զբաղվում է այս հարցով։

Առանձնապես սուր կերպով է դրված ՄՏԿ-ներում նավթի օգտագործման հարցը։ Սակայն վառելանյութի տնտեսման համար մղվող պայքարը, պետության կողմից ՄՏԿ-ներին, խորհտնտեսություններին և արդյունաբերությանը հատկացված վառելանյութի հափշտակության, անտնտեսաբար ծախսելու և դուրսն ապօրինի վաճառելու դեմ պայքարելը բավարար արդյունքներ չեր տալիս, մինչև վոր չլուծվեց արմատական հարցը։

Իսկ արմատական հարցը պարզվեց, վոր վառելանյութի գների հարցն ե:

ՄՏԿ-ներին, խորհտնտեսություններին ու արդյունաբերությանը նավթ տրվում եր շատ ավելի ցածր գներով, քան լայն շուկայի համար սահմանված գները: Օրինակ՝ յերկրորդ գոտում նավթը ՄՏԿ-ներին տրվում եր կիլոգրամը 10 կոպեկով, իսկ մանրածախ վաճառվում եր 70 կոպ. գների այսպիսի տարբերությունը մի տեսակ խթանում եր նավթի գողությունը, անտնտեսաբար ծախսումն ու նրա ապօրինի վաճառքը դրսում:

Ընկեր Ստալինը սպառիչ նյութեր պահանջեց, ամբողջ հոգատարությամբ ծանոթացավ նավթի գների հարցի հետ:

Իվերջո նավթի ու նավթային վառելիքի մյուս տեսակները ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների համար հավասարվեցին լայն շուկայի գների հետ: Մենք համոզված ենք, վոր սա ավելի շատ վճռական նշանակություն կունենա վառելանյութի տնտեսման համար պայքարելիս, քան մի տասնյակ ընդհանուր ադմինիստրատիվ հրամանները:

Ինչպես տեսնում եք, այսպիսի հարցադրումը միանգամայն տարբերվում ե նեղ վարչական հարցադրումից. հարցը վերցվում ե արմատապես, ըստ եյության:

Պարարտանյութերի, բամբակի պարարտանյութերի հարցերը, բերքատվության բարձրացման հարցերը դրվում եյին կոնկրետ յուրաքանչյուր մարզի վերաբերմամբ: Եթե Հողժողկոմատը, Խորհտնտժողկոմատը և մյուս ժողկոմատներն իրագործեյին այն կոնկրետ ու օպերատիվ ղեկավարության ու կատարման ստուգման գեթ կեսը, ինչ իրագործում ե Կենտկոմը, մենք անշուշտ ավելի մեծ նվաճումներ կունենայինք:

Կատարման ստուգումից բխում եյին մի շարք խոշոր կազմակերպական հարցեր: Հենց նրա մեջ ե Կենտրոնական Կոմիտեյի աշխատանքի վոճի, ընկեր Ստալինի աշխատանքի վոճի առանձնահատկությունը, վոր բոլոր վորոշումները անմիջականորեն շաղկապվում եյին ամենօրյա օպերատիվ կյանքի և կազմակերպական հարցերի հետ: Կենտրոնական Կոմիտեյի աշխատանքի ամբողջ վոճն ու մեթոդը — դա խոսքի ու գործի միասնությունն ե, վորոշման ու կատարման միասնությունը: *Մեր Կենտկոմի Քաղբյուրոն հանդիսանում ե սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզների օպերատիվ ղեկավարության որգան:*

Ընկեր Ստալինը համարյա ամեն օր գումարում ե գործնական խորհրդակցություններ, կանչում ե այս կամ այն աշխատողներին օպերատիվ հարցադրման կարգով, տեղերի պահանջների ու կարիքների հետ կապված այս կամ այն հարցի կատարումը կամ լուծումն ստուգելու կարգով: Շատ հարցեր, վորոնց համար այլ տեղերում տևում են ժամերով. և մեծ բանաձևեր բռնում, Կենտրոնական Կոմիտեյում լուծվում են արագ և օպերատիվ կերպով: Դուք գիտեք, վոր յեթե յերկրկոմի կամ մարզկոմի քարտուղարը, գործկոմի նախագահը հեռագիր ե ուղարկում Կենտկոմ, ապա նա 1-2 օրում անպայման պատասխան ե ստանում: (Ծափահարություններ):

Ձայներ: *Ճիշտ ե:*

Կագանովիչ: *Կարելի յեր շատ օրինակներ բերել, թե ինչպես առաջին հայացքից փոքր թվացող հարցից, մի հասարակ հաղորդումից կամ նամակից բխում են պատմական մեծ ու կարևոր վորոշումներ մեր գործունեյության բոլոր ասպարեզներում: Ընկեր Ստալինը տեղեկանում ե, վոր մի դպրոցում ուսումը վատ ե ընթանում. կարգապահություն չկա, ուսուցչին չեն հարգում, վատ ե դրված մանուկների ուսուցման գործը, և ահա այս մի փաստից բացվում ե դպրոցի հարցի ամբողջ*

կծիկը և ընդունվում են այն վորոշումները դպրոցի վերաբերյալ, վորոնց այնուհետև լուսավորության աշխատողներն իրենք իրավամբ անվանում են իսկապես պատմական վորոշումներ։

Կամ դասագրքերի հարցը։ Ես այստեղ չեմ պատմելու դասագրքերի ամբողջ եպոպեյան։

Ստալին։ *«Ցաք ու ցրիվ»* (рассыпной) *դասագրքի մասին։*

Կագանովիչ։ *Պատմե՞մ, ինչ է։*

Պոստիշև։ *Պատմիր, թե չէ այստեղ կվիրավորվեն։*

Կագանովիչ։ *Կենտկոմը տեղեկանում է, վոր յերեխաները դասագիրք չունեն։ Ընկեր Ստալինը կանչում է և հարցնում. ի՞նչ դրության մեջ է դասագրքերի հարցը։ Քննեցինք։ Հետո Քաղբյուրոյում պարզվեց, վոր մենք մշտական դասագրքեր չունենք։*

Ստալին։ *Ամեն տարի դասագրքերը փոխվում էին։*

Կագանովիչ։ *Հիրավի ամեն տարի դասագրքերը փոխվում էին։ Ամեն տարի փոխվում էին նաև ծրագրերը։ Դպրոցի մահացման «ձախական» տեսաբանները ջանում էին ապացուցել, վոր յեթե մենք դասագիրքը միքանի տարով կայունացնենք, ապա հետ կքաշեն մեզ, բայց միևնույն ժամանակ չէին նկատում, վոր դասագրքերի բացակայության պատճառով յերեխաները կիսագրագետ են։*

«Ցիր ու ցան» դասագիրք անունը չարամիտ ծաղրանք չէ, հանաքով տրված անուն չէ, այլ այդպիսի «դասագրքերի» լուսժողկոմատային պաշտոնական անվանումը։ Դեռևս 1930 *թ. ուսուցման գրքի համառուսաստանյան կոնֆերանսը վորոշեց հիմնական դասագրքեր համարել «յերկրային դասագիրքը, մասնավորապես ցաք ու ցրիվ գրքերի ձևով, յերկրային լրագիր-դասագիրքը և համահանրապետական դասագիրքը, մասնավորապես ցաք ու ցրիվ գրքերի ձևով»։*

«Ցաք ու ցրիվ» դասագիրքն իրոք կազմված էր առանձին թերթիկներից բոլոր գիտությունների վերաբերյալ միասին առած, կամ, ինչպես ասում էին՝ «կոմպլեքսորեն»։

Զկարծեք, թե այս «ցա՛ք ու ցրիվ» դասագրքի թերթիկները վորևէ սիստեմատիկ գիտություն էին տալիս։ Վոչ, նրանք պարզապես ցրված տեղեկանքների նյութ էին, այսինքն մի թերթիկում, մի կույտի մեջ խառնված էին թե՛ թվաբանության հարցերը, թե՛ ռուսերեն լեզուն, թե տեղեկություններ աշխարհագրությունից, ֆիզիկայից, հասարակական գիտություններից և այլն։

Դե թող աշակերտը փորձի «ցաք ու ցրիվ» դասաթերթիկների հիման վրա կուռ սիստեմացված գիտություն ունենալ իր գլխում։

Լուսժողկոմատը ամեն տարի հսկայական քանակությամբ դասագրքեր էր հրատարակում։ Փող էր ծախսում և ահագին թուղթ վատնում «ցաք ու ցրիվ» դասագրքերի վրա, և մենք վոչ մի տարի կայուն դասագրքեր չունեինք։

Այժմ, հարցը լուծվելուց հետո, ձեռնարկել են դասագրքերին, մեր դպրոցը բարելավվել է, սա անվիճելի է։ Դասագրքերի դրությունը դեռևս վատ է, բայց այնուամենայնիվ այս տարի ավելի լավ է։

Բուբնով։ *Այնուամենայնիվ մի բան արե՞լ ենք, թե վոչ։*

Կագանովիչ։ *Այո, ընկ. Բուբնով, արել եք այն բանից հետո, յերբ Կենտկոմը հարցը դրեց իր ամբողջ սրությամբ և ուշի-ուշով հետևեց իր վորոշման կատարմանը։*

Ստալին։ *Այժմ դասագրքերը կայուն են։*

Կագանովիչ։ *Դեռ շատ հարցեր կան, վորոնք պետք է լուծել ու կատարել, բայց Լուսժողկոմատի աշխատանքն, անպայման, բարելավվել է, դասագրքերը կայունացել են։*

Մի օրինակ բերեմ, կարծես թե, ամենապակաս օպերատիվ բնագավառից— գրականությունից: Ի՞նչ է արել այստեղ Կենտկոմը:

Յես նկատի ունեմ ՌԱՊՊ-ի (Ռուս. Պրոլետ. Գրող. Ասոցիացիա) պատմությունը: Ինչպես հայտնի յէ, մի խումբ կոմունիստ գրողներ, օգտվելով ՌԱՊՊ-ի կազմակերպական մեքենայից, սխալ եյին օգտագործում իրենց կոմունիստական ազդեցության ուժը գրական ճակատում, և փոխանակ ՌԱՊՊ-ի շուրջը համախմբելու և գրողների լայն կադրեր ներգրավելու, ընկերների ռապպական այս խմբակն արգելակում, կասեցնում էր գրող ստեղծարար ուժերի ծավալումը: Կենտկոմը տվյալ դեպքում հանդիպեց մի շարք կոմունիստ գրողների քաղաքական սխալ գծին գրական ճակատում, ընդ վորում այս ընկերներն իրենց տրամադրության տակ ունեյին ՌԱՊՊ-ի կազմակերպական ապարատը:

Իհարկե, կարելի յեր մեծ բանաձև հանել կոմունիստների խնդիրների վերաբերյալ գրականության մեջ, կարելի յեր առաջարկել ռապպականներին փոխելու իրենց կուրսը: Բայց սա միմիայն կմնար վորպես բարի ցանկություն: Ընկեր Ստալինը հարցը այլ կերպ դրեց. հարկավոր է կազմակերպորեն փոխել դրությունը,—ասաց նա:

Յեվ ահա այն ժամանակ դրվեց ՌԱՊՊ-ի վերացման, միասնական Գրողների Միություն ստեղծելու հարցը: Հարցի այս կազմակերպական լուծումից հետո գրող ուժերը բարձրացան, զարգացան, և գրականության գործը բարելավվում է: Այսպիսով, կազմակերպական հարցի լուծումով ապահովվեց կուսակցության գծի ճիշտ կիրառումը գրականության մեջ:

Յես կարող եյի Կենտկոմի աշխատանքը ցույց տվող օրինակների թիվը բազմապատկել, բայց այս էլ բավական է, վորպեսզի պարզ պատկերացում ունենանք Կենտկոմի աշխատանքի լենինյան-ստալինյան վոճի ու մեթոդի մասին:

Ընկեր Ստալինը մեզ ամեն օր սովորեցնում է կարողանալ տեսնել ձևի հետևում բովանդակությունը, կարողանալ կազմակերպական ձևերը, աշխատողների ընտրությունն ու բաշխումը ստորադրել խնդիրների էությանը, կարողանալ ընդհանուր դիրեկտիվը միացնել կոնկրետ խնդիրներին, կատարման ստուգումը՝ անձնական պատասխանատվությանը, կարողանալ պահանջկոտ լինել իր հանդեպ և պահանջկոտ ուրիշների հանդեպ այնտեղ, վորտեղ սա վերաբերում է գործին, կարողանալ բազմապատկել բոլշևիկների ուժերն, իր կողմը գրավելով ամենալայն մասսաներին, առաջին հերթին անկուսակցական ակտիվիստներին, բանվորներին, ծառայողներին ու մասնագետներին, կարողանալ աշխատանքն այնպես կազմակերպել, վոր վոչ միայն ինքդ աշխատես, այլ շարժման մեջ դնես բոլոր լծակները, շարժման մեջ դնես քեզ շրջապատող բոլոր աշխատողներին, նրանց դաստիարակելով, վորպեսզի պատվով կատարես քեզ վրա դրված խնդիրը:

Կուսակցության 17-րդ համագումարը, ինչպես և ամբողջ կուսակցությունը գիտե, վոր մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի, նրա Քաղբյուրոյի ամբողջ ղեկավարությունը և ընկեր Ստալինի ղեկավարությունը հանդիսանում է միասնական, անխզելի ամբողջություն, վորը մեզ համար ապահովում է մեծամեծ հաղթանակներ: (Վորոտընդոստ ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում, «ուռա» բացականչություններ):

* * *

Ընկերներ, մենք ապրել ենք փառապանծ պայքարի մեծ տարիներ: 17-րդ համագումարում մենք ամփոփում

ենք հաղթանակները վոչ թե մեր հաջողություններով պարծելու համար, վոչ թե նրա համար, վոր հանգչենք դափնիների վրա: Մենք ամփոփում ենք այս արդյունքները իբրև հեղափոխական մարտիկների բանակ: Մենք հետ ենք նայում անցած ուղու վրա, վորպեսզի անցյալի դասերով ստուգենք, սրենք մեր զենքը դեռ առաջիկա մարտերի համար:

Մենք այստեղ քննում ենք կազմակերպական հարցը: Կազմակերպական հարցը հենց զենքի սուրն է: Չի կարելի թերագնահատել նրա կարևորությունը, նրա լրջությունը: Վորովհետև աշխարհում վոչ մի տեղ կազմակերպական հարցը չի դրվել և չի կարող դրվել այնպիսի լրջությամբ, այնպիսի սրությամբ, ինչպես նա դրված է մեզ մոտ, կառուցվող սոցիալիզմի յերկրում:

Կազմակերպական թեզիսները ուղղություն են տալիս մեր աշխատանքին, նրանք լուծում են հիմնական ողակային հարցերը: Համագումարից հետո մեր բոլոր կուսակցական ու խորհրդային կազմակերպությունները պետք է գործնականում կիրառեն կազմակերպական վերակառուցման այս հիմունքները:

Կուսակցության 17-րդ համագումարը Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումն ընդունեց իբրև համագումարի վորոշում և կուսակցական որենք,—իբրև սոցիալիստական մեծ աշխատանքների ծրագիր: Սրանով համագումարն արտահայտեց իր անսահման վստահությունը մեր լենինյան Կենտկոմին, մեր մեծ առաջնորդին, վորը համախմբեց մեր յերկրի ու ամբողջ աշխարհի միլիոնավոր աշխատավորներին:

Մենք ունենք բոլոր նախադրյալները, ամեն անհրաժեշտ բան համագումարի ընդունած մարտական ծրագիրը հաղթականորեն իրագործելու համար: Բայց յեթե մենք ունենք կայուն հիմք, ամուր պատվանդան սոցիա-

լիստական հասարակության կառուցման համար, յեթե մեր հաղթանակի պայմաններն ակներև են, արդյոք այս նշանակո՞ւմ է, վոր յերկրորդ հնգամյակի խնդիրները պետք է իրականացվեն ինքնահոսով, ավտոմատ կերպով, արդյոք այս նշանակո՞ւմ է գեթ վորևէ չափով ուշադրության թուլացում դեպի դժվարությունների հաղթահարման խնդիրները, դեպի դասակարգային պայքարի հարցերը, դեպի պրոլետարական դիկտատուրայի ամրացման հարցերը: Վոչ, բնավ վոչ: Ընդհակառակը, ընկեր Ստալինն իր զեկուցման մեջ առանձին պարզությամբ ապացուցեց, վոր կապիտալիզմի մնացորդները ինչպես եկոնոմիկայում, այնպես էլ մարդկանց գիտակցության մեջ ամբողջովին վերացնելու համար ամենից ավելի պահանջվում են զգոնություն, աչալրջություն, համառություն և դասակարգային մոբիլիզացվածություն, վորով կուսակցությունը յեկավ 17-րդ համագումար:

Մենք խոշոր հաջողություններ ունենք մեր գործարանների յուրացման, մեր կոլտնտեսությունների բոլշևիկացման գործում: Բայց մենք չպետք է աչք փակենք այն բանի հանդեպ, վոր դժվարություններ, թերություններ մենք շատ ունենք, վոր թշնամին դեռ վերջնականապես չի ջախջախված, մենք չպետք է աչք փակենք այն բանի հանդեպ, վոր հենց մեր աճման հաջողությունների հողի վրա անխուսափելիորեն կարող են հանդես գալ ամեն տեսակ մանր-բուրժուական, ոպորտունիստական տրամադրությունների ռեցիդիվներ, ամեն տեսակ աջ ու «ձախ» շեղումներ, վորոնց դեմ կուսակցությունն առաջիկայում էլ պետք է պայքարի մարտական վճռականությամբ ու անհաշտությամբ:

Այստեղ հանդես յեկան զղջացող մարդիկ, վորոնք տեսել են իրենց անկումը, վորոնք տեսել են մեր հաղթանակները: Սա արտացոլում է մեր հաղթությունը:

Մենք չենք ասի, թե մենք դժգոհությամբ ենք լսում այնպիսի մարդկանց, վորոնք դեռ յերեկ թքում եյին մեր կուսակցության վրա, զրպարտում եյին մեր կուսակցության ղեկավարության հասցեյին և վորոնք այսոր գալիս են և ծնկաչոք խոստովանում իրենց սխալներն ու ներում խնդրում կուսակցությունից: Բայց, ընկերներ, այս ամենը մեզ չի կարող հանգստացնել և չպետք է քնեցնի: Թեքումները հնարավոր են: Մենք ապրում ենք մի յերկրում, վորտեղ սոցիալիզմը դեռ վերջնականապես չի հաղթել, մենք ապրում ենք կապիտալիստական պետությունների շրջապատում, մենք դժվարություններ ու[illegible] դեռ կունենանք և մենք այստեղ կարող ե[illegible] բոլորին և ամեն ինչ—թող իմանան, վոր բոլշևիկներն ու կուսակցության 17-րդ համագումարը գիտեն, թե ինչ արժեք ունի միասնության համար պայքարել, թե ինչ դժվարություններով մենք ձեռք բերեցինք կուսակցության միասնությունը, և թող իմանան, վոր ֆրակցիոնության ամենանվազագույն փորձը, միասնությունը խախտելու ամենանվազագույն փորձը կհանդիպի կուսակցության կողմից, բոլշևիկների կողմից այնպիսի ջախջախիչ հակահարվածի, վորին ամեն տեսակ հակալենինիստներ հանդիպում եյին մինչև այժմ: (Փոթորկալի ծափահարություններ):

Մեր մեծ համագումարի ընդունած մարտական ծրագրով զինված կուսակցությունը վստահորեն ու հաստատապես ընթանում է իր բոլշևիկյան ուղիով, հերոսական պայքարի ուղիով կոլտնտեսությունների բոլշևիկացման համար, տեխնիկական ռեկոնստրուկցիայի համար, աշխատավոր մասսաների ունևոր կյանքի համար, նոր տեխնիկայի յուրացման համար, բյուրոկրատիզմի ու գրասենյակայնության արմատախիլման համար, կատարման բոլշևիկյան ստուգման համար, մեր շարքերը

Մարքս-Էնգելս-Լենին-Ստալինի թեորիայով գաղափարապես սպառազինելու համար:

Պահպանելով ամբողջ մոբիլիզացված դրությունը, թույլ չտալով վոչ մի գոռոզացում, ինքնանդորրացում ու գլխապտույտ հաջողություններից, կուսակցությունը ջախջախելու յե դասակարգային թշնամու մնացորդներին, հարվածելու յե օպորտունիզմին, համախմբելու յե նոր միլիոնավոր մասսաներ, նրանց բարձրացնելով նոր մեծ գործերի համար, իր ճանապարհին սրբելով սոցիալիզմի առջև ընկած բոլոր արգելքները, վորտեղից էլ վոր նրանք առաջանան՝ դրսից թե ներսից:

Մեր հաղթանակները հետևանք հանդիսացան այն բանի, վոր մեր կուսակցության գլուխ կանգնած է մի մարդ, վորը կարողացավ մասսաներին մոբիլիզացիայի յենթարկել նույնպիսի վճռականությամբ ու անդրդվելիությամբ, ինչպես Լենինը, պաշտպանել Մարքսի-Լենինի ուսմունքի անաղարտությունը, կարողացավ հարստացնել այդ ուսմունքը, կարողացավ բարձր պահել սոցիալիզմի համար պայքարելու դրոշը, կարողացավ ճանաչել դասակարգային թշնամու գործակալությունը մեր կուսակցության մեջ, կարողացավ խանդավառության հրով բորբոքել կուսակցությանը, բանվոր դասակարգին ու աշխատավոր գյուղացիությանը և աշխատանքի այս մեծ բանակին առաջ շարժել վերջին գրոհը տալու մեր յերկրի կապիտալիզմին, կառուցելու հաղթական սոցիալիստական հասարակությունը: (Փոթորկալի, յերկարատև ծափահարություններ):

Մեր համագումարն իր վրա յե բևեռում վոչ միայն մեր յերկրի, այլև ամբողջ աշխարհի միլիոնավոր, տասնյակ միլիոնավոր մասսաների ուշադրությունը: Եվ մեր 17-րդ համագումարը վստահորեն կարող է հայտարարել այս միլիոնավոր բանվորներին ու գյուղացիներին, վոր միաձույլ, գաղափարապես համախմբված, սո-

ցիալիզմի համար մարտնչելիս կոփված ու ստուգված մեր մեծ կոմունիստական կուսակցությունն առաջիկայումն էլ Մարքսի–Էնգելսի–Լենինի–Ստալինի ծածանյուն դրոշների տակ, մեր առաջին մեծ կազմակերպիչ և ուսուցիչ Ստալինի անմիջական մարտական ղեկավարությամբ միլիոններին կտանի դեպի սոցիալիզմի նորանոր մեծ հաղթանակները։

Կեցցե՛ մեր մեծ կոմունիստական կուսակցությունը։

Կեցցե՛ մեր հարազատ, մեծ Ստալինը։ (Ծափահարությունների որոտ, «ուռա» բացականչություններ, բոլորը ոտքի յեն կանգնում, յերգում են «Ինտերնացիոնալ»)։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)

Համկ(բ)Կ XVII համագումարի բանաձև ընկ. Լ. Կագանովիչի զեկուցման առթիվ (ընդունված է միաձայն 1934 թ. փետրվարի 10-ին)

Չնայած դասակարգային թշնամիների կատաղի դիմադրությանը և դասակարգային թշնամիների գործակալության—ամեն գույնի օպորտունիստների—կուսակցության դեմ մղած գրոհներին՝ կուսակցության քաղաքականությունը, նրա Կենտկոմի քաղաքականությունը հաղթանակեց։ Հաղթանակեց նախ այն պատճառով, որ այդ քաղաքականությունը համապատասխանում է միլիոնավոր բանվորների և գյուղացիների դասակարգային շահերին, յերկրորդ՝ այն պատճառով, որ բոլշևիկյան կուսակցությունը, նրա Կենտկոմը ոչ միայն հռչակեցին քաղաքական լոզունգներ, այլև կարողացան բոլշևիկորեն, գործնականորեն կազմակերպել *մասսաներին այդ լոզունգները կենսագործելու համար,* կազմակերպել ու վերակառուցել *պրոլետարական դիկտատուրայի բոլոր օրգաններն ու ապարատները* վերակառուցման ժամանակաշրջանի նոր խնդիրներին համապատասխան։

Կուսակցության 16-րդ համագումարում, բնորոշելով վերակառուցման ժամանակաշրջանի բոլշևիկյան

Հարձակման ելությունը, ընկ. Ստալինը մատնանշեց, վոր անհրաժեշտ է.—

«Կազմակերպել արհմիութենական, կոոպերատիվ, խորհրդային և մնացած բոլոր մասսայական կազմակերպությունների գործնական ամբողջ աշխատանքի վերակառուցումը ռեկոնստրուկտիվ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան, այդ կազմակերպությունների մեջ ստեղծել առավել ակտիվ և հեղափոխական աշխատողների կորիզ, դուրս մղելով, մեկուսացնելով օպորտունիստական, տրեդ-յունիոնիստական, բյուրոկրատական տարրերին, դուրս վտարել այդ կազմակերպություններից խորթ ու այլասերված տարրերին, և առաջ քաշել նոր աշխատողներ ներքևից... մոբիլիզացիայի յենթարկել իրեն՝ կուսակցությանը՝ հարձակման ամբողջ գործը կազմակերպելու համար, ամրացնել և օրել կուսակցական կազմակերպությունները»։

Ղեկավարվելով այս ցուցումներով, կուսակցությունը հաշվետու ժամանակաշրջանում լուրջ միջոցառումներ կիրառեց բարելավելու խորհրդային, տնտեսական և կուսակցական կազմակերպությունների աշխատանքը, վերակառուցելու նրանց աշխատանքը կուսակցության ու կառավարության վորոշումներն ու լոզունգները հաջողությամբ կատարելու պահանջների համապատասխան։

Այս ձեռնարկումներից ամենախոշորներն են յեղել.—

1. Շրջանացման հետագա ծավալումը—օկրուգների վերացումը, նոր շրջանների ստեղծումը, ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների քաղբաժինների կազմակերպումը, վորոնք ղեկավարությունը մոտեցրին գյուղին ու կոլտնտեսությանը և ուղղեցին գյուղի աշխատանքի խոշորագույն թերությունները, մարզերի կազմակերպումը Ուկրաինայում, մի քանի մարզերի ու յերկրների մանրացումը և այլն։

2. Ժողկոմատների, գլխավոր վարչությունների և տրեստների մանրացումը, վորը ղեկավարությունը մոտեցրեց արտադրական ստորին օղակներին, ձեռնարկություններին. ԺՏԳԽ-ի բաժանումը յերեք ժողկոմատների՝ Ծանր արդյունաբերության, Թեթև արդյունաբերության և Անտառժողկոմատի. Հողժողկոմատի բաժանումը յերկու ժողկոմատի՝ Հողժողկոմատի և Խորհտնտժողկոմատի. Առևտրի ժողկոմատի բաժանումը յերկու ժողկոմատի՝ Մատժողկոմատի և Արտաքին առևտրի ժողկոմատի, Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատի բաժանումը յերկու ժողկոմատի և մեկ վարչության՝ Հաղճանժողկոմատի, Ջրժողկոմատի և Տրանսպորտի կենտվարչության և այլն։

3. Խորհրդային, տնտեսական օրգանների զտումը և նրանց հաստիքների կրճատումը.— Ֆունկցիոնալության վերացումն ածխարդյունաբերության մեջ ու յերկաթուղային տրանսպորտում՝ նպատակ ունենալով պայքարել ղեկավարման գրասենեկային-բյուրոկրատական մեթոդի ու դիմազրկության դեմ, ինժեներատեխնիկական լավագույն աշխատողներին ապարատից ու գրասենյակից անմիջականորեն արտադրության մեջ փոխադրելը։

4. Արհմիությունների մանրացումը, վորը հանգեցրեց արտադրական միությունների կենտկոմների դերի ուժեղացմանը. մատակարարման սիստեմի վերակառուցումը.— բանվորական մատակարարման բաժինների կազմակերպումը գործարանային վարչություններին կից, ընդարձակելով նրանց իրավունքները և բանվորական փակ կոոպերատիվների կազմակերպումը։

5. Քաղաքական բաժինների կազմակերպումը յերկաթուղային և ջրային տրանսպորտում, կուսկազմա-

կերպիչների սիստեմի կազմակերպումն ածխի և արդյունաբերության այլ ճյուղերում, այդ թվում նաև Ջրժողկոմատում:

6. Կուսակցության զտման ծավալումը որպես կուսակցական ինքնաքննադատության բարձրագույն ձևի, կուսակցության՝ որպես սոցիալիստական շինարարության կազմակերպված ավանգարդի՝ ամրացումը:

Այս աշխատանքի հաջողությունն ապահովվեց ինքնաքննադատության ծավալումով, մասսաների ակտիվության մոբիլիզացիայով՝ ստեղծարար շինարարական աշխատանք կատարելու համար, սոցիալիստական մրցությամբ ու հարվածայնությամբ:

Կուսակցության կողմից այս բոլոր կազմակերպական հարցերի ժամանակին դնելը, դրանց կենսագործումը կուսակցությանն ու սոցիալիստական շինարարությանն ապահովեցին այն խզումից, որ կարող էր առաջանալ կուսակցության ճիշտ գծի և նրա իրականացման կազմակերպչական աշխատանքի միջև:

Համ Կ(բ)Կ 17-րդ համագումարը գտնում է, որ չնայած պրոլետարական դիկտատուրայի լծակների վերակառուցման գործում ձեռք բերած հաջողություններին, կազմակերպական-գործնական աշխատանքը դեռևս հետ է մնում քաղաքական դիրեկտիվների պահանջներից և չի բավարարում ներկա ժամանակաշրջանի, երկրորդ հնգամյակի ժամանակաշրջանի, վիթխարի չափերով աճած պահանջները:

Սոցիալիստական շինարարության ներկա ժամանակաշրջանը բնորոշվում է խնդիրների ավելի մեծ բարդացումով, ղեկավարության առաջադրվող պահանջների էլ ավելի մեծացումով: Երկրորդ հնգամյակի հիմնական խնդիրները—կապիտալիստական տարրերի վերջնական վերացումը, կապիտալիզմի մնացորդների հաղթահարումը էկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ, ժողովրդական ամբողջ տնտեսության վերակառուցման ավարտումը նորագույն տեխնիկական բազայի վրա, նոր տեխնիկայի և նոր ձեռնարկությունների յուրացումը, գյուղատնտեսության մեքենայացումը և նրա արդյունավետության բարձրացումը—իրենց ամբողջ սրությամբ դնում են աշխատանքի որակի բարձրացման հարցը բոլոր ասպարեզներում, առաջին հերթին՝ կազմակերպական-գործնական ղեկավարության որակի բարձրացման հարցը:

Այժմ, երբ հաղթանակել է կուսակցության գլխավոր գիծը, երբ կուսակցության քաղաքականությունն ստուգված է կյանքում ոչ միայն կուսակցության անդամների, այլև միլիոնավոր բանվորների ու աշխատավոր գյուղացիների փորձով—իր ամբողջ մեծությամբ խնդիր է դրվում կազմակերպական աշխատանքը քաղաքական ղեկավարության մակարդակին բարձրացնելու: Կազմակերպական հարցը յենթարկված մնալով քաղաքականության հարցերին, այնուամենայնիվ այս տեսակետից բացառիկ նշանակություն է ստանում սոցիալիստական շինարարության հետագա հաջողությունների համար:

«Հազիվ թե որևէ մեկը պնդի, որ բավական է տալ քաղաքական լավ գիծ, և գործը վերջացած է: Ո՛չ, սա գործի միայն կեսն է: Քաղաքական ճիշտ գիծ տալուց հետո անհրաժեշտ է աշխատողներ ընտրել այնպես, որ դիրքերում կանգնած լինեն այնպիսի մարդիկ, որոնք կարողանան իրականացնել դիրեկտիվները, որոնք կարողանան ըմբռնել դիրեկտիվները, կարողանան այդ դիրեկտիվներն ընդունել իբրև իրենց հարազատ դիրեկտիվներ և կարողանան դրանք կենսագործել: Հակառակ դեպքում քաղաքականությունը կորցնում է իր իմաստը, դառնում է ձեռքի թափահարություն» (Ստալին):

Մինչդեռ լավագույն ղեկավար աշխատողներից նույնիսկ շատերը մինչև այժմ դեռ կարծում են, որ բավական է ճառ արտասանել կամ կուսակցության գլխավոր գծին համաձայն լինելու բանաձև գրել, որպեսզի ղեկավարության խնդիրը համարվի լուծված, մինչդեռ այդ նույն ղեկավար աշխատողների կարգադրությունները, որոնց նպատակն է կիրառել կուսակցության դիրեկտիվները, գործնականում խախտվում են վատ ընտրված աշխատողների ձեռքով և կատարումն ստուգելու բացակայության պատճառով:

Կազմակերպական-գործնական աշխատանքի հետ միասին կուսակցության քաղաքական գծի պահանջներից՝ տվյալ մոմենտում առանձին ցայտունությամբ ու սրությամբ հայտաբերեց և կուսակցության Կենտրոնական Կոմիտեն՝ ածխային արդյունաբերության, երկաթուղային տրանսպորտի և Հողժողկոմատի ամբողջ սիստեմի օրինակով:

Համագումարը նշում է, որ այս թերությունները վերաբերում են խորհրդային, տնտեսական և կուսակցական աշխատանքի նաև մյուս ասպարեզներին:

Այս թերություններից ամենագլխավորներն են.—

Ղեկավարման դրասենեկային-բյուրոկրատական մեթոդները և անուշադիր վերաբերմունքը դեպի խորհրդային, տնտեսական և կուսակցական ստորին օրգանները (գործարան, ցեխ, գյուղ, կոլտնտեսություն, խորհտնտեսության բաժանմունք):

«Ընդհանուր», վերացական դիրեկտիվներ և բազմաթիվ հրամաններ տալը, փոխանակ կոնկրետ ղեկավարություն ցուցաբերելու և աշխատանքի մանրամասնությունների ուսումնասիրելու:

Կատարումն ստուգելու, կադրեր ընտրելու պարտականությունը ցածրորակ աշխատողների վրա դնելը:

Խորհրդային և տնտեսական ապարատի կենտրոնա-

կան ու միջին օղակների հաստիքների ուռեցումը, որն արտադրությունից դրասենյակ է գրավում մեծ քանակությամբ ինժեներ-տեխնիկական աշխատողներ:

Ապարատի ֆունկցիոնալ կառուցումը, կառավարման գործի ապակենտրոնացումը տասնյակ բաժինների ու սեկտորների միջև, և, որպես այս բանի հետևանք, ոպերատիվ ղեկավարության բացակայությունը:

Միանձնյա ղեկավարության ծայրահեղ թուլությունը, անձնական պատասխանատվության բացակայությունը և կառավարման դիմազրկությունը՝ թագնված ղեկավարության «կոլեգիալության» տակ:

Կուսակցության ու պետության յերկաթյա կարգապահության բացահայտ և քողարկված խախտումները:

Այս բոլոր թերությունները վերացնելու և պրոլետարական դիկտատուրայի բոլոր օրգանների աշխատանքը բարելավելու համար անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ դրույթներով.

Առաջին.—«ընդհանուր» և վերացական ղեկավարությունից անցնել կոնկրետ ղեկավարության, «ընդհանուր» բանաձևերից՝ ոպերատիվ որոշումների, որոնք հիմնված լինեն գործի տեխնիկան և մանրամասնությունները ուսումնասիրելու և իմանալու վրա, անցնել սերտ և կենդանի կապի արտադրության ու կառավարման ստորին օղակների հետ (ցեխ, աշխատամաս, ձեռնարկություն, կոլտնտեսություն, գյուղ, ՄՏԿայան, խորհտնտեսություն և այլն):

Երկրորդ.— ուժեղացնել ղեկավարների անձնական պատասխանատվությունը նրանց հանձնարարված գործի համար՝ ինչպես կուսակցական, այնպես էլ խորհրդային գծով. վերացնել ֆունկցիոնալությունը և դիմազրկությունն աշխատանքում, սահմանելով խիստ միանձնյա ղեկավարություն:

Երրորդ.—սահմանել կուսակցության և կառավա-

ռության դիրեկտիվների կատարման սիստեմատիկ, մանրակրկիտ ստուգում, այն հաշվով, վոր կատարման ստուգումով անձնապես զբաղվի կազմակերպության, հիմնարկի, ձեռնարկության ղեկավարը, վորպեսզի կատարման ստուգումն ապահովի կուսակցական և խորհրդային կարգապահության ամրացումը:

Չորրորդ.— ապահովել վորակյալ աշխատողների տեղափոխումն ապարատից և գրասենյակից անմիջականորեն դեպի արտադրություն՝ կրճատելով կառավարման ապարատները, և բարելավել աշխատողների բաշխման գործի դրվածքը, պարտադրելով հիմնարկի և ձեռնարկության ղեկավարին անձամբ ղեկավարելու այդ գործը:

Այս խնդիրների հաջող իրականացման անհրաժեշտ պայմանը համագումարը համարում է ինքնաքննադատության, սոցմրցման, կուսակցական, բանվորական, կոլտնտեսական մասսաների ու նրանց մասսայական կազմակերպությունների ակտիվության ու ինքնագործունեության հետագա ծավալումը:

Կուսակցության 17-րդ համագումարն առաջարկում է կենսագործել հետևյալ կազմակերպական միջոցառումները.

I

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. *Մի շարք վայրերում կատարված կուսակցության մեջ մեխանիկորեն ու անխտիր ընդունելությունը վերացնելու նպատակով՝ կուսակցության անդամ, անդա-*

մության թեկնածու ընդունելիս սահմանել յերաշխավորությունների մեծացրած թիվ և յերաշխավորողների կուսակցական ստաժի բարձրացում. կուսակցության մեջ ընդունել միայն ակտիվիստներին, վորոնք իրենց ցուցաբերել են այս կամ այն հասարակական կազմակերպության մեջ կատարած աշխատանքում, ապահովել ընդունվողների մանրակրկիտ ստուգումը, այս դեպքում գնահատականներ պահանջելով այն կազմակերպություններից, վորտեղ աշխատել է ընդունվողը:

2. *Կուսակցության մեջ ընդունելն ու թեկնածուներին անդամ փոխադրելը վերսկսել ամբողջ կուսակցության զտումն ավարտելուց հետո, այսինքն* 1934 *թվի յերկրորդ կեսից:*

3. *Նպատակ ունենալով Համ Կ(բ)Կ շուրջը համախմբել կուսակցությանն առավելապես մոտիկ անկուսակցական ակտիվիստներին, վորոնք գործով—արտադրության մեջ, կոլտնտեսության մեջ—ցուցաբերել են իրենց ակտիվ ոգնությունը կուսակցությանը, բայց դեռ անպատրաստ են կուսակցության մեջ ընդունվելու համար, կուսակցական ստորին կազմակերպություններին կից ստեղծել Համ Կ(բ)Կ համակրողների խմբակներ, վորոնք անպայման պիտի յենթարկվեն կուսակցական մարմինների բոլոր վորոշումներին:*

4. *Գտնելով, վոր ներկայումս կուսակցական* բջիջները *ինչպես իրենց կազմով, այնպես ել իրենց խնդիրներով և փաստական աշխատանքով գերաճել են հին տիպի բջիջների շրջանակներից, համագումարը վորոշում է գոյություն ունեցող կուսակցական բջիջները վերափոխել իբրև գործարանային, տրանսպորտային, կարմիր բանակային, կոլտնտեսական, ԲՈՒՀ-ական, հիմնարկային և այլ* կուսակցական կազմակերպությունների՝ *կուսակցական կոմիտեի գլխավորությամբ (կարմիր բանակային կուսակցական կազմակերպու-*

թյուններում՝ կուսբյուրո), իսկ ցեխերում, հերթափոխություններում, բաժանմունքներում՝ ցեխային կազմակերպություններ՝ կուսակցական կազմակերպչի գլխավորությամբ, որն ընտրվում է ամբողջ կուսկազմակերպության ընդհանուր ժողովում և հաստատվում գործարանային կուսակցական կոմիտեի կողմից:

Կուսակցական այն կազմակերպություններում, որոնց կուսանդամներն ու թեկնածուները 15-ից պակաս են, կուսկոմիտեներ չստեղծել, այլ առանձնացնել կուսակցական կազմակերպիչներ:

Յերեք հոգուց պակաս կուսանդամ ունեցող կոլտնտեսություններում ստեղծել թեկնածուական կամ կուսակցական-կոմերիտական խմբակներ՝ կուսկազմակերպիչների (գլխավորությամբ, որոնց առանձնացնում են ՄՏ կայանների քաղբաժինները, իսկ ՄՏ կայանների կողմից չսպասարկվող կոլտնտեսություններում՝ շրջկոմները:

ԿԵՆՏՐՈՆԻ, ՄԱՐԶԻ, ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԿՈՒՍՕՐԳԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

5. Վերակառուցել Համ Կ(բ)Կ մարզկոմների, յերկրկոմների ու Կենտկոմի բաժինները, վերացնելով ներկայիս ֆունկցիոնալ բաժինները և նրանց փոխարեն ստեղծելով ամբողջական արտադրական-ճյուղային բաժիններ: Յուրաքանչյուր արտադրական-ճյուղային բաժնում, Կենտկոմի գյուղատնտեսական բաժնի օրինակով, կենտրոնացնել տվյալ ճյուղին վերաբերող ամբողջ աշխատանքը.—կազմկուսակցական աշխատանքը, կադրերի բաշխումն ու պատրաստումը, ագիտ-մասսայական աշխատանքը, արտադրական պրոպագանդը, և համապատասխան խորհրդային, տնտեսական օրգանների ու

կուսակցական կազմակերպությունների կողմից կուսակցական վորոշումների կատարմանը հսկելը:

Սահմանել բաժինների հետևյալ կառուցվածքը.

Համ Կ(բ)Կ Կենտկոմում.—1) Գյուղատնտեսական բաժին, 2) Արդյունաբերական բաժին, 3) Տրանսպորտային բաժին 4) Պլանային-ֆինանս-առևտրական բաժին, 5) Քաղաքական-վարչական բաժին, 6) Ղեկավար կուսօրգանների բաժին, 7) Կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդայի բաժին, 8) Մարքս-Ենգելս-Լենինի ինստիտուտ, և յերկու սեկտոր՝ Գործերի կառավարման սեկտոր և Հատուկ սեկտոր:

Մարզկոմներում—յերկրկոմներում.— 1) Գյուղատնտեսական, 2) Արդյունաբերական-տրանսպորտային, 3) Խորհրդային-առևտրական, 4) Կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի, 5) ղեկավար կուսօրգանների (քաղաքային և շրջանային) և Հատուկ սեկտոր:

Մարզկոմներում—յերկրկոմներում և ազգային կոմկուսների Կենտկոմներում վերացնել Քարտուղարությունները, թողնելով յերկուսից վոչ ավելի քարտուղար՝ առաջին և յերկրորդ (բացի Ուկրաինայի Կ(բ)Կ ԿԿ-ից, Մոսկվայի և Լենինգրադի մարզկոմներից, վորտեղ պահպանվում են քարտուղարությունները): Քննարկում պահանջող հարցերը մտցնել ուղղակի բյուրոն, իսկ մի շարք գործնական հարցերի մշակումը հանձնարարել վոչ թե հատուկ հանձնաժողովների, այլ կոմիտեների բաժինների վարիչներին, խորհրդային, արհմիութենական, կոոպերատիվ, կոմյերիտական և այլ կազմակերպությունների ղեկավար աշխատողներին:

6. Վերակառուցել շրջկոմների աշխատանքը՝ մոտեցնելով նրանց արտադրական խնդիրներին. ուժեղացնել շրջկոմի կոնկրետ ղեկավարությունը տերիտորիալ կուսակցական կազմակերպությունների, գյուղխորհուրդների նկատմամբ, և քաղբաժինների հետ միասին

ու տեղական օրգանների միջև, ուժեղացնել իշխանության մարզային, յերկրային, հանրապետական տեղական օրգանների դերն ու պարտականությունները, մանավանդ տեղական արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման գործում, ժողկոմատների գլխավոր վարչություններում կենտրոնացնելով միմիայն խոշոր միութենական նշանակություն ունեցող ձեռնարկությունների ղեկավարությունը։

Մարզերում ու յերկրներում ժողկոմատների լիազորների փոխարեն ստեղծել արդյունաբերության ծանր, թեթև ու մյուս ճյուղերի մարզային, յերկրային վարչություններ, նրանց վրա պարտականություն դնելով կառավարելու ամբողջ տեղական արդյունաբերությունը, միաժամանակ կատարելով համապատասխան ժողկոմի հանձնարարությունները։ Հանձնարարել Կենտկոմին՝ կոնկրետորեն մշակել տեղական արդյունաբերության կառավարումը կազմակերպելու և միութենական արդյունաբերական ժողկոմատների տեղերում ունենալիք ներկայացուցչության հարցերը։

11. 1934 թվին բոլոր խորհրդային բյուջետային և տնտհաշվարկային օրգանների հաստիքները կրճատել առնվազն 10—15 տոկոսով՝ 1933 թ. նրանց համար սահմանված հաստիքների համեմատությամբ, ինչպես և խիստ կրճատել հաշվառման ու հաշվետվության գոյություն ունեցող ձևերը վերևից մինչև ներքև։

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԴԵՊԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

12. Տնտեսական ու խորհրդային ղեկավարների անձնական պատասխանատվությունն ուժեղացնելու նպատակով՝ կոլեգիաները վերացնել խորհրդային-տնտեսական աշխատանքի բոլոր ասպարեզներից, բացառությամբ խորհրդային ընտրովի օրգանների։

Վերացնել ժողկոմատների կոլեգիաները՝ ժողկոմատի գլուխ թողնելով ժողկոմին և ոչ ավելի քան յերկու տեղակալի։ Ժողկոմատներին կից ստեղծել յերկու ամիսը մեկ անգամ գումարվող ժողկոմատների խորհուրդներ՝ 40—70 հոգուց բաղկացած, որոնց կեսից ոչ պակաս պետք է լինեն տեղական կազմակերպությունների ու ձեռնարկությունների ներկայացուցիչներ։

Սահմանել, որ մարզային, յերկրային գործկոմների, հանրապետական ԺԿԽ-ների, քաղխորհուրդների նախագահները յերկուից ավելի տեղակալ չպետք է ունենան։

13. Վերացնել գոյություն ունեցող կատարումն ստուգող հատուկ սեկտորները և առաջարկել կառավարման բոլոր օրգանների ղեկավարներին վերևից մինչև ներքև անձնապես ստուգել համապատասխան օրգանների որոշումների ու կարգադրությունների կատարումը։

14. Ածխարդյունաբերության և յերկաթուղային տրանսպորտի օրինակով՝ ժողովրդական տնտեսության և պետական կառավարման բոլոր ճյուղերում ապահովել ինժեներ-տեխնիկական կադրերի տեղափոխումը գրասենյակից արտադրություն։

15. Աշխատանքի վարձատրության տարիֆները վերակառուցել այնպես, որ խթանվի անմիջականորեն ցեխի, աշխատամասի, արտադրության մեջ աշխատելը։

Ինժեներ-տեխնիկական բոլոր ազնիվ, հմուտ աշխատողների համար, անկախ կուսակցականությունից, ապահովել արդյունաբերության, գյուղատնտեսության մեջ և այլ ասպարեզներում իշխող, պատասխանատու դիրքերում ամենալայն չափով առաջ գնալու հնարավորություն։ Կազմակերպել աշխատողների տեխնիկական և գործարար վորակի պարտադիր ստուգում տնտեսա-

ցիոն-ստուգիչ հանձնաժողովների միջոցով՝ անկախ կուսակցականությունից:

Պարտադրել տնտեսական օրգանների ու ձեռնարկությունների ղեկավարներին՝ տիրապետելու իրենց գործի տեխնիկայի հիմունքներին. մշակել արդյունաբերության և ժողովրդական տնտեսության յուրաքանչյուր ճյուղի տեխնիկական այն մինիմումը, որը բոլոր ղեկավար աշխատողները պետք է պարտադրաբար ուսումնասիրեն որոշակի նվազագույն ժամկետում:

ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ, ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

16. Կազմակերպել կառավարման մարմինների աշխատանքի մասսայական վերահսկողությունը, կազմակերպել ապարատի բյուրոկրատական խոցերի ու թերությունների խիստ քննադատությունը մասսաների կողմից:

Ընդարձակել խորհուրդների սեկցիաների, պատգամավորական խմբակների ցանցը ձեռնարկություններում, գյուղերում, իսկ մեծ քաղաքներում կազմակերպել խորհուրդների պատգամավորների յենթա-ռայոնական և ռայոնական խմբակներ, ընդ որում առանձին ուշադրություն դարձնել խորհուրդների ու նրանց սեկցիաների աշխատանքում ակտիվ կանանց, բանվորուհիներին ու կոլտնտեսուհիներին ներգրավելու վրա:

17. Արհմիություններին հանձնել ԲԳՏ ստորին օրգանների բոլոր իրավունքները ձեռնարկություններում և բանմատակարարման բաժիններին, բանվորական փակ կոոպերատիվներին, շրջապառկոոպներին, քաղկոոպներին կից գործող վերահսկիչ մարմինների ղեկավարումը:

Ծավալել ու որակապես բարձրացնել ձեռնարկությունների՝ իրեն արդարացրած շեֆությունը պետական հիմնարկների նկատմամբ և արտադրության մեջ աշխատելու սոցիալիստական համատեղությունը պետական հիմնարկներում աշխատելու հետ:

Վերականգնել կոմյերիտական «թեթև հեծելազորի» կազմակերպման իրեն արդարացրած պրակտիկան, որը հաջողությամբ հայտաբերում եր ապարատի բյուրոկրատական թերությունները: Բարձրացնել կոմյերիտմիության բջիջների աշխատանքի որակը պետական հիմնարկներում՝ պետապարատի բարելավման գործում:

III

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԿՈՒՍԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

18. Կառավարության որոշումների կատարման վերահսկողությունն ուժեղացնելու և խորհրդային կարգապահությունը ամրապնդելու նպատակով՝ անհրաժեշտ համարել կիրառելու հետևյալ կազմակերպական ձեռնարկումները.—

ա) ԽՍՀ Միության ԺԿԽ-ին կից գոյություն ունեցող Կատարման Հանձնաժողովը վերափոխել կուսակցության համագումարի կողմից նշվող և ԽՍՀՄ Կենտգործկոմի ու Ժողկոմխորհի կողմից հաստատվող ԽՍՀՄ ԺԿԽ-ին կից Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովի, որը կենտրոնում ունենալու յե իր ապարատը, և հանրապետություններում, յերկրներում, մարզերում՝ իր մշտական ներկայացուցիչները, որոնց նշա-

նակում և հետ է կանչում Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովը։

բ) Վերացնել ԲԳՏ ժողկոմատը, վորն արդեն կատարել է իր դրական դերը, նրա ապարատը հանձնել ԽՍՀ Միության ԺԿԽ-ի կից Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովին։

գ) Խորհրդային Վերահսկողության հանձնաժողովի ղեկավար նշանակել ԽՍՀ Միության ԺԿԽ-ի նախագահի տեղակալներից մեկին։

19. Կուսակցության և ՀամԿ(բ)Կ կենտկոմի վորոշումների կատարման վերահսկողությունն ուժեղացնելու, կուսակցական կարգապահությունն ամրացնելու, կուսակցական եթիկայի խախտումների դեմ պայքարելու նպատակով՝ անհրաժեշտ համարել կիրառելու հետևյալ կազմակերպական ձեռնարկումները։

ա) Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովը փոխարինել կուսակցության համագումարի կողմից ընտրվող Համ Կ(բ)Կ կենտկոմին կից Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի՝ վորը կենտրոնում ունենալու յե իր ապարատը, և հանրապետություններում, յերկրներում, մարզերում՝ իր մշտական ներկայացուցիչները, վորոնց նշանակում ու հետ է կանչում ՀամԿ(բ)Կ ԿԿ կից գործող Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովը։

բ) Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի ապարատը հանձնել ՀամԿ(բ)Կ կենտկոմին կից Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովին։

գ) Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի ղեկավար նշանակել ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղարներից մեկին։

***

Կուսակցության XVII համագումարը պարտավորեցնում է բոլոր կոմունիստներին, վորտեղ էլ վոր

նրանք աշխատելիս լինեն, պահպանել ներկա վորոշման մեջ նշված ձեռնարկումների կատարումը պրոլետարական դիկտատուրայի բոլոր օրգանների կազմակերպական վերակառուցման և աշխատանքի բարելավման գործում։

Կուսակցության համագումարը նախազգուշացնում է կուսակցական, խորհրդային, արհմիութենական, կոմյերիտական և այլ կազմակերպությունների բոլոր աշխատողներին ու առաջին հերթին կոմունիստներին, վոր լավագույն աշխատողներին խրախուսելով, կուսակցության կենտկոմը և Խորհրդային ղեկավար օրգաններն ամեն տեսակ դիրքերից հանելու յեն ու ստորին դիրքերում նշանակելու և խստորեն տույժի յեն յենթարկելու բոլոր այն աշխատողներին, առանց անձնավորությունները հաշվի առնելու, վորոնք կխախտեն կուսակցական և խորհրդային կարգապահությունը։

Կուսակցության XVII համագումարը վստահ է, վոր մեր կուսակցության անդամները կգտնվեն իրենց խնդիրների բարձրության վրա, իրենց ակտիվությամբ կոգնեն կուսակցությանն ու կառավարությանը՝ պրոլետարական դիկտատուրայի ապարատները մաքրելու բյուրոկրատական թերություններից, կամրացնեն պրոլետարիատի դիկտատուրան, էլ ավելի կբարձրացնեն կուսակցության ղեկավար դերը և յերկրի համար կապահովեն յերկրորդ հնգամյակի լիակատար հաղթանակը։

ԳՐԱԴԱՐԱՆ

-400-

ՀՀ Ազգային գրադարան
NL0936267

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

1934р. - 272

II
27351

Л. КАГАНОВИЧ
ОРГАНИЗАЦИОННЫЕ ВОПРОСЫ
(Партийное и советское строительство)
ДОКЛАД XVII СЪЕЗДУ ВКП (б)
Партиздат. Эривань, 1934.